Empowered lives.
Resilient nations.

Մարդկային Զարգացման Ազգային Զեկույց 2018/2019

ԱՊԱԳԱ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱՓՈԽՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Empowered lives.
Resilient nations.

Մարդկային Զարգացման Ազգային Զեկույց 2018/2019

ԱՊԱԳԱ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱՓՈԽՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստան 2019

Զեկույցի պատասխանատուներ

ՄԱԶԾ ծրագրերի պատասխանատու՝ Աննա Գյուրջյան

Հեղինակներ

Գլուխ 1. Մարինա Գալստյան, Աղասի Թադևոսյան

Գլուխ 2. Աղասի Թադևոսյան, Արևիկ Հարությունյան

Գլուխ 3. Սերոբ Խաչատրյան

Գլուխ 4. Արեգ Թադևոսյան

Թիմի ղեկավար Սերոբ Խաչատրյան

Թարգմանիչներ՝ Միքայել Համբարձումյան, Արամազդ Ղալամքարյան

Խմբագիրներ՝ Անահիտ Բրուտյան (հայերեն), Արամազդ Ղալամքարյան (անգլերեն)

Նախաբան

Հայաստանի կայուն զարգացումը, 2030թ. (ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների ժամկետը, որոնց հասնելու հանձնառություն է ստանձնել նաև Հայաստանը) և 2050թ. (ներկայում մշակվող՝ Հայաստանի վերափոխման ռազմավարության ժամանակացույցը) հեռանկարում երկրի ապագան պայմանավորված է նրանով, թե ինչպես են այսօրվա երիտասարդներն իրենց էներգիան, գիտելիքները, հմտություններն ու արժեքները վերածում գործողությունների: Անհրաժեշտ են գործողություններ և կառավարությունը, մասնավոր հատվածն ու քաղաքացիական հասարակությունը կարող են շատ բան անել՝ օգնելու նրանց: Մենք հույս ունենք, որ այս Զեկույցը հուշում է, թե ինչպես կարելի է հասնել դրան:

Հայաստանի երիտասարդությունը նույնքան բազմազան է, որքան և երկիրը, և նույնիսկ ավելի բազմազան՝ հաշվի առնելով աշխարհի տարբեր հատվածներում բնակվող հիանալի սփյուռքահայ երիտասարդներին: Կենսակերպերի, արժեքների, արտաքին տեսքերի այս բազմազանությունն ստեղծում է ոչ միայն եզակի հնարավորություն, այլ նաև մարտահրավեր. գոյություն չունի երիտասարդության՝ բոլորին հարմար մեկ ընդհանուր քաղաքականություն, ինչպես ընդգծում է այս Զեկույցը, սակայն երիտասարդների պատմություններում առկա են բազմաթիվ նշաններ այն մասին, թե ապագայում ինչպիսին պետք է լինի երիտասարդության ճկուն, կառավարության բոլոր օղակներն ընդգրկող քաղաքականությունը, որը հիմնված կլինի հավասար իրավունքների ու հնարավորությունների վրա:

Ինչպես ցույց է տալիս ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից 1990-ական թվականների սկզբից առաջ մղվող մարդկային զարգացման հայեցակարգը, կրթության մեջ իրականացվող ներդրումների վերադարձելիության մակարդակն ամենաբարձրն է: Չնայած այն հանգամանքին, որ մարդկային զարգացումը, այդ թվում՝ կրթությունը որպես դրա առանցքային հիմնասյուներից մեկը, հաճախ խոչընդոտվում է անհավասարության հետևանքով: Հայաստանի դեպքում կարևորագույն մարտահրավերներից մեկը ոչ միայն նոր սերնդի կրթական քաղաքականության, ուսումնական պլանների, նյութերի մշակումն է, այլև ապահովելը, որ նոր՝ «սահմանված նպատակին համապատասխանող» կրթությունը հասանելի լինի բոլորին՝ երևանյան ամենաառաջատար համալսարաններից մեկի ամենաառաջատար շրջանավարտից մինչև մասնագիտական դասընթացի մասնակից ու որևէ գյուղական դպրոցի տարրական դասարանի աշակերտ, վերելք ապրող տեղեկատվական տեխնոլոգիաների ստարտափ ձեռնարկությունից մինչև երիտասարդ սոցիալական աշխատողներ ու սահմանամերձ գյուղերում ապրող երիտասարդ ֆերմերներ: Իրապես չանտեսել ոչ մեկի:

Այս Զեկույցի և դրան հաջորդող քայլերի ուղղվածության կարևորագույն ոլորտը, որը մենք, որպես ՄԱԶԾ, պլանավորում ենք, երիտասարդների կյանքի հմտություններն են. կյանքի հմտությունները հարկ է հասկանալ շատ ընդարձակ՝ ներառելով առաջնորդության, ակտիվիզմի, ինքնակազմակերպման (հենվելով 2018թ. Թավշյա հեղափոխության վերափոխող էներգիայի վրա), համայնքային ներգրավման հսկայական ներուժը, ինչպես նաև առավել խորքային ու առանցքային նշանակություն ունեցող հարցեր, ինչպիսիք են հանդուրժողականությունը, հակամարտությունները կարգավորելու, տարբերությունները ճանաչելու ու դրանք հարգելու, թիմերով աշխատելու կարողությունը և այլն: Ուժեղ տնտեսությունն ու ամուր հասարակությունը պահանջում են կյանքի զորեղ հմտություններ:

Վերջապես, սույն Զեկույցը, որն ինքնին մի քանի հեղինակավոր հետազոտողների համագործակցության արդյունք է, հղկվել է կառավարության, քաղաքացիական հասարակության ու միջազգային գործընկերների բազմաթիվ արժեքավոր ներդրումների շնորհիվ և կոչ է անում ստեղծել ավելի համակարգված գործընկերություններ, որոնցից կշահի Հայաստանի երիտասարդությունը: ՄԱԶԾ-ում մենք պատրաստ ենք աշխատել երիտասարդության հետ՝ ինչպես անհատապես, այնպես էլ քաղաքացիական հասարակության բոլոր մակարդակների կազմակերպությունների միջոցով, աշխատել Հայաստանի Հանրապետության կառավարության և միջազգային գործընկերների մի ընդգրկուն խմբի հետ՝ երկրի համար ավելի պայծառ ապագա ապահովելու նպատակով:

Դմիտրի Մարիյասին
Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ

Խոսք երախտագիտության

Մարդկային զարգացման ազգային զեկույցն անհնար կլիներ պատրաստել առանց մի շարք կազմակերպությունների և անհատների գործուն օժանդակության:

Հեղինակները երախտագիտություն են հայտնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններին զեկույցն ուսումնասիրելու, արժեքավոր լրացումների և առաջարկությունների համար:

Ծրագիրը ցանկանում է ընդգծել նաև Միգրացիայի միջազգային կազմակերպության ներդրումը 4.6 ներդիրը պատրաստելու գործում:

Հեղինակային խումբն ստացել է օգտակար խորհուրդներ և կառուցողական առաջարկություններ նաև Առանձին շնորհակալություն ՄԱԶԾ սոցիալ-տնտեսական ծրագրերի պատասխանատու Աննա Գյուրջյանին՝ ՄԶԱԶ պատրաստման ողջ գործընթացը նախաձեռնելու և համակարգելու համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Անահիտ Բրուտյանին՝ հայերեն բնագրի խմբագրման և Արամազդ Ղալամքարյանին՝ անգլերեն տարբերակի սրբագրման համար:

Հեղինակային խումբն իր խորին երախտագիտությունն է հայտնում Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դմիտրի Մարիյասինին նորարար գաղափարների, օգտակար խորհուրդների, օժանդակության պատրաստակամության համար:

Հեղինակային խումբը շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր այս կամ այն չափով նպաստել են զեկույցի պատրաստման աշխատանքներին, և ստանձնում է ներկայացված կարծիքների ողջ պատասխանատվությունը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԲՀԿ	Բարգավաճ Հայաստան կուսակցություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԴԵԱՎ	Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագիծ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակներ
ՀԲԸՄ	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետական կուսակցություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿԲ	Հայ կամավորների բանկ
ՀՅԴ	Հայ Հեղափոխական Դաշնակցություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԶՀ	Մարդկային զարգացման համաթիվ
ՄԶԶ	Մարդկային զարգացման զեկույց
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

Խոսք երախտագիտության

Հապավումներ

Համառոտագիր

Ներածություն

ԳԼՈՒԽ 1. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ

1.1. Մարդկային զարգացում և հավասար հնարավորություններ 26

1.2. Երիտասարդական քաղաքականությունը Հայաստանում 27

1.2.1. «Երիտասարդ» հասկացության սահմանումը 27

1.2.2. Երիտասարդական քաղաքականության հիմնական փաստաթղթերը 28

1.2.3. Երիտասարդական քաղաքականության հիմնական մոտեցումները և առաջնահերթությունները 29

1.2.4. Երիտասարդական ոլորտի հիմնական դերակատարները 32

1.2.5. Երիտասարդական ուսումնասիրությունների ավանդույթը 34

1.2.6. Երիտասարդական ծրագրերի և կազմակերպությունների, երիտասարդական աշխատանքի նկարագիրը 35

1.3. Ժողովրդագրական իրավիճակն ու երիտասարդության մարտահրավերները

Առաջարկություններ 36

ԳԼՈՒԽ 2. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

2.1. Երիտասարդության արժեքները և առկա արժեհամակարգային միտումները քաղաքացիական մասնակցության տեսանկյունից 42

2.1.1. Երիտասարդության արժեքային կողմնորոշումները և քաղաքացիական հասարակության ձևավորման խնդիրները 42

2.1.2. Երիտասարդության հասարակական համակեցության ձևերը 45

2.1.3. Երիտասարդությունը և համայնքային կյանքը 46

2.2. Երիտասարդության մասնակցությունը քաղաքացիական, հանրային և մշակութային գործընթացներին 48

2.2.1. Երիտասարդությունը և քաղաքականությունը 50

2.2.2. Երիտասարդությունը և Թավշյա հեղափոխությունը 52

2.2.3. Մեդիան և երիտասարդության մասնակցությունը 53

2.3. Կամավորությունը Հայաստանում 54

Առաջարկություններ 56

ԳԼՈՒԽ 3. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆԵՐԸ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

3.1. Երիտասարդների կրթությունը 58

3.1.1. Կրթության հին և նոր հարացույցները 60

3.1.2. Կրթության ժամանակակից համատեքստը 61

3.1.3. Վաղ մանկության կրթության կարևորությունը 62

3.1.4. Հայաստանի կրթության ապագայի հենասյուները 64

3.1.5. Կրթության ոլորտի հիմնական բացթողումները 67

3.2. Երիտասարդների առողջությունը....68
3.2.1. Առողջապահական ծառայությունների հասանելիությունը և առողջապահական հաստատություններ դիմելիությունը....69
3.2.2. Առողջ ապրելակերպ և առողջապահական կրթություն....69
3.3. Շրջակա միջավայրի ազդեցությունը բնակչության առողջության վրա....72
Առաջարկություններ....73

ԳԼՈՒԽ 4. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ, ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԵԼԻՆ

4.1. Երիտասարդների ինքնաիրականացումը՝ աշխատանք և ձեռներեցություն....76
4.1.1. Կրթության և աշխատաշուկայի ոլորտների քաոսային մուտացիաներ, թե՞ ծրագրավորված բարեփոխումներ....76
4.1.2. Մոտիվատորները որպես համակարգ ձևավորող գործոն....78
4.1.3. Զարգացման հիպոթեզի խնդիրը կրթական համակարգում և աշխատաշուկայում....79
4.1.4. Աշխատաշուկայի փոխակերպումները և մասնագիտական կողմնորոշման համակարգը....80
4.1.5. Բիզնեսի սոցիալականացման միտումը....82
4.1.6. Երիտասարդների տնտեսական հզորացումը և դրա սոցիալ-քաղաքական ներուժը....84
4.2. Չօգտագործված ռեսուրսներ և հնարավորություններ....87
4.2.1. Միջսերնդային երկխոսություն՝ փոխանցում, թե՞ փոխանակում....87
4.2.2 . Երիտասարդության բազմազանությունը որպես իրողություն և ռեսուրս....87
4.2.3. Ճշգրիտ կողմնորոշման համակարգ և ռեսուրսներ....89
4.2.4. Հայկական սփյուռքը որպես զարգացման գործոն....90
4.3. Նոր ժամանակների մարտահրավերները....93
4.3.1. Աշխարհի պատկերը. պատմություններ, որ մենք պատմում ենք ինքներս մեզ....93
4.3.2. Ռազմավարական մտքի և ռեսուրսների համակարգման հարթակներ....93
4.3.3. Գլոբալ ռեսուրսների հասանելիություն և գլոբալ մարտահրավերներ....94
4.3.4. Տեղեկատվական հասարակարգի մարտահրավերները....94
Առաջարկություններ....95

Աղյուսակներ

Աղյուսակ 1.1. Երիտասարդության ոլորտի համակարգումը տարբեր երկրներում....32
Աղյուսակ 3.1. Ուսանողների թիվը ըստ սեռի....59
Աղյուսակ 3.2. Տաղանդի գլոբալ մրցունակության ցուցիչի զեկույց, 2018....60
Աղյուսակ 3.3. Սեռային հավասարության ցուցանիշը մասնագիտական կրթությունում, 2010թ. և 2017թ.....63
Աղյուսակ 3.4. Հայաստանի դպրոցականների ցուցաբերած արդյունքներն ըստ իմացական տիրույթների (TIMSS, 2015)....63
Աղյուսակ 3.5. Հայաստանի դպրոցականների ցուցաբերած արդյունքներն ըստ սեռի (TIMSS, 2015)....X

Նկարներ

Նկար 1.1. ՀՀ երիտասարդական քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի ժամանակագրությունը....28
Նկար 1.2. ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2015-2025 թթ. հայեցակարգի բովանդակային վերլուծություն....29
Նկար 1.3. Մշտական բնակչության սեռատարիքային կազմի փոփոխությունը 2008 և 2018թթ. (ընդամենի նկատմամբ, %)....34
Նկար 1.4. Բնական աճը....34
Նկար 3.1. Բուհերի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՄՈՒՀ) թիվը ըստ տարիների....59

Նկար 3.2. Բուհերի և ՄՄՈՒՀ-ների ուսանողների թիվը X
Նկար 4.1 Աղքատությունը երիտասարդների շրջանում (15-29) X
Նկար 4.2 Երիտասարդների գործազրկության մակարդակը (15-24) X

Ներդիրներ

Ներդիր 1.1. Հրանուշ Շահնազարյանի (32տ.) պատմությունը 31
Ներդիր 1.2. Երիտասարդական քաղաքականության կարգավորման ավանդույթը Հայաստանում 34
Ներդիր 1.3. Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ. փաստարկված երիտասարդական պետական քաղաքականության մեխանիզմ 35
Ներդիր 1.4. Գյումրիի երիտասարդության իրավիճակի վերլուծություն: Տեղական երիտասարդական քաղաքականության օրինակ 36
Ներդիր 1.5. Արփենիկ համայնքի երիտասարդական միգրացիայի պատմությունը 39
Ներդիր 2.1. Գոռ Օրդյանի (29 տ.) պատմությունը 44
Ներդիր 2.2. Ջավեն Թադևոսյանի (18 տ.) պատմությունը 48
Ներդիր 2.3. Լենա Նազարյանի (35 տ.) պատմությունը 50
Ներդիր 2.4. Մերի Ղազարյանի (23 տ.) պատմությունը 52
Ներդիր 2.5. Մարինե Խաչիկյանի (26 տ.) պատմությունը 55
Ներդիր 3.1. «Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը 58
Ներդիր 3.2. Դավիթ Պետրոսյանի (25 տ.) պատմությունը 66
Ներդիր 3.3. Ներսես Խաչատրյանի (22 տ.) պատմությունը 72
Ներդիր 4.1. Արտուշ Խաչատրյանի (35 տ.) պատմությունը 84
Ներդիր 4.2. Գոհար Մնացականյանի (34 տ.) պատմությունը 85
Ներդիր 4.3. Հռիփսիմե Պետրոսյանի (33 տ.) պատմությունը 86
Ներդիր 4.4. Ձամբարակի գյուղապետի ընտրություններ 86
Ներդիր 4.5. Նազելի Թովմասյանի (25 տ.) պատմությունը 88
Ներդիր 4.6. Նանե Մալեք-Սթանյանսի (29 տ.) պատմությունը 92

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 98

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Չորս տեխնոլոգիաներ, որոնք ուրվագծում են ապագայի աշխատանքը 100
Հավելված 2. Մարդկային զարգացման համաթվեր և ցուցանիշներ. 2018 թ. վիճակագրական թարմացում 101

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

«Մարդկության և մեր մոլորակի ապագան մեր ձեռքերում է: Այն նաև երիտասարդ սերնդի ձեռքերում է, որոնք ջահը փոխանցելու են ապագա սերունդներին»:

«Օրակարգ-2030», պարբերություն 53

Չնայած մարդկային զարգացման հարցում աշխարհով մեկ արձանագրված ընդհանուր բարելավմանը՝ մարդկությունը շարունակում է բախվել լուրջ մարտահրավերների: Բազմաթիվ մարդիկ, ներառյալ երիտասարդները, դեռևս ենթարկվում են տարբեր տեսակի խտրականության, տառապում են աղքատության բարձր մակարդակից և ունեն առողջապահական ու կրթական հնարավորությունների և արժանապատիվ աշխատանքի սահմանափակ հասանելիություն: Այս ամենը չի շրջանցում նաև Հայաստանը: Հայաստանի ապագա զարգացման վերաբերյալ ցանկացած բանավեճում երիտասարդության ձայնն ու մասնակցությունն ունեն առաջնային կարևորություն: Որպես երկրի ապագա, նրանց տեսլականն ու տեսակետներն ապագա մարտահրավերներին դիմագրավելու հարցում ունեն էական նշանակություն: Ու մինչ Հայաստանի կառավարությունը մշակում է երկրի զարգացման երկարաժամկետ տեսլականը՝ «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ը, երիտասարդների ձայնը կարող է երկրի ապագա զարգացման ուղու հիմնաքարը դառնալ:

Վերջին տարիների ընթացքում Հայաստանի երիտասարդությունն առանցքային դեր է ստանձնել մի շարք բնագավառներում: Երիտասարդները գլխավորեցին 2018թ. տեղի ունեցած խաղաղ Թավշյա հեղափոխությունը՝ հաղթահարելով տարիներ շարունակ ձգվող քաղաքական և քաղաքացիական անտարբերությունը: Երիտասարդները վերաձևակերպում են Հայաստանի ՏՏ ոլորտի ապագան ստարտափ ընկերությունների նոր սերնդի միջոցով, որը նախաձեռնում են և՛ տեղաբնակները, և՛ սփյուռքահայերը: Մեծանում է երիտասարդների ակտիվությունը տեղական մակարդակում: Այդուհանդերձ, առկա են բազմաթիվ բացեր՝ հնարավորությունների հասանելիությունը, հնարավորություններից օգտվելու կարողությունը և, ընդհանուր առմամբ, Հայաստանի երիտասարդների մարդկային զարգացումը դեռևս խիստ անհավասար է: Սույն Զեկույցում, որն այս պահին նախագծի տարբերակով է, փորձ է արվում ցույց տալ, թե ինչու է սա լուրջ խոչընդոտ հանդիսանում երկրի Կայուն զարգացման նպատակների և «Օրակարգ 2030»-ի իրականացման ճանապարհին: Խոչընդոտ և ռիսկի գործոն՝ Հայաստանի կայունության, անվտանգության և բարեկեցության համար:

Հայաստանի կայուն զարգացումը պայմանավորված է նրանով, թե ինչպես են այսօրվա երիտասարդների ուժը, գիտելիքը, հմտություններն ու արժեքները վերածվում գործողությունների: Գործողություններն անհրաժեշտ են, և դրանում մեծապես կարող են օգնել Կառավարությունը, մասնավոր հատվածը և քաղաքացիական հասարակությունը: Հայաստանի երիտասարդները նույնքան բազմազան են, որքան և երկիրն ինքնին, իսկ աշխարհասփյուռ հիանալի հայ երիտասարդներն էլ ավելի բազմապիսի են: Կենսակերպերի, արժեքների, աշխարհայացքների այս բազմազանությունը եզակի հնարավորություն է ընձեռում ու միևնույն ժամանակ, նաև մարտահրավեր հանդիսանում. ինչպես նշվում է Զեկույցում, չկա «բոլորին հարմար» մեկ երիտասարդական քաղաքականություն: Այնուամենայնիվ, երիտասարդներից շատերի պատմությունները հուշում են, թե ինչպիսին կարող է լինել երիտասարդական համակառավարական քաղաքականությունն ապագայում՝ հիմնված հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների վրա:

Կրթությունն առանցքային նշանակություն ունի երիտասարդների բարեկեցության հարցում: Ըստ ՄԱԶԾ-ի կողմից 1990-ական թվականների սկզբից առաջ մղվող Մարդկային զարգացման համաշխարհային հայեցակարգի, կրթության ոլորտում կատարվող ներդրումներն առավելագույն կերպով են փոխհատուցվում: Սակայն մարդկային զարգացմանը, այդ թվում կրթությանը՝ դրա կարևորագույն հենասյուներից մեկին, հաճախ խոչընդոտում է անհավասարությունը: Հայաստանի պարագայում ամենամեծ մարտահրավերներից մեկը ոչ միայն նոր սերնդի կրթական քաղաքականության, ուսումնական ծրագրերի, նյութերի մշակումն է, այլև երաշխավորումը, որ նոր, «նպատակահարմար» կրթությունը հասանելի կլինի բոլորին՝ Երևանի լավագույն համալսարանի լավագույն շրջանավարտից մինչև միջին մասնագիտական քոլեջի հեռակա ուսանողը կամ գյուղի տարրական դպրոցի աշակերտը: ՏՏ ոլորտի ծաղկուն ստարտափ ընկերության աշխատակիցներից մինչև երիտասարդ սոցիալական աշխատողներն ու սահմանամերձ գյուղերում ապրող երիտասարդ ֆերմերները, երբ իսկապես ընդգրկված են բոլորը:

Այս Զեկույցի և հետագա աշխատանքների ուշադրության կենտրոնում երիտասարդների կենսական հմտությունների կարևորագույն ոլորտն է: Կենսական հմտություններ՝ շատ լայն իմաստով, ներառյալ առաջնորդության, ակտիվիզմի, ինքնակազմակերպման հսկայական ներուժը (որի հիմքում 2018թ. Թավշյա հեղափոխության վերափոխող էներգիան է), համայնքային ներգրավվածությունը, ինչպես նաև ավելի

տրոհված ու հիմնական խնդիրներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, կոնֆլիկտների հարթման, տարբերությունները գիտակցելու և ընդունելու, թիմերում աշխատելու կարողությունը և այլն: Հզոր տնտեսության և հասարակության համար կենսական հզոր հմտություններ են անհրաժեշտ:

2018-2019 թթ. Մարդկային զարգացման ազգային զեկույցի կիզակետում Հայաստանի երիտասարդությունն է: Զեկույցը ներառում է երիտասարդությանն առնչվող առանցքային հիմնահարցերը՝ երիտասարդների քաղաքականությունից մինչև երիտասարդության արժեքային կողմնորոշումները, երիտասարդների կրթությունից և առողջությունից մինչև աշխատաշուկայի ներկա ու ապագա մարտահրավերները:

Զեկույցի գլխավոր նպատակն է՝ նպաստել հանրային բանավեճի առաջացմանը և որոշում կայացնողների ուշադրությունը սևեռել հրատարակության մեջ բարձրացված հարցերին, ինչպես նաև տրամադրել առաջարկությունների մի փաթեթ այն մասին, թե ինչպես դիմագրավել հիմնական մարտահրավերներին, ապահովել ներառական ու հավասար զարգացում Հայաստանի ապագայի՝ երկրի երիտասարդության համար:

Ի վերջո, մի շարք նշանավոր հետազոտողների համագործակցության արդյունք հանդիսացող այս զեկույցի մշակման գործում արժեքավոր մասնակցություն են ունեցել կառավարության, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և միջազգային գործընկերները, իսկ ավելի համակարգված համագործակցության արդյունքում կշահեն Հայաստանի երիտասարդները: ՄԱԶԾ-ը պատրաստ է աշխատել երիտասարդների՝ և՛ անհատների, և՛ բոլոր մակարդակների քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, ինչպես նաև Հայաստանի կառավարության և միջազգային գործընկերների լայն շրջանակի հետ՝ երկրի ավելի բարեկեցիկ ապագան երաշխավորելու նպատակով:

Գլուխ 1. Երիտասարդության քաղաքականության օրակարգը

Ներդիր 1

Երիտասարդության քաղաքականության օրակարգը. հիմնական առաջարկներ

1. Երիտասարդական քաղաքականությունը պետք է «խնդիրների լուծման» հեռանկարից տեղափոխվի դեպի ապագան միտված հեռանկար՝ կենտրոնանալով երիտասարդների իրավունքների և հնարավորությունների վրա: Սա պետք է հիմնված լինի երիտասարդ տղամարդկանց և կանանց զարգացմանն ու բարեկեցությանը հավասարապես աջակցող մոտեցման վրա:
2. Երիտասարդական քաղաքականությունը ոլորտային քաղաքականություն չէ, այն միջոլորտային լուծումներ է պահանջում՝ պետական բազմաթիվ մարմինների ներգրավվածությամբ: Փաստացի, երիտասարդական քաղաքականությունը Կառավարության ընդհանուր ռազմավարության և ծրագրի ու Հայաստանի՝ ԿԶՆ-ների իրականացման ծրագրի երիտասարդական ասպեկտն է: Ուստի, ոլորտային յուրաքանչյուր ռազմավարություն և տեղայնացված ԿԶՆ օրակարգ կարող է օգուտ քաղել այն հատվածից, որտեղ վերլուծվում է դրա ազդեցությունը երիտասարդների վրա:
3. Երիտասարդական քաղաքականությունը տեղական և տարածաշրջանային զարգացման լայն հեռանկար է պահանջում՝ գյուղաբնակ երիտասարդների (ներառյալ սահմանամերձ գյուղերի մասնավոր դեպքը) և չքավոր քաղաքային բնակավայրերում ապրող երիտասարդների հանդեպ թիրախավորված մոտեցումներով: Այս համատեքստում առանցքային են միգրացիայի և ապաբնակեցման խնդիրները: Հետևաբար, երիտասարդական, միգրացիոն և սփյուռքի ներգրավման/վերաինտեգրման քաղաքականությունները սերտորեն կապակցված են:
4. Երիտասարդական քաղաքականությունը պետք է լինի ավելին, քան զուտ փաստաթուղթ. այն պետք է երիտասարդներին աջակցող ծրագրերի պլանավորման և իրագործման հիմք հանդիսանա՝ հստակ կերպով սահմանելով երիտասարդներին առնչվող արդյունքների և գործողությունների գերակայությունը միջնաժամկետ ծախսերի ծրագրերում և միջազգային բոլոր դերակատարների հետ Կառավարության գործընկերության շրջանակում:
5. Ի վերջո, երիտասարդական քաղաքականությունը պետք է մշակվի երիտասարդների հետ և երիտասարդների կողմից՝ ներառական, համատեղ նախագծման գործընթացում: Մենք առաջարկում ենք սույն Զեկույցը որպես համատեղ նախագծման նման մի հարթակ և պարտավորվում ենք 2020թ. սկզբում կայանալիք փորձագիտական և ոչ փորձագիտական քննարկումներում հասարակության տարբեր շերտեր ներկայացնող երիտասարդների ներգրավել:

Այս գլխում ներկայացվում են **մարդկային զարգացման** խնդիրները, երիտասարդության առջև ծառացած հիմնական մարտահրավերները: Մասնավորապես, անդրադարձ է կատարվում Հայաստանի մարդկային զարգացման ցուցանիշներին և երիտասարդության միջավայրում «Մարդկային զարգացում յուրաքանչյուրի համար» սկզբունքի իրականացման մարտահրավերներին: Դիտարկվում են մարդկային զարգացման ոլորտում կառավարության, հանրային քաղաքականության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերը, գենդերային, տարածքային և սոցիալական առումներով հավասար հնարավորությունների հիմնախնդիրը: ***«Մարդկային զարգացում՝ յուրաքանչյուրի համար»*** սկզբունքը կարևոր է, հատկապես երիտասարդների տարբեր սոցիալական խմբերի, ըստ բնակության վայրի, սեռի և այլ հատկանիշների ձևավորվող անհավասարությունների հաղթահարման տեսանկյունից: Մարդկային զարգացման ոլորտում առկա հիմնախնդիրների հաղթահարումը երիտասարդության համար առանցքային է, քանի որ դրա հիմքում ընկած է երիտասարդության ստեղծագործ կարողությունների բացահայտման, զարգացման ու իրացման սկզբունքի հիման վրա քաղաքականությունների մշակման կարևորումը: Այն նաև երիտասարդության արտահոսքը Հայաստանից կանխելու կարևոր նախապայման է: Առաջարկվում է մարդկային զարգացման բանաձևը դարձնել ՀՀ կառավարության քաղաքականությունների մշակման կարևոր սկզբունք:

Զեկույցը հիմնականում հաշվի է առնում «երիտասարդների» Հայաստանում ընդունված սահմանումը՝ որպես 16-30 տարիքային խումբ (սակայն որոշ դեպքերում ներկայացվում է նաև 15-29 խմբի վիճակագրությունը՝ որպես միակ հասանելին): Այդ խումբը բաղկացած է ութսունական, ինսունական և երկուհազարական թվականներին ծնվածներից, որոնք համապատասխանաբար համարվում են «X սերունդ» կամ թվային միգրանտներ, «Y սերունդ» կամ թվային բնիկներ և «Z սերունդ» կամ ֆեյսբուքյան սերունդ:

Երկրորդ ենթագլխում տրվում է **«երիտասարդ» հասկացության սահմանումը՝** միջազգային և տեղական փորձը, ներկայացվում են երիտասարդական պետական քաղաքականությունը կարգավորող հիմնական մոտեցումները Հայաստանում, հիմնական փաստաթղթերը և դերակատարները: «Երիտասարդություն» հասկացությունն առհասարակ դիտարկվում է երեք իմաստով՝ սերունդ, սոցիալական խումբ և կյանքի փուլ: Երիտասարդության սահմանման հետ կապված տեսական բազմաթիվ մոտեցումների համադրումը թույլ է տալիս անել մեկ ընդհանրացում. երիտասարդությունը դիտարկվում է որպես **կախվածությունից անցում դեպի անկախություն:** Տեսաբանների մի մասն անկախության ձեռքբերումը կապում է կրթության, զբաղվածության, կարիերայի աճի հետ, իսկ մյուս մասը՝ ծնողներից առանձին ապրելու, ճանապարհորդելու հնարավորությունների հետ:

Երիտասարդության ոլորտային հիմնարար փաստաթուղթ է համարվում ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2015-2025 թթ. հայեցակարգը: ՀՀ կառավարության 2019թ. ծրագրի համաձայն՝ երիտասարդական պետական քաղաքականությունն ուղղված է ստեղծելու այնպիսի միջավայր, որտեղ երիտասարդները կկարողանան լիարժեք ինքնադրսևորվել և կառուցել սեփական ապագան: Մինչ այժմ երիտասարդական պետական քաղաքականության մշակումը հիմնվել է երիտասարդների **կարիքների** վրա՝ բացահայտված ոլորտային ուսումնասիրությունների միջոցով, սակայն երիտասարդական քաղաքականությունը պետք է հիմնվի ոչ թե կամ ոչ միայն կարիքների, այլ նաև **իրավունքների** վրա:

Առհասարակ, երիտասարդական քաղաքականությունը Հայաստանում երիտասարդներին հիմնականում դիտարկում է որպես խնդիր, իսկ երիտասարդության արդի մոտեցումներում գերիշխում է **երիտասարդությանը որպես ռեսուրս, ներուժ** դիտելու փիլիսոփայությունը:

2019թ. ՀՀ կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, երիտասարդության ոլորտի համակարգումը տեղափոխվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՄՆ) ներքո: ԿԳՄՄՆ շրջանակներում ոլորտի կարգավորման գործընթացը՝ ինչպիսի առաքելություն, գործառույթներ է կատարելու նախարարությունն երիտասարդության մասով, ինչպիսի իրավական և օպերացիոնալ հիմքեր են ներդրվելու, դեռևս ընթացքի մեջ է: Փաստարկված երիտասարդական քաղաքականությունը ևս մշակման փուլում է:

Անհրաժեշտ է մշակել և ներդնել երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում միջգերատեսչական համագործակցության նոր և արդյունավետ մեխանիզմներ:

Նկար 1[1] Աղքատությունը երիտասարդների շրջանում (15-29)



Այս հատվածում ներկայացվում է նաև երիտասարդական աշխատանքի ինստիտուտի զարգացման հեռանկարները: Առաջարկվում է մշակել երիտասարդական ծրագրերի նոր ձևաչափեր՝ ուղղված այսօրվա երիտասարդների արդի կարիքներին, **հավասար իրավունքներին ու հնարավորություններին և ակնկալիքներին:** Ներկայացվում է նաև Հայաստանի երիտասարդների ժողովրդագրական վիճակի վերլուծությունը, քննարկվում են ներկա ժողովրդագրական իրավիճակը և երիտասարդությանը վերաբերող հիմնախնդիրները, դրանց հետ կապված պետական քաղաքականության մարտահրավերները, երիտասարդության շրջանում արտագաղթի մեծացման հիմնական պատճառները և լուծման հնարավոր ուղիները:

Առաջարկվում է կարևորել երիտասարդության ժողովրդագրական վիճակի բարելավման քաղաքականության երեք առանցքային ուղղություն՝ Հայաստանից երիտասարդների արտահոսքի նվազեցում և կանխում, **Հայաստանից արդեն արտագաղթած երիտասարդության վերադարձի ու վերաինտեգրման պայմանների ստեղծում և բնական աճի ապահովում:**

Գլուխ 2. Երիտասարդության մասնակցությունը և արժեքները քաղաքացիական հասարակության տեսանկյունից

Ներդիր 2

Երիտասարդության մասնակցությունը և արժեքները. հիմնական առաջարկություններ

1. Անհրաժեշտ է օգնել երիտասարդներին խմբակենտրոն և կլանային արժեքներից անցում կատարել դեպի մարդակենտրոն և հանրային արժեքներ, ինչպես նաև խթանել հորիզոնական և մարդասիրական արժեքները երիտասարդների շրջանում՝ ի հակադրություն բռնապետական և ստորակարգային արժեքների:
2. Սա իրագործելու համար Հայաստանի երիտասարդները կօգտվեն բազմաթիվ լրացուցիչ համագործակցային հարթակներից (վիրտուալ և ֆիզիկական), ծրագրերից, որտեղ համակցվում են սոցիալական տարբեր խմբեր, որտեղ կանայք և տղամարդիկ աշխատում են համատեղ, որտեղ գյուղաբնակ և քաղաքաբնակ երիտասարդներն արարում են միասին, որտեղ պարգևատրվում է ակտիվ և ստեղծարար դիրքորոշումը:

[1] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2016-2018 թթ.

3. Անհրաժեշտ է Հայաստանի երիտասարդների համար ինքնակայացման բազմաթիվ հնարավորություններ ստեղծել՝ շեշտը դնելով ստարտափային մշակույթի խթանման վրա՝ ՏՏ ոլորտում և անդին: Սոցիալական, բնապահպանական, կրթական ստարտափները կարող են հատուկ մշակված պետական աջակցության սխեմայի կենտրոնում հայտնվել:
4. Պետք է խրախուսվի քաղաքացիական ակտիության խթանումը, երիտասարդներին պետք է խրախուսել, որ նրանք միանան առկա քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և ստեղծեն նորերը: Քաղաքացիական ակտիվությունը դպրոցական տարիքից, հիանալի հմտություն է և կարողությունների զարգացման փորձ, որի շնորհիվ երիտասարդներն ավելի հեշտ են տեղ գտնում արդի աշխատաշուկայում:
5. Կարևոր է երիտասարդների շրջանում արտագաղթի մակարդակը նվազեցնելու մեխանիզմներ մշակել ու ներգաղթը խթանող պայմաններ ստեղծել, հստակ ուղերձ ձևակերպելով առ այն, թե ինչպիսի արժեքներ երիտասարդները կարող են բերել Հայաստան, մեծապես կենտրոնանալով պատկանելության զգացումի, համայնքում ներգրավվելու և հնարավորությունների վրա:

Այս գլխում ներկայացվում են երիտասարդների **արժեքային կողմնորոշումների**, **համակեցության** ձևերի առանձնահատկությունները և դրանց կապը քաղաքացիական հասարակության ձևավորման խնդիրների հետ: Քննարկվում է **մարդակենտրոն** և **խմբակենտրոն, ավտորիտար և մարդասիրական, ազգային ու համամարդկային** արժեքային կողմնորոշումների և քաղաքացիական հասարակության ձևավորման վրա դրանց ազդեցության հիմնախնդիրը: Երիտասարդության մեջ բացասական դեր են խաղում, հատկապես, ավտորիտար և խմբակենտրոն բնույթի արժեքները, որոնց փոխակերպման անհրաժեշտությունը երիտասարդական քաղաքականությունների կարևոր խնդիր է: Անհրաժեշտ է **համալիր մոտեցում**, ինչը կարտացոլվի կրթական, մշակութային, սոցիալական, տարածքային և տեղական կառավարման և հանրային ոլորտին վերաբերող այլ քաղաքականություններում:

Առանձնակի կարևորություն ունի նաև երիտասարդության միջավայրում քաղաքացիական արժեքների տարածման խնդիրը, ինչի համար առանցքային է ոչ ֆորմալ կրթության դերը: **Հասարակական համակեցության**՝ երիտասարդությանը բնորոշ ձևերի մեջ քննարկվում են հարկադիր-ենթակայական, կոնֆլիկտային, մրցակցային և համագործակցային ձևերը, դրանցից յուրաքանչյուրի տարածվածության և դերակատարության հարցերը: Երիտասարդության միջավայրում կարևոր խնդիր է, հատկապես, կոնֆլիկտային ու հարկադիր ենթակայական ձևերի հաղթահարումը և, ի հակակշիռ դրան, երիտասարդության ստեղծարար ներուժի համար առավել նպաստավոր միջավայր ձևավորող, մրցակցային ու համագործակցային ձևերի խրախուսումը: Թիմային աշխատանքն այն առանցքային գաղափարներից է, որը պետք է գերակա դառնա հայ հասարակությունում, որպեսզի երիտասարդները կարողանան հաջողության հասնել: Համատեղ աշխատանքի ընթացքում մարդկանց էներգիան կարող է խթանել ստեղծարար միտքը, արտադրողականությունը, գործին նվիրումը, հաղորդակցությունն ու արդյունավետությունը: Թիմերում աշխատող, տարբեր փորձառություն ունեցող մարդկանց ստեղծարար ունակություններն ու կատարողականը մեծանում են մինչև 35 տոկոսով [2]:

2018թ ՄԱԶԾ-ն հիմնեց «Համայնքը ԵՍ եմ» երիտասարդական ակումբը, որը միավորում է 83 (57 կին և 26 տղամարդ) «Համայնքը ԵՍ եմ» համայնքային երիտասարդ առաջնորդների ճամբարի շրջանավարտներին: Ակումբի նպատակն է ներգրավել տարբեր մարզերում բնակվող երիտասարդներին քաղաքականությունների մշակման գործընթացին: Ակումբի անդամները «Համայնքը ԵՍ եմ» ճամբարի ընթացքում անցել են վերապատրաստման դասընթացներ ՀՀ տեղական ինքնակառավարման, ուղղակի ժողովրդավարության և գենդերային հավասարության թեմաներով: Ինչպես նաև իրականացրել են փոքր նախաձեռնություններ իրենց համայնքներում՝ մասնակցային ժողովրդավարության և կանանց ներգրավվածության ուղղությամբ: Առաջին համապարփակ առաջարկությունների փաթեթը Տեղական Ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի փոփոխությունների կատարելու մասին մշակվել է ակումբի անդամների կողմից 2019թ ապրիլին: Ընդհանուր 18 առաջարկություններ են ներկայացվել կառավարություն և Ազգային ժողով, որը նաև ներառում է նվազագույնը 30% գենդերային չեզոք քվոտա ՏԻՄ-ում:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում են երիտասարդության **քաղաքացիական, մշակութային ու քաղաքական մասնակցության** հետ կապված հարցեր: Առաջարկվում է արտացոլել երիտասարդության կարիքները ոլորտային քաղաքականություններում և հաշվի առնել դրանցում գենդերային տեսանկյունը:

[2] McKinsey & Company, “Diversity Matters”, 2015

Քաղաքացիական մասնակցության ձևերում կարևոր է քաղաքացիական **հասարակության կազմակերպությունների**՝ ՔՀԿ-ների, և **քաղաքացիական նախաձեռնությունների** դերակատարության խթանումը, ինչպես նաև չկազմակերպված երիտասարդության քաղաքացիական մասնակցության խնդիրներին ուղղված քաղաքականությունների մշակումն ու իրականացումը: Մասնակցության մյուս կարևոր ձևը **քաղաքացիական նախաձեռնություններն են:** Դրանք հատկապես ընդգծված երիտասարդական բնույթ ձեռք բերեցին 2008 թվականից ի վեր: Հիմնական առանձնահատկությունը հանրայինի հանդեպ իշխանության հովանավորությամբ իրականացվող օլիգարխիկ համակարգի գործողություններին դիմադրության ցուցաբերումն էր և հանրային շահի պաշտպանությունը: Կա կարծիք, որ որոշ նախաձեռնություններ, մասնավորապես Մաշտոցի պուրակի և Երևանի տրանսպորտի ուղևորավարձերի թանկացման դեմ քաղաքացիական նախաձեռնությունները ձևավորել են հետագայում Թավշյա հեղափոխության կողմից ժառանգված պայքարի այնպիսի ձևեր, ինչպիսիք են բազմակենտրոնությունը, խաղաղ ու ոչ բռնի անհնազանդությունը, որոշումների կայացման հորիզոնականությունը, մասնակիցների ընդգրկման բացությունը, նախաձեռնողականությունը: Այս նախաձեռնությունների կարևոր ներդրումներից մեկը ակտիվ, նախաձեռնող, պատասխանատու երիտասարդի ու քաղաքացու ինքնության ձևավորումն էր [3]:

Արժևորվում է երիտասարդների մասնակցությունը «Թավշյա հեղափոխությանը» և դրանից քաղված դասերը, քաղաքական ու քաղաքացիական գործընթացներում երիտասարդության դերակատարության հետագա խթանման հարցը: Այս առումով կարևոր է մի կողմից՝ հեղափոխության ընթացքում երիտասարդության դերակատարության և դրանից քաղված դասերի խնդիրը, մյուս կողմից՝ հեղափոխության ազդեցությունը երիտասարդության մեջ տեղի ունեցող փոխակերպումների վրա:

Թավշյա հեղափոխության կարևոր հատկանիշն էր միակենտրոնության փոխարինումը **բազմակենտրոնությամբ,** ինչը հասարակության առավել նախաձեռնողական երիտասարդներին հնարավորություն տվեց ձևավորել քաղաքական պայքարին մասնակցության կենտրոններ ոչ միայն Երևանում, այլև ամենահեռավոր մարզերում: Քաղաքական մասնակցության այս առանձնահատկությունների շնորհիվ ամբողջ հանրապետության տարածքը դարձավ պայքարի դաշտ, իսկ յուրաքանչյուր կենտրոն՝ նույնքան կարևոր, որքան որ մնացածը: Հնարավոր դարձավ քաղաքական գործընթացների մասնակից դարձնել նաև գյուղական ու մարզային երիտասարդությանը, ինչը աննախադեպ երևույթ էր այն առումով, որ քաղաքական գործընթացին մասնակցության համար չէր պարտադրում երիտասարդությանը տեղափոխվել Երևան:

Թավշյա հեղափոխության արդյունքում փոխվեց նաև կառավարության տարիքային կազմը: Ձևավորված նոր Կառավարությունում հիմնականում երիտասարդ տարիքի անհատներ են: Այդ իրողությամբ պայմանավորված՝ էական փոփոխություններ են նկատվում նաև կառավարման մշակույթում: Առաջնային են դարձել թափանցիկության, հաշվետվողականության ու մատչելիության բաղադրիչները: Կրճատվել է հասարակություն – իշխանություն դիստանցիան, ինչը ժողովրդավարական հասարակության կարևոր ցուցիչներից է:

Կարևոր խնդիր է նաև **մեդիայի** աճող դերակատարությունը երիտասարդության կյանքում և այն որպես քաղաքական ու քաղաքացիական ակտիվության նոր գործիք գործադրելու հեռանկարները: Առանձին մի ոլորտ է **կամավորության** և այն խրախուսող մշակույթի ձևավորման խնդիրը: Այն Հայաստանի երիտասարդության համար նոր, բայց զարգացող երևույթ է: Այս առումով կարևորվում է հանրային գիտակցության մեջ կամավորության արժևորման բարձրացումը, դրա շուրջ դիսկուրսի հանրայնացումը և այն կարգավորող օրենսդրության մշակումը: Հայաստանում աճում է հետաքրքրությունը կամավորական աշխատանքի նկատմամբ, սակայն բացակայում են կամավորության մշակույթի խթանմանն ու զարգացմանն ուղղված կանոնակարգերը: Ազգային ժողովի նախաձեռնությամբ, ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակն աջակցում է կամավորության զարգացման օրենսդրական դաշտի մշակմանը: Նոր օրենսդրությունը նպատակ ունի հստակեցնել կամավորի և կամավորական կազմակերպությունների կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները, հստակեցնել կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները՝ կամավորների հետ աշխատանքում, կամավորների հետ համաձայնագրի բովանդակությունը և այլն: Բացի դրանից, օրենսդրության շնորհիվ կամավորական կազմակերպությունները կկարողանան կամավորության զարգացմանն ուղղված ծրագրեր որդեգրել, աջակցություն ստանալ պետական և տեղական իշխանություններից, տեղեկացնել քաղաքացիներին կամավոր դառնալու հնարավորությունների մասին և այլն:

Գլխի հիմնական առաջարկները կենտրոնացած են **կառավարմանը երիտասարդության մասնակցությունը խրախուսող քաղաքականության և այն իրագործող մեխանիզմների** ձևավորման շուրջ: Առաջարկվում է քաղաքականությունների մշակման, իրականացման, մոնիտորինգի ու գնահատման ոլորտներում **երիտասարդության ներուժի ներգրավման ու մասնակցության աճը դարձնել նոր կառավարության գործունեության** կարևոր խնդիրներից մեկը:

[3] Ishkanian A. Self determined citizens? New forms of civic activism and citizenship in Armenia. Pp. 1221-1224.

Ներդիր 3

Երիտասարդության բարեկեցության հիմնասյուները. կրթություն և առողջապահություն. հիմնական առաջարկություններ

1. Կրթության հարացույցը փոխվում է: Կրթությունը պետք է դառնա ավելի մասնակցային և ներառական: Երիտասարդները պետք է ավելի ակտիվ ներգրավված լինեն կրթության որակի ապահովման գործում: Կրթական համակարգում երիտասարդներին պետք է դիտարկել ոչ միայն որպես սովորող կողմ, այլև՝ ուսուցանող:
2. Երիտասարդների կրթական և առողջապահական խնդիրների լուծման առավել արդյունավետ եղանակներից մեկը վաղ մանկության տարիքում զարգացման ծրագրերի շեշտադրումն է:
3. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կայուն զարգացմանն ուղղված կրթությանը. սոցիալական համախմբվածությունը, խաղաղությունը, շրջակա միջավայրի պահպանումը, բազմազանության հանդեպ հարգանքը՝ այս հիմնական արժեքները երեխաները պետք է տեսնեն և ընկալեն վաղ տարիքից:
4. Առաջնահերթություններից է նաև առողջապահական կրթությունը. երիտասարդները պետք է գիտակցեն անառողջ ապրելակերպի վտանգները և առաջնային համարեն առողջ սովորությունները: Հիմնական շեշտը պետք է լինի առողջ սննդի (տանը և դպրոցում), ծխելուց խուսափելու, ինչպես նաև ալկոհոլի և թմրամիջոցների օգտագործումը կանխելու վրա:
5. Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների սկզբունքի առաջխաղացումը պետք է ապահովվի կրթական բոլոր ծրագրերում, ուսումնական նյութերում, տղաների և աղջիկների աշխատանքային ուղղորդման շրջանակներում՝ որպես համապարփակ հարց՝ կենտրոնանալով անձնական և մասնագիտական օգուտների վրա:

Այս գլխում քննարկվում են երիտասարդների **կրթությանը** և **առողջապահությանն** առնչվող խնդիրներ: Անկախության տարիներին Հայաստանում կտրուկ ավելացել է բուհերի և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թիվը: Սակայն կրթության որակը բավարար չէ: Կրթությանը վերաբերող ենթագլխում ներկայացվում են կրթության երեք առանցքային խնդիրներ, որոնց լուծումն էական դեր ունի ժամանակակից երիտասարդության համար:

Առաջին խնդիրն այն է, որ կրթության գործընթացն այլևս կենտրոնացած չէ միայն ուսումնական հաստատություններում: Մեծ տարածում են ստացել **ոչ ֆորմալ և ինֆորմալ** կրթական հարթակները: Սա նշանակում է, որ կրթական քաղաքականությունը պետք է ներառի բովանդակության շատ ավելի լայն շրջանակ, քան ֆորմալ կրթությունը: Երկրորդ խնդիրն այն է, որ գաղափարական ճգնաժամի պայմաններում **աշխարհը դարձել է շատ անորոշ,** երբ նոր միտումներն ու իրականությունը վերաձևավորում են այսօրվա երիտասարդների ապագայի կենսունակ արդյունքները: Մինչդեռ կրթության համակարգը շարունակում է երեխաներին պատրաստել որոշակի աշխարհի համար: Այս համատեքստում կարևոր է այնպիսի հմտությունների ձևավորումը, որոնք երիտասարդներին կօգնեն հաջողակ լինել անորոշություններով լի աշխարհում: Այդպիսի հմտություններ են **ճկունությունը, տոկունությունը, քննադատական, ստեղծագործական մտածողությունը** և այլն:

Այնուհետև, ներկայացվում են մի շարք արտաքին գործոններ, որոնք ազդում են կրթության վրա: Մասնավորապես, նշվում է, որ ժամանակակից կյանքը շատ ավելի դինամիկ է դառնում, ինչի համատեքստում կրթության դանդաղ ու երկարատև ընթացքը երիտասարդների մոտ կրթության հանդեպ բացասական տրամադրվածություն է առաջացնում: Փոխվում է նաև **հաղորդակցման մեդիան**: Եթե մինչև վերջերս կրթությունը հիմնված էր բանավոր խոսքի և տպագիր նյութերի վրա, ապա այսօր խնդիր կա կրթության գործընթացում ներառելու նորագույն տեխնոլոգիաները: Կրթության գործընթացի վրա լրջորեն ազդում է նաև տեղեկատվության առատության արդյունքում ի հայտ եկած ուշադրության անբավարարությունը: Առանց խորացված ուշադրության, անհնար է արդյունավետ կրթական գործընթացի կազմակերպումը: Բայց ժամանակակից աշխարհում հատկապես, տեխնոլոգիաների զարգացման արդյունքում կտրուկ դժվարացել է ուշադրության կենտրոնացումը: Եվ վերջապես, կրթության համար լրջագույն խնդիր է **զգացմունքների օգտագործումը**: Երիտասարդները հուզական էակներ են: Նրանց ավելի շատ են գրավում գործունեության հուզական տեսակները: Այս համատեքստում ռացիոնալության վրա կառուցված կրթական գործընթացը ոչ միշտ է արդյունավետ: Հետազոտությունը[4] ցույց է տալիս, որ երբ կրթությունը և՛ ակադեմիական,

[4] Elias, Maurice J. Academic and Social-Emotional Learning. Educational Practices Series. International Bureau of Education, Geneva (Switzerland);

և՛ հուզական ուսումնառություն է ներառում, ուսանողներն ավելի մեծ հավանականությամբ են հիշում և կիրառում սովորածը: Նրանց կրթությունն ընդգրկում է նաև պատասխանատվության զգացումը, հոգատարությունն, ու մյուսների, ինչպես նաև սեփական անձի բարեկեցության մասին մտահոգությունը: Այսպիսով, կարելի է ասել, որ ուսումնառությունն անդրադառնում է և՛ «գլխին», և՛ «սրտին», արդյունքում կրթական գործընթացն ավելի հաջող է անցնում, իսկ ուսանողներն ավելի են ոգեշնչվում: Այս համատեքստում ռացիոնալության վրա հիմնված կրթական գործընթացը ոչ միշտ է արդյունավետ:

Որպես երիտասարդների կրթության վիճակի բարելավման մեթոդներ՝ առաջարկվում է կրթության բովանդակության մեջ ուսուցման, հետազոտության և գործնական հմտությունների համադրումը: Իրավիճակի բարելավման մեկ այլ մոդել է դիտարկվում պրոակտիվության խթանումը: Երիտասարդների կրթության մակարդակի բարձրացմանն էապես կարող են նպաստել փոխուսուցման ծրագրերը: Երիտասարդները պետք է լինեն ոչ միայն սովորողներ, այլև սովորեցնողներ: Եվ վերջապես, շատ կարևոր է կրթության գործընթացի ստեղծարար կազմակերպումը և ստեղծարարության ուսուցումը: Այս առումով, Ջեկույցում ներկայացվում է միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող «Իրական դպրոցը[5]»: Այս հաստատությունում սովորողներն ուղղակիորեն մասնակցում են իրենց սեղան-աթոռների ստեղծմանը: Նրանք պարբերաբար մասնակցում են տարբեր տեսակի փորձությունների, ստանում են հիմնարար գիտելիքներ: Վերջում ներկայացվում են Հայաստանի մեծահասակների, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ոլորտում, ուսումնական հաստատությունների միջավայրում առկա խնդիրներ, որոնց լուծումը հրատապ է:

Երիտասարդների առողջության ենթագլխում ներկայացվում են առողջապահական ծառայությունների հասանելիության և դիմելիության հետ կապված խնդիրները, ինչպես նաև առողջ ապրելակերպի և առողջապահական կրթության հետ կապված հարցերը:

Առողջապահական ծառայությունների հասանելիության առումով առկա է տարբերություն քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև, ինչի մասին են վկայում նաև մի շարք ուսումնասիրություններ: Այսպես, 2015 թվականին ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» շրջանակներում այցեր են կատարվել ՀՀ մի շարք բժշկական հաստատություններ[6]: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գյուղերում և քաղաքներում առկա է առողջապահական որոշ ծառայությունների տարբերություն. որոշ ծառայություններ չեն մատուցվում գյուղերում, ուստի կանայք ստիպված են լինում այցելել մոտակա քաղաքներ:

Ներկայացվում են առողջ ապրելակերպի և առողջապահական կրթության խնդիրները: Հայաստանի Առողջապահության ազգային ինստիտուտի տվյալներով, Հայաստանի Հանրապետության բնակչության 15 տարեկան և բարձր տարիքային խմբում առավել տարածված են հետևյալ ռիսկի գործոնները՝ ծխախոտի ամենօրյա օգտագործում, որի տարածվածությունը ողջ բնակչության շրջանում կազմում է 24 % (տղամարդկանց շրջանում՝ 50 %, իսկ կանանց շրջանում՝ 2,3 %), գիրություն ու ճարպակալում՝ 49 %, ֆիզիկական թերակտիվություն՝ 17,5 %, ալկոհոլի օգտագործման չարաշահում՝ 8,2 %, (տղամարդկանց շրջանում՝ 15 %: 2019թ. ԱՀԿ-ի և ՄԱԶԾ-ի կողմից համատեղ ֆինանսավորվող Հայաստանում ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) կանխարգելման և հսկողության ոլորտում ներդրումները հիմնավորող փաստարկների համաձայն, 2016թ. 26300 մարդ է մահացել ՈՎՀ-ից վերարտադրողական տարիքում (ԱՀԿ, 2018b), իսկ 2017թ. ՈՎՀ-ն 362,7 միլիարդ դրամի վնաս է հասցրել Հայաստանի տնտեսությանը:

Կարևորվում է նաև շրջակա միջավայրի ազդեցությունն առողջության վրա: Բնակչության, մասնավորապես երեխաների առողջության վրա դեգրադացված էկոհամակարգերի ազդեցության տեսանկյունից առավել ռիսկային են Լոռին, Սյունիքը և Երևանը: Ընդ որում, Երևանում էկոլոգիական բնույթի պատճառները բազմաբովանդակ են (Նուբարաշենի տոքսիկ նյութերի գերեզմանոցը, որից տարածվում են կայուն օրգանական աղտոտիչները, քաղաքի աղբավայրերը, դրենաժային համակարգի անկատարությունը, քաղաքամերձ տարածքում և նույնիսկ կենտրոնում գործող հանքերը, որոնք քաղաքի օդային ավազանին փոշի են «մատակարարում», լանջերի անտառազրկումը, Կենտրոնի կառուցապատման խտացումը, տրանսպորտը և այլն), իսկ Լոռու և Սյունիքի մարզերում գերակա հիմնախնդիրը հանքարդյունաբերական արտադրության հետևանքով հողի, ջրի, օդի, սննդաշղթայի աղտոտվածությունն է ծանր մետաղներով:

Գլխի հիմնական առաջարկներից են կրթության գործընթացում **երիտասարդների մասնակցության ուժեղացումը, ուսուցման, հետազոտությունների և աշխատանքի կապակցումը, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության** արդյունքների ճանաչումը: Առաջարկվում է անցկացնել **երիտասարդների առողջության վերաբերյալ համալիր**

International Academy of Education, Brussels (Belgium), 2003

[5] Հայաստանում ներկայումս փորձարկման փուլում է «Իրական դպրոցը», որն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր:

[6] Հասանելի է հետևյալ հղումով. http://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Public%20inquiry%20report_arm_0.pdf:

հետազոտություն: Որպես խնդիրների կանխարգելման միջոց առաջարկվում է **ներդրումներ կատարել վաղ մանկության կրթության, առողջապահության** վրա՝ բացառիկ կարևորություն տալով **առողջապահական կրթությանը:**

Ներդիր 4

Երիտասարդների հմտություններ, աշխատատեղեր, ձեռնարկատիրություն և ավելին. հիմնական առաջարկություններ

1. Հայաստանի երիտասարդների ապագան կախված է նրանից, թե արդյոք նրանք այսօր կկարողանան ըմբռնել և օգտագործել այն ներուժը, որ համաշխարհային և տեղական մակարդակներում առաջարկում են հասարակական և տեխնոլոգիական նոր փոփոխությունները, ներառյալ կլիմայի փոփոխության ազդեցությունը, սոցիալական փոխգործակցության նոր մոդելները, արհեստական բանականության առաջխաղացումը և այլն:
2. Հայաստանին անհրաժեշտ է երիտասարդների ապագայի հմտությունների և աշխատանքի օրակարգ, որ կենտրոնացած կլինի 10-15 տարվա հեռանկարում աշխատաշուկայի, մասնագիտությունների սահմանման, մարդկանց աշխատանքի դերի զարգացման վրա: Հայաստանը պետք է հմտությունների հիմք ստեղծի ապագայի համար՝ ոչ թե առաջընթացին հետևելով, այլ թռիչքային արագությամբ: Սա նշանակում է, որ և՛ բարձրագույն, և՛ միջին մասնագիտական կրթությունը պետք է շատ ավելի մեծ չափով հիմնվեն գործատուների իրական կարիքների վրա, հասկանան մարզերի և ոլորտների մրցակցային տեղերը և պատրաստ լինեն փորձարկումների: Երիտասարդները պետք է գլխավորեն այս շարժումը, և դրա համար հրաշալի հենք է հանդիսանում կառավարության ձեռնարկած «Աշխատիր, Հայաստան» ծրագիրը:
3. Հաշվի առնելով այն, որ ամբողջ աշխարհում գործարար ոլորտն ավելի լուրջ սոցիալական առաքելություն է ստանձնում, նաև տեխնոլոգիաները հանուն բարօրության կիրառելու ներուժը, Կառավարությունը պետք է ներդրումներ կատարի այնպիսի էկոհամակարգում, որը խթանում է սոցիալական ազդեցությամբ ներդրումները, սոցիալական ձեռնարկատիրությունը և ապակենտրոնացված նորարարությունը՝ երիտասարդներին ուղղված ակտիվ դիրքորոշմամբ:
4. Պարտադիր կերպով պետք է հատուկ ռազմավարություն մշակվի և իրագործվի, որը հնարավորություն կընձեռի ներմուծել սփյուռքի փորձագիտական, մտավոր և ստեղծարար ներուժը և օգտագործել այն երիտասարդների վրա հիմնված զարգացման ծրագրերի նախաձեռնման նպատակով՝ անհատական, համայնքային և ազգային մակարդակներով:
5. Ի վերջո, երիտասարդների հաջողությունը կախված է այլ սերունդների հետ նրանց փոխգործակցությունից. միջսերնդային երկխոսությունը, տարեց քաղաքացիների հետ աշխատելու ակտիվ ձևերը, նաև ցկյանս ուսումնառության ավելի մեծ շեշտադրումը կդառնան Հայաստանի երիտասարդների հաջողության առանցքային բաղադրիչը:

ՄԱԶԾ Հայաստանի «Ապագայի հմտություններ և աշխատատեղեր» ծրագիրն ուսումնասիրում է երկարաժամկետ ապագայի հնարավորությունները՝ զինելով այսօրվա երիտասարդությանն այնպիսի հմտություններով, որոնք կօգնեն նրանց օգտագործել իրենց ամբողջ ներուժն ապագայի աշխատաշուկայում: Ապագա հմտությունների մոդելավորման մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում հասկանալ, թե ինչպիսի հմտություններ և աշխատատեղեր կպահանջվեն 5-10 տարի անց: Շնորհիվ այսպիսի մոտեցման, ոլորտի դինամիկ փոփոխություններին հարմարվելու փոխարեն, ներկայիս կրթական համակարգը կկարողանա արդեն այսօր նախապատրաստվել ապագայի աշխատաշուկայի պահանջները բավարարելուն:

Ամփոփիչ գլխում ներկայացվում են երեք հիմնական թեմատիկ բլոկներ: Դրանցից առաջինը երիտասարդների **ինքնաիրականացման** և **ինքնաիրացման** դաշտում առկա մարտահրավերների և հնարավորությունների վերլուծությունն է: Մասնավորապես, առաջին ենթագլխում քննարկվում է անցումը դեպի **աշխատաշուկա և ձեռնարկատիրությունը**:

Վերջին տասնամյակում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների և արդյունաբերության համակարգչայնացման և ավտոմատացման ոլորտներում տեղի են ունենում ինտենսիվ զարգացումներ: Այդ զարգացումները հանգեցնում են աշխատաշուկայի կառուցվածքի և տրամաբանության արմատական փոփոխությունների, որոնք, հատկապես, անդրադառնալու են այն երիտասարդների վրա, ովքեր ներկայումս գտնվում են կրթական համակարգում և/կամ պատրաստվում են մուտք գործել աշխատաշուկա:

Նկար 2[7] Երիտասարդների գործազրկության մակարդակը (15-24)



2008-2010 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի շրջանում աննախադեպ կերպով սկսեց զարգանալ բիզնես ոլորտի դրական սոցիալական առաքելության անհրաժեշտության թեման: Այդ թվականներին թե՛ գործարար հատվածի, թե՛ ազգային պետությունների և թե՛ միջազգային համայնքի կողմից սկսեցին համակարգային քայլեր կատարվել **սոցիալական ազդեցությամբ ներդրումների** (social impact investment), **սոցիալական ձեռնարկատիրության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության** ոլորտների խթանման ուղղությամբ: Այս երևույթները, դեռևս պատշաճ անդրադարձ չեն գտնում ազգային ծրագրերի և ռազմավարությունների մշակման ոլորտներում: Հետաքրքրական հնարավորություններ են ստեղծվում հատկապես այն նոր հարթակների և տեխնոլոգիաների հատման կետերում, ինչպիսիք են տարբեր տիպի քրաուդ (crowdfunding, crowdwork, crowdsourcing) հարթակները, բլոկչեյն տեխնոլոգիաները, որոնք ողջ աշխարհով մեկ մեծ թափ են առնում և արմատական փոխակերպման են ենթարկում ֆինանսական շուկան, ֆինանսական ծառայությունների աշխարհը, սոցիալական ձեռնարկատիրությունը, արհեստական բանականության վրա հիմնված տեխնոլոգիաները և այլն: Ըստ սահմանման՝ նոր մտածելակերպ պահանջող այս տեխնոլոգիաների համար երիտասարդներն ավելի բաց են և պատրաստ: Սակայն, արդյունք չի լինի, եթե նրանց հիմնարար պատրաստվածությունը մնա այսօրվա մակարդակին և չլինեն հենց այս թիրախներին ուղղված ռազմավարական աջակցության ծրագրեր:

Երիտասարդ կանայք բախվում են խնդիրների անձնական, ընտանեկան և հասարակական կյանքում, կրթության ընագավառում և աշխատաշուկայում: Տնտեսական ակտիվության մակարդակն ավելի բարձր է տղամարդկանց, քան կանանց շրջանում: 15-75 տարեկան արական սեռի բնակչության 70.7%-ը և իգական սեռի բնակչության 52.8%-ը զբաղված է կամ փնտրում է աշխատանք: 2017թ. կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվության ՍԽ-ն կազմել է 25.3%: Պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն, զբաղված կանայք, այդ թվում երիտասարդ կանայք, հաճախակի քիչ վարձատրվող կամ ցածր պաշտոններ են զբաղեցնում աշխատաշուկայում: Երիտասարդական նախաձեռնությունների և պետական ծրագրերի ոլորտում պետք է հատուկ ուշադրություն դարձնել, որպեսզի նրանց առօրյա կարիքների լուծմանն ուղղված ծրագրերի հիմքում ընկած լինեն **մարդու իրավունքների** և **գենդերային փոխակերպվող մոտեցման** սկզբունքները, որոնք իրենց արտացոլումը պետք է գտնեն այս ոլորտին առնչվող ռազմավարություններում և ծրագրերում: Այս ծրագրերը պետք է մատնանշեն հստակ կապ բարեկեցության և ոչ բռնության, ոչ խտրականության և քաղաքացիների ակտիվության միջև՝ այսպիսով իսկ ցուցադրելով երիտասարդ կանանց և տղամարդկանց անձնական և մասնագիտական զարգացման գործում գենդերային հավասարության առավելությունները:

Չորրորդ գլխի երկրորդ մասը նվիրված է հանրապետությունում առկա այն ռեսուրսների և հնարավորությունների վերլուծությանը, որոնք թույլ կտան առավել **համընդգրկուն կիրառել երիտասարդների ներուժը**:

[7] Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2016-2018թթ.

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի ImpactAIM-ը յուրահատուկ հարթակ է Հայաստանում, որն աջակցում է դրական ներազդեցության ներդրումների էկոհամակարգի զարգացմանը՝ մասնավոր ոլորտի ներուժն ուղղելով դեպի Կայուն զարգացման նպատակներ: Այս հարթակը միավորում է տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում ՝ ներդրողներին, գիտական ոլորտը, տեխնոլոգիական համայնքին, կառավարությանը և դոնոր կազմակերպություններին՝ համատեղ ստեղծելով զարգացման մարտահրավերների այնպիսի լուծումներ, որոնք ունեն կայուն բիզնես մոդել և աճի պոտենցիալ:

Բաղկացած երեք հիմնական ուղղություններից՝ աքսելերատոր, դրական ներազդեցության ֆինանսավորում և այդ ներազդեցության չափում և կառավարում, համապարփակ մոտեցման շնորհիվ հարթակը հենվում է հավաքական մտքի կարողության և փորձառության վրա՝ ստեղծելու համակարգային փոփոխությունների տանող լուծումներ:

Այս ենթագլխի հիմնական նպատակը երիտասարդների շրջանում, նրանց անմիջական միջավայրում և գլոբալ դաշտում, ինչպես նաև երիտասարդների աջակցության քաղաքականությունների և ծրագրերի դաշտում առկա այն ռեսուրսների ու հնարավորությունների վերլուծությունն է, որոնք մինչև օրս կամ չեն օգտագործվել կամ օգտագործվել են խիստ անարդյունավետ: 2018թ.-ի հեղափոխական գործընթացները, ինչպես նաև բազմաթիվ այլ օրինակներ հստակ ցույց են տալիս, որ նման ռեսուրսներ կան, և դրանց գործարկելը կարող է արմատական փոփոխություններ մտցնել մեր հասարակության մեջ:

Երիտասարդական նոր քաղաքականության և ծրագրերի դաշտը չի առնչվել ՀՀ բոլոր տիպի երիտասարդների հետ: Հիմնական ծրագրերն ուղղված են եղել, այսպես կոչված, «կազմակերպված» երիտասարդությանը, նրանց, այս կամ այն կերպ ներգրավված են ուսանողական, հասարակական կամ կուսակցական մարմիններում, ինչպես նաև դրանց հարակից և նրանց հետ առնչվող երիտասարդներին, որոնց թիվը ևս շատ մեծ չէր: Մինչդեռ հասկանալի է, թե ինչ հսկայական սոցիալական, քաղաքական-քաղաքացիական, մշակութային և տնտեսական ներուժ է թաքնված երիտասարդության՝ այս ամենից անմասն մնացած հատվածում: Այստեղ կարելի է դիտարկել նաև **բազմաթիվ խմբեր, որոնց հետ աշխատելն ավանդաբար այս կամ այն պատճառով անհնար կամ դժվար է համարվել**: Դրանց թվում է երիտասարդության այն ստվար մասը, որը ծառայում է ազգային բանակում (ժամկետային կամ այլ ծառայության մեջ է): Մեկ այլ խումբ են երիտասարդ մայրերը, որոնք հղիության ժամանակահատվածից և ծննդաբերությունից հետո ընկած մի քանի տարիներին մեծամասամբ դուրս են մնում հասարակական կյանքի բազմաթիվ ոլորտներից: Մյուս խումբն աշխատող երիտասարդությունն է, ներառյալ պարբերաբար աշխատանքային միգրացիոն գործընթացներում ներգրավված մարզաբնակ երիտասարդները: Վերլուծությունը ցույց է տալիս սակայն, որ այս ռեսուրսների մեծ մասը **ցավոք դեռ կամ անտեսանելի են** քաղաքականությունների և ծրագրերի մշակման գործընթացում կամ կիրառվում են հնարավորությունների խիստ փոքր մասով:

Հայաստան-սփյուռք հարաբերությունները նույնպես զգալի բարելավման կարիք ունեն: Մինչ այժմ պարբերաբար կրկնող սխալներից մեկը սփյուռքը հիմնականում բարեգործական և ներդրումային ներուժի տեսանկյունից դիտարկելն է: Մինչդեռ Հայաստանի զարգացման տեսանկյունից շատ ավելի կարևոր դեր կարող է ունենալ հենց սփյուռքի փորձագիտական, ինտելեկտուալ և ստեղծարար ներուժը: Սփյուռքի և Հայաստանի երիտասարդների համատեղ ձեռնարկատիրական (և սոցիալական ձեռնարկատիրական) գործունեությունը կարող է լուրջ տնտեսական և սոցիալական արդյունքներ տալ:
Մեկ այլ ռեսուրս, որն անհրաժեշտ է դիտարկել, սփյուռքի միջմշակութային ներուժն է, որը կարող է մեծ դեր ունենալ ՀՀ միջազգային համագործակցության, միջմշակութային երկխոսության և գլոբալ ինտեգրման գործընթացներում:

4-րդ գլխի վերջին հատվածում վերլուծվում է **այն մարտահրավերների շրջանակը**, որոնք այժմ ծառացած են Հայաստանի երիտասարդների առջև բոլոր համակարգերի (քաղաքական, մշակութային, տնտեսական և այլն) կտրուկ փոփոխությունների հետևանքով, որոնք կարող են լուրջ վնաս պատճառել, եթե այդ խնդիրները պատշաճ կերպով չլուծվեն: Միևնույն ժամանակ, դրանք երկրի զարգացման հսկա ներուժ են պարունակում, եթե դիտարկվեն երիտասարդական քաղաքականություններում ու ծրագրերում:

Հայաստանում (և առհասարակ աշխարհում) տիրող նման բուռն իրականության պայմաններում շատ կարևոր է ուշադրություն դարձնել այն **հիմնախնդիրներին, որոնք ուղղորդում են երիտասարդներին կյանքի ընթացքում և ձևավորում նրանց զարգացման վեկտորը կազմող քաղաքականություններն ու ծրագրերը:** Վերջին տասնամյակների ընթացքում ուրվագծվել են երիտասարդական քաղաքականության և ծրագրերի ոլորտում հռչակված որոշակի գերակայություններ, ինչպիսիք են, օրինակ, «ռազմաշունչ-հայրենասիրական դաստիարակությունը», «առողջ ապրելակերպը», «երիտասարդների մասնակցությունը» (որոնք նմանապես ուրվագծված են հետխորհրդային գրեթե բոլոր հանրապետություններում): Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ դրանց բովանդակային բաղադրիչը և մեթոդական հիմքը բոլորովին համարժեք չեն և, նույնիսկ,

միևնույն քաղաքականությունն իրականացնողների համար երբեմն հասկանալի չէ, թե որն է գաղափարը և ինչպես է այն ենթադրվում իրագործել:

Կարևորվում է երիտասարդական ուսումնասիրությունների և ծրագրային մշակումների ոլորտներում **անկախ ռազմավարական մտքի** և **պլանավորման հարթակների** ստեղծումը և դրանց կողմից երկարաժամկետ ռազմավարական ուղենիշների մշակումն ու կիրարկումը (առնվազն 25-50 տարի տեսածիրով): Ենթագլխում քննարկվում է նաև ՀՀ երիտասարդության՝ գլոբալ հիմնախնդիրների լուծմանը մասնակցելու պատասխանատվության աստիճանի բարձրացման, ինչպես նաև այդ աշխատանքներին մասնակցելու համար անհրաժեշտ ունակությունների և շարժառիթների զարգացման անհրաժեշտությունը: Օրինակ, տեղական կամ ազգային մակարդակում անհնար է գտնել այնպիսի գլոբալ խնդիրների լուծումները, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, օվկիանոսների կամ բնապահպանական այլ զանգվածների համատարած աղտոտումը, մոլորակի սոցիալական բևեռացումը կամ նույնածավալ այլ խնդիրները:

Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների թռիչքային աճը վերջին տասնամյակներում երիտասարդներին դրեց յուրահատուկ մի իրավիճակի մեջ, որը բնութագրվում է ուրույն հնարավորություններով և մարտահրավերներով, որոնք պետք է վերլուծության ենթարկվեն և ինտեգրվեն հանրային քաղաքականությունների, ծրագրերի և ռազմավարությունների նախագծման, իրագործման և գնահատման գործընթացներում: Այս խնդիրը հատկապես կարևոր է այն առումով, որ ՀՀ երիտասարդական քաղաքականության հիմնական ռազմավարական փաստաթղթերը (ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարություն և մի շարք հարակից ոլորտների փաստաթղթեր) գրեթե չեն անդրադառնում այս ոլորտին՝ չնայած դրա հույժ կարևորությանն ու համակարգ ձևավորող ազդեցությանը:
Այս գլխում նաև ներկայացվում են հայկական իրականությունից վերցված մի շարք **հաջողված փորձերի** օրինակներ, որոնք ապացուցում են, որ որոշ խնդիրների լուծման տարբերակներն արդեն իսկ գտնված են և դրանց իրատեսական լինելն ստուգված է որոշակի մարդկանց և համայնքների փորձով:

Ներածություն

Երիտասարդների դերը ժամանակակից աշխարհում էապես մեծացել է: 2015 թվականին ընդունված Կայուն զարգացման 17 նպատակների և 169 թիրախների զգալի մասն ուղղակիորեն առնչվում է երիտասարդներին: Պատահական չէ, որ 15-ամյա շվեդ դպրոցական Գրետա Թյունբերգը երիտասարդական աննախադեպ շարժում է սկսել Կայուն զարգացման 13-րդ նպատակի՝ Կլիմայի փոփոխության վերաբերյալ: Այդ շարժմանը միացել են 100 հազարավոր երիտասարդներ աշխարհի տասնյակ երկրներից, ովքեր ուրբաթ օրերին «Ուրբաթները հանուն ապագայի» կարգախոսի ներքո իրականացնում են տարատեսակ ակցիաներ՝ պահանջելով գործուն քայլեր ձեռնարկել Կլիմայի ճգնաժամի հանգուցալուծման ուղղությամբ: Եթե նախկինում երիտասարդները հիմնականում սովորողներ էին և սկսնակ աշխատողներ, ապա այսօր նրանք նաև քաղաքացիական նախաձեռնությունների և շարժումների առաջնորդներ ու մասնակիցներ են, ակտիվորեն ներգրավված են քաղաքականության մեջ, բարձր պաշտոններ են զբաղեցնում պետական, մասնավոր և հասարակական հատվածներում: Հայաստանի երիտասարդներն այսօր ունեն ինքնադրսևորման շատ մեծ հնարավորություններ բոլոր ոլորտներում: Նրանցից շատերը ուսանում են աշխարհի լավագույն դպրոցներում և բուհերում, մասնակցում են միջազգային ծրագրերի, ներգրավված են ոչ ֆորմալ կրթության տարբեր հարթակներում: Տեխնոլոգիաների զարգացման պայմաններում երիտասարդները շատ ավելի արագ են հասունանում, ունեն գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու լայն հնարավորություններ, ինչը նրանց դարձնում է հասարակական կյանքի շարժիչ ուժ: Հենց երիտասարդների առաջնորդությամբ Հայաստանում ձևավորվեց քաղաքացիական շարժումների և նախաձեռնությունների մշակույթը: Երիտասարդները վճռորոշ դեր ունեցան 2018 թվականին Հայաստանում իրականացված Թավշյա հեղափոխության ժամանակ:

Այդուհանդերձ, Հայաստանի երիտասարդներն ունեն բազմաթիվ խնդիրներ: Կրթության և առողջապահական ծառայությունների որակը շարունակում է ցածր մնալ: Հատկապես, գյուղաբնակ երիտասարդները զրկված են որակյալ ծառայություններ ստանալու հնարավորությունից: Մեծ է նաև երիտասարդների զբաղվածության խնդիրը: Աշխատանք չունենալու պատճառով երիտասարդների մեծ մասն արտագաղթում է գյուղերից, փոքր քաղաքներից, ինչի հետևանքով երիտասարդների թվի նկատելի նվազումը վտանգում է այդ բնակավայրերի զարգացման հեռանկարը:

Երիտասարդների որոշ խմբերի համար շարունակում են գերիշխող մնալ արժեքային անընդունելի կողմնորոշիչները: Եվ քանի որ հասակակիցների արժեքային կողմնորոշիչները հաճախ ավելի ազդեցիկ են, քան ուսումնական ծրագրերը, շատ երիտասարդներ ձախողում են իրենց կրթությունը՝ դառնալով կրավորական, սպառողական մշակույթի կրողներ: Ակնհայտ է, որ տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված՝բազմաթիվ ցածրակարգ հմտություններ պահանջող աշխատանքներ ավտոմատացվելու են, ուստի մտահոգիչ է այն հանգամանքը, որ երիտասարդների կրավորական, անտարբեր կեցվածքը կարող է բացասաբար ազդել նրանց կյանքի որակի վրա:

Երիտասարդների իրավիճակի բարելավման վրա մեծ ազդեցություն կարող են ունենալ նաև միջսերնդային արդյունավետ հաղորդակցությունն ու համագործակցությունը: Դինամիկ զարգացող աշխարհում սերունդների արժեհամակարգերի և աշխարհընկալումների միջև հաճախ տարակարծություններ են առաջանում, որոնց խելամիտ հանգուցալուծումը կարող է նպաստել Հայաստանի զարգացմանը, քանի որ տարբեր ընկալումների առկայությունը զարգացման կարևորագույն նախապայմաններից է:

Զեկույցի մեթոդաբանությունը

Զեկույցի նախապատրաստական աշխատանքները եղել են մասնակցային: Երիտասարդության վերաբերյալ գոյություն ունեցող ուսումնասիրությունների, հետազոտությունների և զեկույցների վերլուծությունից զատ, կազմակերպվել են քննարկումներ և ֆոկուս խմբեր երիտասարդների, երիտասարդական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Անցկացվել են փորձագիտական հարցազրույցներ ոլորտի մասնագետների հետ: Իրականացվել են առանձին քննարկումներ ոլորտի համար պատասխանատու պետական մարմինների հետ: Զեկույցի հեղինակներն այցելել են նաև մարզեր, որտեղ քննարկումներ են անցկացվել երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, դիտարկվել են ոլորտի հաջողության ծրագրերը: Քննարկում է կազմակերպվել նաև ՄԱԿ-ի հայաստանյան կառույցների ներկայացուցիչների հետ: Ընդհանուր առմամբ, անցկացվել է ֆոկուս խմբային 8 քննարկում, որոնց մասնակցել են շուրջ 60 երիտասարդներ[8] և երիտասարդության հարցերով զբաղվող մասնագետներ: Իրականացվել են շուրջ 25 փորձագիտական հարցումներ: Ընդհանուր առմամբ, ֆոկուս խմբային քննարկումներին և փորձագիտական հարցազրույցներին մասնակցած մարդկանց 55%-ը կանայք են, 45%-ը՝ տղամարդիկ:
Զեկույցի նախապատրաստական աշխատանքներում օգտագործվել են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի և պետական գերատեսչությունների տրամադրած տվյալները:

[8] Այս զեկույցում «երիտասարդներ» խմբի մեջ ներառված են 16-30 տարեկանները

Գլուխ 1

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ

1.1 Մարդկային զարգացում և հավասար հնարավորություններ: Մարդկային զարգացում յուրաքանչյուրի համար

Երիտասարդության մարդկային զարգացման խնդիրները

Մարդկային զարգացման հայեցակարգի գլխավոր գաղափարը *մարդու հնարավորությունների և ազատությունների աճը* որպես զարգացման գլխավոր նպատակ հռչակելն է: Սա նշանակում է, որ զարգացումը պետք է ապահովի մարդկանց համար առողջ ու երկարատև կյանքի, նպաստի ստեղծագործական միջավայրի ձևավորմանը և շարունակական աճին[9]:

Երիտասարդության առջև ծառացած գլխավոր մարտահրավերների առանցքում սեփական ներուժի բացահայտման, զարգացման ու իրացման հիմնախնդիրն է: Թավշյա հեղափոխությունը ցույց տվեց, թե ինչ անհավանական արդյունք կարելի է ստանալ, երբ ստեղծվում է երիտասարդության ներուժը իրացնելու նպաստավոր դաշտ: Պատահական չէ, որ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում այս տարվա սեպտեմբերի 23-ին կայացած առցանց ասուլիսի ժամանակ Հայաստանի Թավշյա հեղափոխությունը բնութագրեց որպես երիտասարդների կողմից իրականացված՝ իշխանության խաղաղ փոխանցման աներևակայելի ժողովրդավարական իրադարձություն[10]:

Մարդկային զարգացման խնդիրը նախկինում Կառավարությունում չի դիտվել որպես առաջնահերթություն: Դա երիտասարդության մի զգալի հատվածի մոտ առաջացրել էր բավականին լուրջ ապատիկ հոգեվիճակ: Ըստ 2016 թ. հարցման տվյալների՝ հարցված երիտասարդության 43,6%-ը չէր հավատում, որ իրենք կարող են ազդել իրավիճակի փոփոխման վրա[11]: Բարեբախտաբար, Թավշյա հեղափոխությունը մեծացրեց երիտասարդության վստահությունը սեփական դերակատարության նկատմամբ: ՄԱԿ-ի 2016թ. Համաշխարհային զեկույցի համա ձայն՝ առանցքային է համարվում մարդկային զարգացումը ոչ միայն ազգային, այլև յուրաքանչյուր առանձին վերցրած մարդու մակարդակով[12]: Այս մոտեցումը հուշում է, որ *կառավարության ծրագրի նպատակը պետք է դառնա ոչ թե պարզապես տնտեսական աճի ապահովումը, այլ՝ տնտեսական աճի ուղղորդումը ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու անհատական զարգացման ու բարեկեցության աճին*: Այս առումով հուսադրող է ՀՀ նոր կառավարության կողմից տնտեսության ներառական աճի կարևորումը:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերակատարումը և առաջիկա խնդիրները

Մարդկային զարգացման տեսանկյունից քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) գլխավոր խնդիրը երիտասարդների կարողությունների զարգացումն ու իրացման նպաստավոր միջավայրի ձևավորումն է: Սրա իրագործման մեջ մեթոդաբանական առումով կարևոր է Թավշյա հեղափոխության հիմնական սկզբունքի որդեգրումը: Խոսքը վերաբերում է երիտասարդներին ոչ թե որպես իրագործվող ծրագրերի օբյեկտ, այլ՝ սուբյեկտ դիտարկելուն:

Կարևոր խնդիր է նաև, այսպես կոչված, «չկազմակերպված» երիտասարդության թիրախավորումը և ներգրավումը: Թավշյա հեղափոխության հաջողությունը պայմանավորող ճակատագրական գործոնը հենց նման երիտասարդության ներուժը բացահայտելու ու ներգրավելու աննախադեպ փաստն էր:

Քաղաքացիական կազմակերպությունների կարևոր դերակատարումներից է նաև *քաղաքացիական արժեհամակարգի* ձևավորմանն ուղղված հանրային դիսկուրսների ու պրակտիկաների տարածումը: Այստեղ գիտելիքների փոխանցումից զատ, անհրաժեշտ է նաև օրինակելի նախադեպերի ստեղծումը:

Մարդկային զարգացման մեջ հիմնարար է *մարդակենտրոն արժեհամակարգի ձևավորումը*: Այս խնդրի լուծումը կապված է հումանիտար ու հասարակագիտական կրթության հետ, ինչը, բացի կրթական համակարգից, կարող է դառնալ նաև ՔՀԿ-ների միջոցով իրականացվող շարունակական ու մեծահասակների կրթական ծրագրերի

[9] Հայաստանի մարդկային զարգացման համաթվի ցուցանիշների մասին մանրամասն տե՛ս՝ Human development indices and indicators: Statistical update. Armenia. Available: http://hdr.undp.org/sites/all/themes/hdr_theme/country-notes/ARM.pdf

[10] UN Secretary General Calls Armenian Revolution “A Fantastic Example”. Available: https://www.civilnet.am/news/2018/09/24/UN-Secretary-General-Calls-Armenian-Revolution-%E2%80%9CA-Fantastic-Example%E2%80%9D/345445. 23 September, 2018

[11] Մկրտչյան Ա., Վերմիշյան Հ., Բալասանյան Հ., Անկախության սերունդ. Հետազոտություն երիտասարդների շրջանում, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016 թ., էջ 60:

[12] Human development report 2016: Human development for everyone. New York: UNDP 2016. Pp. 1-10.

թիրախներից մեկը:

Ըստ Հայաստանի մարդկային զարգացման 2018 թ. թարմացված ցուցանիշների՝ Հայաստանում մարդկային զարգացման ոլորտում էական անհավասարություններ կան: Համաձայն *անհավասարության մարդկային զարգացման գործակցի (Inequality-adjusted Human Development Index)*՝ Հայաստանը դասվում է միջին կարգի անհավասարության իրավիճակ ունեցող երկրների շարքին[13]: 2017 թվականի ՄԶՀ ցուցանիշը Հայաստանի կանանց դեպքում կազմել է 0.740՝ ի տարբերություն տղամարդկանց 0.764 ցուցանիշի, ինչը հանգեցրել է Գենդերային զարգացման համաթվի 0.969 արժեքի, որի արդյունքում երկիրը տեղ է զբաղեցրել զարգացմամբ 2-րդ խմբի երկրների շարքում[14]: Իսկ Գենդերային անհավասարության համաթվի արժեքը կազմել է 0.262, ինչի արդյունքում 160 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 55-րդ հորիզոնականը[15]:

Անհավասարություն կա ունեցվածքային, մարզային, բնակավայրային՝ գյուղ/քաղաք, կրթության, առողջության և կյանքի շատ այլ ոլորտներում: Կարևոր է «*Մարդկային զարգացում յուրաքանչյուրի համար*» սկզբունքի որդեգրումը տարածքային կտրվածքով:

Կայուն զարգացման նպատակների իրագործմանը երիտասարդների մասնակցության խնդիրը

2015 թվականին ՄԱԿ-ի կողմից ընդունված Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ), որպես զարգացման ուղեցույց, ընդունվել է նաև Հայաստանի կողմից: **Դրանց իրագործումը ծրագրավորված է մինչև 2030 թվականը: Նախատեսվում է դրանք ինտեգրել Հայաստանի զարգացման ռազմավարություններում և ծրագրերում ու մշակել գործողությունների ծրագիր: Չնայած Հայաստանում դեռ չի ավարտվել ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացը, սակայն այն ընթացքի մեջ է և ՀՀ կառավարության կողմից համարվում է գերակա խնդիր[16]: ԿԶՆ-ների իրականացման հաջողությունը մեծապես կախված կլինի ռազմավարական, կարճաժամկետ ու միջնաժամկետ զարգացման ծրագրերում դրանց ինտեգրումից[17]: Որպես ինովացիոն մեծ ներուժ՝ կարևոր է նաև հաշվի առնել երիտասարդության առանձնահատուկ դերակատարությունը ԿԶՆ-ների իրագործման ու ազգայնացման գործում:**

1.2 Երիտասարդական քաղաքականության համակարգումը և իրականացումը Հայաստանում

1.2.1 «Երիտասարդ» հասկացության սահմանումն ըստ երիտասարդական պետական քաղաքականության

«Երիտասարդություն» հասկացությունը, որպես հատուկ կատեգորիա, տարածում է ստացել սկսած 18-րդ դարից: Երիտասարդության վերաբերյալ առկա զանազան պատկերացումները և սահմանումները տարբերվում են նրանից, թե ինչպես են երիտասարդները իրենք իրենց տեսնում[18]: 20-րդ դարում պատանիները և երիտասարդները դարձան առավել տեսանելի որպես կոնկրետ խումբ՝ մի շարք գործընթացների շնորհիվ՝ կրթական բարեփոխումներ, աշխատանքային պայմանների կանոնակարգեր, անչափահասների արդարադատության համակարգի վերակազմավորում, ժամանցի ճանաչումը որպես երիտասարդների գործունեության, փորձի առանձնահատկություն և այլն: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այսօր «երիտասարդ» հասկացության սահմանման մեջ վճռորոշ գործոն է տարիքը: Միավորված ազգերի կազմակերպության սահմանման համաձայն՝ երիտասարդ է համարվում 15-24 տարիքային խումբը՝ վիճակագրական նպատակներից ելնելով: Երիտասարդների 15-29 տարիքային բաժանումը հաճախ օգտագործվում է Եվրոպական միության կողմից: Երիտասարդների 16-30 տարիքային խումբը բաղկացած է ութսունական, իննսունական և երկուհազարական թվականներին ծնվածներից, որոնք համապատասխանաբար համարվում են «X սերունդ» կամ թվային միգրանտներ, «Y սերունդ» կամ թվային բնիկներ և «Z սերունդ» կամ ֆեյսբուքյան սերունդ: Այս բնութագրումները ևս կարևոր են «երիտասարդություն» հասկացության ամբողջական մեկնաբանման համար:

[13] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս հավելված 2. Մարդկային զարգացման համաթվեր և ցուցանիշներ. 2018 թ. վիճակագրական թարմացում:

[14] Նույն տեղում:

[15] Նույն տեղում:

[16] SDG implementation: Voluntary national review. Armenia. Yerevan: UNDP 2018, p. 5.

[17] Նույն տեղում:

[18] Manheim K., (1952) The problem of generations, in P.Kecskemeti (ed.), Essays on the Sociology of knowledge. New York: Routledge and Kegan Paul (1st edn 1927)

Երիտասարդության սահմանման հետ կապված տեսական բազմաթիվ մոտեցումների համադրումը թույլ է տալիս անել մեկ ընդհանրացում. երիտասարդությունը դիտարկվում է որպես **կախվածությունից անցում դեպի անկախություն**[19]: Տեսաբանների մի մասն անկախության ձեռքբերումը կապում է կրթության, զբաղվածության, կարիերայի աճի հետ, իսկ մյուս մասը՝ ծնողներից առանձին ապրելու, ճանապարհորդելու հնարավորությունների հետ:

Անդրադառնալով հայաստանյան իրականությանը՝ նշենք, որ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգում «երիտասարդ» հասկացությունը սահմանված է հետևյալ կերպ. *«Երիտասարդ՝ Հայաստանի Հանրապետության 16-30 տարեկան (ներառյալ) քաղաքացի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող 16-30 տարեկան (ներառյալ) օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում»*[20]:

Երիտասարդների և երեխաների սահմանումներում կա որոշակի հակասություն: Համաձայն ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հռչակագրի, որը Հայաստանը ևս վավերացրել է, երեխա են համարվում 0-18 տարեկանները: Հետևաբար 16-18 տարիքային խումբը համարվում է և՛ երեխա, և՛ երիտասարդ, ինչը հակասություններ, անհամապատասխանություններ է առաջացնում ինչպես տվյալների ստացման, վերլուծության և մեկնաբանման ընթացքում, այնպես էլ պետական քաղաքականության հասցեավորման ժամանակ: Առհասարակ, երիտասարդների վերաբերյալ վիճակագրության հավաքագրման համար կարևոր է երիտասարդների տարիքի միասնական սահմանումը: Սակայն Վիճակագրական կոմիտեն իր պաշտոնական հրապարակումներում երիտասարդների վերաբերյալ տվյալները ներկայացնում է հետևյալ տարիքային բաժանումներով՝ 16-19, 20-24, 25-29, 30-34, աշխատաշուկայի վերաբերյալ ուսումնասիրություններում երիտասարդների վերաբերյալ առանձին ցուցանիշները ներկայացված են 15-29 տարիքային խմբի համար: Արդյունքում, ազգային մակարդակով երիտասարդների վերաբերյալ վիճակագրական տվյալների, դրանց հիման վրա մշակված նաև հետազոտական տվյալների ամբողջականությունը հնարավոր չէ ապահովել 16-30 տարիքային խմբի համար:

1.2.2 Երիտասարդական քաղաքականության հիմնական փաստաթղթերը

Երիտասարդության ոլորտի կարգավորումը Հայաստանում ամփոփված է ինչպես կոնկրետ ոլորտային քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերում, այնպես էլ երիտասարդությանն առնչվող փաստաթղթերում:



Նկար 1.1. ՀՀ երիտասարդական քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի ժամանակագրությունը

ՀՀ կառավարության 2019 թ. ծրագրի համաձայն, երիտասարդական պետական քաղաքականությունն ուղղված է ստեղծելու այնպիսի միջավայր, որտեղ երիտասարդները կկարողանան լիարժեք ինքնադրսևորվել և կառուցել սեփական ապագան:

Երիտասարդության ոլորտային հիմնարար փաստաթուղթ է համարվում ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2015-2025 թթ. հայեցակարգը:

[19] Cieslik M., Simpson D., Key concepts in Youth Studies, Sage publications Ltd, 2013

[20] ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշում

Նկար 1.2. ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2015-2025թթ. հայեցակարգի բովանդակային վերլուծություն

Այժմ երիտասարդական քաղաքականության շուրջ լայն քննարկումներ տեղի չեն ունենում, որոնց ընթացքում հնարավոր կլիներ քննարկել ոլորտի կարգավորման փիլիսոփայությունը, մոտեցումները, առաջնահերթությունները, պետական գերատեսչության գործունեությունը և փաստաթղթերը: Մի շարք երկրներում (Սերբիա, Մոլդովա, Ռումինիա) ոլորտը կարգավորվում է երիտասարդության մասին օրենքով, ինչի շուրջ Հայաստանում 2018 թ. սեպտեմբերին որոշակի քննարկումներ եղան, սակայն այժմ իրավիճակը հստակ չէ: Որոշ երկրներում, ինչպես Հայաստանում մինչ 2019 թվականը, ոլորտը կարգավորվում է ռազմավարական փաստաթղթով. Ֆրանսիայում դա Երիտասարդական առաջնահերթությունների ծրագիրն է, Ալբանիայում՝ Երիտասարդական գործողությունների ծրագիրը և այլն:

1.2.3 Երիտասարդական քաղաքականության հիմնական մոտեցումները և առաջնահերթությունները

ՀՀ պետական քաղաքականության մակարդակում և երիտասարդների ամենօրյա իրողությունների մեջ առկա է անջրպետ: Մշտապես արդիական է այն հարցը, թե այսօրվա երիտասարդը որքանով է մասնակցում երիտասարդական պետական քաղաքականության մշակմանը և իրականացմանը, որքանով է յուրաքանչյուր երիտասարդ առնչվում, օգտվում երիտասարդական քաղաքականությունից: Նշված հարցերի վերաբերյալ կարծիքները, ինչպես նախկինում, այժմ ևս բաժանվում են երկու խմբի: Ըստ առաջին խմբի, երիտասարդական պետական քաղաքականությունը մշակվում և իրականացվում է ներառելով երիտասարդների միայն փոքր մասին՝ հիմնականում ակտիվ, տեղեկացված, քաղաքաբնակ, մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդներին: Մյուս մասը կարծում է, որ պետական քաղաքականությունը փորձում է հասնել երիտասարդության բոլոր խմբերին՝ գյուղական երիտասարդներին, հաշմանդամություն ունեցող երիտասարդներին, տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդներին, չկազմակերպված երիտասարդներին: Ակտիվ երիտասարդները, առավել շատ տեղեկացված լինելով երիտասարդական քաղաքականության ընթացիկ գործընթացների մասին, շարունակաբար մասնակցում են դրանց, իսկ չտեղեկացված երիտասարդները շարունակաբար դուրս են մնում այդ գործընթացներից:

Այժմ երիտասարդների շրջանում բավականին բարձրացել է հետաքրքրվածության մակարդակը հայաստանյան հասարակական-քաղաքական կյանքի նկատմամբ: Թավշյա հեղափոխությունից հետո դեռևս լայնածավալ հետազոտություններ չեն իրականացվել երիտասարդների շրջանում, սակայն այս զեկույցի

պատրաստման համար ոլորտի ներկայացուցիչների հետ իրականացված քննարկումները, երիտասարդների հետ հարցազրույցները և քննարկումները ցույց տվեցին, որ երիտասարդները ցանկանում են տեղեկացված լինել և մասնակցել իրենց մասին որոշումների կայացմանը և պատրաստ են դրա համար քայլեր ձեռնարկել:

«Նախկինում գիտեինք, որ եթե մեր հարցը լուծում չստանա, ոչինչ չենք կարող անել, բայց հիմա կարծես անտեսանելի բեյջ [նկարի ունի հատուկ գրությամբ փաստաթուղթ] ունենք մեզ վրա ու վստահ մինչև վերջ գնում ենք»:

Մեջբերում ակտիվ երիտասասարդների հետ խմբային քննարկումից, Վանաձոր, 2018 թ., մայիս

Մինչ այժմ երիտասարդական պետական քաղաքականության մշակումը հիմնվել է երիտասարդների **կարիքների վրա՝** բացահայտված ոլորտային ուսումնասիրությունների միջոցով: Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից իրականացված երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թթ. ռազմավարության մոնիթորինգի ու գնահատման արդյունքները ցույց տվեցին, որ երիտասարդների ոչ բոլոր կարիքներն ու իրավունքներն են հասցեագրվել ռազմավարությամբ: Եթե երիտասարդներին ուղղված պետական քաղաքականության մշակման գործընթացը դիտարկենք մարդկային զարգացման հայեցակարգի շրջանակում, ապա երիտասարդական քաղաքականությունը պետք է հիմնվի ոչ թե կամ ոչ միայն կարիքների, այլ նաև **իրավունքների վրա**: Ըստ մարդկային զարգացման հայեցակարգի՝ հասարակության զարգացումը հասարակության անդամների իրական իրավունքների և ազատությունների ընդլայնումն է[21]:

Այս համատեքստում Հայաստանի երիտասարդները հիմնականում անազատության մեջ են ապրում, ինչով և պայմանավորված է իրավունքների վրա հիմնված երիտասարդական քաղաքականության անհրաժեշտությունը[22]: Մարդկային զարգացման տեսանկյունից կարևոր է ապահովել այդ ազատությունները և երիտասարդներին, որպես մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված քաղաքականություն: Ոլորտային ուսումնասիրությունները մատնանշում են՝ Հայաստանի երիտասարդական քաղաքականությունը չի ներառում ո՛չ մարդու իրավունքների մասին միջազգային հայեցակարգերը, ո՛չ մարդու իրավունքների վրա հիմնված հեռանկարային տարածաշրջանային հանձնարարականները: 2013-2017 թվականների ռազմավարության հինգ առանցքային գերակայություններից ու համապատասխան միջոցառումների ծրագրից ոչ մեկը կենտրոնացած չէ մարդու իրավունքների կոնկրետ շրջանակներն իրականացնելու կամ խոցելի խմբերի երիտասարդների իրավունքները երաշխավորելու վրա[23]:

2013-2017 թթ. երիտասարդական ռազմավարության հինգ առանցքային գերակայություններն են[24]

Գերակայություն 1. Քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանում

Գերակայություն 2. Երիտասարդների սոցիալ-տնտեսական և զբաղվածության հիմնախնդիրներ

Գերակայություն 3. Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում

Գերակայություն 4. Երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և ռազմահայրենասիրական դաստիարակություն

Գերակայություն 5. Կրթության շարունակականություն և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիություն:

Պետական աջակցությունը պետք է ուղղված լինի հատկապես ներառումից դուրս մնացած երիտասարդներին: Այս խմբերի ներառմանը խանգարում են կարծրատիպային պատկերացումները, առանձին թիրախավորված միջոցառումների պակասը[25]:

Առհասարակ, երիտասարդական քաղաքականությունը Հայաստանում երիտասարդներին հիմնականում դիտարկում է որպես խնդիր, իսկ երիտասարդության արդի մոտեցումներում գերիշխում է երիտասարդությանը որպես ռեսուրս, ներուժ դիտելու փիլիսոփայությունը:

Կառավարության 2019 թ. ծրագրում[26] երիտասարդությանը վերաբերող հատվածը բավականին սեղմ է

[21] Development as Freedom, Sen, A., Published by Anchor, 2000

[22] http://publishing.ysu.am/files/Metsahasakneri_krtutyun.pdf, p 114

[23] A needs assessment and development of strategic directions for UNICEF Armenia engagement in the youth area Alex Farrow, Cristina Bacalso & Ani Hao, 2016

[24] http://www.erit.am/media/2016/06/1982.pdf

[25] ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թթ. ռազմավարության մոնիթորինգի և գնահատման հաշվետվություն, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2018 թ.

[26] https://www.gov.am/files/docs/3133.pdf

ներկայացված: Հատկանշական է նաև, որ ծրագրի այդ հատվածի մշակումը ևս մասնակցային գործընթացով չի իրականացվել: Ծրագրում շեշտադրված է միայն երիտասարդների հասարակական, քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային մասնակցության բարձրացումը՝ որպես ծրագրային նպատակ:

Ներդիր 1.1.

Հրանուշ Շահնազարյան

Անձնական զարգացման դասընթացավար (32տ.)

Երիտասարդական աշխատանքում իմ ճանապարհը սկսվել է վաղուց՝ դեռևս 2005 թվականից: Սովորում էի Բրյուսովի անվան համալսարանում՝ Ֆրանսերեն լեզվի և մանկավարժության ֆակուլտետում: Սերս ֆրանսերենի և ֆրանսիական մշակույթի հանդեպ անասելի ուժեղ էր ու դա էր դրդիչ ուժերից մեկը, որ սկսեցի հետաքրքրվել այլ մշակույթներով ու հատկապես նրանով, թե այլ մշակույթներում մարդիկ ինչպես են ապրում իրենց կյանքը, իրենց առօրյան: Մի օր պատահաբար տեղեկացա եվրոպական երիտասարդական ծրագրերի վերաբերյալ Ծաղկաձորում անցկացվող դասընթացին մասնակիցների հրավերի մասին: Այն ինձ միանգամից հետաքրքրեց, և քանի որ ձգտում էի նաև համալսարանից դուրս սովորել ու զարգանալ, անմիջապես դիմեցի: Հիշում եմ, թե ինչքան ոգևորված էի, երբ դասընթացի ընթացքում իմացա, որ կարող եմ ճանապարհորդել և միևնույն ժամանակ սովորել. կարծես մի նոր աշխարհ բացված լիներ իմ առջև: Միակ բանը, որ պակասում էր, անգլերենի իմացությունն էր: Ձանք գործադրեցի ու մի քանի ամսում անգլերեն սովորեցի, դրանից հետո առաջին միջազգային ծրագիրս շատ չուշացավ: Շուտով մեկնեցի Ֆրանսիա՝ ժողովրդավարության մասին մի դասընթացի մասնակցելու: Աննկարագրելի երևույթ էր հայտնվել մի երկրում, որի լեզուն ու մշակույթն այդքան ուսումնասիրել էի: Իսկ դասընթացը պարզապես խելահեղ էր, քանի որ պաշտում էի բազմազանությունն ու այլ մշակույթներից սովորելը, տեսնել, թե ինչպես են մարդիկ նույն երևույթին նայում այդքան տարբեր կողմերից, և դա ամենահարստացնող փորձառություններից էր: Ֆրանսիայում արդեն համոզված էի, որ ուզում եմ մասնագիտանալ միջմշակութային հաղորդակցության ոլորտում, և այդպես էլ եղավ: Վերադառնալով Հայաստան՝ անդամակցեցի այս ոլորտի ամենաակտիվ կազմակերպություններից մեկին՝ «Լուշեն Հայաստանին», որը զբաղվում էր միջմշակութային հաղորդակցության ուսումնասիրությամբ: Հայտնվել էի այն ամենի կենտրոնում, ինչն ինձ այդքան գրավում էր: Հաջորդեցին բազում այլ միջազգային ու տեղական կրթական ծրագրեր Հայաստանում և եվրոպական մի շարք երկրներում, մինչև մեկ տարով մեկնեցի Բեռլին՝ Եվրոպական կամավորական ծրագրին մասնակցելու: Բեռլինից հետո տեղափոխվեցի Բուդապեշտ՝ ևս մի տարի աշխատելու մեկ այլ երիտասարդական կազմակերպությունում: Այս երկու տարիները կյանքիս ամենաազդեցիկ ժամանակահատվածներից էին. ապրելով մենակ տնից հեռու, շատ բան սովորեցի ինքս իմ ու, իհարկե, տվյալ մշակույթների մասին: Հաջորդ քայլը այցս էր Ստրասբուրգ, որտեղ առաջինն էի Հայաստանից, ով երկու տարով ընտրվեց Եվրախորհրդի երիտասարդական խորհրդատվական խորհրդի անդամ, ինչը նշանակում էր, որ ես՝ որպես խորհրդի մի մաս, ունեի հավասար ձայն բոլոր անդամ երկրների երիտասարդական քաղաքականությունները մշակելու և հաստատելու հարցերում: Այստեղ էր, որ հսկայական գիտելիք ու փորձ ձեռք բերեցի երիտասարդական քաղաքականության և ծրագրերի շրջանակում՝ աշխատելով լավագույն փորձագետների հետ: Այդ շրջանում անցկացրի բազմաթիվ դասընթացներ միջմշակութային հաղորդակցության և մարդու իրավունքների հարցերի շուրջ: Մի ուրիշ հետաքրքրություն, որ դեռ դպրոցական տարիներից ունեի, վերաբերում էր մարդու հոգեբանությանը և ինքնազարգացմանը: Այժմ նաև կյանքի քոուչ լինելով՝ վարում եմ բազմաթիվ տեղական ու միջազգային ծրագրեր հենց ինքնազարգացման շուրջ և՛ անհատական, և՛ խմբային մակարդակով: Սա մի թեմա է, որի մասին կարող եմ ժամերով գրել, բայց դրա համար կարող եք ինձ գտնել ֆեյսբուքում: Ես հավատում եմ, որ կյանքը գեղեցիկ է իր բարդություններով, ու երբ մենք ինքներս մեզ ճանաչում ենք, կարող ենք մեր կյանքը ավելի գեղեցիկ և ազդեցիկ կառուցել: Հենց այս համոզմունքից է նաև, որ Լուշեի ծրագրերից շատերը ինքնազարգացման մասին են: Լուշեն միջազգային երիտասարդական հասարակական կազմակերպության մասնաճյուղ է, որը հիմնադրվել է Հայաստանում դեռ 2012 թվականին: Այսօր մենք անցկացնում ենք միջազգային և տեղական կրթական ծրագրեր, Ինքնազարգացման ամառային դպրոցը: Այս տարի արդեն մեր ծրագրերին մասնակցել են հարյուրից ավելի եվրոպացի երիտասարդներ և նույնքան հայ երիտասարդներ:

1.2.4. Երիտասարդական ոլորտի հիմնական դերակատարները

Երիտասարդական պետական քաղաքականությունը համակարգող լիազոր մարմինը, սկսած 2007 թ.-ից ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն էր: Դրանից առաջ ոլորտը կարգավորվել է Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից: 2019 թ. ՀՀ կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, երիտասարդության ոլորտի համակարգումը տեղափոխվեց Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՄՆ) ներքո: Սակայն մինչ այժմ հստակություն չկա ԿԳՄՄՆ շրջանակներում ոլորտի կարգավորման վերաբերյալ՝ ինչպիսի առաքելություն, գործառույթներ է կատարելու նախարարությունը երիտասարդության մասով, ինչպիսի իրավական և օպերացիոնալ հիմքեր են ներդրվելու:

Փաստարկված երիտասարդական քաղաքականությունը ևս հստակեցված չէ. մինչև 2019 թ. երիտասարդական քաղաքականության մշակման համար հիմք էին հանդիսանում Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից իրականացված հետազոտությունները, սակայն 2019 թ. հունվարի 10-ին Կառավարության որոշմամբ լուծարվեց «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որի կազմում էր գործում նաև Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը: Փաստացի, այդ ինստիտուտի լուծարմամբ այսօր Հայաստանում փաստարկված երիտասարդական քաղաքականությունը վտանգված է, քանի որ կառույցին փոխարինող մեկ այլ կառույց կամ մեխանիզմ ներդրված չէ:

Ընդհանրապես, հանրային լայն և մասնակցային որևէ քննարկում, բանավեճ չծավալվեց՝ դիտարկելու, թե ինչպիսին պետք է լինի երիտասարդական քաղաքականությունը Հայաստանում: Մասնագիտական համայնքը փոփոխությունները դիտարկում էր իբրև «բացված պատուհան» և ակնկալում փորձագիտական լուրջ քննարկումներ ոլորտի վերաբերյալ: Փոքրաթիվ մասնագիտական քննարկումները վեր հանեցին որոշ սցենարներ, որոնք պետք է հանրային լայն քննարկման դրվեն մինչև ոլորտի կարգավորման վերաբերյալ Կառավարության որոշումը: Ոլորտի ներկայացուցիչները կարևորում են ոլորտի կարգավորումը նախարարության մակարդակով, ինչը կարող է ունենալ որոշ չափով խորհրդանշական և որոշ չափով ֆունկցիոնալ նշանակություն: Ոլորտը կարգավորող գերատեսչության առկայությունը խորհրդանշական է, քանի որ այդ քայլով Կառավարությունը ոլորտը՝ որպես գերակա ուղղություն, առաջնահերթություն է ճանաչում: Ֆունկցիոնալ նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ոլորտը կարգավորող պետական գերատեսչությունը պետք է երիտասարդության վերաբերյալ տեսլականի, երիտասարդական երկարաժամկետ ռազմավարության, մարտահրավերներին դիմակայելու սցենարների, փաստարկված և մասնակցային երիտասարդական քաղաքականության մշակման համար:

Առհասարակ, աշխարհում ևս դիսկուրս է ծավալվում երիտասարդական քաղաքականության համար պատասխանատու պետական կառույցի ինքնության շուրջ:

Աղյուսակ 1.1. Երիտասարդական ոլորտի համակարգումը տարբեր երկրներում [27]

Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Ալբանիա, Բուլղարիա, Ռումինիա, Ուկրաինա, Սերբիա
Կրթության, երիտասարդության և սպորտի նախարարություն	Չեխիա,Սլովակիա
Կրթության, մշակույթի և գիտության նախարարություն	Մոլդովա
Սոցիալական հարցերի նախարարություն	Լիխտենշտեյն
Երեխաների և հավասարության նախարարություն	Նորվեգիա
Երիտասարդության հարցերի վարչություն հետևյալ նախարարություններում՝	
Կրթության նախարարություն	Բելառուս
Կրթության և գիտության նախարարություն	Շվեդիա, Լատվիա

[27] Insights into youth policy governance, Council of Europe and European Commission, November, 2018, page 11

Սոցիալական անվտանգության և աշխատանքի նախարարություն	Լիտվա
Կրթության և մշակույթի նախարարություն	Ֆինլանդիա
Առողջապահության, բարեկեցության և սպորտի նախարարություն, Արդարադատության և անվտանգության նախարարություն	Նիդեռլանդներ
Ժողովրդագրության, ընտանիքի, երիտասարդության և սոցիալական քաղաքականության նախարարություն	Խորվաթիա

Ինչպես երևում է Աղյուսակ 1.1-ից, երիտասարդության ոլորտը կարգավորող պետական գերատեսչությունը աշխարհում բավականին տարբեր է՝ կախված նրանից, թե երիտասարդության ինչպիսի առաջնահերթություն, ռազմավարական ուղղություն, կարիք, իրավունք է կարևորվում տվյալ երկրում այդ պահին: Այս իմաստով, Հայաստանում երիտասարդության ոլորտի կարգավորումը Կրթության և գիտության նախարարությանը հանձնելը ներառում է ինչպես հնարավորություններ, այնպես էլ ռիսկեր: Տարիներ շարունակ երիտասարդական և կրթական քաղաքականության միջև առկա է լուրջ անջրպետ, չնայած որ երկուսն էլ գործ ունեն հիմնականում նույն խմբի հետ: Բացի դրանից՝ անջրպետ կա ֆորմալ կրթության և ոչ ֆորմալ կրթության միջև: Միաժամանակ, հնարավորություն է ստեղծվում այս անջրպետները վերացնելու, սակայն, եթե ռիսկերը բացառվեն կամ կառավարվեն, երիտասարդության հարցերը կստորադասվեն կրթության հարցերին և կկորչեն կրթության քաղաքականության առջև ծառացած բազմաթիվ խնդիրների հորձանուտում:

Երիտասարդության ոլորտում միջգերատեսչական համագործակցությունը ևս բավականին թույլ է իրականացվում, գերակշռում է հատվածային մոտեցումը: Այսպես, ՊՆ-ի և ԱՍՀՆ-ի միջև ծավալվում էր համագործակցություն զինվորներին ուղղված աջակցության ծրագրերի իրականացման շրջանակներում, ԿԳՆ-ի և ԱՍՀՆ-ի միջև կնքվել է հուշագիր երեխաների հանդեպ բռնության գրանցամատյանի ստեղծման համար և այլն, Սփյուռքի և Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունները մշտապես համագործակցել են սփյուռքահայ երիտասարդներին ուղղված ծրագրերով: Սակայն միջոլորտային համագործակցության հարցում համակարգային մոտեցում չկար: Նշենք նաև, որ կա միջգերատեսչական սոցիալական համագործակցություն, որն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն, սակայն այն առանձնահատուկ չի թիրախավորում երիտասարդներին [28]:

Երիտասարդության վերաբերյալ միջգերատեսչական համագործակցության, ինչպես նաև ՀԿ-պետական ոլորտների գործակցության մեխանիզմ է եղել ՀՀ վարչապետին կից երիտասարդական խորհուրդը, որի վերջին նիստը, սակայն, տեղի է ունեցել 2012 թ. դեկտեմբերի 19-ին: Մինչ այժմ խորհուրդն աննախադեպ հարթակ է եղել երիտասարդությանն առնչվող ռազմավարական հարցերի քննարկման, որոշումների կայացման համար, որը միջգերատեսչական համագործակցության, ՀԿ-պետական ոլորտների համակառավարման մեխանիզմի օրինակ էր: Խորհրդում կառավարության կողմից ներկայացված են եղել բոլոր նախարարությունները՝ նախարարի տեղակալի մակարդակով, ինչը հնարավորություն էր տալիս խորհրդին լինելու երիտասարդների վերաբերյալ որոշումների կայացման միջգերատեսչական ներկայացուցչական մարմին:

Նոր կառավարության ձևավորմանը զուգահեռ, կարելի է նկատել միջգերատեսչական համագործակցության ուղղությամբ դրական միտումներ: Ներառական կրթության համակարգի զարգացման ուղղությամբ ընթանում են աշխատանքային քննարկումներ ԿԳՄՍՆ, ԱՍՀՆ և Առողջապահության նախարարության անմիջական և ակտիվ մասնակցությամբ: Երիտասարդական միջոլորտային քաղաքականության մշակման գործընթացը դեռևս ակտիվ ընթացքի մեջ չի մտել, ինչի հետևանքով հնարավոր չէ այժմ ամբողջությամբ ներկայացնել պատկերը:

Երիտասարդության ոլորտում ակտիվ դերակատարություն ունեն նաև միջազգային դոնոր կազմակերպությունները՝ թե՛ ուղղակի ծրագրեր իրականացնելու ձևաչափով, թե՛ երիտասարդական ՀԿ-ների դրամաշնորհներ տրամադրելով:

Չնայած երիտասարդական ՀԿ-ներին ուղղված ֆինանսավորման առկա հնարավորություններին՝ պետական, այդ թվում, առցանց դրամաշնորհային համակարգով, միջազգային՝ տարբեր բաց հայտարարությունների միջոցով, երիտասարդական ՀԿ-ները բավականին խոցելի են ֆինանսական կայունության տեսանկյունից: Բացի դրանից՝ միջազգային դոնոր համայնքից հասարակական ոլորտի կախվածության մասին մշտապես իրենց մտահոգություններն են հայտնում ոլորտի ներկայացուցիչները [29]:

[28] Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշում, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112629. [20.08.2018 թ.]

[29] Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014թ.

Երիտասարդական ոլորտում ՀԿ-ների դերը ևս մեծ է: Այսօր Հայաստանում գործում է շուրջ 400 երիտասարդական ՀԿ, ընդ որում, դրանց 19 %-ը զբաղվում է երիտասարդների հիմնահարցերով, 15 %-ը՝ մարդու իրավունքներով և այլն:

Ներդիր 1.2.

Երիտասարդական քաղաքականության կարգավորման ավանդույթը Հայաստանում

Մինչև կառավարության կառուցվածքային փոփոխությունների նախագիծը Հայաստանում երիտասարդության ոլորտը համակարգում էր ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, որն էլ պատասխանատու էր երիտասարդական քաղաքականության մշակման, իրականացման համակարգման, համագործակցության համար: Նախարարության լիազորությունների ներքո էր գործում նաև «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը պետական երիտասարդական ծրագրեր իրականացնող միակ կառույցն էր: ՊՈԱԿ-ի կազմում էր գործում նաև Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը, որն իրականացնում էր երիտասարդների վերաբերյալ մասնագիտացված ուսումնասիրություններ, որոնք հիմք են հանդիսանում քաղաքականության համար[30]: 2019 թ. հունվարի 10-ին Կառավարության որոշմամբ լուծարվեց «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը: Կառույցի լուծարման վերաբերյալ Կառավարության որոշման նախագիծը շրջանառության մեջ էր դրվել դեռևս 2018 թ. հոկտեմբերին՝ պետական միջոցները տնտեսելու միակ փաստարկով: Նշենք, որ կառույցի պահպանման ծախսերը կազմում էին շուրջ 27 մլն ՀՀ դրամ: Կառույցի լուծարման շուրջ ծավալվող քննարկումներում բարձրաձայնվում էր այդ քայլով երիտասարդության ոլորտի և երիտասարդության անտեսման վարկածը, ինչը ոլորտի ներկայացուցիչների շրջանում հաստատվեց Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության լուծարման փաստով: Ստահոգիչ է նաև ոլորտի կառույցների լուծարմամբ նախկին կուտակված գիտելիքի, փորձի, պետական, հասարակական և միջազգային ներդրումների ջանքերի փոշիացումը: Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի ստեղծման, զարգացման համար պետական, հասարակական, միջազգային կազմակերպությունների կողմից ներդրվել են հինգ տարիների ջանքեր, իսկ լուծարումը, փաստորեն, հանգեցրեց այդ բոլոր ջանքերի անվերադարձ կորստին:

Նախքան 2011 թ. «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի ստեղծումը, 2009 թ. լուծարվել էր «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ը, իսկ վերջինիս կայացման համար ևս տարիների ջանքեր էին ներդրվել:

Փաստացի, երիտասարդական քաղաքականության ոլորտն ունի հատվածային, կարճաժամկետ մոտեցումների, ներդրված մարդկային, ֆինանսական և ինստիտուցիոնալ ջանքերի կորստի տխուր ավանդույթ:

Կարևոր է նշել նաև, որ ոլորտի ներկայացուցիչները հիմնավոր ակնկալիք ունեին, որ երիտասարդությունը պետք է լինի նոր կառավարության ուշադրության կենտրոնում, քանի որ նախ՝ Թավշյա հեղափոխության շրջանակներում երիտասարդների քաղաքական ակտիվությունն աննախադեպ էր, ինչպես նաև նոր Կառավարության կազմում բավականին շատ են երիտասարդ պաշտոնյաները, ինչը ևս աննախադեպ էր: Սակայն Կառավարության փաստացի գործողությունները ոլորտի ներկայացուցիչների մոտ ամրապնդեցին երիտասարդության ոլորտի հանդեպ առկա դիրքորոշումը, ըստ որի՝ երիտասարդության ոլորտը գերակա ուղղություն և առաջնահերթություն չէ:

1.2.5. Երիտասարդական ուսումնասիրությունների ավանդույթը

Հայաստանում երիտասարդական քաղաքականության մշակումը հիմնվում է ոլորտային ուսումնասիրությունների վրա: 2013-2017թթ. երիտասարդական ռազմավարության ընդունումից հետո Հայաստանում իրականացվել են երիտասարդական ուսումնասիրություններ, որոնց հիման վրա մշակվել է ոլորտի պետական քաղաքականությունը[31]: 2016-2017թթ. իրականացվել է 2013-2017թթ. երիտասարդական ռազմավարության մոնիթորինգը և գնահատումը, որի հիման վրա մշակվել է Երիտասարդական քաղաքականության 2018-2022թթ

[30] www.ystudies.am

[31] ‹‹Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները›› զեկույց, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, 2012 թ.

ոազմավարության նախագիծը:

2013-ից մինչև 2019թ. ապրիլ ամիսը գործում էր Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը, որի կանոնադրական նպատակը հենց երիտասարդական ուսումնասիրությունների իրականացումն էր՝ փաստարկված երիտասարդական քաղաքականության մշակմանը նպաստելու նպատակով: Ինստիտուտը համակարգվում էր խորհրդակցական մարմնի՝ խորհրդի կողմից, որը բաղկացած էր պետական և հասարակական ոլորտի, ինչպես նաև հետազոտական համայնքի ներկայացուցիչներից:

Ներդիր 1.3.

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ. փաստարկված երիտասարդական պետական քաղաքականության մեխանիզմ

2013թ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համագործակցությամբ ստեղծվել էր Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը: Ինստիտուտի իրականացրած հետազոտությունները հիմք են դարձել երիտասարդական քաղաքականության մի շարք փաստաթղթերի մշակման համար: 2013-2018թթ. ընթացքում ինստիտուտը իրականացրել է հետևյալ ուսումնասիրությունները.

ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները

- Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները:
- Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում:
- Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտություն. ինստիտուտի ներկայիս վիճակը և կայացման հեռանկարները:
- ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության 2013-2017թթ. ոազմավարության մոնիթորինգ և գնահատում:
- Ստեղծարար տնտեսության մեջ երիտասարդների զբաղվածության ներուժը և զարգացման հեռանկարները:

1.2.6. Երիտասարդական ծրագրերի և կազմակերպությունների, երիտասարդական աշխատանքի նկարագիրը

Ինչպես նշվեց, այսօր Հայաստանում գործում է շուրջ 400 երիտասարդական ՀԿ, որոնց 19%-ը զբաղվում է երիտասարդների հիմնահարցերով, 15%-ը՝ մարդու իրավունքներով և այլն:

Գործունեության իրենց ոլորտներում կազմակերպությունները հիմնականում ծավալում են կրթական, շահերի պաշտպանության, իրազեկման աշխատանքներ, տրամադրում են սոցիալական աջակցություն և հումանիտար օգնություն, ինչպես նաև մատուցում են գիտական, հետազոտական և մասնագիտական ծառայություններ:

Կոնկրետ գործողությունների տեսակներից առավել հաճախ են օգտագործվում դասընթացները և սեմինարները, հանդիպում-քննարկումները, ինչպես նաև համաժողովները: Բազմաթիվ կազմակերպություններ (հարցված կազմակերպությունների մոտ 47%-ը) խորհրդատվություն են մատուցում տարբեր ոլորտներում, հաճախ են նշվում նաև մշակութային և մարզական միջոցառումները[32]: Ավելի քիչ են տեղեկատվական ծառայություններ մատուցող, հետազոտական- վերլուծական գործունեություն իրականացնող կազմակերպությունները:

[32] Mapping of youth organizations and evaluation of the effectiveness of state-funded youth grant programmes

Ներդիր 1.4

Գյումրիի երիտասարդության իրավիճակի վերլուծություն: Տեղական երիտասարդական քաղաքականության օրինակ

2014թ. Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն՝ «Գյումրիի երիտասարդական խորհուրդ» ոչ ֆորմալ փորձագիտական միավորման հետ համատեղ, սկսեց «Գյումրիի երիտասարդական քաղաքականության զարգացում» ծրագիրը: Ծրագրի արդյունքում, ՀՀ-ում առաջին անգամ իրականացվեց համայնքային երիտասարդության իրավիճակի համապարփակ, քանակական և որակական խոր վերլուծություն: 2015 թ. հրապարակվեցին հետազոտական զեկույցի հայերեն և անգլերեն տպագիր ու առցանց տարբերակները (http://yic.am/geiv-zekuyc/):

2016թ. հիմնվելով հետազոտության արդյունքների, եզրակացությունների ու առաջարկների վրա, ՀՀ-ում առաջին անգամ մշակվեցին համայնքային մակարդակում ոլորտը կարգավորող 3 փաստաթուղթ: Դրանք՝ Գյումրի համայնքի երիտասարդական քաղաքականության 2017-2026թթ. հայեցակարգի, 2017-2021թթ. ռազմավարության և Գործողությունների ծրագրի նախագծերը, փոխանցվեցին ՏԻՄ-ին՝ «Գյումրի համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրում» ներառելու համար:

Հետազոտական զեկույցի հիման վրա 2017թ. ՀՀ-ում առաջին անգամ ստեղծվեց և գործարկվում է նոր տիպի համայնքային հաստատություն՝ բաց երիտասարդական աշխատանքի մոդելով գործող «Երիտասարդների տուն» կենտրոնը

Գյումրիի «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ

Ինչպես տեսանք, այսօր երիտասարդների հետ տարվող աշխատանքում ներգրավված են տարբեր կառույցներ, երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման համար գործում են համապատասխան մարմիններ, առկա են ֆինանսական միջոցներ, պարբերաբար իրականացվում են երիտասարդների վերաբերյալ մասնագիտական ուսումնասիրություններ, սակայն երիտասարդների կյանքի որակը դեռևս հեռու է ցանկալի պատկերից. առկա են շուրջ 30% գործազրկություն, միգրացիոն տրամադրվածություն, բևեռացվածություն, ֆինանսական կախվածություն[33]: Երիտասարդների զարգացման ուղղությամբ դրական փոփոխությունները պահանջում են նրանց իրավունքների վրա հիմնված քաղաքականություն, ինչպես նաև երիտասարդների ազատ գործելու հնարավորությունների ընդլայնմանն ուղղված ջանքերի համակարգում:

1.3 Ժողովրդագրական իրավիճակն ու երիտասարդության մարտահրավերները

Ստորև ներկայացված Նկար 1.3.-ը ցույց է տալիս վերջին տասնամյակում բնակչության թվաքանակի փոփոխությունը: 2008-2018 թվականների ընթացքում բնակչությունը 3 մլն. 097 հազարից իջել է 2 մլն. 973 հազար: Նկարը նաև ցույց է տալիս, թե ինչպես է փոխվել երիտասարդ տղաների ու աղջիկների թվաքանակը բնակչության կազմում: Ակնհայտ է, որ խիստ նվազել է հատկապես 14-25 տարեկանների թվաքանակը, ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների շրջանում[34]:

[33] Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018, https://www.armstat.am/file/article/trud_18_6.pdf

[34] Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2018, p.14 https://www.armstat.am/file/article/gender_2018.pdf



01.01.2008
Տղ. 1 486420 / Կն. 1 610965

01.01.2018
Տղ. 1 408199 / Կն. 1 564533

Նկար 1.3. Մշտական բնակչության սեռատարիքային կազմի փոփոխությունը 2008 և 2018թթ. (ընդամենի նկատմամբ, %)



Նկար 1.4. Բնական աճը (մարդ)

Նկար 1.4.-ը ցույց է տալիս, որ անկախությունից ի վեր բնական աճը Հայաստանում կրճատվել է 4,35 անգամ: Ամենացածր ցուցանիշները գրանցվել են 2000-ականների սկզբին: Այդ տարիներին ծնվածները ներկայումս երիտասարդական տարիքում են, ինչը նշանակում է, որ առաջիկայում նկատվելու է երիտասարդների թվի համեմատական կրճատում, միջին և բարձր տարիքի համեմատ:

Ժողովրդագրական այս գործընթացների բացասական կողմերից մեկն էլ այն է, որ վտանգ կա, որ առաջիկա

տարիներին հանրապետությունում 60 տարեկանն անց մարդկանց թիվը կարող է անցնել ՀՀ բնակչության 20%-ի սահմանը, ինչը նշանակում է, որ Հայաստանը կվերածվի «ծերացող» հասարակության:

Ներկայումս ժողովրդագրական իրավիճակը շարունակում է մնալ խիստ մտահոգիչ: 2012 թվականի համեմատ, 2016 թվականին ծնունդների թիվը նվազել է 4,6%-ով: Դրան զուգահեռ՝ 2 %-ով աճել է մահվան ցուցանիշը և 6%-ով նվազել բնական աճը: Ծնունդներն ու բնական աճը շարունակել են նվազել նաև 2017 թվականին: Մեկ տարվա ընթացքում ծնունդների թիվը նվազել է 2900-ով, իսկ բնական աճը՝ 1800-ով[35]: Որոշ ժողովրդագրագետներ մտահոգություն են հայտնում, որ իրավիճակը նման ձևով շարունակվելու դեպքում արդեն 2025 թվականին մահերի թիվը կարող են գերազանցել ծնունդներին, ինչը նշանակում է, որ Հայաստանը կունենա բնակչության բացասական բնական աճ[36]: 2014թ. համեմատ, 2018թ. 60-ից բարձր տարիքային խմբի թիվն աճել է 2,1%-ով, իսկ 15-34 տարեկանների թիվը նվազել է 3,0%-ով[37]: Փաստորեն, երիտասարդության թիվը Հայաստանում նվազում է, դրան զուգահեռ, աճում է մեծահասակների թիվը, ինչը սոցիալական մեծ բեռ է ստեղծելու հենց երիտասարդների տարիքային խմբի համար:

Ըստ վիճակագրական տվյալների, Հայաստանում տղաների ծնունդը զգալիորեն գերազանցում է աղջիկների ծնունդին: Դրա գլխավոր պատճառը համարվում է սեռով պայմանավորված հղիությունների ընդհատումը: Ծնունդների հարաբերակցությունն ըստ սեռի 2017թ. կազմել է 1.10[38]: Բարձր թիվ է կազմում նաև սեռով պայմանավորված հղիության ընդհատումների թիվը: Այս ցուցանիշն առավել բարձր է եղել 2013 թվականին, երբ իրականացվել է 1400 աղջիկ պտղի հղիության ընդհատում[39]: Այս հիմնահարցը դարձավ լուրջ քննարկումների առարկա, ինչի արդյունքում ի վերջո Հայաստանում 2016 թվականին իրականացվեց օրենսդրական փոփոխություն, ըստ որի արգելվեց իրականացնել հղիության ընդհատում 12-րդ շաբաթից հետո[40]: Դա այն ժամկետն է, երբ հնարավոր է դառնում որոշել պտղի սեռը:

Ժողովրդագրական ոլորտում բնական աճի տեմպերի անկման գործոնից բացի՝ մեկ այլ լուրջ խնդիր է միգրացիան: Վերջին տարիներին նկատելի է միգրացիայի երիտասարդացում: Ճիշտ է, դեռևս աշխատանքային ու երկարատև միգրանտների մեջ մեծ է 35-55 տարիքային խմբի տեսակարար կշիռը, սակայն նկատելի է երիտասարդների թվի ավելացում[41]:

Ըստ միգրացիայի ոլորտում 2017 թվականին իրականացված հետազոտական տվյալների՝ միգրացիայում գտնվող երիտասարդների թիվը 18-34 տարիքային խմբում 2016թ. համեմատ ավելացել է 3,5%-ով: Այդ տարիքային խմբում մեծ է նաև միգրացիոն տրամադրությունների աճը: Առավել ակտիվ՝ 35-55 տարեկանների միգրացիոն խմբում միգրացիայում գտնվողների թիվը աճել է 3,6 %-ով[42]: Ինչպես տեսնում ենք, երիտասարդների տարիքային խմբի աճի ցուցանիշները մոտենում են միջին ակտիվ աշխատանքային տարիքում գտնվող խմբի ցուցանիշներին: Սա բավական մտահոգիչ է, քանի որ մեկ անգամ ևս հավաստում է այն միտքը, որ Հայաստանից դուրս միգրացիայի պատկերը երիտասարդանում է: Միգրացիան փոխանցվում է միջին սերնդից երիտասարդներին և դառնում վերարտադրվող երևույթ: Դեռևս 2014 թվականին, ըստ որակական հետազոտական տվյալների, միգրացիան միտում ուներ դառնալու սերնդից-սերունդ փոխանցվող երևույթ՝ ինչպես ընտանեկան, այնպես էլ համայնքային մակարդակում:

Նշենք նաև, որ միգրացիայում գտնվողների մեջ գերակշռող է տղամարդկանց թիվը: Կին-տղամարդ փոխհարաբերակցությունը կազմում է 29%-ը 71%-ի հարաբերակցությամբ[43]:

Երիտասարդության կարևոր հիմնախնդիրների հանդեպ նախկին իշխանությունների անտարբերությունը բավականին մեծացրել էր Հայաստանից հեռանալու և այլ երկրներում իրենց կարողություններն իրացնելու երիտասարդների ցանկությունը: Ամենամեծ հիմնախնդիրը, որը հաճախ նշվում է արտագաղթելու տրամադրվածություն ունեցող երիտասարդների կողմից, Հայաստանում իրենց ներուժը իրացնելու ոչ նպաստավոր միջավայրն է: Ներկայումս, չնայած նոր Կառավարությունը կարևորում է բարեփոխումների անհրաժեշտությունը, սակայն իրավիճակի էական փոփոխություն դեռևս նկատելի չէ:

35 Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2018, էջ 31: https://www.armstat.am/file/doc/99511628.pdf

36 Մարկոսյան Ա., ՀՀ բնակչության ժողովրդագրական գործընթացները 1985-2016 թթ.: http://aiisa.am/ourexperts/publication/329

37 Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2018, էջ 26: https://www.armstat.am/file/doc/99511628.pdf

38 Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2018, էջ.25: https://www.armstat.am/file/article/gender_2018.pdf.

39 Gilmoto Ch. Z. Sex imbalances at birth in Armenia Demographic evidence and analysis, Yerevan, 2018, p. 6: https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Sex_Imbalance_report_Eng_final-with%20cover-final.pdf

40 ՀՀ օրենքը Մարդու վերատադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=75284

41 Եգանյան Ռ., ՀՀ արտաքին միգրացիայի եռամյա մշտադիտարկում (2015-2017), Երևան, 2017, էջ 56:

42 Եգանյան Ռ., նշվ. աշխ., էջ 56-57:

43 Եգանյան Ռ., նշվ. աշխ., էջ 62:

Ժողովրդագրության ոլորտում ներկայացված հիմնախնդրի հաղթահարմանը կարող է նպաստել ժողովրդագրական ու միգրացիոն պետական քաղաքականության մշակումը:

Ժողովրդագրական տեսանկյունից ներկայումս փորձում են խրախուսական միջոցներ հատկացնել երկրորդ և երրորդ երեխա ունեցողներին, ինչպես նաև իրականացվում են բնակարան ձեռք բերելու հարցում երիտասարդներին աջակցող արտոնյալ ծրագրեր: Սակայն նշվածը դեռևս դրական միտումներ չի ստեղծել: Ավելին, 2017 թվականին գրանցվել է վերջին հինգ տարվա մեջ 1000 բնակչի հաշվով ծնունդների ամենացածր ցուցանիշը[44]:

Ժողովրդագրական հիմնախնդիրների լուծման հարցում չափազանց կարևոր է արմատապես փոխել երիտասարդության դերի ընկալումը:

Անհրաժեշտ է հրաժարվել երիտասարդությանը որպես օբյեկտ դիտարկելու քաղաքականությունից և փոխարենը ստեղծել նպաստավոր դաշտ, որպեսզի երիտասարդությունը դառնա ժողովրդագրական խնդիրների լուծման ակտիվ մասնակից: Այսինքն, երիտասարդությանը վերաբերող քաղաքականությունը պետք է մշակվի ու իրագործվի հենց երիտասարդության կողմից և լինի խիստ մասնակցային:

Ամենագլխավոր խնդիրը, երիտասարդների համար զարգացման ու ինքնաիրացման միջավայրի ձևավորման գործում հենց նրանց նեգրավելն է:

Համաձայն ՄԱԲՀ հետազոտության, պատերազմը և միգրացիան բացասաբար են ազդել ժողովրդագրական ճգնաժամի վրա: Տղամարդկանց թվի անկումը նպաստեց նրանց խորհրդանշական արժեքի բարձրացմանը: Միևնույն ժամանակ, սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխությունը ազդեց նաև գենդերային կարծրատիպերի փոփոխությանը[45]: Այն բնակավայրերում, որտեղ տղամարդկանց աշխատանքային միգրացիան բարձր է, տեղական տնտեսական զբաղմունքներում մեծացել է կանանց մասնակցությունը: Կանայք ավելի հաճախ են ընդգրկվում առևտրի մեջ, գյուղատնտեսական և այլ աշխատանքներում:

Այս փոփոխությունները և նոր մարտահրավերները տարբեր կերպ են անդրադառնում նաև երիտասարդ կանանց ու տղաների կյանքի վրա:

Ներդիր 1.5

Արփենիկ համայնքի երիտասարդական միգրացիայի պատմությունը

Շիրակի մարզի Արփենիկ համայնքի աշխատանքային տարիքի տղամարդ բնակչության մոտ 70%-ը մեկնում է աշխատանքային միգրացիայի ՌԴ և մնում այնտեղ միջինը 7-8 ամիս: Համայնքի տարիքով բնակիչները հումորով նկատում են, որ գարնան բացվելուն պես միգրանտների մոտ, ինչպես չվող թռչունների մոտ, արթնանում է բնազդը: Միգրացիան շատ տարածված է նաև 17-30 տարեկան երիտասարդների շրջանում: Այդ տարիքի գրեթե բոլոր երիտասարդները վաղ գարնանը հեռանում են գյուղից և վերադառնում ուշ աշնանը: Երիտասարդ տղաները, սկսած հասունացման տարիքից՝ արդեն 17-18 տարեկանից, միանում են աշխատանքային միգրացիայի մեկնող իրենց հայրերին: Փաստորեն, դա վեր է ածվել տարածված պրակտիկայի, երբ հայրերն իրենց հետ վաստակելու են տանում նաև երիտասարդության տարիք մտած որդիներին՝ այդ եղանակով նրանց փոխանցելով աշխատանքային միգրացիայի մեկնելու սովորույթը: Ստացվել է այնպես, որ գյուղում մնում են կանայք և մի քանի աշխատունակ տղամարդ: Միգրանտները, ըստ էության, հետաքրքրված չեն համայնքի տնտեսական, քաղաքացիական ու քաղաքական կյանքով և հիմնականում մասնակցում են միայն տոնածիսական արարողություններին:

[44] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2018, էջ 23: https://www.armstat.am/file/doc/99511628.pdf

[45] Men and gender equality in Armenia, Report on sociological survey findings UNFPA, Yerevan 2016, p.175-176 https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN%20AND%20GENDER%20EQUALITY_Final_0.pdf,

Առաջարկություններ

- Անհրաժեշտ է երիտասարդության սահմանման մեջ տարիքային խմբերի տարաբաժանման միասնական մոտեցում որդեգրել, ինչը հնարավորություն կտա նաև մշտադիտարկել կայուն զարգացման նպատակները՝ երիտասարդների մասով:
- Մարդկային զարգացման հայեցակարգի համաձայն, երիտասարդներին ուղղված պետական քաղաքականության մշակման գործընթացը պետք է հիմնել ոչ թե կամ ոչ միայն կարիքների, այլ նաև իրավունքների վրա:
- Անհրաժեշտ է մշակել երիտասարդական ծրագրերի նոր ձևաչափեր՝ ուղղված այսօրվա երիտասարդների արդի կարիքներին, հավասար իրավունքներին ու հնարավորություններին և ակնկալիքներին:
- Երիտասարդների զարգացման ուղղությամբ դրական փոփոխությունները պահանջում են երիտասարդների իրավունքների և գենդերային փոխակերպող մոտեցման[46] վրա հիմնված քաղաքականություն, ինչպես նաև երիտասարդների ազատ գործելու հնարավորությունների ընդլայնմանն ուղղված ջանքերի համակարգում:
- Անհրաժեշտ է ներդնել փաստարկված և մասնակցային երիտասարդական քաղաքականության մշակման կայուն գործող մեխանիզմներ՝ պահպանելով և կիրառելով նախկին փորձը:
- Անհրաժեշտ է մշակել և ներդնել երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում միջգերատեսչական համագործակցության նոր և արդյունավետ մեխանիզմներ:
- Պետական քաղաքականության թիրախային հիմնախնդիր դարձնել երիտասարդության՝ մարդկային զարգացմանն ուղղված քաղաքականությունների մշակումն ու իրագործումը:
- Հաղթահարել մարդկային զարգացման ոլորտում առկա անհավասարությունները: Կիրառելի դարձնել «Մարդկային զարգացում յուրաքանչյուրի համար» բանաձևը:
- Երիտասարդությանը դիտարկել որպես ԿԶՆ-ների իրագործման առանցքային դերակատար:
- Երիտասարդությանը պետական քաղաքականության մշակման ու իրականացման օբյեկտից դարձնել առանցքային սուբյեկտ:
- Ժողովրդագրական հիմնախնդրի առանցքը դարձնել մարդկային զարգացման բանաձևը՝ կարևորելով երիտասարդների համար ստեղծագործական ներուժի բացահայտման լայն հնարավորությունների և ազատությունների միջավայրի ձևավորումը Հայաստանի ողջ տարածքում:
- Երիտասարդների մեջ ձևավորել համակարգային մտածողություն և համակարգային ռազմավարություններ մշակելու կարողություն:
- Լայն հնարավորություններ ընձեռել կառավարման և այլ ոլորտների երիտասարդների նորարարական ներուժն իրացնելու նպատակով:

[46] Գենդերային փոխակերպող մոտեցումը նշանակում է, որ գործողության հիմքում դրված են գենդերային հավասարությանը (հավասար իրավունքներ միջոցների կառավարման և որոշումների ընդունման ժամանակ) և կանանց հնարավորությունների ընդլայնմանն ուղղված սկզբունքները:

Գլուխ 2

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Երբ վիճում ենք ազգայնական հայացքներ ունեցող երիտասարդների հետ և ասում ենք, որ մեզ համար կարևոր է ոչ միայն մարդու ազգությունը, այլև լավ քաղաքացի լինելը, իրենք չեն ընդունում դա: Եթե մարդը հայ չէ, բայց պայքարում է Հայաստանի բնության պահպանության կամ քաղաքի հանրային տարածքների պահպանության համար, նա, անկախ ազգությունից, ինձ համար ավելի հայրենասեր մարդ է, քան նա, ով կարող է խոսել վերացական ազգային խնդիրներից, բայց ներկա Հայաստանի էկոլոգիական կամ քաղաքացիական շարժումներին չի մասնակցում: Ես քաղաքացիական ակտիվիստ մի ընկեր ունեմ, ազգությամբ հայ չէ, բայց նա իմ կարծիքով ավելի մեծ հայրենասեր է, քան նրանք, ովքեր խոսում են ազգային գաղափարներից ու արժեքներից, բայց հանդուրժել են օլիգարխների ու նախկին իշխանությունների կողմից Հայաստանի հասարակության հանդեպ սոցիալական անարդար քաղաքականությունը, Հայաստանի հանքերի հարստահարումն ու բնության ոչնչացումը:

Հատված 29 տարեկան աղջկա հետ հարցազրույցից

2.1. Երիտասարդության արժեքները և առկա արժեհամակարգային միտումները քաղաքացիական մասնակցության տեսանկյունից

2.1.1. Երիտասարդության արժեքային կողմնորոշումները և քաղաքացիական հասարակության ձևավորման խնդիրները

Իրականացրած փորձագիտական հարցազրույցներում արտահայտված կարծիքների համաձայն՝ Հայաստանի երիտասարդությունը հիմնարար արժեքի տեսանկյունից բաժանված է երկու հիմնական հատվածների՝ *խմբակենտրոն և մարդակենտրոն*[47]:

Խմբակենտրոն արժեքներ կրող երիտասարդության միջավայրում կարևորվում է խմբի անդամ լինելը: Հիմնարար են համարվում ծագման, բնակության ընդհանուր տարածքի, ազգակցական, էթնիկական ընդհանրության և այլ այնպիսի գործոններ, որոնք պայմանավորված չեն մարդու անհատական հատկանիշներով:

Մարդակենտրոնության պարագայում, հակառակը, համախմբման ու համագործակցության համար կարևոր են մարդու ստեղծարար ունակություններից բխող անհատական հատկանիշները, իսկ համախմբիչ գործոնը ոչ թե խմբային պատկանելությունն է, այլ՝ գաղափարները, ոճն ու ճաշակը, քաղաքական ու քաղաքացիական հայացքները, մասնագիտական ու անհատական հետաքրքրությունները և նմանատիպ այլ գործոններ:

Որպես կանոն, խմբակենտրոն արժեհամակարգին բնորոշ են առավելապես դոգմատիկ կամ պահպանողական մոտեցումները: Կարևորվում է ավանդույթներին, ընդունված հասկացություններին ու սովորութային չգրված նորմերին հետևելը: Ընդունված է, որ կյանքում ամեն ինչ ունի մեկ ճիշտ ձև և խմբի անդամների խնդիրն է դրա պահպանումը: Այսպես օրինակ, նրանք անընդունելի են համարում տղաների երկար մազեր պահելը, համարելով որ դա «ճիշտ» չէ և հարիր չէ «հայ տղայի» կերպարին, ու նման պարագայում նրանք պատրաստ են հոգեբանական ու ֆիզիկական բռնություն գործադրել իրենց պատկերացրած «ճիշտ հայ տղայից» տարբերվողի նկատմամբ: Նույն կերպ նրանք ունեն ցանկացած երևույթի ու վարքագծային նորմի «ճիշտ» ձևի մասին մեկ պատկերացում, որը խախտելը դիտվում է որպես դատապարտելի սրբապղծություն:

Խմբակենտրոն արժեքների տարածվածությունը այն հիմքն է, ինչի վրա, ըստ խմբային ինքնություն ունեցող շրջանակների, խարսխված են նաև «ազգային» արժեքները:

Երիտասարդության այս հատվածի համար ազգային արժեհամակարգն ունի գլխավորապես էթնիկական, այլ ոչ՝ քաղաքացիական բնույթ:

[47] Այս բնորոշումների համար կոնցեպտուալ առումով հիմք է ծառայում Գ. Հոֆսթեդեի կոլեկտիվիստական և ինդիվիդուալիստական մշակույթների մասին դիտարկումները: Hofstede G., "Dimensions of National Cultures in Fifty Countries and Three Regions," in Expiscations in Cross-Cultural Psychology, J B. Deregowski, S Dziurawiec, and R.C Annis, eds. Lisse, Netherlands: Swets & Zeitlinger, 1983, pp. 335-355. Triandis H. C., Individualism.Collectivism and Personality. Journal of Personality, 2001, 69 (6): 907–24.

Երիտասարդության մեջ մեկ այլ խումբ էլ կազմում են քաղաքացիական արժեհամակարգ կրողները[48]: *Նրանց համար առանցքային են մարդու իրավունքները և անհատի ընտրություն կատարելու ազատությունը*:

Հատկանշական է, որ չնայած մարդակենտրոն և քաղաքացիական արժեհամակարգ ունեցողները երիտասարդության մեջ փոքրամասնություն են, սակայն նրանց ազդեցությունը գնալով մեծանում է: Այս առումով, հատկապես շոշափելի են Թավշյա հեղափոխության ժամանակ տեղի ունեցած փոխակերպումները: Դրանք դեռևս խորությամբ չեն ուսումնասիրվել, սակայն փորձագիտական հետազոտությունները թույլ են տալիս ասել, որ պահպանողական երիտասարդությանը հարողների շրջանակում նկատելի են քաղաքացիական բնույթի արժեքային որոշ փոփոխություններ: Հատկապես մեծացել են այլակարծության հանդեպ հանդուրժողականության ու մարդու անհատական որակները գնահատելու միտումները: Այս առումով, ***կարևոր մարտահրավերներից է «ազգային» արժեքների շրջանակի ընդլայնումը և քաղաքացիական ու պետական արժեքներով դրանց համալրումը, ինչպես նաև հայրենասիրության ընկալումներին քաղաքացիական հայրենասիրության բաղադրիչների ավելացումը:***

Ավտորիտար և մարդասիրական արժեքներ: Մյուս նկատելի առանձնահատկությունն այն է, որ երիտասարդության մեջ ավելի ազդեցիկ են *հիերարխիկ* կամ *ավտորիտար* արժեքներ կրող շրջանակները, քան *հորիզոնական* կամ *մարդասիրական* արժեքներ կրողները: Սրա հաղթահարումը ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կառուցման լրջագույն մարտահրավերներից է:

Հարկ է նկատել, որ նախորդ իշխանությունների օրոք ընտրությունների ժամանակ հատկապես նրանք էին իրականացնում նախկին ավտորիտար քաղաքական համակարգի հենարանի դերը թաղային կամ բակային միջավայրերում: Բարեբախտաբար, Թավշյա հեղափոխությունից հետո թե՛ Երևանի ավագանու և թե՛ 2018թ. դեկտեմբերի 9-ին կայացած խորհրդարանական ընտրությունների ժամանակ նման բնույթի երիտասարդության ազդեցությունը համարյա թե բացառվեց, ինչը պետք է համարել շատ կարևոր ու դրական փոփոխություն:

Երիտասարդության մեջ ավելի փոքր թիվ կազմող *մարդասիրական արժեհամակարգի* կրողների համար հիմնարար է մարդկանց հավասարության ու ազատության գաղափարը: Եվ չնայած իրենց քանակական փոքրաթիվությանը, քաղաքական կամ քաղաքացիական ակտիվության առումով նրանք կարևոր դեր են կատարում: Հենց այս արժեհամակագը կրող երիտասարդությունն էլ դարձավ Թավշյա հեղափոխության առաջնորդող ուժը և իշխող ավտորիտար համակարգի դեմ պայքարի առաջամարտիկը: Հատկանշական է, որ ստեղծված իրավիճակում խմբակենտրոն երիտասարդության մի զգալի հատված, հետևելով առաջնորդող երիտասարդությանը, նույնպես իր մասնակցությունն ու համակրանքը ցուցաբերեց առաջ քաշված քաղաքացիականության և իրավականության առանցքային հարցադրումներին:

Հեղափոխությունից հետո այս երիտասարդությունը նաև ստանձնել է պետական կառավարման իրականացումը: Սա կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել երիտասարդության մեջ արժեքային խորքային բարեփոխումների իրականացման համար:

[48] Քաղաքացիական արժեքների մասին տես. Harward D.E. (eds.), Civic values, civic practices. Washington, DC: Bringing Theory to Practice. 2013.

Ներդիր 2.1

Գոո Օրդյան

Մշակութաբան, ասպիրանտ (28տ.)

Իմ կյանքում արմատական նշանակություն է ունեցել արժեքային ընկալումներիս փոփոխությունը: Դա տեղի է ունեցել սովորելու ընթացքում ինձ դասավանդած դասախոսներից մի քանիսի հետ հաղորդակցման շնորհիվ: Նրանցից մեկն ինձ խորհուրդ տվեց կարդալ Էրիխ Ֆրոմի աշխատությունները: Դա ինձ համար «ռուբիկոնի» դեր խաղաց: Երբ ես կարդում էի հումանիստական ու ավտորիտար անհատների տիպերի մասին, աստիճանաբար սկսում էի նկատել, թե ինչպես են նման արժեհամակարգերն ամենօրյա բախման մեջ գտնվում մեր կյանքում: Ես այդ բախումը իմ մեջ եմ տարել, ու վերջին հաշվով հաղթահարել եմ մարդակենտրոնությունը, երբ հասկացել եմ, որ ինձ վրա պետք է հենվեմ, այլ ոչ՝ ծանոթ-բարեկամների: Ընտանիքն ու միջավայրն ինձ համար շատ հիմնարար արժեքներ են, բայց ես հասկացել եմ մի կարևոր բան. չպետք է թույլ տամ, որ իմ անհատականությունն ածանցվի խմբային պատկանելությանը, եթե նույնիսկ այդ խմբին պատկանելությունը ինձ համար շատ կարևոր է: Դա լուրջ պայքար է թե՛ քո անձի ներսում և թե՛ միջավայրիդ հետ: Ես իմ անհատականության լուրջ փոխակերպումների ճանապարհով եմ անցել՝ թաղային ու բակային նորմերին ու արժեքներին տուրք տվողից մինչև մարդակենտրոնություն: Իմ կյանքում տեղի ունեցած այդ շրջադարձից հետո ես հասկացա, որ գլխավոր խնդիրը սեփական ստեղծագործականության բացահայտումն ու զարգացումն է: Կյանքում ինքնահաստատվելու համար ոչ թե պետք է կայանաս ուրիշներին ստորադասելու ու օգտագործելու, այլ՝ ինքնաիրականացման ճանապարհով: Երբ սկսում ես քննադատորեն վերաբերվել ինքդ քեզ ու միջավայրիդ, գտնում ես շատ նոր հնարավորություններ կյանքում առաջնորդվելու համար: Ինձ համար նույնիսկ ամենաբարդ անձնական ու ընտանեկան իրավիճակներում այս մոտեցումը միշտ օգնել է գտնել ելքեր: Եվ ես դրանք գտել եմ իրավիճակին ստեղծագործաբար մոտենալու ու նոր քայլերի հնարավորություններ բացահայտելու միջոցով: Հայաստանում երիտասարդությունը լայն առումով երկու խմբի է բաժանվում: Մեծամասնությունն ապրում է իր խմբային արժեքներով և կենսակերպով պահպանողական է: Բայց փոփոխությունների գեներատորը փոքրամասնություն կազմող ստեղծագործական անհատականություններն են: Չնայած նրանք փոքրամասնություն են, բայց նաև ազդեցիկ են: Ճիշտ է, առաջինները շատ լուրջ դիմադրություն են ցույց տալիս, որոշ դեպքերում անցնելով նույնիսկ կոշտ ճնշման մեթոդների, բայց միևնույնն է, անհատականությունները ավելի ազդեցիկ են ու միտումներն իրենք են ձևավորում: Հատկապես, Թավշյա հեղափոխությունից հետո դրա հնարավորությունները կարծես թե ավելի են մեծացել:

Ազգային և համամարդկային արժեքներ: Հիերարխիկ և պահպանողական արժեհամակարգով բնորոշվող երիտասարդության մեջ բավական տարածված է ազգային արժեքները համամարդկայինին հակադրելը: Շատերը հայկականը համարում են ճիշտ, իսկ համամարդկայինը՝ հակազգային, հետևաբար և՝ սխալ: Ըստ այդ մոդելի նախ, շատ նեղ է սահմանվում «ազգայինի» շրջանակները և երկրորդ, այն, ինչը չի համապատասխանում իրենց պատկերացրած «ազգայինին», համարվում է սխալ ու անընդունելի: Այստեղից էլ գալիս է «Մենք ճիշտ ենք, աշխարհը՝ սխալ» բանաձևը: Որոշ առումով այս երևույթը խորհրդային շրջանի իներցիայի հետևանք է, երբ «սովետական ինտերնացիոնալիզմը» հակադրվում էր «բուրժուական կոսմոպոլիտիզմին»: Կոսմոպոլիտ, այսինքն՝ աշխարհաքաղաքացի լինելը, երիտասարդության նշված շրջանակների միջավայրում տարածված կարծիքի համաձայն, այսօր էլ դիտվում է որպես բացասական մի բան և վտանգավոր «ազգային» ինքնության համար: Երիտասարդության որոշ շրջանակներում առկա այս մոտեցումը նպաստավոր չէ համաշխարհային զարգացման գործընթացներում ու առաջավոր աշխարհում ինտեգրվելու տեսանկյունից: Կարևոր մարտահրավեր է «Մենք ճիշտ ենք, աշխարհը՝ սխալ» դեպի ներս ուղղված, բնույթով փակ արժեհամակարգի հաղթահարումը: Այս ճեղքումն իրականացնելը նույնպես հետհեղափոխական կարևոր խնդիրներից մեկն է: Այս առումով, հնարավոր է դրական դերակատարում ունենալ սփյուռքի և Հայաստանի երիտասարդության համագործակցության աշխուժացումը և երիտասարդական միջազգային ծրագրերում ներգրավվումը: Դա հատկապես, պահպանողական երիտասարդությանը կօգնի ծանոթանալ այլընտրանքային մոտեցումներին և հաղթահարել առաջադիմության, փոփոխության ու առաջավոր աշխարհի հետ համագործակցության հետ կապված վախերը:

Ազգայինի գենդերային տեսանկյուն: Գենդերային հավասարությունը Հայաստանում շարունակում է մնալ կարևորագույն խնդիրների շարքում: Կանանց և տղամարդկանց միջև հավասարության սկզբունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ: Չնայած կանանց իրավունքներին և գենդերային հավասարությանն ուղղված բավական լավ օրենսդրական կարգավորումների առկայությանը, սրանց գործնական իրագործումը դեռևս ուժեղացման կարիք ունի, հատկապես, ավանդական արժեհամակարգի գերակայության պայմաններում: Այսպիսով, գենդերային հավասարության և կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում իրավիճակը հակասական է. մի կողմից կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ, կանայք համարվում են սոցիալ-տնտեսական զարգացման գործում կարևորագույն դերակատար, մյուս կողմից, կանայք բազմաթիվ պատնեշների են հանդիպում տնտեսական հնարավորությունների իրագործման և քաղաքական, և հանրային կյանքում ակտիվ մասնակցության փորձի ժամանակ:

Հայաստանում ընդունված մոտեցման համաձայն, տնային աշխատանք կատարելը կնոջ պարտականությունն է: Կանանց ներկայացվածությունը հանրային որոշումների կայացման գործընթացում շարունակում է մնալ ցածր, մինչդեռ ընտանիքում և հասարակության մեջ խտրական գենդերային կարծրատիպերը շարունակում են խոչընդոտել հավասարությանը (D.Mijatović, 2018)[49] խաթարելով կանանց սոցիալական կարգավիճակը և նրանց կրթական և մասնագիտական առաջխաղացումը (CEDAW / C / ARM / CO / 5-6) [50]: Կանանց, ներառյալ երիտասարդ կանանց, ցածր ներկայացվածությունը քաղաքական կյանքում և նրանց տնտեսական հզորացման հնարավորությունների սակավությունը՝ կապված աշխատաշուկայում գոյություն ունեցող ուղղահայաց և հորիզոնական խտրականության հետ, ինչպես նաև մի շարք այլ ոլորտներում առկա գենդերային անհավասարությունները բավական լուրջ խնդիրներ են, որոնց հիմնապատճառները դեռ պետք է վերացվեն[51]:

ՄԱԲՀ ուսումնասիրության արդյունքները պարզ ցույց են տալիս, որ հայ հասարակության մեջ դեռևս տարածված են պատրիարխալ և «ավանդական» կոշտ սոցիալական նորմերը և ընկալումները տղամարդկանց, կանանց, գենդերային հավասարության, սեռական կյանքի, ընտանիքի անդամների հետ հարաբերությունների, տնային աշխատանքի բաժանման, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության, զուգընկերոջ կողմից բռնության վերաբերյալ[52]: Հասարակական նորմերի և արժեքների բախման ավելի լայն համատեքստում զարմանալի չէ, որ ոչ բոլոր տղամարդիկ և կանայք են հետևողականորեն հավասար կամ անհավասար: Գենդերային կարծրատիպերը տարածված երևույթ են: Միևնույն ժամանակ, 15-24 տարեկան տարիքային խմբի երիտասարդ կանայք և տղամարդիկ, հատկապես բարձրագույն կրթությամբ, մայրաքաղաքի բնակիչները, ավելի քիչ ենթակա են այդ կարծրատիպերին, քան տարեց հարցվածները[53]: Հասարակության իրազեկման միջոցառումները պետք է հաշվի առնեն վերը նշվածը՝վերացնելու համար տղամարդկության և կանացիության մասին կարծրատիպերը և դրանց բացասական ազդեցությունը:

2.1.2 Երիտասարդության հասարակական համակեցության ձևերը

Սոցիալական գիտություններում համակեցության ձևերի տարբեր բնորոշումների հիման վրա կարելի է առանձնացնել Հայաստանի երիտասարդությանը բնորոշ չորս հիմնական ձև՝ 1. հարկադիր ենթակայական, 2. կոնֆլիկտային, 3. մրցակցային, 4. համագործակցային: Դրանք բոլորն էլ այս կամ այն չափով տարածված են, սակայն ըստ փորձագիտական կարծիքների, մի փոքր ավելի տիրապետող են առաջին երկու ձևերը:

Հարկադիր ենթակայական համակեցության ձևը կառուցված է միմյանց հետ հիերարխիկ հարաբերության մեջ գտնվող խմբերից[54]: 1991 թվականից ի վեր Հայաստանում ձևավորվել են ազդեցիկ ընտանիքներ կամ կլաններ, որոնք հասարակությունում արմատավորել են հարկադիր ենթակայական համակեցությանը բնորոշ պրակտիկաներ: Նրանց կառուցած հարաբերություններն ունեին հիերարխիկ բուրգի ձև, որի վերևում գտնվում էին ՀՀ բարձրաստիճան ղեկավարներն ու նրանց ընտանեկան կլանները, այնուհետև, ըստ ազդեցության աստիճանի, տարբեր օլիգարխիկ կլաններ:

Համակեցության այս տիպում իրենց դերակատարումն ունեին երիտասարդների թաղային խմբավորումները: Վերջիններս ընտրախախտումների հիմնական իրականացնողներն էին և կլանային բուրգի սկզբունքով

[49] ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարի զեկույցը 2018թ. սեպտեմբերին Հայաստան կատարած այցից հետո:

[50] Committee on the Elimination of Discrimination against Women. Concluding observations on the combined fifth and sixth periodic reports of Armenia, 2016. CEDAW/C/ARM/CO/5-6.

[51] Men and Gender equality in Armenia. Report on sociological survey findings. UNFPA, Yerevan, 2016, p.15-16https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN%20AND%20GENDER%20EQUALITY_Final_0.pdf

[52] Ibid, p.18:

[53] Ibid., p.243

[54] Համակեցության այս տիպի կոնցեպտուալիզացման համար հիմք է ծառայել Գ.Ալմոնդի և Ս.Վերբայի առանձնացրած արևելյան քաղաքական մշակույթի տիպին վերաբերող բնորոշումը՝ Almond G. and S.Verba, The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations, Princeton: Princeton University Press, 1963, pp. 3-42.

կառուցված ավտորիտար իշխանության հենարանը հանդիսացող արժեհամակարգի լեգիտիմիզացնողները համայնքային մակարդակում:

Թավշյա հեղափոխությունը լուրջ հարված է հասցրել համակեցության այս տիպին և 2018թ. կայացած Երևան քաղաքի ավագանու ու խորհրդարանական վերջին ընտրություններում թաղային երիտասարդական խմբավորումներին զերծ պահեց ընտրություններում որևէ կլանային ուժի անօրինական ծառայություններ մատուցելու ու դերակատարում ունենալու հնարավորությունից:

Հաճախ հարկադիր ենթակայական տիպին ուղեկցում է *կոնֆլիկտային համակեցության տիպը*: Ի դեպ, հասարակական հարաբերությունների տեսանկյունից առավել բացասական դերակատարություն ունեցող կոնֆլիկտները հիմնականում տեղի են ունենում երիտասարդ տղաների թաղային ու բակային ոչ ֆորմալ խմբավորումների միջև: Կարևոր է նկատել, որ երիտասարդության որոշ շրջանակներում քրեական ծագում ունեցող նորմերի տարածվածությունը լուրջ խոչընդոտ է կոնֆլիկտների դեպքում բանակցային եղանակով դրանք լուծելու գործում:

Հարկադիր ենթակայական ու կոնֆլիկտային համակեցության ձևերը խիստ անհանդուրժողական վերաբերմունք ունեն *մրցակցային* ու *համագործակցային* համակեցության ձևերի հանդեպ, որոնք հիմնականում բնորոշ են առավել առաջադիմական հայացքներ ունեցող երիտասարդության այն հատվածին, ում համար առաջնային են հումանիստական կամ անհատակենտրոն արժեքները:

Մրցակցային համակեցությունը, որը կառուցված է մրցակցելու հավասար պայմանների սկզբունքի վրա, ավելի շատ բնորոշ է հասարակական կազմակերպություններում միավորված երիտասարդության հատվածին: Նույնը կարելի է ասել *համագործակցային համակեցության* տիպի առնչությամբ:

Համակեցության ենթակայական ու կոնֆլիկտային ձևերը մերժողական ու անհանդուրժողական վերաբերմունք ու պրակտիկաներ են ձևավորում ընդունված խմբակային նորմերից ու ոճականությունից քիչ թե շատ տարբերվող, անհատական ինքնուրույն ոճականությամբ ու վարքագծով առանձնացող երիտասարդների հանդեպ: Վերջիններս հաճախ մարգինալացվում և ենթարկվում են տարբեր տեսակի բռնությունների: Ամենից մեղմը խոսքային և հոգեբանական բռնության ձևերն են: Սակայն քիչ չեն նաև ֆիզիկական բռնության դեպքերը: Նշվածը հատկապես տարածված է տղաների միջավայրում:

Համակեցության այս միջավայրերում խիստ դատապարտելի է համարվում սեռային փոքրամասնություններին պատկանելությունը: Նման երիտասարդները ստիպված են լինում կամ թաքցնել իրենց սեռային ինքնությունը, կա՛մ հեռանալ Հայաստանից: Հակառակ դեպքում, նրանք ենթարկվում են կոշտ ֆիզիկական բռնության, որը կարող է ավարտվել կյանքին վտանգ սպառնացող շատ ծանր ֆիզիկական վնասվածքներով: Հարկ է նկատել, որ կրոնական, սեռային և այլ փոքրամասնությունների հանդեպ ատելության քարոզը երբեմն իրականացվում է նաև որոշ կուսակցությունների քաղաքական վերնախավերի կողմից:

Խնդրահարույց է նաև կանանց նկատմամբ բռնության հարցը: Կանանց հանդեպ բռնությունը դեռևս չլուծված խնդիրներից է և բացասաբար է ազդում գենդերային հավասարության ժողովրդավարական կարևոր սկզբունքի հաստատման վրա, ինչը խոչընդոտում է Հայաստանում հիմնավորապես հաստատել ոչ խտրական, գենդերային բռնությունից ազատ, գենդերային հավասարության հիմնարար սկզբունքները[55]:

Թավշյա հեղափոխության արդյունքում նկատելի են որոշակի փոփոխություններ: Նախ, փոխվել է հարկադիր ենթակայական և կոնֆլիկտային համակեցության բուրգի գագաթը, և գրեթե վերացվել է թաղային հեղինակությունների ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա: Երկրորդ, նոր կառավարության կողմից և անձամբ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթներում բազմիցս կարևորվել է մարդու՝ որպես հիմնարար արժեքի առաջնայնությունը: Երրորդ, նոր կառավարությունը փորձում է հանրահռչակել Թավշյա հեղափոխության ժամանակ ի հայտ եկած «սիրո և համերաշխության» թեզը և այն դարձնել հասարակական համակեցության համար բնութագրական պրակտիկա: Իհարկե, չի կարելի ասել, որ այն արդեն որպես համակեցության ձև բնութագրական է հայաստանյան հասարակության համար, բայց էական է, որ այս արժեքները գոնե խոսքային մակարդակում կարևորվում են:

2.1.3. Երիտասարդությունը և համայնքային կյանքը

Հայաստանում համայնքը՝ որպես ինքնակազմակերպված քաղաքացիական կառույց, բավականին թույլ է և դեռևս կայացման կարիք ունի: Գյուղական և մարզային փոքր համայնքներին բնորոշ է հիմնականում ազգակցական ու թաղային ապրելակերպը: Նման համայնքների կյանքում բավական ազդեցիկ դեր ունեն

[55] Men and gender equality in Armenia, Yerevan, UNFPA, 2016, p.20: https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN%20AND%20GENDER%20EQUALITY_Final_0.pdf,

ազգակցական կլանները: Դրանք ընտրությունների շրջանում հաճախ դառնում են որոշիչ գործոն: Այս կլաններում սովորաբար երիտասարդները ենթակայական դիրքում են տարիքով ավելի մեծ և կլանում բարձր կարգավիճակ ունեցող տղամարդկանց նկատմամբ և կարևոր հարցերում ենթարկվում են նրանց որոշումներին: Երիտասարդ աղջիկները գյուղական և մարզային քաղաքային համայնքներում ընդհանրապես ենթակայական դիրքում են փոքր ընտանիքում և ազգակցական կլանում որոշիչ դեր ունեցող տղամարդկանց համեմատ[56]: Այս իրավիճակը քիչ թե շատ կարողանում են խախտել քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ): ՔՀԿ-ների շուրջ համախմբված երիտասարդները երբեմն հնարավորություն են ստանում փոխել իրենց ավանդական դիրքը և երևույթներին նայել քաղաքացիական արժեքների տեսանկյունից: Այս երևույթը կարևոր նշանակություն է ունեցել Թավշյա հեղափոխության ընթացքում երիտասարդների մասնակցությունը խթանելու առումով: Չնայած նշված դրական դերակատարությանը, ըստ մեր ֆոկուս խմբային հարցազրույցների, քաղհասարակության ինստիտուտները մարզերում լուրջ խնդիրներ են ունենում պատրիարխալ ավանդույթներին բախվելիս: Դրանք կաշկանդող ու խոչընդոտող դեր ունեն, հատկապես, համայնքային ծրագրերին երիտասարդ աղջիկների ու կանանց մասնակցության հարցում:

Համայնքային կյանքում ազդեցիկ դեր են կատարում նաև այսպես կոչված ոչ ֆորմալ կամ «ստվերային» թաղային խմբավորումները՝ «ախպերությունները»: Դրանց հիմքում ընկած են քրեական, ժողովրդական լեզվով ասված, այսպես կոչված, «գողական» արժեհամակարգից փոխառված նորմերն ու պրակտիկաները: Կոնֆլիկտի դեպքում «ախպերության» անդամները շատ արագ կարող են հավաքվել և ծեծի ենթարկել «ախպերության» անդամներից որևէ մեկի հետ կոնֆլիկտի մեջ մտած օտարին: Այս երևույթը խիստ դեստրուկտիվ դերակատարում ունի երիտասարդության մեջ: Խոսքը վերաբերում է տղաների միջավայրին, որտեղ դրանք բավական ազդեցիկ են և իրենց պրակտիկաներն ու նորմերը պարտադրում են մնացածին: Այս դեստրուկտիվ պրակտիկաները հաճախ կաշկանդում են առավել ստեղծագործական բնույթի պրակտիկաների տարածումն ու ազատ գործառումը երիտասարդների փոխհարաբերություններում: Երիտասարդության կյանքում այսպես կոչված «գողական» պրակտիկաների ու նորմերի տարածվածության դեմ պայքարն ու դրանց հաղթահարումը կարևոր դեր կարող է կատարել համայնքային կյանքի քաղաքացիականացման գործում: ***Այս տեսանկյունից կարևոր դեր կարող է ունենալ հանրային կյանքում քրեական նորմերի ու պրակտիկաների տարածման ու քարոզչության դեմ կանխարգելիչ օրենսդրական քայլերի ձեռնարկումը***:

[56] Մկրտչյան Ա., Վերմիշյան Հ., Բալասանյան Հ., Անկախության սերունդ, էջ 78:

Ներդիր 2.2

Զավեն Թադևոսյան

SS ոլորտի ուսանող (18 տ.)

Մանկուց սիրել եմ ռոք երաժշտությունը ու ռոք երաժիշտներից ներշնչված՝ երկար մազեր էի պահում: Բայց դա ինձ համար թե՛ մեր թաղամասում և թե՛ այլուր միշտ տարբեր բարդությունների պատճառ է դարձել: Եղել են դեպքեր, երբ փորձել են ինձ անվանարկել տարբեր վիրավորական արտահայտություններով, ինչի պատճառով նույնիսկ կռիվների մեջ եմ հայտնվել: Բայց ես ոչ մի գնով չեմ ցանկացել հանձնվել ու հրաժարվել երկար մազեր պահելու մտքից, քանի որ դա իմ անհատականությունը շեշտող կարևոր բան եմ համարել: Ես միշտ ցանկացել եմ տարբերվել ստանդարտ ու ընդունված ոճականությունից: Բայց Հայաստանում դա հեշտ բան չէ: Քո տարբերությունը բոլորը ոչ միայն նկատում են, այլև հստակ արտահայտում են դրա հանդեպ իրենց բացասական վերաբերմունքը: Դրա հիմնական պատճառն այն է, որ կան շատ մարդիկ, որոնց կարծիքով ամեն ինչի համար կան ընդունված ճիշտ ձևեր և դրանք խախտելուն նրանք շատ վատ են վերաբերվում: Ասենք, օրինակ, կա երիտասարդ տղաների մազերի, հագնվելու, խոսելու, աղջիկների հետ շփվելու, աղջիկ ընտրելու ու ամեն ինչի ճիշտ ձևը: Եթե դու դա չես պահպանում, քեզ ոչ միայն կարող են վիրավորել, այլև կարող ես հայտնվել լուրջ կոնֆլիկտների ու կռիվների մեջ: Դա հատկապես ուժեղ է թաղային միջավայրերում: Երևանի կենտրոնում դա, թերևս, մի փոքր ավելի մեղմ է արտահայտվում, քան արվարձաններում: Սովորաբար, այդ ոճի երիտասարդությունը վեճի մեջ մտնելիս միշտ մեծ թվով ընկերների է ներգրավում: Նրանք կարող են մի տասը-քսան հոգով մի հոգու ծեծել: Դա «ընդունված» ձև է և համարվում է լավ ընկերության ու նվիրվածության դրսևորում: Այդ անհանդուրժողականությունը երբեմն դրսևորում են ոչ միայն տղաների, այլև նույնիսկ աղջիկների հանդեպ: Եղել է դեպք, որ ես ինքս հետ եմ պահել տղաների մի խմբի այն քայլից, երբ ցանկանում էին մազերը ոչ սովորական կապտականաչ ներկած ու քթին օղ անցկացրած մի աղջկա ծեծել: Շատ դժվար եղավ նրանց համոզելը:

Բայց շատ հետաքրքիր է, որ Թավշյա հեղափոխությունից հետո իմ հանդեպ վերաբերմունքում ես զգալի փոփոխություն եմ նկատում: Երկար մազեր պահելու համար ինձ այլևս չեն նայում առաջվա նման: Ավելի հանդուրժող են դարձել: Ինձ թվում է, դրա պատճառն այն է, որ հեղափոխության ընթացքում երիտասարդության շատ տարբեր խմբեր, միասին պայքարելով փողոցում, նաև սկսեցին ավելի լավ ճանաչել իրար: Շատերը հասկացան, որ տարբեր ոճի մարդիկ կարող են ունենալ նաև ընդհանուր նպատակներ իրենց երկրի, հասարակության ու ապագայի կառուցման վերաբերյալ, ու դա մի տեսակ միավորող ու փոխադարձ հանդուրժողականության մթնորոլտ է ստեղծել:

2.2. Երիտասարդության մասնակցությունը քաղաքացիական, հանրային և մշակութային գործընթացներին

Քաղաքացիական, մշակութային և հանրային կյանքին երիտասարդության մասնակցությունը դրսևորվում է տարբեր ձևաչափերով:

Քաղաքացիական ոլորտի առավել տարածված ձևաչափերից է ***ՔՀԿ-ների միջոցով մասնակցությունը***[57]**:** Այս ձևաչափի մասնակցությունը վերաբերում է երիտասարդության ոչ ֆորմալ կրթության, համայնքային կյանքին մասնակցության, սոցիալական ձեռնարկատիրության, հաշմանդամների ներգրավման, սոցիալական խոցելի

[57] Paturyan J.Y., and V.Gevorgyan. 2016. Civic activism as a novel component of Armenian civil society. Yerevan: American University of Armenia. P. 16.

խմբերին աջակցության, մեդիագրագիտության, քաղաքացիական կրթության խնդիրներին: Նման ծրագրեր իրականացվում են ոչ միայն ՔՀԿ-ների, այլև համայնքային ակտիվ քաղաքացիական խմբերի ձևաչափերով: Այս ծրագրերի շնորհիվ երիտասարդության շրջանում ի հայտ են եկել քաղաքացիական տեսանկյունից գիտակից, նախաձեռնող, տեղեկացված, պատասխանատու անհատներ ու խմբեր: Սա կարևոր դեր է կատարել և կատարում երիտասարդության քաղաքացիական ակտիվության բարձրացման գործում: Այն որոշիչ դեր խաղաց նաև Թավշյա հեղափոխության ժամանակ:

2018թ. ՄԱԶԾ-ի Կանանց հզորացման և գենդերային հավասարության ծրագիրը հիմնեց «Համայնքը ԵՍ եմ» երիտասարդական ակումբը, որը միավորում է 83 (57 կին և 26 տղամարդ) «Համայնքը ԵՍ եմ» համայնքային երիտասարդ առաջնորդների ճամբարի շրջանավարտներին: Ակումբի նպատակն է ներգրավել տարբեր մարզերում բնակվող երիտասարդներին քաղաքականությունների մշակման գործընթացում: Ակումբի անդամները «Համայնքը ԵՍ եմ» ճամբարի ընթացքում անցել են վերապատրաստման դասընթացներ ՀՀ տեղական ինքնակառավարման, ուղղակի ժողովրդավարության և գենդերային հավասարության թեմաներով: Ինչպես նաև իրականացրել են փոքր նախաձեռնություններ իրենց համայնքներում՝ մասնակցային ժողովրդավարության և կանանց ներգրավվածության ուղղությամբ: Առաջին համապարփակ առաջարկությունների փաթեթը Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին մշակվել է ակումբի անդամների կողմից 2019թ. ապրիլին: Ընդհանուր 18 առաջարկություններ են ներկայացվել Կառավարություն և Ազգային ժողով, որը նաև ներառում է նվազագույնը 30% գենդերային չեզոք քվոտա ՏԻՄ-ում:

Մասնակցության մյուս կարևոր ձևը ***քաղաքացիական նախաձեռնություններն*** են: Դրանք հատկապես ընդգծված երիտասարդական բնույթ ձեռք բերեցին 2008 թվականից ի վեր: Հիմնական առանձնահատկությունը հանրայինի հանդեպ իշխանության հովանավորությամբ իրականացվող օլիգարխիկ համակարգի գործողություններին դիմադրության ցուցաբերումն էր և հանրային շահի պաշտպանությունը: Կա կարծիք, որ որոշ նախաձեռնություններ, մասնավորապես Մաշտոցի պուրակի և Երևանի տրանսպորտի ուղեվարձերի թանկացման դեմ քաղաքացիական նախաձեռնությունները ձևավորել են հետագայում Թավշյա հեղափոխության կողմից ժառանգված պայքարի այնպիսի ձևեր, ինչպիսիք են բազմակենտրոնությունը, խաղաղ ու ոչ բռնի անհնազանդությունը, որոշումների կայացման հորիզոնականությունը, մասնակիցների ընդգրկման բացությունը, նախաձեռնողականությունը: Այս նախաձեռնությունների կարևոր ներդրումներից մեկը ակտիվ, նախաձեռնող, պատասխանատու երիտասարդի ու քաղաքացու ինքնության ձևավորումն էր[58]:

[58] Ishkanian A. Self determined citizens? New forms of civic activism and citizenship in Armenia. Pp. 1221-1224

Ներդիր 2.3

Լենա Նազարյան

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, ԱԺ փոխխոսնակ (35 տ.)

Մինչև քաղաքական գործունեության անցնելը, ես մի քանի տարի մասնակցել եմ տարբեր քաղաքացիական նախաձեռնությունների: Ինձ համար շատ կարևոր են եղել Թեղուտի բնապահպանական շարժումը, Մաշտոցի պուրակի համար, Երևանի հասարակական տրանսպորտի ուղեվարձերի թանկացման դեմ պայքարը: Այդ նախաձեռնությունների ժամանակ տեղի էին ունենում շատ կարևոր փոփոխություններ: Նախ, հաղթահարվում էին այնպիսի կարծրատիպեր, որոնք մարդկանց իշխանությունից վախի ու ենթակայության մեջ էին պահում: Այդ նախաձեռնությունների մասնակցության ընթացքում շատ երիտասարդներ ազատվում էին իշխանություն ներկայացնող մարդուց ունեցած վախից: Դա շատ կարևոր դեր է խաղում քաղաքացիական դիրքորոշման ձևավորման համար: Վախից ազատ լինելը ազատում է նաև իշխանավորին ենթարկվելու կարծրատիպից, օգնում ազատվել անհավասարության հիերարխիկ զգացումից ու դիրքավորվել այնպես, որ հնարավոր է դառնում խոսել սեփական իրավունքների դիրքից: Քաղաքացիական նախաձեռնությունների մյուս նշանակալի ներդրումը հորիզոնական ինքնակազմակերպման ու ոչ բռնի մեթոդներով պայքարի պրակտիկաների արմատավորումն էր: Ավտորիտար իշխանություն ներկայացնող ուժերի դեմ պայքարում շատ կարևոր է հրաժարվել և չընդօրինակել իշխանության կողմից գործադրվող պրակտիկաները: Դա օգնում է, որ ցուցաբերես քո ինքնության տարբերությունը քո և մյուս քաղաքացիների իրավունքները ոտնահարողի ինքնությունից: Եվ երբ այդ պայքարի ընթացքում մարդիկ տեսնում են իշխանության թելադրածից տարբերվող պրակտիկաներ, նրանց համար դու դառնում ես նոր ուժի աղբյուր: Դա մեծացնում է պայքարող մարդու կարևորությունը: Պայքարելն ինձ համար սեփական քայլ անելն է, անտարբեր չլինելն է, մասնակցելն է ինձ վերաբերող հարցերի լուծմանը: Այն, ինչ տեղի ունեցավ Թավշյա հեղափոխության ընթացքում և դարձավ մարդկանց հաղթանակի պատճառը: Քաղաքացիական նախաձեռնությունների ժամանակ ինչ-որ մի պահից ես հասկացա, որ հասարակական տեսանկյունից ավելի մեծածավալ փոփոխությունների հասնելու համար անհրաժեշտ է մտնել քաղաքական պայքարի ոլորտ: Դա շատ կարևոր եղավ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը միանալու իմ որոշման համար: Ըստ էության, Թավշյա հեղափոխությունը, իր նպատակներով լինելով քաղաքական, մասնակցության սկզբունքներով քաղաքացիական բնույթ ուներ: Այն բաց էր բոլորի համար, հորիզոնական էր, ստեղծագործական ու նախաձեռնողական, ինչը երիտասարդության լայն ներգրավման կարևոր պատճառներից մեկն էր:

2.2.1. Երիտասարդությունը և քաղաքականությունը

Մինչև Թավշյա հեղափոխությունը երիտասարդության մասնակցությունը քաղաքական կյանքին հիմնականում իրականացվում էր տարբեր կուսակցությունների երիտասարդական թևերի միջոցով, ինչը երիտասարդության համար ձևավորել էր երկրորդական կարգավիճակ մեծահասակների համեմատությամբ: Քաղաքականության մեջ ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, երբ, ինչպես և իրական կյանքում, երիտասարդներին հատկացվում էր երկրորդական դեր, իսկ գլխավոր խոսքը վերապահվում էր մեծերին[59]: Ամենից բնութագրականն այս առումով իշխող ՀՀԿ կուսակցության երիտասարդական թևն էր: Այս կառույցի հիմնական դերը լիդերային ու մուլտիպլիկատիվ հատկություններով օժտված երիտասարդներին ՀՀԿ-ի շուրջ համախմբելը և այդ եղանակով երիտասարդության մեջ ՀՀԿ-ի լեգիտիմության դեֆիցիտը մեղմելն էր: Կառույցին տրված էին բավական ազդեցիկ միջոցներ ու ռեսուրսներ՝ իր առջև դրված խնդիրները լուծելու համար:

Հանրապետական կուսակցության կողմից երիտասարդության հանդեպ կիրառվող այս մոտեցումը իրականում ձևավորել էր, մի կողմից, իշխանությանը մերձավոր, արտոնյալ երիտասարդների խմբեր և, մյուս

[59] Մկրտչյան Ա., Վերմիշյան Հ., Բալասանյան Հ., Անկախության սերունդ, էջ 60-63:

կողմից, իշխանությունից այս կամ այն կերպ օտարված երիտասարդություն: Բացի ՀՀԿ-ից՝ հայտնի են նաև ՀՅԴ և ԲՀԿ կուսակցությունների երիտասարդական թևերը: Սրանք, սակայն, չունեին պետական իշխանական կառույցների հովանավորությունն ու այդ աստիճան ազդեցությունը քաղաքական կարիերա անելու նպատակ ունեցող երիտասարդության վրա:

Քաղաքականությունից օտարված, հատկապես «չկազմակերպված երիտասարդությունը» մինչև Թավշյա հեղափոխությունը կազմում էր երիտասարդության մեծամասնությունը: Երիտասարդության այս հատվածից ոմանց քաղաքական գործընթացներում ներգրավում էին կարճաժամկետ՝ ընտրությունների շրջանում ընտրախախտումների ու ընտրակաշառքի անօրինական գործընթացների կազմակերպման համար:

Երիտասարդությունը քաղաքականությանը մասնակցում էր նաև ընդդիմադիր քաղաքական ուժերի միջոցով և հիմնականում երկու ձևով՝ ընդդիմադիր քաղաքական ուժերին անդամակցության կամ պարզապես քաղաքական բողոքի ակցիաներին մասնակցության միջոցով:

Ի տարբերություն ՀՀԿ երիտասարդական թևի, խորհրդային «կոմսոմոլից» ժառանգված ձևաչափի, ընդդիմադիր կուսակցություններում երիտասարդները ոչ թե երկրորդական դերում էին, այլ հիմնական գործող անձինք էին:

Երիտասարդության քաղաքական մասնակցության յուրահատուկ ձևերից մեկը «Street art»-ն է[60]: «Street art»-ի առավել հայտնի ստեղծագործական խմբերից է «Արթլաբը»: Նրանց հիմնական գործունեությունն ուղղված է ավտորիտարիզմի դեմ արվեստային արտահայտչամիջոցներով պայքարելուն ու հասարակական տարածքներում այդ գաղափարի հանրայնացմանը:

Երիտասարդության մասնակցության ձևերից էին նաև ոչ մեծ խմբերով իրականացվող ինտելեկտուալ քննարկումները: Դրանց առանձնահատկությունն այն է, որ չնայած կարող էին ուղղակի քաղաքական բովանդակություն չունենալ, բայց գործառույթով քաղաքական էին, քանի որ ուղղված էին ավտորիտար ու հիերարխիկ գաղափարաբանությանը հակակշիռ հորիզոնական ու ժողովրդավարական գաղափարների ու մշակույթի տարածմանը:

Քաղաքական բողոքի ակցիաները երիտասարդության մասնակցության ամենաընդգրկուն ձևն են եղել: Սրա առանձնահատկությունն այն է, որ բաց է բոլոր ցանկացողների համար և կարող է ընդգրկել շատ մեծ ներուժ: Դրա առավել բնութագրական դրսևորումը եղավ Թավշյա հեղափոխությունը, որը հաջողեց հենց երիտասարդների մասնակցության շնորհիվ, որոնց թիվը օրեցօր աճելով մի քանի հարյուրից հասավ մինչև մի քանի հարյուր հազարի:

[60] Raspopina S. 2016. Street illegal: mees the artivists galvanizing political protest in Armenia. Available: http://www.calvertjournal.com/articles/show/6557/artak-gevorgyan-street-art-yerevan-armenia.

Ներդիր 2.4

Մերի Ղազարյան

արվեստաբան-ուսանող (23 տ.)

Պետք է անկեղծ ասեմ, որ մինչև ապրիլյան դեպքերը ես առանձնապես չեմ հետևել այն բոլոր իրադարձություններին, որոնք հանգեցրել էին Նիկոլ Փաշինյան ընդդիմադիր գործչի կերպարի ձևավորմանը: Ուստի շարժմանը ես հետևում էի որոշակի հեռավորությունից: Ճիշտ է, երբ արդեն սկսվեցին ուսանողական ըմբոստությունները, ես փողոցում պայքարողների շարքում էի: Ե՛վ փողոց էինք փակում ընկերներով, և՛ դասադուլ հայտարարում: Իհարկե, դա սկզբում անում էինք միմիանց հետ համերաշխության համար ու նաև ինչ-որ տեղ մեր պատվի համար, քան որևէ էական փոփոխության հասնելու խոր ընկալումով ու ձգտումով: Իմ այդ դիրքավորումը թույլ էր տալիս դիտել շարժման զարգացումները հետաքրքիր մի անկյան տակ՝ պատկերի ու թվային մշակույթի տիրույթում: Ողջ համացանցը ողողված էր լրատվամիջոցների լուսաբանումներով: Եվ այդ լուսանկարների ու պատկերների բազմության շնորհիվ էր, որ կարելի էր տեսնել, թե ինչպես են փողոցներն աստիճանաբար լցվում տարբեր տեսակի մարդկանցով, տարբեր ճակատագրերով: Մի պահ եկավ, թերևս Բաղրամյանի պայթյուններից հետո, ես ինձ պատասխանատու զգացի այն մարդկանց համար, ովքեր պայքարում էին, և ովքեր արդեն ինձ հարազատ էին: Եվ այդ պահից ի վեր սկսեցի արձանագրել այն ամենը, ինչ տեսնում էի համացանցում, առանց գիտակցելու, որ դա մի օր կվերածվի ծրագրի, որ կիրագործվի ցուցահանդեսի ձևաչափով և կկոչվի. «Թավշյա հեղափոխություն. պատկերի և իրականության միջև»: Անշուշտ, ցուցահանդեսն անհնար կլիներ կազմակերպել, եթե այս գործին նույնպես ընկերներս չմասնակցեին: Ուզում եմ ասել, որ այս ցուցահանդեսը մի տեսակ շարունակությունն էր հեղափոխության ընթացքում ձևավորված փոխօգնության ու մասնակցության մթնոլորտի: Մեր նպատակն էր ցուցահանդեսի միջոցով ի մի բերել հեղափոխության պատկերային դաշտը, քանզի շարժման մասին շատերն էին պատկերացում ստանում հենց սոցիալական ցանցերում տարածվող պատկերների միջոցով: Լուսանկարները երբեմն դիտորդին առաջարկում են այնպիսի դիտակետեր, որոնք անհնար կլիներ ընկալել տեղում: Դրանք հույզերի խտացումներ են, որ ունակ են ոգևորել ու միավորել, հուզել և հիացնել: Ուստի կարելի է ասել, որ լուսանկարիչները նույնքան ակտիվիստներ էին, և ակտիվիստները՝ նույնքան արվեստագետներ, իսկ հեղափոխությունն ինքնին մի պատկեր էր՝ վերածված հեղափոխականների ու արվեստագետների համաստեղծագործության: Այս առումով, ցուցահանդեսը պարզապես արվեստային իրադարձություն չէր, այն նաև քաղաքականությանը մասնակցության նոր ձև էր ոչ միայն իմ՝ որպես արվեստագետի, այլև ցուցահանդես այցելողների համար, քանի որ այդ կերպ նրանք հայտնվում էին հեղափոխության պատկերային տարածքում, որը արվեստի միջոցով կառուցված քաղաքական տարածք էր, և դուրս էին գալիս այդ տարածքից մի փոքր ավելի քաղաքականացված:

2.2.2. Երիտասարդությունը և Թավշյա հեղափոխությունը

Թավշյա հեղափոխությունն առաջին դեպքն էր, որ շարժման ղեկավարները և գործողությունների գլխավոր դերակատարները մեծամասամբ երիտասարդներն էին: Այն, որպես քաղաքական մասնակցության ձև, ուներ որոշ առանձնահատկություններ: Նախ, այն ընդգծված ***հորիզոնական*** բնույթի էր և հնարավորություն էր տալիս ցանկացածին մասնակցել քաղաքական գործընթացին և ինքնուրույն որոշել իր մասնակցության ձևն ու չափը: Իր այդ առանձնահատկությամբ այն հակադրվում էր մասնակցության կուսակցականացված նախկին պատրիարխալ ու հիերարխիկ ձևաչափերին, որտեղ կուսակցական ղեկավարներն էին որոշում, թե երիտասարդներից ով ինչ չափով ու գործառույթով պետք է մասնակցի քաղաքական գործընթացներին:

Մեկ այլ կարևոր հատկանիշ էլ միակենտրոնության փոխարինումն էր ***բազմակենտրոնությամբ***: Այս երկու առանցքային հատկանիշները հասարակության առավել նախաձեռնողական երիտասարդներին հնարավորություն տվեցին ձևավորել քաղաքական պայքարին մասնակցության կենտրոններ ոչ միայն Երևանում, այլև ամենահեռավոր մարզերում: Քաղաքական մասնակցության այս առանձնահատկությունների շնորհիվ ամբողջ հանրապետության տարածքը դարձավ պայքարի դաշտ, իսկ յուրաքանչյուր կենտրոն՝

նույնքան կարևոր, որքան որ մնացածը: Հնարավոր դարձավ քաղաքական գործընթացների մասնակից դարձնել նաև գյուղական ու մարզային երիտասարդությանը, ինչը աննախադեպ երևույթ էր այն առումով, որ քաղաքական գործընթացին մասնակցության համար չէր պարտադրում երիտասարդությանը տեղափոխվել Երևան:

Մեկ այլ կարևոր առանձնահատկություն վերաբերում է համակեցության տիպի փոփոխությանը: Թավշյա հեղափոխության ժամանակ մասնակից երիտասարդության միջև հարկադիր ենթակայական կամ կոնֆլիկտային համակեցության դրսևորումները գրեթե բացակայում էին: **Հեղափոխության կողմից բռնության մերժումը դրա հիմնական նախապայմանն էր**:

Մասնակցության այս եղանակը կարող է շարունակվել և դառնալ համայնքների կամ հանրապետության կյանքին վերաբերող խնդիրների քննարկմանն ու որոշումների կայացմանը երիտասարդության շարունակական մասնակցության լավ մոդել:

2018թ. դեկտեմբերի 9-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո խորհրդարանում կրկնակի անգամ ավելացավ կանանց թիվը՝ 18-ից հասավ 32-ի, կազմելով 25%: Միայն կառավարող կուսակցությունում նրանց թիվը հասավ 23-ի: Խիստ երիտասարդացավ ու փոխվեց նաև կին պատգամավորների տարիքային կազմը: Գերակշռում է 27-35 տարեկանների թիվը[61]: Նրանցից շատերը նախկինում ներգրավված են եղել քաղաքացիական ակտիվիզմի ոլորտ, ինչը վկայում է խորհրդարանական կյանք նոր քաղաքացիական մշակույթի ներթափանցման մասին:

Թավշյա հեղափոխության արդյունքում փոխվեց նաև կառավարության տարիքային կազմը: Ձևավորված նոր կառավարությունում հիմնականում երիտասարդ տարիքի անհատներ են: Այդ իրողությամբ պայմանավորված՝ էական փոփոխություններ են նկատվում նաև կառավարման մշակույթում: Առաջնային են դարձել թափանցիկության, հաշվետվողականության ու մատչելիության բաղադրիչները: Կրճատվել է հասարակություն – իշխանություն դիստանցիան, ինչը ժողովրդավարական հասարակության կարևոր ցուցիչներից է: Չնայած նոր կառավարությունում կա ընդամենը մեկ կին նախարար, սակայն բավական աճել է փոխնախարարների թիվը. ՀՀ կառավարությունում կին փոխնախարարների թիվը կազմում է 11 մարդ[62]:

2.2.3. Մեդիան և երիտասարդության մասնակցությունը

Փորձագիտական հարցումները վկայում են, որ ռադիոն ու հեռուստատեսությունը՝ որպես տեղեկություն ստանալու աղբյուր, ավելի շատ հետաքրքրում են մեծահասակների խմբին: Երիտասարդությունը գերադասում է առցանց տարածությունը: Առհասարակ, քաղաքացիական ու քաղաքական մասնակցության առումով Հայաստանում առաջնությունը տրվում է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցին:

Սոցիալական ցանցերը հիմնականում իրականացնում են երկու կարևոր գործառույթ՝ ա. հաղորդակցման և բ. մոբիլիզացման: Առաջինի շնորհիվ կոտրվում են հաղորդակցման հիերարխիաները և ձևավորվում են հորիզոնական կապեր, ինչպես նաև դիսկուրսներ ու քննարկումներ: Վերջիններս ֆիզիկական տարածքներում դժվար է կազմակերպել ու իրագործել: Սոցիալական ցանցը նաև արտահայտման ավելի մեծ ազատություն և ձայնը լսելի դարձնելու հնարավորություն է տալիս: Կարևոր է նաև, որ այն թույլ է տալիս հանրայնացնել ու թափանցիկացնել իշխանական «փակ» խմբերի ու միջավայրերի արարքներն ու գործողությունները և նպաստում է երիտասարդության մեջ քննադատական մտածողության աճին: Եվ վերջապես, այն ձևավորում է կարծիքների բազմազանություն և զուգահեռ կյանքի իրավունք՝ որոշակիորեն նպաստելով նաև հանդուրժողականության ծավալմանը:

Մոբիլիզացման տեսանկյունից՝ «Ֆեյսբուքը» նպաստում է ըստ կարծիքների, հետաքրքրությունների և գաղափարների ընդհանրության ցանցային բնույթի համագործակցային դաշտերի ձևավորմանը, ինչը հակակշռում է ենթակայական կամ կոնֆլիկտային համակեցության ձևերին: Ըստ փորձագիտական կարծիքների՝ Թավշյա հեղափոխության ժամանակ իրական տարածքներում հորիզոնական ու ցանցային մոբիլիզացման մշակույթի առաջացման ու հաջողության վրա էապես ազդեց հենց սոցիալական ցանցերում նման կերպով կազմակերպվելու մշակույթը:

[61] http://parliament.am/deputies.php?lang=arm

[62] https://www.gov.am/am/structure/

2.3. Կամավորությունը Հայաստանում

Չնայած Հայաստանում կամավորության զարգացման ուղղությամբ պետական քաղաքականությունը դեռևս ձևավորման փուլում է[63], անկախացումից հետո տեղական և միջազգային մի շարք կազմակերպություններ տարերային կերպով նպաստել են կամավորության մշակույթի ձևավորմանը: Հայաստանում այսօր կան կամավորներին և՛ «ուղարկող», և՛ «ընդունող», և՛ տեղում մոբիլիզացնող կազմակերպություններ (օրինակ, Հայ կամավորների բանկ (ՀԿԲ), Եվրոպական կամավորական ծառայություն, ԱՄՆ Խաղաղության կորպուս, Հայկական Կարմիր խաչի ընկերություն և այլն): Ֆորմալ կամավորությանը զուգահեռ առկա է նաև ոչ ֆորմալ կամավորական մշակույթը՝ արտակարգ իրավիճակներում մեծ քանակությամբ կամավորների ինքնակազմակերպումից (Աուտիզմով երեխայի որոնողական աշխատանքներ (հունիս, 2018), Հեղափոխության օրերին քաղաքի զանգվածային մաքրման աշխատանքներ (ապրիլ-մայիս, 2018) և այլն) մինչև անհատական մակարդակով նախաձեռնվող և իրագործվող կամավորական գործունեություն:

«Հայ կամավորների բանկը» գործունեությունը սկսել է 2013թ.՝ նպատակ ունենալով խթանել կամավորական աշխատանքի մշակույթի ձևավորումն ու զարգացումը, ձևավորել լիարժեք պատկերացում թե՛ գործատուների, թե՛ երիտասարդների շրջանում, ստեղծել նրանց կապող օղակ կամավորների համակարգման բազայի միջոցով և այլն: Որպես հասարակական կազմակերպություն գրանցվել է 2016թ.: ՀԿԲ-ն այժմ գործունեություն է ծավալում 3 ուղղությամբ՝ կամավորների տրամադրում, միջոցառումների կազմակերպում և մասնագիտական պրակտիկա:

Հայաստանի երիտասարդների՝ կամավորական աշխատանք անելու հիմնական դրդապատճառներն են գիտելիքի ձեռքբերումը և կարողությունների զարգացումը, աշխատանքային փորձի կուտակումը և կարիերան, հոգեբանական գործոնները, սոցիալական և պաշտպանողական գործառույթները (նոր ընկերների ձեռքբերումը, առաջնային համայքի զարգացումներից տեղեկացված լինելը, սեփական հաճույքի համար կամավորություն անելը, բացասական զգացողությունները նվազեցնելը, ժամանցի ձևերի փոփոխությունները) և քաղաքացիական պատասխանատվության զարգացման հնարավորությունը[64]: Ըստ երիտասարդների շրջանում կատարված «Անկախության սերունդ»[65] հետազոտության տվյալների՝ կամավորական աշխատանք իրականացնելիս արական սեռի ներկայացուցիչներն ավելի ներգրավված են սովորելու հարցում հասակակցին օգնելու, տեղական համայնքում հանրային աշխատանքներ իրականացնելու և սպորտային իրադարձություններ կազմակերպելու գործողություններում, իսկ իգական սեռի ներկայացուցիչները՝ ուսուցողական և մշակութային իրադարձություններ կազմակերպելու գործողություններում ու ՀԿ գործունեության մեջ: Նույն հետազոտության արդյունքները փաստում են, որ Հայաստանի երիտասարդների 57.3%-ի կամավորական աշխատանք իրականացնելու հիմնական պատճառը մասնագիտական գիտելիքների պրակտիկ կիրառության ցանկությունն է, իսկ 30.2%-ի համար՝ ապագա հնարավոր գործատուների հանդիպելու ցանկությունը: Սա փաստում է կրթական ոլորտի խնդիրների մասին, մասնավորապես, ուսումնառության ընթացքում երիտասարդները մասնագիտական գիտելիքների կիրառման հնարավորություն չեն ունենում, կամ եղած հնարավորությունը բավարար չի համարվում: Ստացվում է, որ Հայաստանում երիտասարդների համար կամավորությունն առաջին հերթին «կրթություն-աշխատաշուկա» անցման հնարավորություն է:

Կամավորության վերաբերյալ այսպիսի մոտեցումը հաստատվում և մատուցվում է կամավորներ ընդգրկող կառույցների կողմից՝ հայտարարություններում շեշտադրելով կամավորության փորձի անհրաժեշտությունը հետագայում աշխատանքի ընդունվելու համար և անտեսելով կամավոր կերպով ծառայություն մատուցելու միջոցով անհատի անձնական աճի և հանրային արժեք ստեղծելու կարևոր գործառույթը: «Կամավորության վիճակը աշխարհում 2018» զեկույցը փաստում է, որ կամավորությունը կարող է մեծ դեր ունենալ համայնքների տոկունությունն ուժեղացնելու գործում: Այն դիտարկվում է որպես ունիվերսալ սոցիալական վարք, որը հիմնված է մարդկանց՝ զարգացման գործընթացը պասիվ կերպով ապրելու փոխարեն փոփոխության մեջ ներգրավվելու ցանկության վրա[66]: Ըստ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ) Կովկասյան բարոմետրի 2017 թվականի տվյալների՝Հայաստանի բնակիչների 46%-ն է գտնում, որ լավ քաղաքացի լինելու համար կարևոր է համայնքի կարիքները բավարարելու նպատակով, առանց որևէ փոխհատուցում ակնկալու կամավորական աշխատանք անել: Նախորդ տվյալների (2015 թ.) համեմատ՝ այդ թիվը 16 %-ով նվազել է[67]: Չնայած 2018 թ. Թավշյա հեղափոխությունից հետո քանակական տվյալներ դեռևս

[63] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2017 թվականին երրորդ անգամ մշակել և շրջանառության մեջ է դրել «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» օրենքի նախագիծ, որն այժմ քննարկումների փուլում է:

[64] Gevorgyan V., Galstyan M.,(2016) Why Volunteering? Understanding Armenia's Experience, Voluntary Sector Review, vol. 7 no 3, 325-32.

[65] Անկախության սերունդ. հետազոտություն երիտասարդների շրջանում, Հայաստան 2016, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ

[66] 2018 State of the World's Volunteerism Report, The thread that binds: Volunteerism and community resilience

[67] Caucasus Barometer time-series dataset Armenia 2011-2017, IMPGCVW: Important for a good citizen - do volunteer work? https://www.caucasusbarometer.org/am/cb-am/IMPGCVW/.

չկան, մարդկանց՝ համայնքի կարիքների բավարարմանն ուղղված կամավոր գործողություններ անելու պատրաստակամությունը, ըստ նախնական դիտարկումների, կտրուկ մեծացել է: Հայաստանում համայնքային զարգացմանը և տոկունության ուժեղացմանը նպաստող նախաձեռնությունները թե՛ անհատական, թե՛ խմբային բնույթ ունեն: Երիտասարդական խմբերը, ելնելով համայնքների որևէ կարիքից կամ հնարավորությունից, ինքնակազմակերպվում են և առաջարկում խնդրի իրենց լուծումները՝ գրադարաններին գրքերով ապահովելուց մինչև էկոլոգիական հարցերի կարգավորում:

Ներդիր 2.5

Մարինե Խաչիկյան

Ուսուցչուհի (26տ.)

«Լուսավոր սահմանը» կամավորական նախաձեռնություն է, որը նպատակ է հետապնդում Հայաստանի և Արցախի սահմանամերձ բնակավայրերում լուսադիոդային լամպերի տեղադրման բարեգործական ակցիայի միջոցով երկրի բնակչությանը տեղեկացնել մատչելի և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառմամբ տնտեսումների հնարավորության մասին, միևնույն ժամանակ, դա անելով սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար և հենց նրանց համար ստեղծելով երկարաժամկետ տնտեսման և կենցաղային հոգսը թեթևացնելու հնարավորություն: Նախաձեռնության կարգախոսն է՝ «Լույս և հույս տվեք մարդկանց, ովքեր դրա մեծ կարիքն ունեն: Իմացեք, նույնիսկ ամենափոքր ներդրումը մեծ փոփոխություն կարող է բերել կարիքավոր մարդկանց առօրյայում»:

Մարինե Խաչիկյանը 26 տարեկան է: Արդեն 8 տարի Տավուշի մարզի Կոթի համայնքի միջնակարգ դպրոցում Հայոց լեզու և գրականություն է դասավանդում: Աշխատանքին զուգահեռ, կամավոր հիմունքներով համայնքի երեխաներին ձեռագործություն է սովորեցնում:

«Պարապմունքների ընթացքում բացահայտվել են տաղանդաշատ և շնորհալի երեխաներ, որոնց հետագա հաջողությունները լավագույն նվերը և գնահատականը կլինեն, որ կարող եմ ստանալ իմ աշխատանքի դիմաց»:

Բացի համայնքային զարգացմանը նպաստելուց՝ կամավորությունը նաև խթանում է Հայաստանի և սփյուռքի միջև կապերի ամրապնդումը: Գործում են մի շարք կազմակերպություններ և ծրագրեր, որոնց նպատակները հիմնականում նույնն են՝ ամրապնդել արտերկրում ապրող հայ երիտասարդների կապը Հայաստանի հետ՝ հետագայում նրանց Հայաստան վերադառնալու հնարավորությունը մեծացնելու և նրանց ներուժը Հայաստանի զարգացմանն ուղղելու համար (օր.՝ Birthright Armenia, DA-Conexion և այլն):

Այսպիսով, Հայաստանում կուտակված կամավորության ներուժը չվատնելու համար պետական մարմինները, միջազգային և տեղական կազմակերպությունները պետք է համատեղեն ջանքերը հետևյալ նպատակների ուղղությամբ.

- Կամավորության ոլորտի օրենսդրության ստեղծում, քանի որ կամավոր ընդունող կառույցները չունեն հստակ սահմանված ընթացակարգեր, և դա ռիսկեր է ենթադրում:
- Կամավորության վերաբերյալ իրազեկվածության մեծացում՝ թիրախավորելով ոչ միայն երիտասարդներին, այլ նաև մեծահասակներին, քանի որ մեծահասակներն ազդում են երիտասարդների որոշումների վրա:
- Կամավորության՝ արժեք ստեղծող գործառույթի վերաբերյալ դիսկուրսի շրջանառում՝ ի հակադրություն կամավորությունը բացառապես աշխատանքային փորձի կուտակման միջոց ներկայացնող դիսկուրսի:

Առաջարկություններ

- Անհրաժեշտ է խմբակենտրոն ու կլանային արժեքներից անցում կատարել դեպի *մարդակենտրոն* ու *հանրային* արժեքներ:
- Երիտասարդության միջավայրում *պետք է տարածել հորիզոնական* կամ *հումանիստական* արժեքներ՝ ի հակակշիռ ավտորիտարի ու հիերարխիկի:
- Երիտասարդության ազգային արժեքներն անհրաժեշտ է քաղաքացիականացնել:
- Հարկավոր է հաղթահարել անհավասարության արժեհամակարգը և կարևորել հավասարության՝ որպես երիտասարդության համար կարևոր արժեքը:
- Անհրաժեշտ է կարևորել ազատության արժեքը և ազատ ընտրելու իրավունքը:
- Երիտասարդության շրջանում պետք է խորացնել տարբերի և բազմազանության հանդեպ հանդուրժողականությունը:
- Հարկավոր է ձևավորել մարդկային զարգացման հավասար հնարավորություններ անկախ մարդու բնակության վայրից, սոցիալ-ունեցվածքային, ազգային և այլ պատկանելությունից:
- Բոլոր խավերի, մարզերի ու բնակավայրերի երիտասարդների համար հարկավոր է ապահովել սեփական ունակությունների բացահայտման, զարգացման ու իրացման հավասար հնարավորությունների ու նպաստավոր պայմանների զարգացման հնարավորություններ:
- Հարկավոր է արտացոլել երիտասարդության կարիքները ոլորտային քաղաքականություններում և հաշվի առնել դրանցում գենդերային տեսանկյունը:
- Անհրաժեշտ է իրականացնել հասարակության իրազեկումը բարձրացնող արշավներ ընդդեմ գենդերային հիմքով խտրականության, ընտանեկան բռնության և սեռական ոտնձգությունների:
- Հարկավոր է բարձրացնել քաղաքականությունների մշակման և կառավարման ոլորտներում կանանց մասնակցությունը:
- Անհրաժեշտ է հաղթահարել թաղային միջավայրերում երիտասարդության մեջ տարածված քրեամերձ պրակտիկաների տարածվածությունը և խթանել քաղաքացիական ու հումանիստական արժեքների տարածումը:
- Հարկավոր է մշակել և իրագործել հանրային կյանքում քրեական նորմերի ու պրակտիկաների տարածման ու քարոզչության դեմ կանխարգելիչ օրենսդրական միջոցառումներ:
- Երիտասարդության շրջանում անհրաժեշտ է ձևավորել դրական վերաբերմունք առաջընթացի և համամարդկային արժեքների հանդեպ:
- Հարկավոր է երիտասարդության համար Հայաստանում իրացվելու լայն հնարավորություններ ձևավորել:
- Պետք է նպաստել քաղաքականության մշակման գործընթացներում երիտասարդության դերակատարության բարձրացմանը, նրա՝ քաղաքականության օբյեկտից քաղաքականության սուբյեկտի վերածմանը:
- Անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ երիտասարդների արտագաղթի տեմպերը նվազեցնելու և ներգաղթի միտումներ ձևավորելու ուղղությամբ:
- Անհրաժեշտ է երիտասարդության շրջանում խորացնել կամավորության մշակույթը, կարգավորել կամավորության ոլորտի օրենսդրությունը, քանի որ կամավոր ընդունող կառույցները չունեն հստակ սահմանված ընթացակարգեր, որը ռիսկեր է ենթադրում:
- Հարկավոր է աշխատանքներ տանել կամավորության վերաբերյալ իրազեկվածության մեծացման ուղղությամբ՝ թիրախավորելով ոչ միայն երիտասարդներին, այլ նաև մեծահասակներին, քանի որ մեծահասակներն ազդում են երիտասարդների որոշումների վրա:
- Անհրաժեշտ է իրականացնել կամավորության՝ արժեք ստեղծող գործառույթի վերաբերյալ դիսկուրս՝ ի հակադրություն կամավորությունը բացառապես աշխատանքային փորձի կուտակման միջոց ներկայացնող դիսկուրսի:

Գլուխ 3

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆԵՐԸ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

3.1 Երիտասարդների կրթությունը

Ժամանակակից աշխարհում կրթական համակարգը բախվում է 3 մեծ խնդրի.

Խնդիր 1. Եթե նախկինում կրթության գործընթացը կենտրոնացած էր ուսումնական հաստատություններում և իրականացվում էր ֆորմալ գործընթացների միջոցով, ապա այսօր կրթությունը մեծ տարածում է գտել նաև ուսումնական հաստատություններից դուրս: Բազմապատկվել են ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության հնարավորությունները: Այս համատեքստում օրակարգի հարց է դառնում ֆորմալ կրթության վերաիմաստավորումը, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների ճանաչումը:

Խնդիր 2. Աշխարհն այսօր դարձել է անորոշ, մինչդեռ կրթական համակարգը, ըստ սովորության, միշտ գործել է որոշակիության պայմաններում: Անորոշության դոմինանտությունն օրակարգի հարց է դարձնում կրթության բովանդակության, կազմակերպման ձևերի վերաիմաստավորումը:

Ներդիր 3.1

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում «ֆորմալ կրթություն», «ոչ ֆորմալ կրթություն» և «ինֆորմալ կրթություն» հասկացությունները ներկայացված են հետևյալ սահմանումներով.

Ֆորմալ կրթություն՝ հանրակրթական և մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի մակարդակ կամ ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կողմից և հանգեցնում տվյալ մակարդակի որակավորման աստիճանի շնորհման և դիպլոմավորման:

Ոչ ֆորմալ կրթություն (ուսուցում)՝ կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության և (կամ) ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

Ինֆորմալ կրթություն՝ անձի առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և այլ տարբեր գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներ, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամանակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Խնդիր 3. Բիզնեսը, սպասարկումը, տեխնոլոգիաները, առողջապահությունն անհատականացվում և հարմարեցվում են առանձին մարդուն: Կրթությունը դեռևս փորձում է մարդուն հարմարեցնել իր պահանջներին: Այս հանգամանքը որոշ առումով սովորողներին օտարում է կրթությունից:

Վերջին տարիներին էապես մեծացել են Հայաստանի երիտասարդների կրթություն ստանալու հնարավորությունները: Անկախության տարիներին ավելացել է բուհերի, ինչպես նաև դրանցում ներառված մասնագիտությունների քանակը, աճել է ուսանողների թիվը: Գործում են արտասահմանյան, միջպետական պայմանագրերի շրջանակներում ստեղծված բուհեր: Կան Միջազգային բակալավրիատի ծրագրով գործող ավագ դպրոցներ: Հեշտացել է բուհեր ընդունվելը, էապես ավելացել են արտերկրի դպրոցներում, համալսարաններում կրթություն ստանալու հնարավորությունները : Ավելացել է նաև կրթության տևողությունը: 10-ամյա դպրոցական կրթությունը դարձել է 12-ամյա, ընդ որում 2017 թվականից սկսած, 12-ամյա կրթությունը դարձել է պարտադիր բոլորի համար: Կարճ կարելի է ասել, որ Հայաստանում երիտասարդների կրթություն ստանալու հնարավորությունները բազմապատկվել են: Կրթությունը դարձել է ավելի բազմազան: Անկախության առաջին 15 տարիներին բուհերի և դրանցում սովորող ուսանողների թվի աճը պայմանավորված է նրանով, որ նախկինում բուհական կրթությունն անվճար էր և տեղերը սահմանափակ էին: Վճարովի կրթության ներդրման արդյունքում բուհերի համար ավելի շահավետ դարձավ շատ ուսանողներ ունենալը: Բացի այդ, բացվեցին նաև մասնավոր ուսումնական հաստատություններ: Այդուհանդերձ, 2009-ից սկսած, նկատվում է ուսանողների թվի նվազում, ինչի պատճառը ծնելիության անկումն է, արտագաղթը:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 1992 թվականին Հայաստանում գործում էր 14 բուհ, 2002-ին բուհերի թիվը հասավ 92-ի, իսկ 2018-ին այն արդեն 56 էր: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվն անկախության առաջին տարիներին նույնպես աճել է: Բայց այս ոլորտում ինչպես աճը, այնպես էլ նվազումը շատ ավելի փոքր են եղել:



Նկար 3.1. Բուհերի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՄՈՒՀ) թիվն ըստ տարիների

Անկախության տարիներին բուհերի ուսանողների թիվը կրկնապատկվել է: Եթե 1992 թվականին Հայաստանում սովորել է շուրջ 57 հազար ուսանող, ապա 2009-ին այդ թիվը գերազանցել է 114 հազարը: Սակայն դրանից հետո նկատվել է ուսանողների թվի էական նվազում: 2018 թվականի տվյալներով, Հայաստանի ուսանողների թիվը շուրջ 80 հազար է: ՄՄՈՒՀ-ների ուսանողների թիվն աննշան աճել է, բայց այսօր ՄՄՈՒՀ-ներում սովորում է այնքան ուսանող, որքան 1992 թվականին՝ շուրջ 23 հազար հոգի:



Աղյուսակ 3.1. Ուսանողների թիվն ըստ սեռի[68]

Տարին	Բուհերի ուսանողների թիվը	Նրանցից՝ կանայք	ՄՄՈՒՀ-ների ուսանողների թիվը	Նրանցից՝ կանայք
2002	72283	39095 (54.1%)	29417	19861 (67.5 %)
2009	114629	61273(53.5%)	29986	18918 (63.1%)
2015	96502	53601(55.5%)	24300	13217 (54.4%)
2018	80477	43390 (53.9%)	23228	12269 (52.8%)

[68] 1992 թ. Տվյալները հասանելի չեն

Սակայն հնարավորությունների բազմապատկումը դեռևս չի երաշխավորում կրթության որակական աճը: Ըստ վիճակագրական և հետազոտական տվյալների՝ Հայաստանի ցուցանիշներն այնքան էլ բարձր չեն: Տաղանդի գլոբալ մրցունակության ցուցիչում կան կրթությանը վերաբերող բազմաթիվ ցուցանիշներ: Ստորև ներկայացվում են կրթությանն առնչվող որոշ տվյալներ:

Աղյուսակ 3.2. Տաղանդի գլոբալ մրցունակության ցուցիչի զեկույց, 2018[69]

Ցուցիչը	Հայաստանի զբաղեցրած տեղը 119 երկրների ցանկում
Ֆորմալ կրթության որակը	94
Ընդգրկվածությունը միջին մասնագիտական կրթության մակարդակում	63
Ընդգրկվածությունը բարձրագույն կրթության մակարդակում	59
Բարձրագույն կրթությանն ուղղված ծախսերը	94
Համալսարանների տեղը դասակարգման ցանկում	76

Աղյուսակից երևում է, որ միջին մասնագիտական և բարձրագույն կրթության մակարդակներում ընդգրկվածության ցուցանիշով Հայաստանը միջին դիրքերում է, իսկ համալսարանների դասակարգման ցուցակում ցածր տեղ է գրավում: Ֆորմալ կրթության որակով և բուհերին ուղղված ֆինանսական ներդրումներով Հայաստանը հետնապահների թվում է:

Թեև Հայաստանի օրենսդրությունը երաշխավորում է հավասար հնարավորություններ կրթության ոլորտում, այդուհանդերձ, տարբեր աստիճաններում կան կրթությունից դուրս մնացած սովորողներ: Միջին մասնագիտական կրթության աստիճանում ուսումը կիսատ թողած կամ դուրս մնացած կանանց թիվը 25.6% է, իսկ բարձրագույն կրթության ոլորտում այդ ցուցանիշը 26% է: Իսկ հանրակրթության աստիճանում կրթությունից դուրս են մնում առավելապես տղաները, որոնք ավարտել են 9-րդ դասարանը և սոցիալապես անապահով և բազմանդամ ընտանիքներից են[70]:

Պաշտոնական վիճակագրության համաձայն, 2017/2018 ուստարում նախնական մասնագիտական աստիճանում Անտառային պաշարների վերարտադրություն և վերամշակում, Էներգետիկա, Տրանսպորտային միջոցներ, Ռադիոէլեկտրոնային տեխնիկա և հեռահաղորդակցություն մասնագիտություններում բոլոր ուսանողները տղաներ են: Բարձրագույն կրթության առաջին աստիճանում՝ բակալավրիատում Գյուղատնտեսական գիտություններ մասնագիտությամբ սովորողները 2017/2018 ուստարում եղել են միայն տղաներ[71]:

Աղյուսակ 3.3. Սեռային հավասարության ցուցանիշը մասնագիտական կրթությունում, 2010թ. և 2017թ.[72]

	2010	2017
Նախնական մասնագիտական կրթություն	0.36	0.48
Միջին մասնագիտական կրթություն	1.63	1.31
Բակալավրիատ	1.16	1.20
Մագիստրատուրա	2.15	1.98

3.1.1. Կրթության հին և նոր հարացույցները

Վերջին տասնամյակների ընթացքում տեղի ունեցող տեխնոլոգիական փոփոխություններն անխուսափելի են դարձնում կրթության նոր հարացույցի անհրաժեշտությունը: Մարդկության պատմության ընթացքում մշտապես անհամապատասխանություններ են առաջանում կրթական և տեխնոլոգիական զարգացման միջև: Գոլդինը և Կատզը «Միգավազք կրթության և տեխնոլոգիաների միջև» գրքում նշում են, որ 20-րդ դարի առաջին կեսում

[69] The Global Talent Competitiveness Index, https://gtcistudy.com/wp-content/uploads/2018/01/GTCI-2018-web.r1-1.pdf, p. 118

[70] CEDAW/C/ARM/5-6, 13 April, 2015. Committee on the Elimination of Discrimination against Women. Consideration of reports submitted by States parties under article 18 of the Convention. Combined fifth and sixth periodic reports of States parties due in 2013, Armenia http://www.un.am/up/file/State%20Parties%20Report_CEDAW%205-6%20cycle.pdf

[71] https://www.armstat.am/file/article/gender_2018.pdf

[72] https://www.armstat.am/file/article/gender_2018.pdf

կրթությունը տեխնոլոգիաներից առաջ էր, բայց դարի երկրորդ կեսում արդեն տեխնոլոգիաներն առաջ անցան կրթությունից[73]: Ակնհայտ է, որ այսօր մենք ունենք տեխնոլոգիական աննախադեպ զարգացման արդյունքում ձևավորված նոր իրականություն, որը պահանջում է էական փոփոխություններ կատարել կրթության համակարգում: Ներկայումս պահանջվող գիտելիքների, հմտությունների և կրթության միջոցով սովորողների ձեռք բերած գիտելիքների և հմտությունների միջև առկա է անհամապատասխանություն: Այս մասին առավել մանրամասն կքննարկվի զեկույցի հաջորդ գլխում: Համալսարանները և դրանց կառավարման համակարգերը այլևս չեն կարողանում բավարարել ժամանակի պահանջները: Գործող ուսումնական հաստատությունները հնարավորություն չեն տալիս արդյունավետ լուծումներ գտնել նոր խնդիրների համար, իսկ լուծումների առկա եղանակները հնացած են: Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հանրակրթական համակարգը դեռևս չի գտել նորագույն տեխնոլոգիաները խելամիտ կիրառելու ձևերը: Ակնհայտ է, որ շատ բաներ, որոնք մենք գիտենք, այլևս պետք չեն նոր սերնդին: Իսկ թե ինչ է պետք, առայժմ հստակ չգիտենք[74]:

Ըստ Փակ Թիի Նգի[75], կրթության դեռևս գործող հարացույցի հիմքում երկու առանցքային գաղափարներ են: **Առաջին,** ներկա հարացույցը հիմնվում է գիտելիքի փոխանցման վրա, ինչի հիմքում այն մոտեցումն է, որ սովորեցնողը գիտելիքի հիմնական կրողն է, իսկ տպագիր դասագիրքը՝ գիտելիքի հիմնական աղբյուրը: Գիտելիքի աղբյուրների սակավության վրա հիմնված այս մոտեցումն արդեն հնացած է, քանի որ տեխնոլոգիաների շնորհիվ գիտելիքի փոխանցման աղբյուրներն ավելի մատչելի ու բազմազան են դարձել: **Երկրորդ,** կրթության ներկա հարացույցը սահմանում է որոշակի միասնական չափորոշիչներ և սովորողներին դասդասում ըստ այդ չափորոշիչները բավարարելու մակարդակի: Բոլորին ուսուցանում են նույն բովանդակությունը: Նյութը հաղթահարողները շարժվում են առաջ, մյուսները աստիճանաբար հետ են մնում: Այս մոդելը նախատեսված էր արդյունաբերական հասարակության համար, որում կրթության միջոցով պետք է ընտրվեր մարդկանց այն փոքր խումբը, որը պետք է զբաղվեր գիտական, մանկավարժական, կառավարչական հարցերով, իսկ մյուսները պետք է աշխատեին գործարաններում կամ սպասարկման ոլորտում: Ներկայումս իրավիճակը փոխվում է՝ արդյունաբերական նոր հեղափոխության հետ կապված:

Դավոսի տնտեսական ֆորումի ղեկավար Կլաուս Շվաբը գտնում է, որ մարդկությունը ներկայումս թևակոխել է Չորրորդ արդյունաբերական հեղափոխության դարաշրջան[76]: Եթե Երրորդ արդյունաբերական հեղափոխության շրջանում տեղեկատվական նոր տեխնոլոգիաները լայն տարածում գտան մեր առօրյայում, ապա Չորրորդ արդյունաբերական հեղափոխության բնութագրական գիծը լինելու է մարդու կողմից կատարվող բազմաթիվ աշխատանքների ավտոմատացումը: «Սովորող սերունդ» զեկույցի[77] համաձայն, առաջիկա 20 տարում ավտոմատացման հետևանքով վերանալու է ավելի քան 2 մլրդ աշխատատեղ: Հիմնականում ավտոմատացվելու են միջին և ցածր հմտություններ պահանջող աշխատատեղերը: Հետևաբար, եթե կրթությունը շարունակի գործել աշակերտի թույլ կողմերի մոդելի[78] տրամաբանությամբ, ապա ոչ միայն աղքատությունն ու անհամաչափ զարգացումը կաճեն, այլև ի հայտ կգա մարդկանց մի խումբ, որոնց Յուվալ Նոահ Հարարին անվանում է «անպիտան մարդիկ»[79]՝ նկատի ունենալով նրանց գիտելիքների և հմտությունների անհամապատասխանությունը ժամանակի պահանջներին: Այսպիսով, կրթության նոր հարացույցը ենթադրում է հիմնվել սովորողի ուժեղ կողմերի վրա, որպեսզի նա կարողանա զարգացնել իր ստեղծագործական կարողությունները և մրցունակ լինել աշխատաշուկայում:

3.1.2. Կրթության ժամանակակից համատեքստը

Երիտասարդության կրթական մակարդակը բարձրացնելու համար շատ կարևոր է հասկանալ, թե ինչպես է փոխվել երիտասարդների կյանքը: Ինչպես ասում էր 20-րդ դարի փիլիսոփա Պոլ Ֆեյերաբենդը, «Կրթության մեջ կա սովորեցնող, սովորող և իրավիճակ, որում այդ երկուսը գտնվում են»: Կրթական քաղաքականություն մշակելիս մենք հաճախ անտեսում ենք «իրավիճակը»: Ներկայացնենք ժամանակակից իրավիճակի որոշ առանձնահատկություններ:

[73] Katz, Lawrence F.. The Race between Education and Technology (Kindle Location 256). Harvard University Press - A. Kindle Edition.

[74] Schleicher, A. Technology Reform Full of Good Ideas, Poorly Executed, https://www.teachermagazine.com.au/article/technology-reform-full-of-good-ideas-poorly-executed, October 10, 2016.

[75] Ng, Pak Tee. Learning from Singapore: The Power of Paradoxes (Routledge Leading Change Series) (p. 97). Taylor and Francis. Kindle Edition.

[76] Schwab, K. 2016. The Fourth Industrial Revolution. World Economic Forum https://www.weforum.org/about/the-fourth-industrial-revolution-by-klaus-schwab,

[77] http://report.educationcommission.org/wp-content/uploads/2016/09/Learning_Generation_Full_Report.pdf

[78] Թույլ կողմերի մոդելը ենթադրում է վատ սովորողների անտեսում:

[79] Harari, Y.N. 2015. Sapiens: A Brief History of Humankind, Harper.

Փոխվում է ժամանակի ընկալումը

Քանի որ կյանքը արագ է փոխվում և դարձել է դինամիկ, երիտասարդների համար ժամանակն ավելի արագ է ընթանում: Դանդաղ ընթացքը երիտասարդների համար ձանձրալի է: Նման իրավիճակում անհամապատասխանություն է առաջանում կրթության՝ դանդաղ ընթացքի վրա հիմնված բովանդակության և երիտասարդի՝ արագության վրա հիմնված աշխարհընկալման միջև: Այս տարաժամանակյա ընթացքը երիտասարդին օտարում է կրթության համակարգից և 12-ամյա դպրոցական կրթությունը, ինչպես նաև 6-ամյա բուհական կրթությունը դարձնում չափազանց երկարատև:

Փոխվում է հաղորդակցական մշակույթը

Այսօր փոխվում է հաղորդակցական մշակույթը: Եթե նախկինում հաղորդակցական մշակույթը հիմնվում էր բանավոր խոսքի վրա, իսկ ավելի ուշ՝ տպագիր տեքստի վրա, ապա այսօր հաղորդակցական մշակույթի հենքը տեսալսողական միջոցներն են: Այդուհանդերձ, մեր օրերի կրթության բովանդակությունը դեռևս շարունակում է հիմնվել տպագիր տեքստերի յուրացման վրա, ինչը չի համապատասխանում ուսումից դուրս երեխայի գործունեությանը, ուր գերիշխում են տեսալսողական միջոցները: Սա ամենևին չի նշանակում, որ տպագիր տեքստերը պետք է անտեսվեն: Պարզապես, կրթության ոլորտում պետք է օգտագործվեն հաղորդակցման առավել բազմազան գործիքներ:

Փոխվում է ուշադրության էությունը

Ուշադրությունն առանցքային դեր ունի կրթության մեջ: Այն կարևոր է նաև տնտեսական կյանքում: Ժամանակակից տնտեսությունը երբեմն անվանում են ուշադրության տնտեսություն: Ուշադրությունը տնտեսական իմաստ ունի այն առումով, որ ձեր գումարը ծախսում եք գործունեության այն տեսակների համար, որոնք գրավում են ձեր ուշադրությունը: Այսօրվա կրթության բովանդակությունը աշակերտից պահանջում է խորացված ուշադրություն: Դասագրքերի նյութը հասկանալու համար աշակերտը պետք է տևական ժամանակ կենտրոնանա ուսումնական նյութի վրա: Մինչդեռ, այսօրվա երեխայի առօրյան նրան հնարավորություն չի ընձեռում տևական ժամանակ կենտրոնանալ մեկ նյութի վրա: Բջջային հեռախոսները, սոցիալական ցանցերը, համացանցը, հեռուստատեսությունն աշակերտին պահում են շուրջօրյա կախվածության և զբաղվածության մեջ, ինչի արդյունքում աշակերտի մոտ զարգանում է հիպերուշադրությունը, այսինքն՝ միաժամանակ մի քանի բանի վրա կենտրոնանալու ունակությունը: Գերիշխող է դառնում մակերեսային գիտելիքը, որը դուրս է մղում կրթության համար կարևոր խորքային գիտելիքը:

Կոմերցիոնալացվում է հուզականությունը

Ավանդական կրթական համակարգը փորձում է ճնշել երիտասարդների հուզականությունը՝ հույզերը դասապրոցեսից դուրս մղելու ճանապարհով: Կրթության բովանդակությունը կարևորում է սովորողի բանականությունը: Այստեղ խնդիրն այն է, որ երիտասարդները հուզական էակներ են, և նրանց հույզերի զարգացումը կարևոր է: Բայց, քանի որ հույզերն անտեսվում են կրթության գործընթացում, դրանք նվաճվում են զանգվածային մշակույթի, տարբեր ինդուստրիաների կողմից: Եթե ուսումնասիրենք սերիալների, տարբեր տեսակի համակարգչային խաղերի, սոցիալական ցանցերի էությունը, ապա դրանք ոչ այլ ինչ են, քան երեխաների ու երիտասարդների հուզականության վրա կառուցված գործունեության տեսակներ: Այսպիսով, անտեսվելով կրթության գործընթացում՝ երիտասարդների հուզականությունը դառնում է կապիտալ կյանքի այլ ոլորտներում: Եվ, քանի որ երիտասարդների համար հուզականության վրա հիմնված գործունեության տեսակներն ավելի գրավիչ ու հետաքրքիր են, քան գուտ բանականի վրա հիմնված ուսուցումը, նրանք օտարվում են դպրոցից, քոլեջից, բուհից: Հայաստանի ավագ դպրոցներում, քոլեջներում, բուհերի բարձր կուրսերում արձանագրվող հաճախումների ցածր մակարդակը դրա վկայությունն է:

Ավելին, հուզականի վրա հիմնվող մանիպուլյացիաները թույլ չեն տալիս երիտասարդին հասկանալ օբյեկտիվ աշխարհը: Երիտասարդի համար աշխարհը սկսում է սահմանափակվել իր զգացածով, անձնական փորձառությամբ, ինչը հանգեցնում է եսասիրության, չհիմնավորված ինքնավստահության և հիմնարար գաղափարների հանդեպ անտարբերության:

3.1.3. Վաղ մանկության կրթության կարևորությունը

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետազոտությունները վկայում են, որ վաղ մանկության տարիքում ներդրված յուրաքանչյուր դոլարը երկրի տնտեսությանը տարիներ անց վերադարձնում է 4-5 անգամ ավելի մեծ գումար[80]: Այդ առումով, վաղ մանկության զարգացմանը հատկացված գումարը համարվում է ոչ թե ծախս, այլ ներդրում:

[80] https://www.unicef.org/earlychildhood/index_40748.html

Վաղ մանկության տարիների որակյալ կրթությունը կարևոր դեր ունի երիտասարդության բազմաթիվ խնդիրներ կանխարգելելու առումով: Ցավոք, անկախության տարիներին Հայաստանում էապես նվազեց նախադպրոցական հաստատությունների, դրանցում ընդգրկված երեխաների թիվը: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների, 2017 թվականին նախադպրոցական հաստատություններ հաճախել է Հայաստանում բնակվող երեխաների 30,9%-ը: Վիճակագրական կոմիտեի տվյալներով, 2018 թվականին նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների 48,5%-ն աղջիկներ են: Շարունակում է մեծ մնալ քաղաքի և գյուղի տարբերությունը: Քաղաքներում մանկապարտեզ հաճախում է երեխաների 36,6%-ը, իսկ գյուղերում՝ 20,6%-ը[81]: Մեծ խնդիր կա նաև նախադպրոցական կրթության բովանդակության առնչությամբ: Չկան համալիր ուսումնասիրություններ նախադպրոցական կրթության որակի վերաբերյալ: Հայտնի է, որ նախադպրոցական հաստատություններում ուսուցանում են բնույթով խիստ ակադեմիականից մինչև ժամանակավրեպ ծրագրեր: Նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածության ցածր աստիճանն իր ազդեցությունն է թողնում տարրական դպրոցի վրա: 1-ին դասարան հաճախող երեխաները պատրաստվածության մակարդակով զգալիորեն տարբերվում են միմյանցից: Որոշ երեխաներ դպրոց են գալիս 1-ին դասարանի ծրագիրն արդեն յուրացրած: Երեխաների մի մասն էլ ընդհանրապես պատրաստ չէ դպրոցական կրթությանը: Նման վիճակը հենց սկզբից անհավասար մեկնարկային պայմաններում է դնում երեխաներին՝ բացահայտելով էական տարբերություններ: Կրտսեր և միջին դպրոցում Հայաստանի դպրոցականներն արձանագրում են ուսման առաջադիմության ցածր ցուցանիշներ:

Այդ մասին են վկայում 2015 թվականի TIMSS միջազգային ստուգատեսում Հայաստանի դպրոցականների ցուցաբերած արդյունքները: Այս ստուգատեսն անցկացվում է 4-րդ և 8-րդ դասարանցիների շրջանում՝ «Մաթեմատիկա» և «Բնագիտություն» առարկաներից: Ստուգատեսը ներկայացնում է դպրոցականների արդյունքները ըստ 3 իմացական ոլորտների՝ գիտելիք, գիտելիքի կիրառում, մտածողություն: Գնահատման և թեստավորման կենտրոնի կայքում հրապարակված տվյալների համաձայն[82], Հայաստանի դպրոցականներն ամենավատ արդյունքներն ունեցել են մտածողությունը գնահատող առաջադրանքներում: Ընդ որում, Հայաստանն այն երկրներից է, որտեղ ամենամեծ տարբերությունն առկա է գիտելիքների և մտածողության ցուցանիշների միջև:

Աղյուսակ 3.3. Հայաստանի դպրոցականների ցուցաբերած արդյունքներն ըստ իմացական տիրույթների (TIMSS, 2015)

ԴԱՍԱՐԱՆ	ՄԱԹԵՄԱՏԻԿԱ			ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		
	Գիտելիք	Կիրառում	Մտածողություն	Գիտելիք	Կիրառում	Մտածողություն
4-րդ	494	475	458	445	440	435
8-րդ	478	467	458	468	457	449

Ըստ TIMSS-ի տվյալների, բոլոր դեպքերում աղջիկների ցուցաբերած արդյունքներն ավելի բարձր են, քան տղաներինը:

Աղյուսակ 3.4. Հայաստանի դպրոցականների ցուցաբերած արդյունքներն ըստ սեռի (TIMSS, 2015)

ԴԱՍԱՐԱՆ	ՄԱԹԵՄԱՏԻԿԱ		ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	
	Աղջիկներ	Տղաներ	Աղջիկներ	Տղաներ
4-րդ	482	480	451	437
8-րդ	475	469	470	452

Իրավիճակն ավելի է սրվում ավագ դպրոցներում, քոլեջներում, բուհերի բարձր կուրսերում, որտեղ առկա են նաև հաճախումների խնդիրներ: Խնդիրներ կան նաև մասնագիտական կողմնորոշմանը նպաստող կրթության ապահովման առումով: Հայաստանում ավագ դպրոցներ կան միայն քաղաքներում (2-3 գյուղում կա ավագ

[81] Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2017 թվականին, http://armstat.am/am/?nid=82&id=2059

[82] http://www.atc.am/level1_.php?id_2=163&id=34&cat_=1

դպրոց), ինչը գյուղաբնակ սովորողներին հնարավորություն չի ընձեռում ստանալու իրենց մասնագիտական կողմնորոշմանը համապատասխան հոսքային կրթություն: Ավելին, նույնիսկ ավագ դպրոցներում միշտ չէ, որ կան բոլոր հոսքերն ու ենթահոսքերը:

Թեև կրթության ոլորտում առկա որոշակի առաջընթացին, տարբեր հետազոտություններում բարձրացվել են սեռային կարծրատիպերի հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, կան հայրիշխանական կարծրատիպեր դասագրքերում, ուսումնական նյութերում: Կան խտրականության դրսևորումներ ուսումնական ոլորտների հետ կապված: Ընդունված է, որ աղջիկներն ավելի ուժեղ են հասարակագիտական, հումանիտար մասնագիտությունների գծով, իսկ տղաները՝ ավելի կենսական հարցերում[83]: Նշված խնդիրները պետք է հաշվի առնվեն ուսումնական նյութեր մշակելու գործընթացում, մասնագիտական կողմնորոշման ծրագրերում:

3.1.4. Հայաստանի կրթության ապագայի հենասյուները

Հայաստանում առկա փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրում կան բազմաթիվ արդյունավետ ծրագրեր, նախաձեռնություններ, որոնց տարածումը և ինստիտուցիոնալացումը հնարավորություն կտա ձևավորել որակյալ կրթական համակարգ: Ներկայացնենք այդպիսի մի քանի ծրագիր:

Կրթության մեջ ուսման-հետազոտության-գործնական հմտությունների համադրման խնդիրը

Կրթությանը վերաբերող կարևոր խնդիրներից մեկն այն է, թե ինչ և ինչպես պետք է սովորեցնել: Այս առումով Հայաստանում կրթությունը գերազանցապես մնում է որպես տեսական բովանդակության փոխանցում: Բուհերում շարունակվում է դասախոսություններ թելադրելու և դրանք ամբողջությամբ տետրում գրել պահանջելու պրակտիկան: Հետազոտության բաղադրիչը դեռևս լիարժեք չի ինտեգրվել բուհական կրթության մեջ: Ավելին, գրեթե չկան միջդիսցիպլինար և տրանսդիսցիպլինար հետազոտություններ: Այս առումով շատ հետաքրքիր է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից Հայաստանի մի շարք մարզերում իրականացվող «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում»[84] ծրագիրը: Ծրագրի շրջանակներում մարզային բուհերում ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկված են տնտեսագիտության, պատմության, զբոսաշրջության, ֆիննանսների և այլ մասնագիտություններով սովորող ուսանողները: Թիմն ունի փորձագետ-խորհրդատու: Մասնակցում են նաև բուհերի դասախոսներ: Ծրագրի շրջանակներում ուսանողներն ուսումնասիրում են տվյալ մարզի համայնքները: Անցկացվում են հարցազրույցներ համայնքների բնակիչների հետ, կատարվում են մասնագիտական դիտարկումներ: Այդ ամենի հիման վրա մշակվում են զբոսաշրջությունը զարգացնող պրոդուկտներ: Այս ծրագիրը կրթության-հետազոտության-աշխատանքի հետաքրքիր համադրում է: Ծրագրի տրանսդիսցիպլինար մոտեցումը հնարավորություն է տալիս գիտական աշխատանք կատարել ոչ միայն տեսական թեզերի պատրաստմամբ, այլև համայնքի բնակիչների հետ ուղղակի աշխատելու արդյունքում: Այս մոտեցման տարածումը կրթական համակարգում հնարավորության կտա երիտասարդներին ուսման տարիներին մասնակից դարձնել հետազոտական աշխատանքներին և ձևավորել գործնական հմտություններ:

Կրթության պրոակտիվության ապահովումը

Հայաստանի կրթական համակարգում չի խրախուսվում պրոակտիվ գործելակերպը: Սովորողները գերազանցապես դիտվում են որպես ուսումնական գործընթացի կրավորական մասնակիցներ, ովքեր պետք է արձագանքեն իրենց տրվող հանձնարարականներին: Քանի որ ժամանակակից տեխնոլոգիաները խրախուսում են մասնակցային մոտեցումները, ուստի երիտասարդների մեջ մեծ հետաքրքրություն են առաջացնում գործունեության այն տեսակները, որոնք ենթադրում են պրոակտիվություն, նախաձեռնողականություն: Այս իմաստով շատ ուսանելի է Կոլբա լաբի[85] կրթության թեմաներով ստարտափ (Start-up) մրցույթը: Այն հնարավորություն է տալիս կրթության ոլորտում աշխատող տարբեր մարդկանց խմբերին հանդես գալ իրենց նորարարական գաղափարներով: Կրթության ոլորտում, որպես կանոն, գործում է վերևներում մշակված գաղափարները ներդնելու մոտեցումը: Արդյունքում, մարդիկ դառնում են կատարողներ, արձագանքողներ, այլ ոչ թե նախաձեռնողներ: Կոլբա լաբի ծրագրի արդյունքում համակարգի բազմաթիվ երիտասարդ և ոչ երիտասարդ աշխատողներ հանդես եկան շուրջ 70 առաջարկով: Նախաձեռնողականության ուժեղացումն անհրաժեշտ է, քանի որ ժամանակակից աշխարհում կարևոր են մասնակցային մոտեցումները: Ժամանակակից սոցիալական ձեռներեց Բիլլ Դրայթոնը գրում է. «Նախնադարյան հասարակություններում զարգացումն այնքան դանդաղ էր ընթանում, որ «Փորձիր և սխալվիր» սկզբունքը բավարար էր հասարակությանն առաջնորդելու համար: Փոփոխությունների արագացման արդյունքում հասարակության մի փոքր մաս իր վրա վերցրեց որոշումներ կայացնելու լիազորությունը: Այսօր

[83] CEDAW/C/ARM/5-6, 13 April, 2015. Committee on the Elimination of Discrimination against Women. Consideration of reports submitted by States parties under article 18 of the Convention. Combined fifth and sixth periodic reports of States parties due in 2013, Armenia http://www.un.am/up/file/State%20Parties%20Report_CEDAW%205-6%20cycle.pdf

[84] http://www.am.undp.org/content/armenia/en/home/operations/projects/poverty_reduction/integrated-rural-tourism-development--.html

[85] http://www.kolba.am/en/

արձանագրվող փոփոխությունների էլ ավելի արագացման և հասարակական կյանքի ավելի կոմպլեքս դառնալու արդյունքում փոքր խմբերի որոշումներով այլևս հնարավոր չէ առաջ գնալ: Այսօր մենք կարիք ունենք մոլորակի ավելի ճկուն, ստեղծագործ, արագաշարժ և ապակենտրոնացված կառավարման»[86]:

Երիտասարդը որպես սովորեցնող

Կրթական համակարգի վերաբերյալ ավանդական մտածելակերպը ենթադրում է, որ կրթության մեջ կա երկու կողմ՝ սովորեցնող դասախոսներ և սովորող ուսանողներ: Ընդ որում, այդ դերերը փոփոխության ենթակա չեն: Ուսուցման նման կարծրատիպային ընկալման արդյունքում ուսանողները հազվադեպ են հնարավորություն ստանում հայտնվելու սովորեցնողի դերում: ԱՄՆ Հարվարդի համալսարանի դասախոս Էրիկ Մազուրը մի քանի տարի առաջ մրցանակ ստացավ այն բանի համար, որ իր ուսանողներին հնարավորություն էր տալիս միմյանց սովորեցնելու: Ուսանողին որպես սովորեցնող դիտարկելը ոչ միայն նպաստում է նրա պատասխանատվության զարգացմանը, այլև նպաստում է ավելի լավ սովորելուն: Սովորեցնելը սովորելու լավագույն ձևն է: Այս առումով հետաքրքիր փորձ ունի ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի Հայաստանի գրասենյակը: Այս կազմակերպությունում երիտասարդները Y-peer ծրագրի շրջանակներում իրենց հասակակիցներին տեղեկացնում են Կայուն զարգացման նպատակների մասին: Նմանատիպ փորձ ունի նաև ԿԱՋԱ հիմնադրամը, որտեղ տասնյակ երիտասարդներ հանդես են գալիս որպես ակումբավարներ և իրենց հասակակիցներին տեղեկացնում են մարդու իրավունքների մասին, սովորեցնում են օտար լեզուներ, նրանց հետ քննարկում են գրքեր և այլն:

Մասնակցային մոտեցում կրթության որակին

Հայաստանի ուսումնական հաստատություններում դեռևս լիարժեք չեն գործում սովորողների մասնակցության մեխանիզմները: Թեև ուսանողներն ունեն 25% ներկայություն բուհերի հոգաբարձուների խորհրդում, սակայն այդ մասնակցությունը կրում է ձևական բնույթ: Որպես կանոն, ուսանողները քվեարկում են միանման, այնպես, ինչպես հրահանգում են վերևից: Կառավարման խորհրդում ներկայությունը և ուսանողական խորհուրդների առկայությունը չեն օգտագործվում կրթության որակի վերաբերյալ հարցեր բարձրացնելու համար: Այս առումով կարևոր դեր ունեցավ «Ռեստարտ» նախաձեռնությունը, որը բարձրացրեց կրթությանն առնչվող հարցեր, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ունեցավ Թավշյա հեղափոխության իրականացման գործում:

Ուսանողների պասիվության պատճառներից մեկն այն է, որ գնահատական ստանալու հարցում ուսանողները կախվածություն ունեն դասախոսներից. ուստի նրանք ոչ միշտ են դրսևորում պահանջկոտ մոտեցում կրթության որակի նկատմամբ: Նման վերաբերմունքի պատճառներից մեկն էլ այն է, որ սովորողները պատկերացում չունեն, թե ինչ է կրթության որակը: Այս առումով ուշագրավ պրակտիկա է կիրառում Որակի ապահովման ազգային կենտրոնը: Այն իրականացնում է Հայաստանի բուհերի հավատարմագրման գործընթացը: Այդ գործընթացում արտասահմանյան և տեղացի փորձագետներից բացի՝ ներգրավված են նաև ուսանողներ: Վերջիններս ունեն ուսանող-փորձագետի կարգավիճակ, որը նրանց հնարավորություն է տալիս ուղղակիորեն մասնակցել բուհերի հավատարմագրման գործընթացին: 2017թ. Հայաստանում ստեղծվեց նաև ուսանող-փորձագետների ազգային միությունը, որը միավորում է Հայաստանի բոլոր ուսանող-փորձագետներին:

[86] Drayton, William, The Citizen Sector: Becoming as Entrepreneurial and Competitive as Business. California Management Review, 2002, 44(3), p. 132.

Ներդիր 3.2

Դավիթ Պետրոսյան

«Ռեստարտ» ուսանողական-քաղաքացիական նախաձեռնության մասնակից (25 տ.)

2012թ. գարնանն ընդունվեցի Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերություններ ֆակուլտետի քաղաքագիտության բաժին: 2013թ. զորակոչվեցի բանակ և մինչև 2015թ. ծառայեցի Արցախի հանրապետության «Ասկերան» և «Մարտունի 2» զորամասերում: Զորացրվելուց հետո փորձեցի արագ կերպով ներգրավվել տարբեր ծրագրերի և քաղաքացիական նախաձեռնությունների մեջ: 2016թ. որպես «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդ մասնակցեցի ՏԻՄ ընտրություններին: 2017թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ արդեն որպես համակարգող աշխատեցի մոտ 75 դիտորդի հետ:

2016թ. սկզբին ընկերներիս հետ ԵՊՀ-ում սկսեցինք «Մեր զեղչն ենք ուզում» նախաձեռնությունը, որն ուղղված էր ռեկտորատի որոշման դեմ, համաձայն որի՝ չեղարկվել էին ուսանողներին առաջադիմության համար տրվող զեղչերը: Շուրջ 3 շաբաթ տևած պայքարը տվեց իր արդյունքը և ռեկտորատն ընդունեց նոր որոշում, որով վերականգնվեցին զեղչերը:

2017թ. աշնանը ՀՀ պաշտպանության նախարարությունը Ազգային ժողով ներկայացրեց օրինագիծ, որով զգալիորեն կրճատվում էր կրթության համար տրվող տարկետումը: Այդ ժամանակ ընկերներիս հետ սկսեցինք «Տարկետում լինելու Ա» նախաձեռնությունը: Շարժման ժամանակ մենք հանդիպումներ ունեցանք տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների հետ, եղան տարբեր ձևաչափի բանավեճեր և քննարկումներ, դասադուլ և հացադուլներ: Կառավարության հետ բանակցություններն արդյունք չտվեցին, բայց այդ ժամանակ կառավարության որոշման մեջ արված զիջման արդյունքում արդեն հեղափոխությունից հետո մոտ 140 ուսանող ստացավ տարկետում:

Տարկետում լինելու Ա» նախաձեռնությունից հետո ընկերներիս հետ սկսեցինք «Ռեստարտ» ուսանողական-քաղաքացիական նախաձեռնությունը, որն ուղղված էր կրթական համակարգում և համալսարաններում բարեփոխումներ անելուն՝ ակադեմիական ազատություն, կրթության որակ, թափանցիկ և արդյունավետ կառավարում, դասախոսների և ուսանողների համար արժանապատիվ պայմաններ, բուհերի ինքնավարություն, ուսանողական ինքնակառավարում: «Ռեստարտի» շարքերը գնալով համալրվում են, իսկ լուծված խնդիրների շարքը՝ մեծանում:

2018թ. մարտին ներգրավվեցի «Մերժիր Սերժին» քաղաքացիական նախաձեռնությանը, որի նպատակը ՀՀ նախկին նախագահ Սերժ Սարգսյանի հրաժարականին հասնելն էր: Նույն թվականի ապրիլի 16-ին ԵՊՀ-ում նախաձեռնեցինք դասադուլ, որը տարածվեց նաև մյուս բուհերի վրա: Ուսանողական ակտիվությունը նպաստեց, որ «Մերժիր Սերժին» քաղաքացիական և «Իմ քայլը» քաղաքական նախաձեռնությունները վերաճեն Թավշյա հեղափոխության:

Այժմ շարունակում եմ աշխատել «Ռեստարտում», քանի որ վերջինս դեռ չի լուծել կրթական ոլորտում իմ առջև դրված բոլոր խնդիրները:

Ստեղծարար կրթություն

Հայաստանում կրթությունը կրում է տեսական բնույթ: Սովորողներից հիմնականում պահանջվում է վերարտադրել ուրիշների մտքերը: Կրթության գործընթացում սովորողները գրեթե ոչինչ չեն ստեղծում: Մինչդեռ ինչ-որ բան ստեղծելը մարդուն մոտիվացնում է: Այս առումով Հայաստանում ներկայումս փորձարկման փուլում է «Իրական դպրոցը», որն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր: Այս հաստատությունում սովորողներն ուղղակիորեն մասնակցում են իրենց սեղան-աթոռների ստեղծմանը: Նրանք պարբերաբար մասնակցում են տարբեր տեսակի փորձությունների, ստանում են հիմնարար գիտելիքներ: Այստեղ նաև մեծ ուշադրություն է դարձվում տեխնոլոգիական կրթությանը, ինչի շրջանակներում սովորողները բազմաթիվ սարքեր են պատրաստում, փորձարկում:

3.1.5. Կրթության ոլորտի հիմնական բացթողումները

Մեծահասակների դերը երիտասարդների կրթության գործընթացում

Հայաստանի մեծահասակները երիտասարդության մասին հիմնականում ունեն ոչ հստակ պատկերացումներ, այդ իսկ պատճառով նրա դերը հաճախ գնահատում են ոչ օբյեկտիվորեն: Մեծահասակները հակված են թերագնահատելու երիտասարդների ներուժը, հաճախ չեն ստանձնում պատշաճ պատասխանատվություն երիտասարդների զարգացման գործում: Այդ առումով երիտասարդների վրա բացասաբար է ազդում այն, որ մեծահասակները քիչ են սովորում: Արիստոտելը մարդուն բնորոշ հատկանիշներից մեկը համարում էր նմանակելը: Հետևաբար, երեխաների, երիտասարդների զգալի մասը չսովորելով ընդամենը նմանակում է մեծահասակներին: Փաստ է, որ Հայաստանում շատ քիչ չափահասներ են գիրք կարդում հանրային տրանսպորտում, այգիներում, ընտանիքներում: Մեծահասակների մեծ մասը, ներառյալ ուսուցիչները և դասախոսները, դժկամությամբ են մասնակցում վերապատրաստման դասընթացներին, եթե, իհարկե, դրանք արտասահմանում չեն: Ընտանիքների զգալի մասում հիմնականում խոսում են փողից, վարկից, արտագաղթից, սերիալներից, Հայաստանում առկա ծանր իրավիճակից և այդ պատճառով երեխաների տեսադաշտում սովորող չափահասների օրինակներ գրեթե չեն լինում: Հայաստանում սովորելու միջավայրը բավարար զարգացած չէ և դրա պատասխանատուն մեծահասակներն են:

Հայաստանի մեծահասակների զգալի մասը կարծում է, որ դպրոցը, քոլեջը, համալսարանն ավարտելուց հետո պետք է աշխատել, ամուսնանալ, երեխաներ, թոռներ ունենալ, ու դա է մարդու ուղին մինչև նրա մահանալը: Մինչդեռ աշխարհում վաղուց կարևորվում է ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պահանջը: Մարդը պետք է սովորի ոչ միայն այն ժամանակահատվածում, երբ աշակերտ է, ուսանող կամ դասընթացի մասնակից, այլև անընդհատ և նաև լինի ինքն իր ուսուցիչը: Այսօր խոսում են այն մասին, որ առաջիկայում մարդիկ ստիպված են լինելու հաճախակի փոխել իրենց մասնագիտացումը, աշխատանքը:

Հայաստանում մեծահասակների չսովորելը ուղղակիորեն բացասական ազդեցություն է ունենում ոչ միայն կրթության առկա վիճակի վրա, այլև մեր կյանքի որակի վրա:

Նախ, չսովորելը բացասաբար է ազդում մարդու առողջության վրա: Գիտնականների կողմից ապացուցված է, որ անընդհատ սովորող մարդիկ ավելի պաշտպանված են ուղեղի հետ կապված մի շարք հիվանդություններից: Հետազոտություններից մեկում գիտնականները շուրջ 20 տարի հետևել են մարդկանց երկու խմբի: Խմբերից մեկի անդամներն անընդհատ սովորել են՝գրքեր են կարդացել, օտար լեզուներ սովորել, մտավոր վարժանքներ կատարել, դասընթացների մասնակցել: Մյուս խմբի անդամները որևէ ուսումնական գործընթացի մեջ ներգրավված չեն եղել: Երբ խմբի անդամները դարձել են 70 տարեկան, պարզվել է, որ չսովորողների զգալի մասն ունի ուղեղի հետ կապված հիվանդություններ՝ թուլամտություն, Ալցհեյմերի հիվանդություն և այլն: Հայաստանում, ցավոք, շատ քիչ է խոսվում այն մասին, որ սովորելն օգտակար է առողջության համար:

Չսովորելու բացասական մյուս հետևանքն այն է, որ չսովորող մարդկանց հասարակությունը չի կարող զարգանալ: Եթե չափահաս մարդիկ չեն սովորում, նրանց ուղեղն արագ է ծերանում: Եվ քանի որ հասարակությունում որոշումները հիմնականում կայացնում են չափահաս մարդիկ, ապա կտրուկ ընկնում է քաղաքական, կառավարչական, տնտեսական որոշումների որակը, ինչն էլ ազդում է հասարակության զարգացման վրա: Շատ մարդիկ, Հայաստանում ստանալով որոշակի կարգավիճակ, պաշտոն, կոչում, դադարում են սովորել: Մի մասը համարում է, որ ինքն արդեն ամեն ինչ գիտի: Մյուսներն էլ պարզապես սովորելու ժամանակ չունեն: Եվ հենց այս մարդիկ էլ որոշումներ են կայացնում կարևորագույն հարցերի շուրջ:

Միջազգային հետազոտությունների արդյունքները նույնպես վկայում են, որ Հայաստանում մեծահասակների կրթության վիճակը բարվոք չէ: Օրինակ, Տաղանդի գլոբալ մրցունակության 2018 թվականի ինդեքսում ամբողջ կյանքի ընթացքում կրթության ցուցանիշով Հայաստանը 119 երկրի շարքում զբաղեցրել է 114-րդ տեղը, հեշտությամբ որակյալ կադրեր գտնելու ցուցանիշով՝ 108-րդ, իսկ աշխատողների մասնագիտական զարգացման ցուցանիշով՝ 96-րդ տեղերը: Ընդհանրապես, այդ Ջեկոյցի համաձայն, Հայաստանում մարդկային ներուժի զարգացումը շատ ցածր մակարդակի վրա է. այդ ցուցանիշով մեր երկիրը 119 երկրի շարքում 106-րդ տեղում է:

Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն

Անկախության տարիներին Հայաստանում իրականացվել և շարունակում են իրականացվել բազում ոչ ֆորմալ կրթական ծրագրեր, որոնց գերազանցապես մասնակցում են երիտասարդները: Ոչ ֆորմալ կրթական ծրագրերը տարեցտարի բարելավում են իրենց որակը: Եթե սկզբնական շրջանում այդ ծրագրերը սահմանափակվում էին պարզապես դասընթացներով, ապա այսօր դրանք ավելի համակարգված բնույթ ունեն: Օրինակ, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի «Կանայք և տեղական ժողովրդավարությունը» ծրագրի շրջանակներում իրականացվում են ոչ միայն վերապատրաստումներ, այլև բազմաթիվ համայնքային նախաձեռնություններ, որոնց

արդյունքում երիտասարդներն ակտիվ դեր են ունենում տեղական համայնքների կյանքում՝ ընդհուպ մինչև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելը և դրանցում հաղթելը: «Վորլդ վիժն» («World Vision») կազմակերպությունը նույնպես Հայաստանի բազմաթիվ համայնքներում ստեղծել է երիտասարդական ակումբներ, որոնց գործունեության արդյունքում ստեղծվում են ստարտափներ, արտադրանք, և որոնք մեծ ազդեցություն են ունենում մարզաբնակ երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և բարեկեցության վրա: Իսկ գերմանական «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի շրջանակում անցկացվող վերապատրաստման ծրագրերի արդյունքում երիտասարդները ստեղծել են շրջանավարտների միություն, որի անդամները պարբերաբար հանդիպում են և լրջորեն քննարկում քաղաքական գործընթացներին մասնակցելու հնարավորությունները:

Մեծ տարածում է ստացել նաև ինֆորմալ կրթությունը: Երիտասարդները, օգտագործելով համացանցի ընձեռած հնարավորությունները, շատ գիտելիքներ և հմտություններ են ձեռք բերում:

Սակայն ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ոլորտում առկա են լուրջ խնդիրներ, մասնավորապես, չի գործում այդ կրթության արդյունքների ճանաչման որևէ կարգ, չկա լուրջ համագործակցություն ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն իրականացնող խմբերի, հաստատությունների միջև: Թեև այս խնդիրներն արձանագրվել են ԿԳ նախարարության կողմից ընդունված 2013-2017 թվականների «Լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարության և գործողությունների պլանում», սակայն դեռևս որևէ էական առաջընթաց չկա:

Ուսումնական հաստատությունների միջավայրը

Հայաստանի միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները (ուսումնարանները, քոլեջները, համալսարանները) հիմնականում կարելի է բնութագրել իբրև դաս անելու և քննություն հանձնելու վայրեր: Կրթական հաստատությունները լրջորեն թերանում են մշակութային, սոցիալական ծրագրերում: Դասերի ավարտից հետո ուսանողների ճնշող մեծամասնությունը գնում է համալսարաններից: Շատ քչերն են օգտվում բուհերի գրադարաններից, ընթերցասրահներից, դահլիճներից, լսարաններից: Բուհական գրադարանները փակվում են աշխատանքային օրվա ավարտին: Մինչդեռ աշխարհի շատ ուսումնական հաստատություններում դրանք գործում են մինչև ուշ գիշեր: Ուսումնական հաստատությունների գլխավոր գործառույթներից մեկը շփումների միջավայրի ապահովումն է: Հաճախ դասերից դուրս անցկացվող միջոցառումներն ավելի շատ բան կարող են տալ ուսանողներին, քան բուն դասերը: Եվ եթե բուհերի ներսում կան որոշակի շփումներ, ապա բուհերի միջև շփումները գրեթե բացակայում են: Չի գործում ներքին շարժունության կանոնը, որը ուսանողին հնարավորություն է տալիս որոշ դասընթացներ անցնել այլ բուհերում:

Այսպիսով, հասարակական իրողությունների փոփոխությունն անխուսափելի է դարձնում կրթության ոլորտում համակարգային բարեփոխումների իրականացումը: Ուսումնական հաստատությունները չպետք է լինեն պարզապես դաս անելու և քննություն հանձնելու համար նախատեսված վայրեր, այլ պետք է լինեն երիտասարդության ինքնարտահայտման, հաղորդակցման, մշակութային հարթակներ: Ընդ որում, Հայաստանում կան հաջողության բազմաթիվ օրինակներ, որոնք կարելի է տարածել կրթական համակարգում: Այդուհանդերձ, հաջողությունների զգալի մասն արձանագրվում է ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ոլորտում, որոնց արդյունքների ճանաչման առումով դրական տեղաշարժեր դեռևս չկան:

3.2. Երիտասարդների առողջությունը

Առողջությունը ժամանակակից հասարակության զարգացման կարևորագույն հենասյուներից է: Հատկապես կարևոր է լուրջ ուշադրություն դարձնել երեխաների առողջական խնդիրներին, քանի որ վաղ տարիքում առաջացած առողջական խնդիրները բացասական ազդեցություն են ունենում մարդու հասունացման վրա, և հետևանքներն էլ կարող են լինել երկարատև: Հայաստանում երիտասարդների առողջության վերաբերյալ ուսումնասիրությունների պակաս կա: Բազմաթիվ կարևոր խնդիրներ, ինչպիսիք են հոգեկան առողջությունը, առողջ ապրելակերպը, առանձին ուսումնասիրության կարիք ունեն:

Առողջության ինքնագնահատման հետազոտությունը ցույց է տվել, որ տղամարդիկ ավելի գոհ են իրենց առողջական վիճակից, քան կանայք: Միևնույն ժամանակ հարցերին տրված պատասխանները կարող էին կապված լինել գենդերային տեսակետների և կարծրատիպերի հետ, ըստ որի, բողոքելը տղամարդկանց սազական չէ. նրանք պետք է ուժեղ և անկոտրում լինեն: Նման վերաբերմունքը շատ խնդիրներ է առաջացնում. տղամարդիկ հազվադեպ են դիմում ախտորոշման, այսպիսով բաց թողնելով վաղ փուլում հիվանդության բուժումը սկսելու հնարավորությունը, հազվադեպ են խոստովանում դեպրեսիայի մասին և չեն խոսում սթրեսային կյանքի մասին: Ըստ հետազոտողների, «իսկական տղամարդու» ընկալումը հասարակության կողմից հանգեցնում է մի իրադրության, երբ տղամարդիկ բուժօգնության դիմելը համարում են սեփական թուլության ընդունում: Գենդերային դերերի հետ կապված կոնֆլիկտները բացասաբար են ազդում

ինքնահարգանքի, մտերիմ հարաբերությունների և ամուսնությունից բավարարվածության վրա և դրական դաշտ են ստեղծում անհանգստության առաջացման համար: Տղամարդիկ սթրեսի են ենթարկվում ոչ միայն այն ժամանակ, երբ իրենց անընդունակ են համարում իրենց «տղամարդկային դերակատարման» պահանջները բավարարելու (օրինակ, հաջող կարիերայի ստեղծման և ընտանիքի ապահովման համար, նաև այն դեպքում, երբ իրադրությունը ստիպում է, որ նրանք «ոչ տղամարդավայել» վարք դրսևորեն (օրինակ, մնան տանը և բժշկական պրոցեդուրաներ անեն)[87]: Բոլոր այդ խնդիրները պետք է հաշվի առնվեն երիտասարդների առողջ ապրելակերպի կրթական ծրագրերում:

Կարևորվում են երիտասարդների առողջությանը վերաբերող հետևյալ խնդիրները՝ առողջապահական ծառայությունների հասանելիությունը և առողջապահական հաստատություններ դիմելիության ցուցանիշները, առողջ ապրելակերպը և առողջապահական կրթությունը:

3.2.1. Առողջապահական ծառայությունների հասանելիությունը և առողջապահական հաստատություններ դիմելիությունը

Հայաստանում առկա է առողջապահական ծառայությունների ֆիզիկական հասանելիության և մատչելիության խնդիր: Թե՛ ամբուլատոր և թե՛ ստացիոնար մասնագիտացված բուժօգնության կառույցները հիմնականում կենտրոնացված են Երևանում և ոչ լրիվ ծավալով՝ մի քանի տարածաշրջանում: Արդյունքում, առողջապահական ծառայությունների հասանելիության առումով առկա է տարբերություն քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև, ինչի մասին են վկայում նաև մի շարք ուսումնասիրություններ: Այսպես, 2015 թվականին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» շրջանակներում այցեր են կատարվել ՀՀ մի շարք բժշկական հաստատություններ[88]: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գյուղերում և քաղաքներում առկա է առողջապահական որոշ ծառայությունների տարբերություն. որոշ ծառայություններ չեն մատուցվում գյուղերում, ուստի կանայք ստիպված են լինում այցելել մոտակա քաղաքներ:

Ըստ 2013-2014թթ. իրականացված Հայաստանի դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի (այսուհետ՝ ԴԵԱՎ) ազգային հետազոտության արդյունքների, դեռահասների կողմից բուժկանխարգելիչ ծառայություններից օգտվելու ցուցանիշը բավականին ցածր է: Գյուղաբնակների 43%-ը և քաղաքաբնակների 16%-ը երբեք չեն այցելել իրենց մանկաբույժին կամ ընտանեկան բժշկին: 17 տարեկան երևանաբնակների 9%-ը և գյուղաբնակների 21%-ը երբեք չեն այցելել ատամնաբույժի: Բուժկանխարգելիչ ծառայություններից օգտվելու հարցում աղջիկների և տղաների միջև էական տարբերություն չկա:

Բուհերի ուսանողները խնդրի քննարկման ժամանակ նշում էին, որ չեն հիշում, թե երբ են այցելել բժշկի: Այցելողները, որպես կանոն, ունեցել են գանգատներ: Կանխարգելիչ այցերը երիտասարդների շրջանում գրեթե ընդունված պրակտիկա չէ: Ուսումնական հաստատություններում ևս այս հարցն անուշադրության է մատնված: Ուսանողները տեղյակ չեն, թե ինչ առողջապահական ծառայություններ կան բուհերում: Որոշ ուսանողներ նշում էին, որ ֆիզկուլտուրայի դասերից առաջ երբեմն չափել են իրենց արյան ճնշումը, բայց այդ երևույթը կանոնավոր բնույթ չունի: Իրավիճակը մտահոգիչ է նաև դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում, որոնցում բժշկական ստուգումները կրում են ձևական բնույթ:

Այսպիսով, Հայաստանում լուրջ խնդիրներ կան՝ կապված առողջապահական ծառայությունների հասանելիության և դիմելիության հետ: Շարունակում է գերիշխող մնալ այն մոտեցումը, որ բժշկի պետք է դիմել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Խնդրի կարգավորման առնչությամբ՝ Հայաստանի համար կարևոր է միջազգային պրակտիկայում ընդունված բարյացակամ առողջապահական ծառայությունների մոդելի ներդնումը:

3.2.2. Առողջ ապրելակերպ և առողջապահական կրթություն

Հայաստանի Առողջապահության ազգային ինստիտուտի տվյալներով, Հայաստանի Հանրապետության բնակչության 15 տարեկան և բարձր տարիքային խմբում առավել տարածված են հետևյալ ռիսկի գործոնները՝ ծխախոտի ամենօրյա օգտագործում, որի տարածվածությունը ողջ բնակչության շրջանում կազմում է 24% (տղամարդկանց շրջանում՝ 50%, իսկ կանանց շրջանում՝ 2,3%), գիրություն ու ճարպակալում՝ 49%, ֆիզիկական թերակտիվությունը՝ 17,5%, ալկոհոլի օգտագործման չարաշահում՝ 8,2%, (տղամարդկանց շրջանում՝ 15%):

[87] https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN%20AND%20GENDER%20EQUALITY_Final_0.pdf, էջ 190:

[88] Հասանելի է հետևյալ հղումով. http://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Public%20inquiry%20report_arm_0.pdf:

Ըստ ՀՀ կառավարության կողմից ընդունված «Առողջ ապրելակերպի խթանման» ռազմավարական ծրագրի[89], ներկայում ապրելակերպով ու վարքագծով է պայմանավորված հիվանդությունների համընդհանուր բեռի ավելի քան 25%-ը: Մահացության, հիվանդացության և հաշմանդամության բարձր ցուցանիշները պայմանավորող հիվանդությունների (սիրտ-անոթային հիվանդություններ, նորագոյացություններ, մահվան արտաքին պատճառներ, շնչառական և մարսողական համակարգերի հիվանդություններ) զարգացման ռիսկի գլխավոր գործոնները կապված են ապրելակերպի և վնասակար վարքագծային սովորությունների հետ: Առողջ ապրելակերպի ձևավորումը կարևորագույն առողջապահական կարողություն է, որի ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել զգալի և բազմոլորտ գործողություններ:

Ծխախոտի և ալկոհոլի օգտագործում

Ծխախոտի օգտագործումն ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի՝ ակնհայտորեն վկայում է, որ այդ վնասակար սովորությունը տղամարդկանց շրջանում թռիչքաձև աճում է 15-19 տարիքային խմբից 20-29 տարիքային խումբ անցնելիս: Ըստ տարիքի՝ տղամարդկանց կողմից ծխախոտի օգտագործումը հասնում է առավելագույնին 30-39 տարեկանների շրջանում, ապա աստիճանաբար սկսում է նվազել: Ծխող տղամարդկանց ամենացածր թիվը գրանցվել է թերի բարձրագույն կրթությամբ տղամարդկանց շրջանում, ովքեր հիմնականում ուսանողներ են:

Եթե 2012թ.-ին Հայաստանում ամեն օր ծխախոտ էր օգտագործում 15 և բարձր տարիքային խմբի բնակչության 23%-ը, ապա 2016թ-ին՝ 26,2%-ը: Ընդ որում, ամենօրյա հաճախականությամբ ծխող տղամարդկանց թիվն ավելացել է՝ 48,7%-ից հասնելով 53,4%-ի, իսկ կանանց թիվը՝ 1,3%-ից մինչև 2,3%-ի: Աճել է նաև ոչ ամեն օր ծխողների թիվը[90]:

Ըստ ԴԵԱՎ ազգային հետազոտության տվյալների, հարցված 17 տարեկանների 20%-ն ասել է, որ երբևէ ծխել է, իսկ 11%-ը կանոնավոր ծխում է: Տղաների 26%-ը կանոնավոր ծխում է: Աղջիկների շրջանում ծխախոտ փորձել է 8%-ը, բայց կանոնավոր ծխում է 2%-ը:

Ըստ «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի հրապարակած «Անկախության սերունդ» զեկույցի տվյալների, Հայաստանում ծխախոտի համար գումար ծախսողները հիմնականում արական սեռի ներկայացուցիչներն են (94,7%): Ընդ որում, ամեն օր ծխելու հանգամանքը խոստովանել է հարցվածների 14,8%-ը, իսկ 3,5%-ը նշել է, որ ծխում է ժամանակ առ ժամանակ: Նույնն է պատկերը նաև ալկոհոլ օգտագործելու պարագայում. պարբերաբար օգտագործելը խոստովանել է 11,2%-ը, հազվադեպ օգտագործելու հանգամանքը նշել է 46,6%-ը:

Ծխելու խնդիրը շարունակում է մնալ մտահոգիչ: Թեև իրականացվում են տարբեր ծրագրեր, իսկ դպրոցներում ներդրվել են առողջ ապրելակերպի վերաբերյալ դասաժամեր, այդուհանդերձ, մեծահասակների շրջանում ծխելու տարածվածությունը ազդում է երիտասարդների վրա:

Ըստ քանակական տվյալների, հարցված երիտասարդների 36,9%-ի համար ալկոհոլ օգտագործելն ընդունելի չէ, ըստ 45,9%-ի՝ այն անհրաժեշտ է միայն ընկերակցության համար և ընդունելի է 17,1%-ի համար: ԴԵԱՎՀ տվյալների համաձայն՝ 17 տարեկանների կողմից 1 բաժին[91] ալկոհոլ շաբաթական կտրվածքով օգտագործում է հարցվածների շուրջ 30%-ը, իսկ 3 բաժին և ավելի՝ շուրջ 21%-ը: Ալկոհոլի օգտագործման հաճախականության առումով Հայաստանում գրանցված ցուցանիշը բարձր է միջազգային միջին ցուցանիշից:

Սեռական կենսափորձ

Երիտասարդների ապրելակերպի համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև նրանց սեռական կենսափորձի առանձնահատկություններին: «Անկախության սերունդ» հետազոտության շրջանակներում հարցված երիտասարդների 32,6%-ը նշել է, որ սեռական հարաբերություն դեռևս չի ունեցել, սեռական հարաբերություն միայն մեկ զուգընկերոջ հետ ունեցել է 35,4%-ը, և մեկից ավելի զուգընկերոջ հետ՝ 23,1%-ը (պատասխանելուց հրաժարվել է հարցվածների 8,9%-ը): Սեռական փորձ ունեցողները և չունեցողները հավասարապես բաշխվում են 20-21 տարեկան տարիքային խմբում: Դա այն անցումային շեմն է, երբ սեռական փորձ ունեցողների թիվը սկսում է աճել, չունեցողներինը՝ նվազել:

Հակաբեղմնավորիչներ (պահպանակ, հաբեր և այլն) օգտագործում է հարցված չափահաս երիտասարդների 37,7%-ը, որից 18,5%-ը՝ կանոնավոր կերպով: Հակաբեղմնավորիչներից անտեղյակ է հարցվածների 7,6%-ը, իսկ 54,7%-ը երբեք չի օգտագործել: Ընդ որում, հակաբեղմնավորիչներ առավել շատ օգտագործում են արական սեռի ներկայացուցիչները: Ընդհանուր առմամբ, հակաբեղմնավորիչների օգտագործման հաճախականության

[89] https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/11/50-4_1ardz.pdf

[90] Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2015-2016

[91] 1 բաժին է համարվում 250 մլ գարեջուրը, 100 մլ գինին/շամպայնը, 60 մլ լիկյորը, 30 մլ օղին/կոնյակը/վիսկին:

բաշխումն ըստ սեռի այդ տեսքն ունի: Ինչ վերաբերում է սեռական ցանկությունների հանդեպ երիտասարդների դիրքորոշումներին, ապա հարկ է նկատել, որ առավել տարածված է այն կարծիքը, ըստ որի, սեռական ցանկությունները զսպելը արժանապատվության հարց է երկու սեռերի համար: Այդպես է կարծում հարցվածների 43,3%-ը, իսկ 27,1%-ը նշել է, որ դա արժանապատվության հարց է հատկապես աղջիկների համար: Եվ միայն 29,5 %-ն է դեմ սեռական ցանկությունների զսպմանը, ընդ որում, 14,6%-ի կարծիքով սեռական ցանկությունները զսպելը վնասակար է առողջության համար, 6,7%-ը դա համարում է հոգեբանական ճնշում, իսկ 8,2%-ը՝ հնացած դիրքորոշում:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետազոտությունը ցույց է տալիս, որ երիտասարդների շրջանում առկա է հակասական դիրքորոշում սեռականության, սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ: Հարցվածների 4/5-րդից ավելին կարծում են, որ կինն իրավունք չունի տնօրինելու իր մարմինը և սեռականությունը: Հարցվողները կարծում են, որ կանայք պետք է ենթարկվեն հայրիշխանական մտածելակերպի նորմերին և չափանիշներին[92]: Այդուհանդերձ, հարցված երիտասարդները (18-24 տարեկան) ավելի քիչ են հակված սեռականության մասին կարծրատիպերին: Ի տարբերություն տղամարդկանց, երիտասարդ կանայք առավելապես չեն համաձայնում կարծրատիպերի վերարտադրության հետ[93]: Ուստի և ակնհայտ է դառնում, որ հանրային իրազեկման արշավները և կրթական ծրագրերը պետք է կենտրոնանան երիտասարդ կանանց և տղամարդկանց առանձնահատուկ գենդերային կարիքների վրա՝ կապակցելով առողջ ապրելակերպը, վերարտադրողական առողջությունը, բարեկեցությունը, բռնության և խտրականության բացակայությունը:

Սննդակարգ

Առաջնային անհրաժեշտություն է շաքարով հարուստ ըմպելիքների և վերամշակված արագ սննդի ավելորդ չափաբաժնի սպառման նվազեցումը, քանի որ դրանք նպաստում են երեխաների շրջանում գիրության խնդիրների սրացմանը: Առ այսօր Հայաստանի մի շարք դպրոցներում, բազմաթիվ բուհերում և միջին մասնագիտական հաստատություններում վաճառվում է նման սնունդ, չնայած այն նաև արգելված է օրենքով: Դպրոցական սննդի խնդիրը մշտապես ուսումնասիրվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից, սակայն համակարգային լուծում դեռևս չի ստացել: 2016-2017 թվականներին Հայաստանի տարբեր մարզերից Պաշտպանի աշխատակազմ այցելած երեխաների հետ զրույցների ընթացքում պարզվել է, որ նրանց դպրոցների բուֆետներում դեռևս վաճառվում են գազավորված և շաքարի բարձր պարունակությամբ ըմպելիքներ, չիպսերի, ինչպես նաև արգելված այլ սննդի տեսակներ: Չնայած նրան, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ՄԱԿ-ի Պարենի զարգացման ծրագրի հետ իրականացնում է «Դպրոցական սնունդ» ծրագիրը, որի շրջանակներում դպրոցներում 1-4-րդ դասարանների աշակերտներին տրվում է տաք ճաշ, այնուամենայնիվ, խնդիրը համակարգային բնույթ է կրում և մնում է մտահոգիչ բարձր դասարանցիների դեպքում:

ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի հրամանով հաստատվել է «Դպրոցներում երեխաների առողջ սնուցման և ֆիզիկական ակտիվության սկզբունքների ներառմամբ առողջությունը խթանող օրինակելի քաղաքականությունը»: Մշակվել և հրատարակվել են «Դպրոցահասակների առողջ սնուցում» ուղեցույցը մանկավարժների համար, «Դեռահասների առողջություն» և «Հոգ տարեք ձեր երեխաների առողջության մասին» բրոշյուրները դպրոցահասակ երեխաների մայրերի համար: Դպրոցներում պարտադիր դասընթաց է «Առողջ ապրելակերպը», սակայն դրա դասավանդումը կրում է ձևական բնույթ և էական արդյունքներ չի տալիս: Ավագ դպրոցներում, քոլեջներում, բուհերում «Ֆիզկուլտուրան» շարունակում է ընկալվել որպես անկարևոր առարկա: Ուսումնական հաստատություններում առաջնային է դիտարկվում ակադեմիական գործունեությունը, իսկ առողջապահական բաղադրիչը՝ որպես երկրորդական մի բան: Մինչդեռ ժամանակակից աշխարհում մեծ տարածում է ստանում «ամբողջական կրթության» մոդելը, որի դեպքում կարևորվում են նաև առողջապահական և սոցիալական բաղադրիչները:

[92] https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN%20AND%20GENDER%20EQUALITY_Final_0.pdf , էջ 26:

[93] Նույնը՝ էջ 214:

Ներդիր 3.3

Ներսես Խաչատրյան

COAF ծրագրերի մասնակից (22տ.)

Դպրոցական տարիներին «Հայաստանի մանուկներ հիմնադրամի»՝ առողջ ապրելակերպի խմբակի սան էի: Միանշանակ կարող եմ ասել, որ խմբակում ստացած գիտելիքներս ու հմտություններս կյանքում ինձ շատ են օգնել:

2015թ. բանակ գնացի ու վերադարձա 2017թ. ամռանը: Ասկերանում էի ծառայում, սանիրահանգիչ էի: Ընդհանրապես, շատ հազվադեպ է պատահում, որ բժշկական կրթություն չունեցողը սանիրահանգիչ դառնա: Հարցազրույց անցա, որի ընթացքում պատմեցի, թե ինչպես են կանգնեցնում արյունահոսությունը: Գիտելիքներս այնպես ներկայացրի, որ հարցազրուցավար բժիշկը կարծեց, թե բժշկական համալսարանի ուսանող եմ... Այսպիսով, Հիմնադրամի՝ առողջ ապրելակերպի խմբակի շնորհիվ «քննություն» անցա ու դարձա սանիրահանգիչ: Բացի այդ, քույրս բժշկական համալսարանում է սովորում, և ես ազատ ժամանակ դեղագիտությանն առնչվող դասագրքեր էի վերցնում նրանից ու կարդում... Շուտով համարվեցի զորամասի լավագույն սանիրահանգիչներից ու հաճախ կիրառում էի ստացածս գիտելիքները: Մի անգամ մեր վաշտի զինվորներից մեկը վիրավորվեց ու ես պետք է բուժօգնություն ցուցաբերեի: Կրկին հիշեցի առողջ ապրելակերպի խմբակում սովորածս ու արագ «ժգուտ» դրեցի նրա ոտքին: Օրեր անց այդ տղան ասաց, որ իմ «ժգուտն» իր կյանքը փրկել է...

Երբ ծառայությանս ընթացքում ինձ տեղափոխում էին, վեճեր եղան, թե ես ո՛ր վաշտի սանիրահանգիչն եմ լինելու: Ինձ համար այդ աշխատանքը կարևոր և ուսուցողական էր, և ուրախ եմ, որ կարողացել եմ ընկերներիս օգնել: Գիտակցում եմ, որ այդ ամենն անհնար կլիներ առանց Հիմնադրամի՝ առողջ ապրելակերպի ակումբի:

3.3. Շրջակա միջավայրի ազդեցությունը բնակչության առողջության վրա

Բազմաթիվ և բազմաբովանդակ ուսումնասիրությունների արդյունքում միջազգային գիտական հանրությունը, ինչպես նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը եկել են այսպիսի եզրակացության՝ բնակչության առողջությունը կախված է հետևյալ գործոններից.

1. Էկոլոգիական (մինչև 20%)
2. Սոցիալ-տնտեսական (մինչև 50%)
3. Գենետիկական (մինչև 20%)
4. Առողջապահական ծառայությունների իրավիճակը (մինչև 10%)

Այս օրինաչափությունները բնորոշ են «ստանդարտ» իրավիճակներին: Բայց, երբ գործոններից որևէ մեկը խիստ վատթարանում է, ապա այդ գործոնի ազդեցությունը զգալիորեն աճում է:

Վերջին տասնամյակներում, հատկապես կարևորվում է մարդկանց առողջության վրա կլիմայի փոփոխության, աղետների ռիսկերի աճի, շրջակա միջավայրի աղտոտվածության և դեգրադացված էկոհամակարգերի ազդեցության բնութագրումը: Գործունեություն է ծավալվում այդ երևույթների ուսումնասիրության, կանխարգելման և հետևանքների նվազեցման ուղղությամբ: Հատուկ ուշադրություն է դարձվում երեխաներին՝ որպես կարևոր և առավել խոցելի խմբի: Նմանատիպ աշխատանք իրականացվել է նաև ՀՀ-ում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) աջակցությամբ: «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի

կողմից 23 անկախ փորձագետների մասնակցությամբ հավաքագրվել, քննարկվել, վերլուծվել և ամփոփվել են վերոհիշյալ ոլորտում միջազգային փորձը և հատկապես ՀՀ-ում իրականացված հետազոտությունների արդյունքները, համապատասխան վիճակագրական տվյալները, մշակվել են առաջարկություններ իրավիճակի բարելավման ուղղությամբ:

Վերջին տասնամյակներում Հայաստանում դիտվել է ջերմաստիճանի զգալի աճ, պահպանվում է տեղումների նվազման միտումը, կանխատեսվում է մինչև 2030 թ. գետային հոսքի նվազում 11,9 %-ով: Կլիմայի փոփոխության արդի միտումները կարող են բացասաբար ազդել նաև Սևանա լճի ջրի քանակի և որակի վրա:

Անվտանգ ջրի պակասը կարող է բերել աղիքային վարակիչ հիվանդությունների աճի, այդ թվում՝ ջրային գործոնով պայմանավորված հիվանդությունների բռնկումների:

ՀՀ-ում, ինչպես և ամբողջ աշխարհում, զգալիորեն աճել են բնական աղետների քանակը, տնտեսությանը հասցված վնասը, ինչպես նաև մարդկային զոհերի թիվը:

Ջերմային ալիքներն առավել արտահայտված են Երևան, Մեղրի, Արարատ քաղաքներում, ընդ որում, Երևանում բացահայտվել է զգալի բացասական ազդեցություն մարդկանց առողջության վրա:

Կլիմայի փոփոխությունն առավելագույնս կարող է ազդել գյուղատնտեսության վրա: Հիմնախնդիրը խորանում է անապատացման գործընթացով, որն արդեն զարգանում է Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Վայոց Ձորի մարզերում և խորանում է Արարատյան արտեզյան ավազանի գերօգտագործման հետևանքով ջրի մակարդակի անկմամբ: Ուստի մտահոգության առարկա է դառնում պարենային անվտանգության խնդիրը:

Էկոհամակարգերի դեգրադացման վերաբերյալ հավաքագրված տվյալների (կլիմայի փոփոխության, բնածին և տեխնածին աղետների նկատմամբ խոցելիության, շրջակա միջավայրի աղտոտման (օդ, ջուր, հող, բույս), կենսաբազմազանության կորստի, պոչամբարների խտության, անապատացման) և որոշ առողջապահական (նորագոյացությունների և բնածին շեղումներով ծնունդների, արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդությունների, հաշմանդամ երեխաների քանակի) ու ժողովրդագրական (բնական աճի ընդհանուր գործակցի) տվյալների միջև հաշվարկված հարաբերակցական գործակիցը 0,58 է, ինչը վկայում է ազդեցության բավականին բարձր հավանականության մասին:

Բնակչության, մասնավորապես երեխաների առողջության վրա դեգրադացված էկոհամակարգերի ազդեցության տեսանկյունից առավել ռիսկային են Լոռին, Սյունիքը և Երևանը: Ընդ որում, Երևանում էկոլոգիական բնույթի պատճառները բազմաբովանդակ են (Նուբարաշենի տոքսիկ նյութերի գերեզմանոցը, որից տարածվում են կայուն օրգանական աղտոտիչները, քաղաքի աղբավայրերը, դրենաժային համակարգի անկատարությունը, քաղաքամերձ տարածքում և նույնիսկ կենտրոնում գործող հանքերը, որոնք քաղաքի օդային ավազանին փոշի են «մատակարարում», լանջերի անտառազրկումը, Կենտրոնի կառուցապատման խտացումը, տրանսպորտը և այլն), իսկ Լոռու և Սյունիքի մարզերում գերակա հիմնախնդիրը հանքարդյունաբերական արտադրության հետևանքով հողի, ջրի, օդի, սննդաշղթայի աղտոտվածությունն է ծանր մետաղներով (Mo, Cu, Pb, Zn, Hg, Cd, Ni, Cr, As):

Նշենք, որ Լոռու մարզում էկոլոգիական բարձր ռիսկայունությունը սույն հետազոտությունից հետո հաստատվել է նաև չեխական հայտնի “Arnike” գիտա-հետազոտական կազմակերպության կողմից, «AWHH» և «Ecolur» հայկական ՀԿ-ների մասնակցությամբ իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով:

Եթե նպատակաուղղված ենք առողջ սերունդ ունենալու, ապա մեր ապրելակերպը պետք է ուղղորդվի հետևյալ կարգախոսով. «Հայրենասիրությունը նաև էկոլոգիական երանգ ունի»:

Առաջարկություններ

- Կրթությունը պետք է դարձնել ավելի մասնակցային, ակտիվացնել երիտասարդների մասնակցությունը կրթության որակի ապահովման գործընթացներում: Երիտասարդներին կրթական համակարգում պետք է դիտել ոչ միայն որպես սովորողների, այլև իբրև սովորեցնողների:

- Ուսումնական հաստատություններն այսօր հիմնականում դասեր անցկացնելու և քննություններ հանձնելու համար են: Ուսումնական հաստատությունների համագործակցության դաշտը, ուսումնական միջավայրերի բազմաֆունկցիոնալ օգտագործումը բավարար չեն:

- Անհրաժեշտ է կարգավորել ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների ճանաչումը, պատշաճորեն համակարգել այդ ոլորտում իրականացվող նախաձեռնությունները, գործարկել ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների ճանաչման համակարգը:

- Հարկավոր է համակարգված ձևով տարածել իրականացվող այն կրթական ծրագրերը, որոնք ուսուցումը, հետազոտությունը և աշխատանքը կապակցում են միմյանց:
- Որպես երիտասարդության կրթական և առողջապահական խնդիրների լուծման արդյունավետ քայլ պետք է կարևորել վաղ մանկության զարգացման ծրագրերը:
- Անհրաժեշտ է անցկացնել երիտասարդների առողջապահական խնդիրներին վերաբերող համալիր հետազոտություն:
- Մարզերում և հատկապես գյուղերում ապրող երիտասարդների համար որակյալ առողջապահական ծառայությունները մատչելի դարձնելը պետք է համարել առաջնային խնդիր:
- Անհրաժեշտ է ուժեղացնել միջգերատեսչական համագործակցությունը Շրջակա միջավայրի, Առողջապահության, Քաղաքաշինության և այլ նախարարությունների ու գերատեսչությունների միջև՝ ծառացած հիմնախնդիրները լուծելիս առավել համալիր մոտեցում դրսևորելու և էկոլոգիական բաղադրիչները լիարժեք հաշվի առնելու նպատակով:
- Կլիմայի փոփոխության մեղմման և տեղայնացման, էկոհամակարգերի դեգրադացման կանխարգելման, կանաչ էկոնոմիկայի զարգացման ուղղությամբ ՀՀ-ում տարբեր միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ իրականացված բազմաթիվ փորձնական ծրագրերի շնորհիվ ստացված դրական փորձն անհրաժեշտ է տարածել երկրում:
- Պետք է առավելագույնս ապահովել ՀՀ ողջ բնակչության, հատկապես, երիտասարդության իրազեկումը և մասնակցությունը ՀՀ-ում ծավալվող՝ ՄԱԿ-ի «Վերափոխենք մեր աշխարհը. Մինչև 2030թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի շրջանակներում Կայուն զարգացման նպատակների տեղայնացման և իրականացման ուղղությամբ գործունեության ասպարեզում:
- Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել երկրում հանուն կայուն զարգացման կրթության, առողջապահական կրթության զարգացմանը:
- Հանրային իրազեկման արշավները և կրթական ծրագրերը պետք է կենտրոնանան երիտասարդ կանանց և տղամարդկանց առանձնահատուկ գենդերային կարիքների վրա՝ կապակցելով առողջ ապրելակերպը, վերարտադրողական առողջությունը, բարեկեցությունը, բռնության և խտրականության բացակայությունը:
- Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների սկզբունքը պետք է ներառվի կրթական ծրագրերում, դասագրքերում, ուսումնական նյութերում, մասնագիտական կողմնորոշման ծրագրերում:

Գլուխ 4

ՍՊԱՍԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

4.1. Երիտասարդների ինքնաիրականացումը՝ աշխատանք և ձեռներեցություն

4.1.1. Կրթության և աշխատաշուկայի ոլորտների քաոսային մուտացիանե՞ր, թե՞ ծրագրավորված բարեփոխումներ

Առաջնային խնդիրը, որի մասին անընդհատ բարձրաձայնվում է հանրային բոլոր հարթակներում, և որը հաստատվել է ՀՀ-ում իրականացված բազմաթիվ հետազոտությունների միջոցով, կրթական համակարգի և աշխատաշուկայի կապի խզվածությունն է[94,95]: Պարզվում է, որ երբ երիտասարդը «ինչո՞վ ես զբաղված» հարցին պատասխանում է՝ «պոտենցիալ գործազուրկ եմ», նա նկատի ունի իր ուսանող լինելը: Երիտասարդների շրջանում աղքատության և գործազրկության պատկերը ներկայացվում է ստորև բերված նկարներում՝

Նկար 4.1[96] Աղքատությունը երիտասարդների շրջանում (15-29)



[94] Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, 2014

[95] ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն / Եր.: Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, 2013

[96] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2016-2018 թթ.

Նկար 4.2[97] Երիտասարդների գործազրկության մակարդակը (15-24)



Այս իրավիճակից դուրս գալ հնարավոր է հիմնականում ինստիտուցիոնալ բարեփոխումների ճանապարհով: Սակայն մեզանում ինստիտուցիոնալ և համատեղ մտածողության զարգացածության բավականին ցածր աստիճանը՝ համադրված իներտության բավականին բարձր աստիճանի հետ, հանգեցնում է մի վիճակի, երբ ինստիտուցիոնալ բարեփոխումների մասին խոսում ենք միայն post factum, երբ իրավիճակը սրված է այն աստիճան, որ այլևս անհնար է շարունակել նույն կերպ գործելը:

Այս խնդրի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է ուսումնասիրել ներկայիս կրթական համակարգի և աշխատաշուկայի արմատական փոփոխությունները համաշխարհային մասշտաբով և առաջիկա տասնամյակներում դրանց հնարավոր զարգացման դինամիկան: Երիտասարդների կրթությանը և աշխատանքին վերաբերող սակավ հետազոտական նյութը, որ հաջողվեց գտնել, առնչվում է ներկա իրադրության վիճակագրական և քանակական հետազոտմանը՝ հիմնված հանրապետության վերջին տուրբուլենտ տասնամյակների իրավիճակների համեմատության վրա:

Սրանով, սակայն, դժվար է ստանալ իրականության ամբողջական պատկերը, քանի որ կարճատև, փխրուն հավասարակշռության վիճակներն անընդհատ խաթարվում են լրջագույն մարտահրավերային ազդեցություններով՝ անկախացմանը հաջորդած հասարակական-տնտեսական փոխակերպումները, 2008-2010թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը և, վերջապես, 2018-ին սկսված Թավշյա հեղափոխության գործընթացը: Առկա հետազոտական նյութը գրեթե չի անդրադառնում կրթության ոլորտի և աշխատաշուկայի գլոբալ փոփոխություններին: Մինչդեռ սա պետք է անպայման հաշվի առնել, քանի որ առաջիկա երկու

[97] Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2016-2018թթ.

տասնամյակներում աշխատաշուկան և կրթության համակարգը կարող են բացարձակապես այլ լանդշաֆտ և այլ ֆունցիոնալ-կառուցվածքային պատկեր ունենալ:

Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել աշխատանքի շուկայում գոյություն ունեցող գենդերային առանձնահատկությունները: Պաշտոնական վիճակագրության համաձայն, կանայք գերակշռում են բոլոր տարիքային խմբերում, բացառությամբ 15-19 տարեկանների: Ընդ որում, սեռային անհավասար բաշխումը հատկապես խորանում է 30-ից բարձր գրեթե բոլոր տարիքային խմբերում (55/58-ը 45/41-ի դեմ և այլն)[98]: 2017 թվականին 15-75 տարեկան կանանց 47%-ը չի ունեցել աշխատանք և չի փնտրել՝ հիմնականում զբաղված լինելով տնային տնտեսությամբ[99]: Կանանց և տղամարդկանց տեսակարար կշիռը տնտեսապես ոչ ակտիվ բնակչության 15-24 տարիքային խմբում կազմել է 48%:52%: 2017թ. կանանց և տղամարդկանց ոչ ակտիվության մակարդակների 1.6 անգամ տարբերությունը համարժեք է ոչ ակտիվության մակարդակում սեռային խզվածքի (ՍԽ) 37.8%-ին: ՍԽ-ն հատկապես բարձր է 25-49 տարիքային խմբում (57.4%-65.6%)՝ հիմնականում պայմանավորված ընտանեկան պարտականություններով (հղիություն, ծննդաբերություն, երեխայի խնամք, տնային տնտեսությամբ ծանրաբեռնվածություն և այլն) կանանց զբաղվածությամբ: Հակառակ դրան՝ 15-24 տարիքային խմբում ՍԽ-ի 6.7% ցուցանիշը պայմանավորված է կրթության մեջ երիտասարդների զանգվածային ընդգրկվածությամբ՝ անկախ սեռից[100]:

Տնտեսական ակտիվության մակարդակն ավելի բարձր է տղամարդկանց, քան կանանց շրջանում: 15-75 տարեկան արական սեռի բնակչության 70.7%-ը և իգական սեռի բնակչության 52.8%-ը զբաղված է կամ փնտրում է աշխատանք: 2017թ. կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվության ՍԽ-ն կազմել է 25.3%, որը հատկապես բարձր է 25-34 տարիքային խմբում (40%)՝ հիմնականում պայմանավորված ընտանեկան պարտականություններով (հղիություն, ծննդաբերություն, երեխայի խնամք և այլն) կանանց զբաղվածությամբ[101]:

Նշված հարցերի հիմքում ընկած գենդերային պատճառներն ու հետևանքները պետք է խորությամբ ուսումնասիրվեն՝ ապահովելու համար առավել նպատակային և հիմնավորված միջոցառումների իրականացում, որոնք հավասար արդյունավետ կլինեն կանանց և տղամարդկանց համար և չեն պարունակի «գենդերային կույր» միջոցառումների բացասական հետևանքները[102]:

Ռազմավարական բարեփոխումների իրականացումը հնարավոր է միայն արդիական մեթոդներով կատարված խորքային վերլուծությունների միջոցով: Այստեղ պետք է նշել նաև, որ ժամանակակից ՏՀՏ-ները շատ ավելի լայն հնարավորություններ են ընձեռում լայնամասշտաբ այն հետազոտությունների և խոշորածավալ տվյալների վերլուծության համար (մասնավորապես big data տեխնոլոգիաները և մեքենայական ինտելեկտի կիրառմամբ վերլուծական մեթոդներ), որոնք անհրաժեշտ է կիրառել իրավիճակի համապարփակ վերլուծության և դրա հիման վրա ռազմավարական զարգացման ծրագրերի մշակման համար:

Ընդհանուր առմամբ, կարևոր է նշել նաև, որ թե՛ կրթական համակարգի և թե՛ աշխատաշուկայի հետազոտությունները և ռազմավարական առաջարկների մշակումը պետք է արվեն մասնավոր հատվածի հետ սերտ համագործակցությամբ, քանի որ հենց այդ շահառուն է առաջին հերթին հետաքրքրված վերը նշված խնդիրների շուտափույթ լուծմամբ: Հենց մասնավոր հատվածն ունի տնտեսական ոլորտի և դրա արդի զարգացումների մասին համապարփակ տեղեկատվություն, ինչպես նաև պատրաստ է ներդրումներ կատարելու այս ոլորտների բարելավման համար:

4.1.2. Մոտիվատորները որպես համակարգ ձևավորող գործոն

Առաջնահերթ խնդիրներից մեկը, որ պետք է հաշվի առնել նոր կրթական համակարգի և նոր տիպի աշխատաշուկայի մասին մտածելիս, այն է, որ երիտասարդների՝ աշխատաշուկա մտնելու գործընթացն առավել հեշտացնելու համար նախատեսված կրթական ծառայություններ մատուցող կազմակերպությունները, կրթական ծառայությունների սպառողները և աջակցող համակարգերը հիմնվում են ինդուստրիալ հասարակարգի ժամանակաշրջանում ընդունված սխեմաների և արդեն վաղուց գոյություն չունեցող խորհրդային շրջանի մնացորդային մեխանիզմների վրա: Ինֆորմացիոն հասարակարգի ֆենոմենը դարձել է հասարակության կյանքը կարգավորող կարևորագույն գործոններից մեկը, որի հետևանքները հաշվի չառնելը կարող է բավականին լուրջ բացասական հետևանքներ ունենալ: Մինչդեռ երիտասարդական քաղաքականության և երիտասարդությանն առնչվող այլ միջոլորտային քաղաքականությունների հիմնական փաստաթղթերը շատ հազվադեպ և, որպես կանոն, չհամակարգված մոտեցում են ցուցաբերում այս խնդրին[103]:

[98] https://www.armstat.am/en/?nid=81&id=2079, էջ 63

[99] նույնը, էջ 64

[100] https://www.armstat.am/en/?nid=81&id=2079, էջ 66

[101] https://www.armstat.am/en/?nid=81&id=2079, էջ 69

[102] Գենդերային հավասարության ռազմավարություն, ՄԱԶԾ Հայաստան, 2016-2020թթ.

[103] ՀՀ Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, 2014թ.

Կարևորագույն խնդիրներից մեկը վերաբերում է մոտիվատորների դաշտին, որով առաջնորդվում են երիտասարդները և նրանց ծնողները կրթական այս կամ այն ծառայությունն ընտրելիս կամ այդ համակարգից իրենց սպասումները գնահատելիս: Ընտրության վրա ազդում են նաև երիտասարդի՝ աշխատաշուկայում ինտեգրվելուն վերաբերող սպասումները և նրա պատկերացումներն այն գործոնների մասին, որոնք իր բարեկեցության և ընդհանուր բավարարվածության զգացողության ազդակներն են լինելու:

Ավագ դպրոցի աշակերտների շրջանում իրականացված ֆոկուս խմբի ժամանակ աշակերտներին հարց տրվեց, թե ինչ է պետք նրանց երջանկության համար: Աշակերտներից մեկն ասաց, որ իր համար այդ հարցի պատասխանը առավել քան պարզ է՝ «մի չամադան փող»: Իհարկե, այս մոտեցումը օդից չի հայտնվել, այլ մշակվել է այն հասարակական-մշակութային դաշտի կողմից (զանգվածային լրատվամիջոցների և տեղեկատվական այլ հոսքերի ազդեցություն), որտեղ կազմավորվում է երիտասարդի աշխարհայացքը:

Մարդկային երջանկության և բարեկեցության չափանիշի ֆենոմենը գիտական հետազոտությունների առարկա էր դեռևս 20-րդ դարի 60-ականներին, սակայն այն սկսեց առավել ակտիվորեն հետազոտվել վերջին տասնամյակում, երբ լուրջ մարտահրավերի հանդիպեցին աշխարհի տարբեր մասերում իրականացվող միջազգային և ազգային զարգացման ծրագրերը: ՀՆԱ-ի աճի վրա հիմնված բարեկեցության մոդելը այս տեսանկյունից բավական հնացած է, և այժմ առաջնային կարևորության խնդիր է երիտասարդների կրթության և աշխատանքի ոլորտներն ըստ նորագույն հետազոտությունների կառուցելը: Երիտասարդական հետազոտությունների ինստիտուտի ներկայացրած տվյալները ցույց են տալիս[104], որ ՀՀ-ում երիտասարդների մեծ մասը բարեկեցությունը չափում է աշխատավարձով և հանրային կարգավիճակով, մի բան, որ ամենայն կերպ խթանվում է իրենց սոցիոմշակութային շրջապատի կարծրատիպերով և տեղեկատվական դաշտի հիմնական ուղերձներով: Մինչդեռ առկա են գիտական հետազոտություններ (օրինակ, Հարվարդի համալսարանի երկարաժամկետ՝ 75 տարի տևողությամբ “Harvard study of adult development” հետազոտությունը[105]), որոնք ապացուցում են, որ անձնական բարեկեցության և կենսական բավարարվածության ապահովման համար նյութական ռեսուրսների դերը նույնիսկ երկրորդ կամ երրորդ տեղերում չէ: Առավել կարևոր են ներդաշնակ հարաբերությունները շրջապատի հետ, ինչը ներառում է մի քանի գործոն (սոցիալական լավ հարաբերություններ, ըստ որում՝ ոչ թե մեծ քանակի, այլ խոր և դրական հարաբերություններ, վստահելի մարդկանց շրջապատի առկայություն և այլն):

Մոտիվատորների դաշտը՝ որպես համակարգ ձևավորող գործոն է հանդես գալիս նաև կրթական ծառայությունների շուկայի ձևավորման առումով: Ծնողներն իրենց զավակների համար կրթական հաստատություն կամ մասնագիտություն ընտրելիս հաճախ առաջնորդվում են ոչ թե երիտասարդի նախասիրություններով և ուժեղ կողմերով, այլ ստատուսային մասնագիտությունների մի հակիրճ ցուցակով, որ բացարձակապես չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջարկին: Համապատասխանաբար, կրթական հաստատությունն իր կրթական ծառայությունների ցուցակը ձևավորելիս առաջնորդվում է ոչ թե աշխատաշուկայի օբյեկտիվ պատկերով և անհրաժեշտ իրազեկվածության սանդղակով, այլ սպառողի անհիմն սպասումներով: Արդյունքում, կրթության համակարգը չի կարող և չի էլ հավակնում ուղեգիր տալ երիտասարդին դեպի աշխատաշուկա:

Այս իրավիճակը պետք է փոխվի, և դրա համար նախ պետք է աշխատանք տարնել պետական ռազմավարության, կրթական ինստիտուտների և աջակցման մեխանիզմների արդիականացման և նոր հանրային կոնսենսուսի ձևավորման ուղղությամբ: Այդ աշխատանքը պետք է համադրել մեդիա տարածքում համալիր միջոցառումների իրականացման հետ, որպեսզի փոխվեն հասարակության ավելի լայն շերտերի գիտակցության աստիճանը և մոտեցումները նշված խնդիրների վերաբերյալ:

4.1.3. Զարգացման խնդիրը կրթական համակարգում և աշխատաշուկայում

Հաջորդ խնդիրը, որը պետք է դիտարկել կրթության և աշխատաշուկայի վերահմաստավորման համատեքստում, վերաբերում է երկրում զարգացման գործընթացներն ուղղորդող հիմնական վարկածին: Այլ կերպ ասած, ո՞րն է մարդու և երկրի վերաբերյալ հասարակական կոնսենսուսով հաստատված այն տեսլականը, ըստ որի պետք է որոշվեն համակարգերի զարգացման և բարեփոխման գործընթացների տրամաբանությունն ու ուղղությունները:

[104] ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն / Եր.: Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, 2013

[105] http://www.adultdevelopmentstudy.org/

Կրթական համակարգի վերաբերյալ հիմնական վարկածը, որը գալիս է ինդուստրիալ հասարակարգից, այն է, որ կրթությունը երիտասարդին պատրաստում է «կյանք մուտք գործելու» համար, այսինքն՝ ապահովում է մուտքը աշխատաշուկա: Այս տեսանկյունից կրթությունը դիտարկվում է որպես նախապատրաստական փուլ, որը «դեռ կյանքը չէ»: Շատ երիտասարդներ այս վիճակում են անցկացնում իրենց կյանքի ¼-ը՝ մոտ 18-20 տարի, և շատ հաճախ չեն ստանում խոստացված պարգևը՝ լավ աշխատանքը, որից ենթադրաբար կախված է իրենց բարեկեցությունը:

Պետք է նշել նաև, որ ինդուստրիալ հասարակարգում անհատական կարիերայի գծային մոդելը (աշակերտ – ուսանող – լաբորանտ - կրտսեր գիտաշխատող - ավագ գիտաշխատող – ակադեմիկոս - մահ) ևս ենթարկվում է էական փոխակերպումների, քանի որ ավելի ու ավելի հաճախ ենք տեսնում կարիերայի և գործունեության ոլորտի այնպիսի կտրուկ փոփոխություններ, որոնք ժամանակին դիտվում էին որպես պատմական անեկդոտներ (բորսային բրոքեր Գոգենը գնում է Թահիթի և սկսում զբաղվել նկարչությամբ): Այստեղ անհրաժեշտ է վերլուծել հնարավոր ոչ գծային զարգացման մոդելների հնարավորությունը և դրա արդյունավետ իրականացման մեխանիզմները:

Անհրաժեշտ է քննարկել նաև կրթական համակարգի աշխատանքային դաշտին և դրա հիմնական արդյունքին վերաբերող խնդիրը: Ինդուստրիալ հասարակարգի կրթական համակարգում հիմնական աշխատանքը տարվում էր մարդու ինտելեկտուալ ունակությունների և այն հմտությունների զարգացման ուղղությամբ, որոնք կարող էին պետք գալ աշխատաշուկայում: Այժմ կրթական ոլորտի շատ տեսաբաններ կարևորում են ինտելեկտուալ դաշտի աշխատանքի համադրումը այսպես կոչված «էմոցիոնալ գրագիտության» կամ «էմոցիոնոնալ ինտելեկտի» զարգացման հետ: Այստեղ կարևորագույն դեր ունեն զգայական դաշտի վերաբերյալ բազային գրագիտության խնդիրները, դրա հետ աշխատանքի հմտությունները, ինֆորմացիոն և զգայական հիգիենան, գեղագիտական դաստիարակությունը և մեծ առումով ներդաշնակ կերպով զարգացած մարդկային էակ լինելու հիմնախնդիրը, որը մարդ լինելը դիտարկում է ոչ թե որպես աբստրակցիա, որն իրեն տրված է «ըստ սահմանման» ծննդյան վկայականի հետ, այլ որպես աշխատանք, որը պետք է տարվի մարդկային ներուժը լիարժեք իրացնելու և մարդկությանն ընդհանուր առմամբ ավելի մեծ չափով օգտակար լինելու համար:

Այս համատեքստում անհրաժեշտ է խոսել նաև այն բազային ունակությունների մասին, որոնց անտեսումն անհնար է դարձնում կրթական կամ աշխատանքային ոլորտում որևէ լուրջ հաջողության հասնելը՝ ընդհուպ մինչև վտանգելով այնտեղ մասնակցություն ունենալու հնարավորությունը: Դրանք են՝ ուշադրությունը, կենտրոնացումը, հիշողությունը, ռեֆլեքսներն, էմպատիան և սեփական մտավոր ու զգայական դաշտի կառավարման նվազագույն ունակությունները: Թեև դրանք առերևույթ ներառված են կրթական ծրագրերում, բայց վերջին տասնամյակում աշխարհի մակարդակով սրանց բացակայությունից առաջացած խնդիրների մեծ աճ է գրանցվում: Տեղեկատվական սպառողական հասարակարգում, որի էներգաինֆորմացիոն ընդհանուր դաշտը բավականին աղտոտված է, հատկապես այս ունակություններն են, որ մի կողմից՝ հայտնվում են հարվածի տակ, մյուս կողմից՝ սրանց առկայությունն ու հզորությունն են, որ թույլ են տալիս սեփական կառավարման տիրույթում պահել կյանքի հիմնական առաջնայնությունները և ռազմավարական զարգացման խնդիրները:

4.1.4. Աշխատաշուկայի փոխակերպումները և մասնագիտական կողմնորոշման համակարգը

Վերջին տասնամյակի ինտենսիվ զարգացումները տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների և արդյունաբերության համակարգչայնացման և ավտոմատացման ոլորտներում հանգեցնում են առկա աշխատատեղերի պատկերի ավելի ու ավելի արագացող փոփոխությունների: Ակներևաբար սրանք երկարաժամկետ հեռանկարում մեծ ազդեցություն են ունենալու թե՛ կրթական դաշտի և թե՛ աշխատաշուկայի վրա: Դեռևս 2013թ. ԱՄՆ-ում Ֆրեյի և Օսբորնի իրականացրած հետազոտությունը[106] ցույց տվեց, որ ԱՄՆ-ում առաջիկա երկու տասնամյակի ընթացքում աշխատատեղերի և մասնագիտությունների 47%-ը ավտոմատացվելու կամ վերանալու է: Հետևաբար, մի շարք մասնագիտություններ, որոնց ուղղությամբ ներկայում սովորում են մեծ թվով երիտասարդներ, այլևս գոյություն չեն ունենալու:

Չնայած, որ զարգացած և զարգացող երկրների պատկերներն այս տեսանկյունից տարբեր են, և միգուցե կլինեն տարբերություններ փոխակերպումների տեմպերում, սակայն այս գործընթացներն անխուսափելիորեն տեղի են ունենալու նաև ՀՀ-ում: Համապատասխանաբար, կրթական ոլորտի ու զբաղվածության աջակցության ռազմավարության ու ծրագրերի փոփոխումը պետք է սկսել հենց այժմ, որպեսզի չվերադառնանք խնդիրների լուծման՝ նախորդ բաժնում քննարկված post factum տարբերակին:

[106] The Future of Employement: how susceptible are jobs to computerization?., Carl Benedikt Frey and Michael A. Osborne, September 17, 2013

Եթե ընդամենը մեկ տասնամյակ առաջ ավտոմատացումը և համակարգչայնացումն անդրադառնում էին միայն մեխանիկական աշխատանքներին, ապա վերջին հինգ տարում արհեստական բանականության աճող հաջողությունները հանգեցնում են նրան, որ նախկինում միայն ճկունություն, դատողություն պահանջող աշխատանքներին փոխարինելու է գալիս համալիր մտածողությամբ պայմանավորված գործելակերպը: Գրականության մեջ քննարկվում է[107] նաև այն հեռանկարը, որ տեխնոլոգիաների ազդեցությամբ դուրս մղված մասնագիտացումների և աշխատատեղերի փոխարեն կստեղծվեն նոր տիպի աշխատատեղեր, որոնց մասին մենք առայժմ ամբողջական պատկերացնում չունենք, այնպես որ, աշխատաշուկայի փլուզում տեղի չի ունենա: Սակայն նույնիսկ այս թեզի ճշմարտացիության պարագայում այժմվանից պետք է լրջորեն ուսումնասիրվեն զարգացման միտումները և հնարավոր սցենարները: Պետք է զուգահեռ աշխատանք տարվի կրթական ծրագրերի արդիականացման և հասարակության գիտակցության փոփոխման ուղղությամբ: Միայն այդ դեպքում առաջիկա տասնամյակներում մենք կունենանք արդիական գիտելիքներով, հմտություններով և մոտեցումներով զինված երիտասարդություն, որը և կարող է արագորեն հարմարվել ստեղծված նոր իրավիճակին:

Այստեղ խիստ կարևոր է չսահմանափակվել միայն մասնագիտությունների ցանկերի փոքր կամ մեծ փոփոխություններով, այլ նաև վերանայել գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի դաշտը: Կարևոր է գիտակցել, որ փոփոխության ճանապարհին են նաև աշխատող-գործատու հարաբերությունները, փոփոխվում են կառավարման գործիքներն ու մեթոդները, մոտիվատորների դաշտերը և աշխատավայրերի, աշխատանքի կազմակերպման՝ ժամանակին անսասան համարվող մի շարք հիմնասյուներ:

Այսպես օրինակ, լուրջ մարտահրավերի առաջ է կանգնած գործատու-աշխատող հարաբերությունների երկարաժամկետ տրամաբանությունը, որը նախկինում կարող էր մեկ գործատուի միջոցով որոշել մարդու ողջ կյանքի աշխատանքային գործունեությունը[108]: Այժմ գործատուների մի մասն արդեն կորցնում է աշխատողի վրա միանձնյա տիրապետման իրավունքը:

Նույն օրինաչափությունը կարելի է տեսնել ինքնազբաղված (ֆրիլանսերական) ոճի բազմաթիվ երիտասարդ աշխատողների դեպքում, որոնք արդեն չեն աշխատում «իմ գրասենյակ և իմ գրասեղան» սխեմայով:

> Օրինակ, տաքսի վարող երիտասարդն իր հեռախոսում (կամ իր մի քանի հեռախոսներում) մի քանի ծառայությունների հավելվածներ ունի և լուծում է օպտիմալացման բավականին լուրջ խնդիրներ, որոշելով, թե օրվա այդ ժամին և այդ տարածքում ո՛ր ծառայության պատվերների սպասարկումն է իրեն ավելի ձեռնտու: Այդպիսի մոտեցում չորդեգրած և միայն մեկ կազմակերպության հետ աշխատող վարորդի օրական հասույթը կարող է 2-3 անգամ պակաս լինել նկարագրված օրինակով առաջնորդվող վարորդի հասույթից:

Ընդհանուր առմամբ, եթե X սերունդը[109] հակված էր սպառելու և ունենալու, անձնական կարիքները բավարարելուն, ապա Y սերնդի ներկայացուցիչներն արդեն միտված են առաջնայնությունը տալու ճանաչմանը, հաղորդակցությանը և կիրառմանը, այլ ոչ թե անձնական սեփականության սկզբունքով ինչ-որ բաներ ՈՒՆԵՆԱԼՈՒՆ: Վերջիններս գերադասում են կիրառելու և վարձակալելու հնարավորություն ունենալ, մի բան, որն իր հերթին մեծապես կազդի աշխատաշուկայի և բիզնեսի կառավարման սխեմաների վրա (կիսելու/sharing վրա հիմնված բիզնես մոդելների կիրարկում, համատեղ աշխատանքի տարածքներ (co-working) և այլն):

Սակայն այս դաշտում ամենամեծ փոփոխությունները կատարվելու են Աշխատանքի միջազգային կազմակերպության զեկույցում նկարագրված չորս հիմնական ոլորտների ազդեցությամբ, որոնք առաջիկա տասնամյակում արմատականորեն փոխելու են աշխատաշուկայի պատկերը: Դրանք են՝ արհեստական բանականությունը (Artificial Intelligence), ռոբոտաշինությունը (Robotics), իրերի համացանցը (Internet of things) և լրացված իրականությունը (Augmented reality)[110]:

Արագ փոփոխվող նման իրավիճակում անհնար է թերագնահատել մասնագիտական կողմնորոշման նորացված համակարգերի դերը: Այս համակարգը պետք է ոչ միայն հաշվի առնի ոլորտի խնդրահարույց դաշտի

[107] Global Employment Trends for Youth 2017: Paths to a better working future, International Labour Office – Geneva: ILO, 2017

[108] Jeannet-Milanovic, A.; O'Higgins, N.; Rosin, A. 2017. "Contractual arrangements for young workers," in N. O'Higgins (ed.): Rising to the youth employment challenge: New evidence on key policy issues, pp. 113–162.

[109] "Millennials and the Sharing Economy: European Perspectives", 2017, Giulia Ranzini,, Gemma Newlands, Guido Anselmi , Alberta Andreotti, Thomas Eichhorn, Michael Etter,, Christian Hoffmann,, Sebastian Jürss, , and Christoph Lutz, Report from the EU H2020 Research Project Ps2Share: Participation, Privacy, and Power in the Sharing Economy

[110] Global Employment Trends for Youth 2017: Paths to a better working future, International Labour Office – Geneva: ILO, 2017

վիճակը (այսինքն՝ ունենա ռեակտիվ բնույթ), այլև առաջիկա տասնամյակների փոխակերպման հավանական սցենարների վերաբերյալ վերլուծական նյութ ունենա և հիմնվի երկրի զարգացման ընդհանուր տեսլականի վրա, իրեն տեսնի ոչ միայն պրոբլեմներ լուծողի, այլև ապագա կառուցողի դերում:

Աշխատաշուկայի զարգացման պլանավորման և մասնագիտական կողմնորոշման համակարգերի մասին խոսելիս, ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում ևս ուրվագծվում է մի դիսկուրս՝ ռազմավարությունների կառուցման գործընթացում տեխնոլոգիական և ոչ տեխնոլոգիական ուղղությունների զարգացման ճիշտ հաշվեկշիռը:



Այսօրվա բիզնես միջավայրում SS ոլորտի հաջողված դեպքերի ցանկը բավականին մեծ է և տեխնոլոգիական ձեռնարկությունները շարունակում են արագ թափով զարգանալ և մեծ հաջողությունների հասնել: Հայաստանում ունենք երիտասարդ ինժեներների թիմի Yecup սմարթ թերմոսի ծրագիրը, որը Indiegogo-ում հավաքել է 400,000 ԱՄՆ դոլար[111], իսկ PicsArt Studios ձեռնարկությունը ավելի քան 45 միլիոն դոլար ինվեստիցիաներ ստացավ[112]:

Իսկապես, տեխնոլոգիական ստարտափների դերը տեղեկատվական հասարակարգում դժվար է թերագնահատել, սակայն պետք է հասկանալ, որ այդ տիպի կազմակերպությունների աշխատատեղեր գեներացնելու ներուժը խիստ առանձնահատուկ է և ոչ շատ մեծ: Այսպես, «Ինստագրամը», որը 2012-ին մեկ միլիարդ դոլարով գնվեց «Ֆեյսբուքի» կողմից, այդ պահին ուներ միայն 13 աշխատակից և 9 ներդրող[113]: Այս տեսանկյունից մի քանի փոքր համայնքահեն սոցիալական ձեռնարկության ազդեցությունը հասարակության բարեփոխումների գործընթացի վրա կարող է ավելի մեծ լինել, քան նշվածներից որևէ մեկի նման հաջողված տեխնոլոգիական ստարտափինը:

4.1.5. Բիզնեսի սոցիալականացման միտումը…

2008-2010 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի շրջանում աննախադեպ կերպով սկսեց զարգանալ բիզնես ոլորտի դրական սոցիալական առաքելության անհրաժեշտության թեման: Այս ոլորտի շուրջ մինչև այդ էլ քննարկումներ են եղել, բայց շատ հատվածային և մասնագիտական մակարդակում: Մինչդեռ այդ թվականներին թե՛ գործարար հատվածի, թե՛ ազգային պետությունների և թե՛ միջազգային համայնքի կողմից սկսեցին համակարգային քայլեր կատարվել սոցիալական ազդեցությամբ ներդրումների (social impact investment) խթանման ուղղությամբ: Դրան համընթաց տնտեսական և սոցիալական զարգացման օրակարգերի անբաժանելի մասը դարձավ սոցիալական ձեռնարկատիրության ոլորտը: Ավելի համակարգային մոտեցում ցուցաբերվեց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտին: Եվ, ընդհանուր առմամբ, բիզնեսները շրջվեցին դեպի առավելապես սոցիալական առաքելություն իրականացնող կառույցներ:

Սոցիալական ազդեցությամբ ներդրումներն ամենամեծերից մինչև ամենափոքր ներդրողներին հնարավորություն են տալիս իրենց դրական սոցիալական փոխակերպման գործընթացների մաս զգալու: Սա մարդկային տեսանկյունից խիստ կարևոր է, քանի որ քաղաքակրթությունը կանգնած է համաշխարհային այնպիսի մարտահրավերների առաջ, ինչպիսին է, օրինակ, գլոբալ տաքացումը:

[111] https://www.indiegogo.com/projects/yecup-365-your-all-season-smart-mug

[112] https://en.wikipedia.org/wiki/PicsArt_Photo_Studio

[113] https://www.businessinsider.com/instagram-employees-and-investors-2012-4

Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից 2015թ-ից գործում է Սոցիալական ազդեցությամբ ներդրումների ինստիտուտը կայացնելուն միտված ծրագիր, որի շրջանակներում կստեղծվի Սոցիալական ազդեցությամբ ներդրումները կազմակերպող հիմնադրամ, որը կունենա իր սոցիալական ազդեցության պլանավորման և չափման կառույցը: Արդեն գործում է սոցիալական ազդեցությամբ ստարտափների ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագիր: Մասնավորապես, Շիրակի մարզի ֆերմերային տնտեսությունների համար իրականացվում է կովերի կաթնատվության բարձրացման նորարարական մեխանիզմ, որը նույնպես հիմնված կլինի չափելի սոցիալական ազդեցությամբ ծրագրերի ֆինանսավորման սկզբունքի վրա:

Երիտասարդությունը տեսնում է, որ իրավիճակը բարդանում է և, եթե որևէ բան չձեռնարկվի, աղետալի հետևանքներն անխուսափելի են, իսկ այդ աղետի հետ իրենց սերնդի հանդիպման հավանականությունն ավելի մեծ է, քան նախորդինը: Սոցիալական ազդեցությամբ ներդրումներն իդեալական գործիք են նման դաշտում համակարգված և լայնածավալ ծրագրեր իրականացնելու համար: ՀՀ-ում, իհարկե, սոցիալական ներդրումների ինստիտուտը դեռ սաղմնային զարգացման փուլում է: Բայց հաշվի առնելով սփյուռքի և մասնավորապես սփյուռքի երիտասարդ գործարար հատվածի ներուժը՝ այս ոլորտին պետք է լրջագույն ուշադրություն հատկացվի:

Սահմանումներ

«Սոցիալական ազդեցությամբ ներդրումները (social impact investments) ներդրումներ են այնպիսի բիզնեսներում, որոնք նախապատվությունը տալիս են ոչ թե ցածր ռիսկայնություն և արագ ու մեծ շահութաբերություն դրսևորող, բայց սոցիալական խնդիր չլուծող բիզնես գաղափարներին, այլ դրական սոցիալական նշանակություն և ազդեցություն ունեցող ապրանքների արտադրությանն ու ծառայություններին»

«Սոցիալական ձեռնարկատիրությունը (social entrepreneurship) ձեռնարկատիրական գործունեության տեսակ է, որը սոցիալական խնդիրների լուծումը և սոցիալական շահը դնում է իր բիզնես մոդելի հիմքում, և որը իր շահույթի մեծ մասը ներդնում է դրական սոցիալական փոփոխությունների ձևավորման և սոցիալական մարտահրավերների լուծման համար»

«Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն (corporate social resposibility) ասելով՝ հասկանում ենք տնտեսվարող ձեռնարկությունների այն գործառույթները, որոնք արտահայտում են ընկերության շահագրգիռ մոտեցումն իրենց անմիջական համայնքի կամ ավելի գլոբալ խնդիրներին, երբ ընկերությունն իր շահույթից որոշակի բաժին է հատկացնում տնտեսական, սոցիալական, բնապահպանական կամ որևէ այլ հանրային կարևորության խնդրի լուծմանը»

Հետաքրքրական հնարավորություններ են ստեղծվում հատկապես այն նոր հարթակների և տեխնոլոգիաների հատման կետերում, ինչպիսիք են տարբեր տիպի քրաուդ (crowdfunding, crowdwork, crowdsourcing) հարթակները, բլոկչեյն տեխնոլոգիաները, որոնք ողջ աշխարհով մեկ մեծ թափ են առնում և արմատական փոխակերպման են ենթարկում ֆինանսական շուկան, ֆինանսական ծառայությունների աշխարհը, սոցիալական ձեռնարկատիրությունը, արհեստական բանականության վրա հիմնված տեխնոլոգիաները և այլն: Ըստ սահմանման՝ նոր մտածելակերպ պահանջող այս տեխնոլոգիաների համար երիտասարդներն ավելի բաց են և պատրաստ: Սակայն արդյունք չի լինի, եթե նրանց հիմնարար պատրաստվածությունը մնա այսօրվա մակարդակին և չլինեն հենց այս թիրախներին ուղղված ռազմավարական աջակցության ծրագրեր:

4.1.6. Երիտասարդների տնտեսական հզորացումը և դրա սոցիալ-քաղաքական ներուժը

Խնդրահարույց է, երբ երիտասարդներն աշխատավայրին նայում են որպես մի տեղ, ուր իրենք գնում են վաճառելու իրենց կոմպետենցիաները: Այս տեսանկյունից հենց «աշխատաշուկա» տերմինը ներառում է նախորդող հասարակարգերից եկած ատավիստական իմաստային ծանրաբեռնում (այսինքն՝ մի տեղ, որտեղ վաճառում կամ գնում են աշխատանք): Ժամանակակից հասարակության մեջ մարդը պետք է հասկանա, թե իր տաղանդը, ցանկությունները և ունակությունները որտեղ կարող են առավելագույնս արդյունավետորեն ծառայել իր անհատական զարգացմանը (անձնային, տնտեսական, ցանցային, մտահորիզոնային և այլն) և համայնքի/հասարակության կարիքները բավարարելուն: Տարօրինակ չէ բիզնեսների սոցիալական առաքելությունների փնտրտուքը. մարդիկ, և հատկապես երիտասարդները, այլևս չեն ուզում անիմաստ բաներով զբաղվել: Առաջնահերթ պետք է դիտարկվի իմաստի խնդիրը. ինչն է իմ արածի իմաստը ինձ համար, և ինչն է դրա իմաստը ուրիշների համար:

Հայկական իրականությունից մի քանի կոնկրետ օրինակների հիման վրա դիտարկենք երիտասարդների տնտեսական հզորացման ուղիներն ու արդյունքները: Պարզ է, որ այս վերլուծությունը հեռու է ամբողջական լինելուց: Կարևոր է ընդգծել, որ երիտասարդների տնտեսական հզորացման ազդեցության հիմնական թիրախը նախ և առաջ հենց իրենք՝ երիտասարդներն են: Հայաստանի տարբեր մարզերի օրինակները ցույց են տալիս, որ հենց տեղական համայնքներում դրական տեղաշարժեր ապահովելու գործում շատ լուրջ ներուժ կա:

Ներդիր 4.1

Արտուշ Խաչատրյան

Համայնքային մոբիլիզացիա և տնտեսական զարգացում (35 տ.)

Ահա թե ինչ էր ասում Գեղարքունիքի մարզում գործող «Սարերի բարիք» սոցիալական ձեռնարկության (հիմնադրված Եվրամիության աջակցությամբ՝ «Համայնքային զարգացում սոցիալական ձեռնարկատիրության միջոցով» ծրագրի շրջանակներում) ղեկավար Արտուշ Խաչատրյանը. «Իմ սոցիալական ձեռնարկության առաջին տարվա ամենակարևոր հաջողություններից մեկը համարում եմ այն, որ մեր ակտիվ աշխատանքը տեսնելով՝ երիտասարդ ընկերներիցս մեկը որոշեց այս տարի չմեկնել արտագնա աշխատանքի»: «Սարերի բարիքը» տնտեսական զբաղվածություն է ապահովում համայնքի 35 ընտանիքների համար: Այս տեսանկյունից հատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն ծրագրերը, որոնք արտադրական կամ այլ տնտեսական գործընթացում համախմբում են տարբեր սերունդների և սեռերի ներկայացուցիչների, քանի որ տնտեսական ոլորտում պետք է անպայման խրախուսվի համերաշխությունը:

Նման ծրագրերի և աջակցման մեխանիզմների ազդեցությունը նախ և առաջ երևում է աշխատատեղերի կամ ժամանակավոր աշխատանքների հնարավորությունների ստեղծումով, հատկապես այն մարզերում, որոնցում տարածված է արտագնա աշխատանքը:

Ներդիր 4.2

Գոհար Մնացականյան

Կանանց տնտեսական հզորացում և գենդերային կարծրատիպեր (34 տ.)

Արվեստանոց թեյարանը հիմնադրել է Գոհար Մնացականյանը՝ Եվրամիության աջակցությամբ՝ «Համայնքային զարգացում սոցիալական ձեռնարկատիրության միջոցով» ծրագրի շրջանակներում: Այժմ արդեն բավականին արդյունավետ կերպով իրականացվող այս ծրագրի նպատակը Սևան քաղաքում ստեղծարար մտածելակերպի և արվեստների կենտրոն հիմնելն է: Երբ ծրագրի արդյունավետության գնահատման մոնիտորինգային խմբի մասնակիցներն իրենց անվերջ հարցերով հոգնեցրին Գոհարին, նա ասաց. «Գիտեք որն է մեր ամենամեծ սոցիալական ազդեցությունը, դա այն է, որ Սևանում ամեն օր տեսնում են, որ երկար մազերով աղջիկը կարող է սրճարան ունենալ ու ամբողջ օրը լինել այնտեղ»:

Ազդեցության մի նոր տեսակի մասին պետք է խոսենք Շիրակի մարզի Կրաշեն գյուղի սոցիալական ձեռնարկատեր Հռիփսիմե Պետրոսյանի՝ «Տրակտորիստ աղջկա» և Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում Գոհար Մնացականյանի ղեկավարած «Բոհեմ» արվեստանոց-թեյարանի օրինակները քննարկելիս: Երկուսն էլ գտնվում են ՀՀ այն մարզերում, որտեղ գենդերային կարծրատիպերը բավականին լուրջ խնդիր են ներկայացնում և երկուսն էլ ուղղակիորեն մարտահրավեր են նետում դրանց:

Պետք է արձանագրել, որ վերջին տասնամյակում բավականին ակտիվացել են այն ինկուբացիոն և աքսելերացիոն տարաբնույթ գործընթացները, որոնք խթանում են ՀՀ ամենատարբեր թիրախ խմբերի ձեռնարկատիրական ունակությունները և բիզնես նախաձեռնությունների աջակցությունը: Այս գործընթացների մասնակիցները հիմնականում երիտասարդներ են: Եվ սա բնական է, քանի որ երիտասարդներն են հասարակության դինամիկ և եռանդուն մասը, որը պատրաստ է նախաձեռնել և իրականացնել նոր ծրագրեր: Վերջին տարիներին ձևավորվել է նաև ուսուցանողների, կրթական մեթոդների բավարար պաշար, որն այս դաշտի տեղական և միջազգային դերակատարներին թույլ է տալիս իրականացնել բիզնես կրթության և բիզնես նախաձեռնությունների աջակցման բազմաբնույթ միջոցառումներ:

Պետք է նշել, որ այս դաշտի հիմնական խնդիրներից մեկը տարբեր կառույցների կողմից իրականացվող, սակայն չհամակարգված ծրագրերն են, որոնց շրջանակներում հաճախ աշխատում են միևնույն համայնքների միևնույն մարդկանց հետ: Սա երբեմն հանգեցնում է հետաքրքրության անկման և ռեսուրսների փոշիացման: Ազգային և միջազգային դերակատարների լուրջ համախմբումը և ծրագրերի համակարգումն այս դեպքում մեծապես կնպաստի երիտասարդների տնտեսական հզորացման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

Ներդիր 4.3

Հռիփսիմե Պետրոսյան

«Տրակտորիստ աղջիկը» Կրաշեն գյուղից (33 տ.)

Հոլանդիայի դեսպանատան աջակցությամբ ԿԱՋԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում Հռիփսիմեն որոշել էր անդրադառնալ այն հարցին, որ որոշ մասնագիտություններ և աշխատանքներ ավանդաբար համարվում են «կանացի» կամ «տղամարդկային»: Ծրագրի շրջանակներում նա տրակտոր գնեց, սովորեց այն վարել և դրանով իրականացնել տարբեր գյուղատնտեսական աշխատանքներ, որոնց մի մասը վերջին տարիներին չէր էլ տարվում իրենց գյուղում: Ծրագիրը գործում է մինչև այժմ, և «Տրակտորիստ աղջկա» օրինակը փոփոխություն է առաջ բերել ոչ միայն այս համայնքում, այլ նաև ՀՀ այլ մարզերում: Դրանից հետո Հռիփսիմեն հիմնել է հավաքածուարան և հիմա, տրակտորը և հավաքածուարանը հանձնելով ծնողներին, նոր հմտություններ է սովորում և նոր ծրագրեր մշակում:

Վերը բերված օրինակները խոսում են հօգուտ այն թեզի, որ հիմնական քաղաքականություններն ու ծրագրերը պետք է կենտրոնանան ոչ թե երիտասարդների համար ավելի շատ աշխատատեղերի ստեղծման, այլ այնպիսի երիտասարդների պատրաստման և աջակցման վրա, որոնք իրենք ավելի շատ աշխատատեղեր կստեղծեն..

Ներդիր 4.4

Ռոբերտ Ղուկասյան

Գործարար, Կալավան (39 տ.)

Նոր մոտեցումների շարքում շատ կարևոր է հիշատակել 2017 թ. Ճամբարակի գյուղապետի ընտրությունները: Չնայած, առկա էր ՀՀԿ «համապատասխան» թեկնածուն, ընտրություններն այս անգամ այլ ընթացք ստացան: Այդ մարզի մի քանի երիտասարդ գործարարներ իրենց ընկերների հետ որոշել էին, որ այս ընտրությունները տարբերվելու են նախորդներից: Նրանցից երկուսին՝ Արտուշին և Ռոբերտին, երկրի նախկին նախագահը ոսկե մեդալներ էր շնորհել համայնքային զարգացման ոլորտում կարևոր ներդրման համար: Այդ պարգևների գործոնը, համադրված մեդիա ոլորտում գրագետ աշխատանքի հետ, ինչպես նաև իսկապես գերազանց համայնքահեն բիզնեսների առկայությունը, ինչը ապահովել էր համայնքում բավականին բարձր վարկանիշ, բերեցին ՀՀԿ թեկնածուի պարտության և վերը նշած թիմի կողմից առաջադրված նոր դինամիկ երիտասարդ թեկնածուի՝ Վազգեն Ադամյանի ընտրությանը: Այստեղ հետաքրքրիր կապ է նկատվում երիտասարդների տնտեսական հզորացման և քաղաքական-քաղաքացիական մասնակցության միջև, մի բան, որ նույնպես պետք է հաշվի առնել այս գործընթացներին անհրաժեշտ ներուժի գնահատման ժամանակ:

4.2. Չօգտագործված ռեսուրսներ և հնարավորություններ

4.2.1. Միջսերնդային երկխոսություն՝ փոխանցում, թե՞ փոխանակում…

Երիտասարդների կյանքում կարևոր դեր ունի ինքնուրույն մտածելակերպի և գործելակերպի հնարավորություն ստանալու փուլը: Երբ երիտասարդն անցնում է իր կյանքի պատասխանատու շրջանը, անհրաժեշտություն է առաջանում որոշ առումով կտրելու այն «էներգաինֆորմացիոն պորտալարը», որը մինչև այդ իրականացնում էր սնուցման և կառավարման ֆունկցիա: Սա հիմնականում արտահայտվում է ծնող-զավակ հակամարտության տարբեր ձևաչափերով:

Այս գործընթացը նորմալ է և օրինաչափ, սակայն մոլորակի բնակչության մեծամասնությունն այս ոլորտի և դրա օրինաչափությունների վերաբերյալ ունի իմացության և այս գործընթացների կառավարման բավականին ցածր մակարդակ: Այդ իսկ պատճառով այս ոլորտում խնդիրների առաջացման պարագայում որոշ արևմտյան հասարակություններում որոշակի տարիքում ծնողների և երեխաների հարաբերությունները գրեթե ընդհատվում են: Կոնկրետ տարիքի հասնելուց հետո երիտասարդը դուրս է գալիս ազատ նավարկության և կյանքի հետագա ընթացքի համար ամբողջական պատասխանատվությունը մնում է իր վրա:

Պետք է նշել նաև, որ արտաքին աշխարհում այժմ առկա ուղղորդողներից և ուղենիշներից բազմիցս խաբված լինելը, ավագ սերնդի կողմից շատ անգամ օգնություն չստանալը և երբեմն նաև ակնհայտ ապակողմնորոշող ուղենիշներ ստանալը հանգեցնում է որոշ առումով ինքնաբավ վիճակի, երբ ըստ սահմանման՝ կասկածի տակ է առնվում այն ամենը, ինչ կարող են ասել կամ խորհուրդ տալ ավագ սերնդի ներկայացուցիչները: Ձևավորված պաշտպանական համակարգը գործում է առանց ընդհատումների և համատարած: Դա արտահայտվում է նաև ցանկացած հեղինակություն և հնարավորություն ժխտող որոշակի հակահիերարխիկ իմպուլսի տեսքով: Մինչդեռ կարելի էր շատ հարցերի պատասխաններն ստանալ ավագ սերնդի աջակցությամբ:

Այս իրավիճակը հատկապես խոշոր ծավալ ստացավ տեղեկատվական հասարակարգ մուտք գործելու վերջին տարիներին, երբ նախորդ հասարակարգերում առկա գործոնների փաթեթի վրա ավելացավ նաև տարբեր սերունդների միջև առաջացած թվային ճեղքվածքը: Այն գործողությունները, որ պետք է կատարվեն տեղեկատվական տեխնոլոգիաների դաշտում, նոր սերնդի համար բնական և հեշտ են, իսկ ավագ սերնդի համար նույն խնդիրները բավական մեծ բարդությունների հետ են կապված:

Նշված բոլոր գործոնները կարող են դիտարկվել որպես ճեղքվածքներ և հիմնախնդիրներ, սակայն մեկ այլ տեսանկյունից դիտարկելիս այստեղ կարելի է հսկայական ռեսուրս տեսնել: Ավագ սերունդներն ամեն պարագայում իրենց կյանքի ընթացքում կուտակել են գիտելիքի և իմաստության բավականին լուրջ պաշար, որը հարաբերություններ խզելու պարագայում պարզապես հայտնվում է վիրտուալ աղբարկղում և դուրս մղվում ընդհանուր քաղաքակրթության օպերացիոն դաշտից: Մյուս կողմից՝ հաղորդակցական տեխնոլոգիաների դաշտում երիտասարդ սերնդի բարձր ունակությունները հաճախ գիտելիքների լուրջ հենք չեն ունենում և համապատասխանաբար կարող են հանգեցնել կա՛մ տեղեկատվական օվկիանոսում երկար տարիների քաոսային նավարկության, կա՛մ կյանքի տարբեր ոլորտներում մի շարք ծանծաղ նախագծերի, որոնք լուրջ համակարգային ազդեցություն չեն ունենա:

Այստեղ ամենակարևոր խնդիրներից մեկը նախորդ հասարակարգում ապրած սերունդների մոտ գիտելիքի մենաշնորհային տիրապետման մոդելի առկայությունն է: Սա հաճախ հանգեցնում է ավագներից երիտասարդներին գիտելիքների փոխանցման հիերարխիկ՝ «վերևից ներքև» մոդելով տարածված պրակտիկային: Այսօր, երբ գիտելիքների դաշտն այլևս բացարձակ մենաշնորհային չէ, փոխանցման այս մոդելն այլևս իրավաչափ չէ, և ավելի ճիշտ կլինի մշակել այնպիսի համակարգեր, որտեղ երկու, երեք, նույնիսկ չորս տարբեր սերունդներ կկարողանան իրենց կենսափորձը փոխանցել միմյանց և համատեղ նախագծեր իրականացնել: Այսպիսով բոլորը կկարողանան ներդնել իրենց ուժեղ կողմերը և տարբեր սերունդների կուտակած պաշարը ի սպաս կդրվի ընդհանուր գործին: Եվս մեկ բան, որ գուցե ամենակարևորն է՝ չի լինի զարգացման օրակարգը և սցենարները որոշող մենաշնորհային կողմ. հասարակության գործունեության օրակարգը և առաջնայնությունները կկառուցվեն ըստ միջսերնդային համաձայնության և ընդհանուր հետաքրքրության:

4.2.2. Երիտասարդության բազմազանությունը՝ որպես իրողություն և ռեսուրս

Դեռևս 1990-ականներից վերսկսեց գործել ՀՀ երիտասարդական քաղաքականության դաշտը, և ձևավորվեցին երիտասարդների հետ պետական աշխատանքի նոր սկզբունքներ, քաղաքականություններ, կառույցներ, ծրագրեր: Առաջին հայացքից անցած ժամանակաշրջանը բավականաչափ երկար է՝ ավելի քան քառորդ դար:

Սակայն այն վերլուծելիս չպետք է մոռանալ, որ երիտասարդական քաղաքականության դաշտը ձևավորվում էր նորանկախ պետության կառուցման բավական ծանր գործընթացներին զուգընթաց և երիտասարդական քաղաքականությունը և ծրագրերը երբեք չեն եղել պետության հիմնական առաջնայնությունների շարքում: Երիտասարդական նոր քաղաքականության և ծրագրերի դաշտը չի առնչվել ՀՀ բոլոր տիպի երիտասարդների հետ: Հիմնական ծրագրերն ուղղված են եղել, այսպես կոչված, «կազմակերպված» երիտասարդությանը, նրանց, ովքեր այս կամ այն կերպ ներգրավված են ուսանողական, հասարակական կամ կուսակցական մարմիններում, ինչպես նաև դրանց հարակից և նրանց հետ առնչվող երիտասարդներին, որոնց թիվը ևս շատ մեծ չէր:

Բնականաբար, վերը նշված խումբը կազմում է ՀՀ ընդհանուր երիտասարդական դաշտի շատ փոքր մասը: Առանց հստակ ձևակերպված ներառական բաղադրիչի՝ այդպիսի երիտասարդական քաղաքականությունների և ծրագրերի համախումբը հակված է նման իրավիճակը վերարտադրելուն: Ուստի, ճիշտ չէ այդ քաղաքականությունների և ծրագրերի ծածկույթի ավտոմատ ընդլայնմանն սպասելը:

Մինչդեռ հասկանալի է, թե ինչ հսկայական սոցիալական, քաղաքական-քաղաքացիական, մշակութային և տնտեսական ներուժ է թաքնված երիտասարդության՝ այս ամենից անմասն մնացած հատվածում: Այստեղ կարելի է դիտարկել նաև բազմաթիվ խմբեր, որոնց հետ աշխատելն ավանդաբար այս կամ այն պատճառով անհնար կամ դժվար է համարվել: Դրանց թվում է երիտասարդության այն ստվար մասը, որը ծառայում է ազգային բանակում (ժամկետային կամ այլ ծառայության մեջ է): Մեկ այլ խումբ են երիտասարդ մայրերը, որոնք հղիության ժամանակահատվածից և ծննդաբերությունից հետո ընկած մի քանի տարիներին մեծամասամբ դուրս են մնում հասարակական կյանքի բազմաթիվ ոլորտներից: Մյուս խումբն աշխատող երիտասարդությունն է, ներառյալ պարբերաբար աշխատանքային միգրացիոն գործընթացներում ներգրավված մարզաբնակ երիտասարդները:

Քաղաքականությունների և ծրագրերի դաշտից գրեթե դուրս են բազմազան երիտասարդական ենթամշակութային այն խմբերը, որոնք ունեն իրենց ինքնակազմակերպման ձևերը և տեղյակ էլ չեն, որ մեր պետությունն ըստ սահմանման ունի բոլոր երիտասարդներին ուղղված ծրագրեր և աջակցության սխեմաներ:

Ներդիր 4.5

Նազելի Թովմասյան

YES Armenia ծրագիր (25 տ)

Նազելի Թովմասյանը մասնագիտությամբ տնտեսագետ է: Ավարտել է Հայաստանում ֆրանսիական համալսարանի «Կառավարում» ֆակուլտետը, այնուհետև ուսումը շարունակել Բելգիայի «College of Europe» համալսարանում՝ ձեռք բերելով Եվրոպական տնտեսական ինտեգրման և բիզնեսի մագիստրոսի աստիճան:

Հայրենիք վերադառնալուց հետո Նազելին ծանոթացել է Եվրամիության կողմից իրականացվող «Երիտասարդ փորձագետների ծրագրի» (YES Armenia) կրթության ոլորտի նախագծերին: Երիտասարդ փորձագետների ծրագիրը յուրօրինակ փորձառություն դարձավ Նազելիի համար, քանզի այն թույլ տվեց բացահայտել պետական կառավարման խնդիրները: Միաժամանակ, այն հնարավորություն տվեց նոր մոտեցմամբ ուսումնասիրել հանրային քաղաքականության մշակման գործընթացը և պայքարել թարմ գաղափարների իրականացման համար: Երիտասարդ փորձագետների ծրագրի շրջանակներում կազմակերպված վերապատրաստումներն ու սեմինարները նպաստեցին թե՛ ծրագրերի մշակմանը, թե՛ մասնագիտական զարգացմանը: Կրթության և գիտության նախարարության փորձառու մասնագետների հետ մշակած՝ պետական դպրոցների կառավարման բարելավված համակարգի ծրագրի որոշ դրույթներ արդեն իրագործման փուլում են: Այն միտքը, որ կրթական բարեփոխումների նախագծման և իրականացման գործում ունեցած ներդրումը կնպաստի Հայաստանում ավելի լավ կրթական համակարգի ստեղծմանը, մոտիվացնում էր Նազելիին ավելի ջանասիրաբար աշխատել: Այսպիսի ոգևորություն նկատվում էր ծրագրի բոլոր փորձագետների մոտ, ինչը, թերևս, եռանդ է հաղորդում պետական հաստատությունների աշխատանքին: Պետական ոլորտում ձեռք բերած այս փորձառությունը, տարբեր շահառուների հետ շփումն ու բազմաշերտ աշխատանքը հնարավորություն տվեցին Նազելիին զարգացնել նոր հմտություններ, որոնք կօգնեն ավելի մրցունակ լինելու աշխատանքային կարիերայի հետագա փուլերում:

Նազելիի կարծիքով, պետական համակարգը միանշանակ ունի երիտասարդության ներուժի և թարմ մտքերի կարիքը:

Շատ ցածր է հատկապես մարզաբնակ և գյուղաբնակ երիտասարդության ընդգրկվածությունը պետական երիտասարդական քաղաքականությունների և ծրագրերի գործընթացներում: Այստեղ աշխատում են որոշ միջազգային կազմակերպություններ, որոնք ունեն մարզերում բնակվող երիտասարդների նվազագույն մասը կազմող «իրենց կոնտինգենտը»:

Ընդհանուր առմամբ, երիտասարդական քաղաքականությունների և ծրագրերի, ինչպես նաև երիտասարդական աշխատանքի գործիքակազմի հիմնական մասը հարմարեցված չէ երիտասարդների բազմազան խմբերի հետ աշխատանքին: Ուրեմն անհրաժեշտ է մշակել նոր մեխանիզմներ, մեթոդներ և աշխատանքային գործիքներ: Եվ միայն այդ դեպքում հնարավոր կլինի աստիճանական աշխատանք տանել երիտասարդների ամենաբազմազան խմբերի ռեսուրսների ներառման ուղղությամբ:

4.2.3. Ճշգրիտ կողմնորոշման համակարգ և ռեսուրսներ

Կարելի է երկար խոսել երիտասարդների կյանքի վրա ազդող տարբեր գլոբալ և տեղային գործոնների, նրանց հետ աշխատելու մեխանիզմների, նրանց խնդիրների և ներուժի ու այլ մասնավոր ոլորտների մասին: Սակայն աշխատանքային բոլոր լուծումները մեծապես կախված են երիտասարդների ընդհանուր աշխարհընկալման այն մոդելից, արժեքային դաշտից, կողմնորոշման/նավիգացիայի համակարգից և զարգացման սցենարներից, որոնք նրանց համար ընդունելի են և ցանկալի: Այսինքն՝ ո՞րն է երիտասարդների գիտակցությունում գործող այն օպերացիոն համակարգը, որով պայմանավորվում է երիտասարդների մարտավարական և երկարաժամկետ որոշումների ընդունումը, ինչպե՞ս է այդ համակարգը ձևավորվում, և ի՞նչ գործոններ են ազդում դրա վրա:

Առաջին խնդիրը, որ պետք է քննարկել այս համատեքստում, այն է, թե արդյոք պետք է մշակել և գործարկել մեխանիզմներ, որոնք կնպաստեն երիտասարդների որոշակի արժեքային համակարգի, կողմնորոշման ուղենիշների և առաջնայնությունների համակարգի ձևավորմանը: Հետխորհրդային Հայաստանում (ինչպես և բոլոր հետխորհրդային հանրապետություններում), ելնելով Խորհրդային Միության գերգաղափարայնացված համակարգից և Միության կոլապսի բավականին բարդ գործընթացից, գաղափարախոսությունների և գաղափարական աշխատանքի հանդեպ ձևավորվել էր որոշակի պաշտպանական ռեակցիա: Տարածված էր այն մոտեցումը, թե մարդկանց արժեքային դաշտն իրենց անձնական գործն է, և քաղաքականություններն ու պետական ծրագրերը դրա հետ կապ չունեն: Միգուցե նորանկախ հանրապետության կայացման և ազատական-ժողովրդավարական համակարգի ձևավորման համար նման մոտեցումը տեղին և լեգիտիմ էր, սակայն այստեղ խնդիրը բացարձակապես չի տեղավորվում «սև և սպիտակ», «ունենալ, թե՞ չունենալ» մոդելի մեջ:

Այսօրվա տեղեկատվական դաշտը գերհագեցած է ամենատարբեր մոտիվատորների էներգատեղեկատվական հոսքերով: Բազմաթիվ դերակատարներ մշտապես աշխատում են այս դաշտում, իսկ տեղեկատվական դաշտի ուղղորդման և մանիպուլյացիայի գործիքակազմը օրեցօր հարստանում է թե՛ տեսական և թե՛ մեթոդական նոր մշակումներով: Այսպիսով, այս դաշտին անհաղորդ լինելը չի նշականում երիտասարդներին թույլ տալ, որ նրանք ինքնուրույն կերպով զբաղվեն իրենց նավիգացիոն համակարգի ձևավորմամբ, այլ նշանակում է նրանց միայնակ թողնել բիզնես ոլորտի, քաղաքական մանիպուլյացիաների և աշխարհաքաղաքական գլոբալ ազդեցությունների դաշտում: Այս հարցում հատկապես զորեղ են սպառողական հասարակության արժեքները խթանող գործոնները: Սա ունենում է իր հետևանքները:

> Որպես օրինակ, կարող ենք դիտարկել երկու հզոր գովազդային հոսքեր, որոնք բավականին մեծ դերակատարում ունեն տեղեկատվական հոսքերում: Դրանք զանազան խաղադրույքային ծառայություններ և վարկային բազմապիսի ծառայություններ խթանող գովազդային հոսքերն են: Առանց խորամուխ լինելու բազմաթիվ այն դեպքերի վերլուծության մեջ, երբ երիտասարդները կորուստներ են ունենում՝ գովազդային ծուղակների ազդեցությանը տրվելով, պարզապես դիտարկենք, թե ինչպիսի մոտեցում և արժեքներ են խթանում նշված հոսքերը: Խաղադրույքային ծառայություններ գովազդող համակարգը խթանում է «ոչինչ չանելով՝ մեծ շահույթ» մտածելակերպը: Վարկային ծառայությունների համակարգի գովազդը խթանում է «այսօր ունենալ այն, ինչ չես կարող քեզ թույլ տալ այս պահին» մոտեցումը: Երկու համակարգերն էլ, վարկայինը՝ իր թալանչիական տոկոսադրույքներով, և խաղադրույքայինը՝ իր հստակ հաշվարկված ալգորիթմներով, երկարաժամկետ հեռանկարում թույլ չեն տալիս շահել և ինքնըստինքյան արդար համակարգեր չեն: Դրանց հիմնական վնասը վերը նշված արժեքային կոմնորոշիչների խթանումն է, անկախ նրանից՝ երիտասարդը կօգտվի՞ այդ ծառայություններից, թե՞ ոչ: Նման օրինակ է նաև գերսպառման խթանումը, երբ շատ երիտասարդներ անկախ իրենցից մտնում են «Iphone3… Iphone 4… IphoneX… Iphone 785» անհմաստ մրցավազքի մեջ՝ փոշիացնելով իրենց դրամական ռեսուրսները և ինքնակատարելագործմամբ ինքնահաստատվելու հնարավորությունը:

Այս դաշտը վերլուծելիս կարևոր գործոն է նաև դերային մոդելների և հերոսների խնդիրը: Կարևոր է հասկանալ, թե ինչպիսի մուտացիաների էր ենթարկվում երիտասարդների արժեհամակարգը խորհրդային

շրջանում (սրա հետևանքները մինչև այժմ էլ դրսևորվում են ավագ սերնդի միջոցով), և ինչպիսին է այն այժմ: Ինչն է ուղղորդում երիտասարդների այսօրվա և վաղվա զարգացման սցենարները և առաջնայնությունները: Հայաստանի ազգային հերոսների շարքում Քըրք Քրքորյանի և Մոնթե Մելքոնյանի հարևանությունը կարող է բավականին լուրջ խեղում և երկատվածություն առաջացնել երիտասարդների գիտակցության մեջ, քանի որ այս երկու անձինք իրենց կենսագրությամբ, արժեքային համակարգերով խիստ տարբեր են, և երիտասարդի, ինչպես նաև որևէ այլ տարիքի մարդու համար խիստ դժվար է հաշտեցնող լուծում գտնել այս արժեքային ճեղքվածքը լցնելու համար: Այսպիսով, կարևոր է հասկանալ, թե մերօրյա Հայաստանում ովքեր պետք է լինեն դերային մոդելները և հերոսները, և ինչպես պետք է ձևավորել այս գործընթացը: Այլապես գուցե մենք մեզ մի օր գտնենք մի երկրում, որտեղ երիտասարդների հերոսը տգետ օլիգարխն է, «գողականը», ֆուտբոլիստը, պոռնոաստղը և կամ սուպերհերոսներ Սուպերմենը և Սարդ-Մարդը:

Հաջորդ խնդիրը, որն անհրաժեշտ է քննարկել նպատակադրման համակարգերի համատեքստում, կյանքի նպատակների ժամանակացույցի հարցն է, ինչպես նաև այն տեսածիրի լայնության հարցը, որի վրա հիմնվում է երիտասարդի նպատակադրումը: Երիտասարդության մեծամասնությունը դժվարանում է նպատակադրում իրականացնել և ծրագրեր կազմել ավելի քան մեկ տարվա կտրվածքով: Հիմնականում նպատակադրումը իրականացվում է շատ կարճ ժամկետների համար և, պետք է ասել, որ այս գործընթացում երիտասարդ սերունդը նախորդ սերունդների համեմատությամբ մի շարք լուրջ առավելություններ ունի: Կարճ ժամկետներում երիտասարդների կողմից գործադրված ջանքերի շնորհիվ ստացվող արդյունքները գրեթե անմատչելի են ավագ սերնդի ներկայացուցիչներին:

Սակայն այն խնդիրները, որոնք կարելի է տեսնել և դնել երկարաժամկետ հեռանկարի համար, որակապես տարբերվում են կարճաժամկետ սպրինտերային ճիգեր պահանջող խնդիրներից: Մասնավորապես, այն գլոբալ հիմնախնդիրները (կլիմայի փոփոխություններ, սոցիալական ճեղքվածքի ավելացում, էկոլոգիական զանազան հիմնախնդիրներ և այլն), որոնց առաջ կանգնած է մեր մոլորակը, անհնար է լուծել առանց լայն մտահորիզոնի և երկարաժամկետ պլանավորման: Այս տեսանկյունից խիստ կարևոր է աջակցել երիտասարդներին՝ ձևավորելու 25-50-100-150 տարվա հեռանկարով գործընթացների մշակման և իրականացման ունակություն, այսինքն՝ գործընթացներ, որոնք կվերաբերեն մի քանի սերունդների փոփոխման հեռանկարին: Սա կապված է նաև լայնածավալ և երկարաժամկետ գործընթացներում անձնական պատասխանատվություն ստանձնելու ունակության հետ:

Հայաստանի տարբեր մարզերի 16-25 տարեկան երիտասարդների հետ անցկացված ֆոկուսխմբային աշխատանքների ժամանակ կարևորագույն խնդիրներից մեկը, որ նշում էին երիտասարդները, այն էր, որ իրենք դժվարանում են իրենց ապագան կապել Հայաստանի հետ, ինչը որոշ չափով փոխվեց 2018-ի իշխանափոխության գործընթացներից հետո, և ինչը լրջագույն նշանակություն ունի երիտասարդի նավիգացիոն համակարգի գործունեության համար:

Ընդհանրացնելով պետք է ասել, որ ճշգրիտ կողմնորոշիչների և աշխարհի պատկերի առկայությունը երիտասարդության մեջ արդյունավետ աճի և զարգացման գործընթացներ կայացնելու հնարավորություն է տալիս և, ընդհակառակը, խեղված և զանազան մանիպուլյացիոն միջոցներով ձևավորված համակարգը հանգեցնում է ռեսուրսների անիմաստ վատնման և ապագայի նկատմամբ հոռետեսական տեսլականի ձևավորման: Ընդհանուր առմամբ, երիտասարդները պետք է հասկանան բոլոր այն գործընթացների իմաստը, որոնց մասնակիցն են դառնում: Միաժամանակ, պետք է կազմվի ընդհանուր մտագործունեության համակարգ, որի բաղկացուցիչները ոչ միայն չեն հակասում մեկը մյուսին, այլև կազմում են ընդհանուր նպատակներ ունեցող իմաստային դաշտ:

Այսպիսով, երիտասարդական քաղաքականությունների և ծրագրերի ոլորտում հարկ է լրջագույն ուշադրություն սևեռել թե՛ այսօրվա տեղեկատվական դաշտի ազդեցության վերլուծման, թե՛ արդյունավետ աշխարհընկալման մոդելների և թե՛ արժեքային դաշտի և առաջնայնությունների համակարգի ձևավորման ռազմավարությունների մշակման ու իրագործման վրա:

4.2.4. Հայկական սփյուռքը որպես զարգացման գործոն

Հայաստանում որևէ զարգացման գործընթաց պլանավորելիս կամ երիտասարդական դաշտի քաղաքականություններ ու ծրագրեր մշակելիս սխալ է հայկական սփյուռքի գործոնի կարևորագույն դերը հաշվի չառնելը: Այս խնդիրը պետք է դիտարկել թե՛ այն տեսանկյունից, որ հայազգի երիտասարդների մեծ մասն այսօր բնակվում է Հայաստանից դուրս, և թե՛ այն հզոր փորձագիտական և տնտեսական ներուժի տեսանկյունից, որն առկա է սփյուռքում:

Մինչ այժմ պարբերաբար կրկնող սխալներից մեկը սփյուռքը հիմնականում բարեգործական և ներդրումային ներուժի տեսանկյունից դիտարկելն է: Մինչդեռ Հայաստանի զարգացման տեսանկյունից շատ ավելի կարևոր

դեր կարող է ունենալ հենց սփյուռքի փորձագիտական, ինտելեկտուալ և ստեղծարար ներուժը: Սփյուռքի և Հայաստանի երիտասարդների համատեղ ձեռնարկատիրական (և սոցիալական ձեռնարկատիրական) գործունեությունը կարող է լուրջ տնտեսական և սոցիալական արդյունքներ տալ:

Մեկ այլ ռեսուրս, որն անհրաժեշտ է դիտարկել, սփյուռքի միջմշակութային ներուժն է, որը կարող է մեծ դեր ունենալ ՀՀ միջազգային համագործակցության, միջմշակութային երկխոսության և գլոբալ ինտեգրման գործընթացներում: Սփյուռքահայերը (և մասնավորապես երիտասարդ սփյուռքահայերը) իրենց ճակատագրի բերումով ձեռք են բերել իրենց ընդունող մշակույթների վերաբերյալ իմացության և դրանց հետ երկխոսություն ծավալելու ունակություններ և կարող են այդ ներուժը ներդնել միջնորդելու և խթանելու ՀՀ երիտասարդների՝ վերը նշված գործընթացներում արդյունավետ մասնակցությունը:

Վերջին տարիներին սփյուռքահայ երիտասարդներին Հայաստան հրավիրելու և երկրին ծանոթացնելու ուղղությամբ Սփյուռքի նախարարությունը և մի շարք այլ կառույցներ սկսել են իրականացնել բավական հետաքրքրական ծրագրեր («Քայլ դեպի տուն», “Birthright Armenia” և այլն): Սակայն կարևոր է հստակորեն սահմանել այս գործընթացների նպատակային գործառույթը, դրանց արդյունավետության ցուցիչները, ինչպես նաև ապահովել տարբեր կառույցների կողմից իրականացվող ծրագրերի սիներգիան և համակարգային արդյունքի ստացումը:

Այս առումով հետաքրքրական են ՀԲԸՄ-ի կողմից իրականացվող ՔՀԿ «Կամուրջ» ծրագիրը, որի բաղկացուցիչներից մեկը սփյուռքահայ փորձագետների ներգրավումն է Հայաստանում իրականացվող տարբեր լոկալ ծրագրերում, ինչպես նաև Սփյուռքի նախարարության «Ներուժ» ծրագիրը, որը խթանում էր սփյուռքահայ երիտասարդների ստարտափների հիմնումը ՀՀ-ում և Արցախում:

Ներդիր 4.6

Նանե Մալեք-Սթանյանս

Աշխատում է փախստականների հետ, Ֆրանսիա (29տ.)

«Այն երկրները, որտեղ ապրել եմ ու ինտեգրվել, իմ անբաժանելի մասնիկն են»:

«Այն տարիները, որ ապրել եմ Անգլիայում, Բելգիայում, Թուրքիայում և Հայաստանում, եղել են իմ կյանքի ամենահետաքրքիր ու լավ տարիները: Ես այսօր չէի լինի այն նույն մարդը, որը կամ, եթե չգնայի այս ճանապարհով: Չէի ունենա այն մտածելակերպն ու մոտեցումը մարդկանց, աշխարհի ու կյանքի հանդեպ, որը հիմա ունեմ»,- ասում է 29-ամյա Նանե Մալեք-Սթանյանսը, ով ծնվել և մեծացել է Փարիզում՝ պարսկահայերի ընտանիքում:

Նանեն սովորել է Սորբոնի համալսարանում օտար լեզուների՝ անգլերենի ու իսպաներենի գծով: Հետո փոխել է ոլորտը և ստացել բակալավրի աստիճան եվրոպական գիտությունների գծով: 2010-2011թթ. ուսանել է Անգլիայի Բաթի համալսարանում՝ ուսումնասիրելով միջազգային հարաբերություններ և քաղաքագիտություն, իսկ 2011-2012-ին շարունակել է ուսումը Փարիզում՝ ստանալով մագիստրոսի աստիճան: Տարբեր երկրներում աշխատելը և նոր մշակույթներին ծանոթանալը Նանեին 2012-ին տանում են Հայաստան, ուր նա Եվրամիության պատվիրակությունում իր կրթաթոշակային ծրագիրն ավարտելուց հետո աշխատանքի է անցնում Բրյուսելում՝ ԵՄ արտաքին գործերի եվրոպական ծառայության Արևելյան գործընկերության և տարածաշրջանային համագործակցության բաժնում:

2013-ին Նանեն տեղափոխվում է Թուրքիա և աշխատում Ստամբուլում, հայտնի «Հրանտ Դինք» հիմնադրամում՝ համակարգելով հայ և թուրք լրագրողների համար իրականացվող նախագծերը: Իսկ 2014-ին Նանեն կրկին հայտնվում է Հայաստանում և ապրում 2 տարի՝ նախ աշխատելով ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպության ծրագրերում, այնուհետև ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատանը՝ մշակութային կապերի և համագործակցության ծառայությունում:

«Հայաստանում ու Թուրքիայում երբեք ինձ օտար չեմ զգացել, որովհետև մարդիկ այնքան ջերմ էին շփվում ինձ հետ ու այնքան հեշտ ինտեգրում, որ օտարություն չեմ զգացել: Բրյուսելում նույնպես հեշտ եմ ինտեգրվել, բայց այնտեղ էմոցիոնալ մեծ կապ չստեղծվեց»,- անկեղծանում է Նանեն: Երկար ճամփորդություններից, ուսանողական ծրագրերից և աշխատանքներից հետո նա 2016-ին վերադառնում է Փարիզ և սկսում աշխատել Ֆրանսիայի փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության պաշտոնական գրասենյակում՝ որպես փախստականի կարգավիճակի հաստատման պատասխանատու:

«Մենք ամեն օր հարցազրույցներ ենք վարում տարբեր մարդկանց հետ ու որոշում՝ կարո՞ղ են նրանք ստանալ փախստականի կարգավիճակ, թե՞ ոչ: Տարբեր երկրներում ապրելն ու աշխատելը ինձ օգնեցին, որ կարողանամ նաև այս աշխատանքը կատարել: Կարծում եմ՝ դու չես կարող սահմանել՝ փախստական լինելը լա՞վ է, թե՞ վատ: Ոչ մեկը չի որոշում փախստական լինել, ու ոչ մեկն իր ցանկությամբ չի լքում իր երկիրը, դա հաճույք չէ: Մարդկանց համար դրանք շատ դժվար որոշումներ ու պահեր են»,- ասում է Նանեն:

Նանեն աշխատում է հիմնականում աֆրիկյան երկրներից եկած փախստականների հետ: «Այս մարդիկ շատ մեծ դժվարությունների միջով են անցնում հատկապես միգրացիայի ճանապարհին: Կարծում եմ՝ ամբողջ աշխարհը պետք է զգույշ լինի այս նուրբ ու զգայուն խնդրի հանդեպ, քանի որ փախստականության հարցը գնալով անվերջանալի է դառնում, բայց ես հույս ունեմ, որ մի օր այն վերջ կունենա: Աշխարհը կարիք ունի բարության ու հոգատարության և առավել շատ՝ հենց այս մարդկանց նկատմամբ»,- հավելում է Նանեն:

ՄՄԿ-ն Հայաստանում

4.3. Նոր ժամանակների մարտահրավերները…

4.3.1. Աշխարհի պատկերը՝ պատմություններ, որ մենք պատմում ենք ինքներս մեզ

Ինչպիսի՞ աշխարհ ունենք մեր մտապատկերում, որո՞նք են այդ աշխարհի իմաստային մայրցամաքները, որտե՞ղ է այդ աշխարհի առանցքը, ի՞նչ տեղ ունի մեր լոկալ աշխարհը մեծ աշխարհի քարտեզի վրա: 19-րդ դարում թվում էր, թե մենք գտել ենք մեր մետապատմության (metanarrative) հիմնական սցենարային գծերը, սակայն 20-րդ դարը և դրան հաջորդած 21-րդի առաջին տասնամյակներն իրենց վայրիվերումներով, համաշխարհային ճգնաժամերով և գլոբալ վտանգներով խարխլեցին այդ համոզվածությունը: Պոստմոդեռնիստական աշխարհը բնութագրվում է զուգահեռ իրականություններով. աշխարհի մի մասը դեռ ինդուստրիալ հասարակարգում է, մի մասը դեռ նոր մուտք է գործում տեղեկատվական հասարակարգ, իսկ մի մասը քայլ է արել պոստմոդեռնի դարաշրջան:

Օքսֆորդի բառարանների 2016թ. տարվա բառն էր «հետճշմարտությունը» (“post truth”), որը նկարագրում է մի դարաշրջան, որում ճշմարտության խնդիրը նահանջում է երկրորդ պլան… Այստեղ հարց է առաջանում, թե ինչպիսի՞ պատմություններով (narratives) կամ մետապատմություններով (metanarratives) պետք է առաջնորդվի երիտասարդությունը: Երիտասարդներն ի՞նչ իմաստ պետք տեսնեն իրենց շրջապատող աշխարհում: Կամ գուցե ըստ պոստմոդեռնի ոգու՝ նման պատմությունների անհրաժեշտություն և հնարավորություն այլևս չկա՞, և միակ հնարավոր ուղին Օքսֆորդի բառարանների 2017թ. բառով բնութագրվող ուղի՞ն է՝ “youthquake” «երիտասարդաշարժը» կամ «երիտասարդական երկրաշարժ» է...

Երիտասարդական քաղաքականության տեսանկյունից այս հարցը նույնպես արդիական է, քանի որ քաղաքականությունների և ծրագրերի ոլորտում արդեն մի քանի տասնամյակ առկա են որոշակի հայտարարագրված առաջնայնություններ, ինչպիսիք են, օրինակ, «ռազմահայրենասիրական դաստիարակությունը», «առողջ ապրելակերպը», «երիտասարդների մասնակցությունը» (որոնք գրեթե նույն կերպ և նույն վիճակում արտահայտված են գրեթե բոլոր հետխորհրդային հանրապետություններում): Բայց ուսումնասիրությունները ցույց են տալիս[114], որ դրանց բովանդակային բաղադրիչը և մեթոդական հենքը ամենևին համարժեք չեն, և երբեմն հենց նույն քաղաքականություն իրականացնողների համար պարզ չէ, թե ինչի մասին է խոսքը, և թե՝ ինչպես պետք է դա իրականացնել:

Այս հարցը բավական բարդ և խրթին է, սակայն անհնար է տրամաբանական զարգացման ռազմավարություն մշակել, երբ երկրում գործող կառույցներն ու ուժային կենտրոններն առաջնորդվում են միանգամայն աններդաշնակ մի խճանկարով, որտեղ տարբեր համամասնություններին խառնված են ինդուստրիալ հասարակարգի, մոդեռնի և պոստմոդեռնի մոտեցումները…

4.3.2. Ռազմավարական մտքի և ռեսուրսների համակարգման հարթակնե**ր**

Հաջորդ մարտահրավերը, որն ուղղակիորեն կապած է նախորդի հետ, երկրում երիտասարդական քաղաքականության և երիտասարդական ծրագրերի ոլորտում առկա ռազմավարական մտքի և ռեսուրսների համակարգման հարթակների գրեթե իսպառ բացակայությունն է:

Հետազոտության ընթացքում բոլոր պետական գերատեսչություններում տրվում էր այն հարցը, թե բացի ծրագրային աշխատանքներից՝ կա՞ն արդյոք այնպիսի մեխանիզմներ կամ հարթակներ, որտեղ քննարկվում է, թե միջնաժամկետ ծրագրերի հազվադեպ իրականացվող չափորոշիչներից զատ՝ ինչպիսի հեռահար նպատակներ են դրվում գործունեության ոլորտում, ինչպիսի՞ տեսլական կա երիտասարդների հետ աշխատանքի ոլորտում: Հիմնականում պատասխանը կամ բացասական էր, կամ նշվում էին որոշակի ֆորմալ մեխանիզմներ, որոնք խթանում են նման գործընթացները:

Չի կարելի ասել, թե այսօր չկան երիտասարդության խնդիրների լուծման հնարավորություններ, սակայն դրանց կիրառման քաղաքականությունը և մեխանիզմները լուրջ բարեփոխման կարիք ունեն: Այս ոլորտում արդեն կան նոր լավ օրինակներ, որոնք կարող են հիմք ստեղծել վերը նշված խնդրահարույց իրավիճակի շտկման համար: Այսպես օրինակ, ԵՄ-ի կողմից աջակցություն ստացած «Կառուցողական երկխոսության հանձնաժողով» ծրագիրը ՔՀԿ-ներին մրցութային հիմունքներով հնարավորություն է տալիս բարեփոխել հանրային քաղաքականությունները՝ հատուկ առավելություն դիտելով երիտասարդական ՔՀԿ-ների մասնակցությունը[115]:

[114] https://pjp-eu.coe.int/documents/1017981/3083443/EECA_Synthetic_Report_Finalx.pdf/3bf1dbc1-da5d-4db6-830d-69165c0e68b1

[115] http://ccd.armla.am/en

Ընդհանրացնելով, պետք է ասել, որ այստեղ լուրջ աշխատանք կա. նախ, անվերջանալի քաղաքական վայրիվերումներից հարաբերականորեն անկախ ռազմավարական մտքի և պլանավորման հարթակների ստեղծման և երկրորդ, երկարաժամկետ ռազմավարական ուղենիշների մշակման, կիրարկման առումով (առնվազն 25-50 տարի տեսանկյունով)։ Նման հարթակները կկարողանան նաև շարունակաբար ապահովել երիտասարդական դաշտում առկա ծրագրերի արդյունավետության վերլուծությունն ու տարբեր կառույցների կողմից իրականացվող ծրագրերի համակարգումը։ Սա թույլ կտա խուսափել կրկնվող բացասական գործընթացներից և ռեսուրսների փոշիացումից։

4.3.3. Գլոբալ ռեսուրսների հասանելիություն և գլոբալ մարտահրավերներ…

Վերջին մի քանի տասնամյակները բնութագրվում են Հայաստանի գլոբալ համակարգերում ինտեգրվելու բավական բարձր աստիճանով, մի բան, որ խիստ սահմանափակ էր խորհրդային 70 տարիների ընթացքում։ Երիտասարդների միջազգային շարժունության, միջազգային կրթական և աշխատանքային հնարավորությունները, տեղեկատվությունն աշխարհի տարբեր մասերի և այնտեղ տեղի ունեցող գործընթացների մասին անհամեմատ ավելի շատ են, քան նախորդ դարի 90-ականներին։ Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներն այն գործոններն էին, որ ընդլայնելով տեղեկատվության հասանելիությունը, տրամադրելով գլոբալ հաղորդակցության հզոր և էժան գործիքներ, առցանց համագործակցության գործիքակազմ՝ արմատական փոփոխություններ առաջացրին այս ոլորտում։ Այս ամենը, իհարկե, լուրջ հնարավորություններ է բացում այն երիտասարդների համար, որոնք կարող են տիրապետել վերը նշված ռեսուրսներին և տեսնել գլոբալ ոլորտում առկա հնարավորությունների ցանցը։

Մյուս կողմից՝ գլոբալ դաշտի թափանցիկությունը և տեսանելիությունը հանգեցում են նաև մեր քաղաքակրթության առաջ ծառացած խնդիրներին տեսանելիության բարձրացմանը։ Սա էլ իր հերթին հանգեցնում է նման խնդիրների նկատմամբ պատասխանատվության և միջազգային համագործակցության միջոցով դրանց լուծումները գտնելու մոտիվացիայի աստիճանի բարձրացմանը։ Պարզ է, որ գլոբալ տաքացման, համաշխարհային օվկիանոսի և այլ միջավայրերի աղետալի աղտոտման, մոլորակի սոցիալական բևեռացման և այս կարգի մի շարք այլ խնդիրների լուծումը բացարձակապես անհնար է լոկալ կամ ազգային մակարդակով։

Համաշխարհային համագործակցության գործընթացներին երիտասարդների մասնակցությունը, միջազգային կազմակերպությունների և հարթակների հետ նրանց աշխատանքը պահանջում են գիտելիքների որոշակի աստիճան, նաև յուրահատուկ հմտություններ և ունակություններ, որոնք չեն կարող ձևավորվել ինքնաբերաբար՝ առանց դրանց վերաբերող կրթական և զարգացման գործընթացների մշակման և իրականացման։ Նման գործընթացների արդյունավետ կազմակերպման դեպքում կբարձրանան երիտասարդների՝ գլոբալ հիմնախնդիրների լուծմանը մասնակցելու պատասխանատվության աստիճանը և մոտիվացիան, նրանց առաջ կբացվի գլոբալ կրթական, աշխատանքային, մշակութային և այլ ռեսուրսների դաշտը։ Սա մեծապես կնպաստի նրանց ինքնակատարելագործմանն ու ինքնադրսևորմանը։

4.3.4. Ինֆորմացիոն հասարակարգի մարտահրավերները…

Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների թռիչքային աճը վերջին տասնամյակներում երիտասարդներին դրեց յուրահատուկ մի իրավիճակի մեջ, որը բնութագրվում է ուրույն հնարավորություններով և մարտահրավերներով, որոնք պետք է վերլուծության ենթարկվեն և ինտեգրվեն հանրային քաղաքականությունների, ծրագրերի և ռազմավարությունների նախագծման, իրագործման և գնահատման գործընթացներում։

Նախորդ ենթագլուխներում տարբեր առիթներով անդրադարձներ եղան ինֆորմացիոն հասարակարգի տարբեր գործոններին և դրանց ազդեցությանը, սակայն պետք է հատուկ անդրադառնալ այս ֆոնոմենին, որը արմատապես փոխում է երիտասարդների թե՛ առօրեական կյանքի դինամիկան, թե՛ բոլոր այն գործընթացները, որոնցում նրանք ներգրավված են, և թե՛ նրանց զարգացմանն ուղղված ծրագրերն ու մեխանիզմները։ Այս խնդիրը հատկապես կարևոր է այն առումով, որ ՀՀ երիտասարդական քաղաքականության հիմնական ռազմավարական փաստաթղթերը (ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարություն և մի շարք հարակից ոլորտների փաստաթղթեր) գրեթե չեն անդրադառնում այս ոլորտին՝ չնայած դրա հույժ կարևորությանն ու համակարգ ձևավորող ազդեցությանը։

Երիտասարդության վրա ինֆորմացիոն հասարակության ազդեցության մասին խոսելիս նախ պետք է անդրադառնալ երիտասարդների՝ տեղեկատվության դաշտում աշխատելու մշակույթի, ինֆորմացիոն էկոլոգիայի սկզբունքների իմացության խիստ ցածր մակարդակին և տեղեկատվական անվտանգության հիմնական ունակությունների պակասին։ Այս առումով պետք է լրջագույն ուշադրություն դարձնել այն

խնդրին, որ տեղեկատվական դաշտում մանիպուլյացիոն գործառույթներ իրականացնող գործիքակազմը և մեթոդաբանությունը վերջին տասնամյակներում խիստ զարգացում են ապրել: Կան բազմաթիվ գիտական հետազոտություններ մարդկային գիտակցության, ուշադրության և որոշումների կայացման գործընթացների մեխանիզմների մասին, որոնք գործարար, քաղաքական, և հոգևոր-մշակութային դաշտերում աշխատող բազմաբնույթ կառույցներին հնարավորություն են տալիս խիստ արդյունավետ տեղեկատվական-մանիպուլյացիոն գործողություններ մշակելու և կիրարկելու՝ միտված երիտասարդների (և ոչ միայն) ընտրությունների, որոշումների, առաջնայնությունների և, ընդհանուր առմամբ, արժեքային դաշտերի ուղղորդված փոխակերպումներին:

Այսօրվա երիտասարդը, որը հսկայական ժամանակ է անցկացնում թվային տիրույթում, անընդհատ գտնվում է նման «մանիպուլյատորոր» գործունեության դաշտում և նրա ուշադրության և մոտիվացիայի համար անընդհատ պայքարի մեջ են հաճախ նույնիսկ իրար հակասող ուժային կենտրոնները: Երբ դա համադրվում է երիտասարդների տեղեկատվական մշակույթի ցածր մակարդակի հետ, մենք հայտնվում ենք բավական վտանգավոր տիրույթում, որը կարիք ունի լուրջ ուսումնասիրման և համապատասխան կանխարգելիչ մեխանիզմների մշակման: Այլ երկրներում երիտասարդների՝ թվային դաշտում գործունեության օրինաչափությունները, վտանգները, զարգացման դրական և բացասական միտումները բավական լավ ուսումնասիրվում են: Հայաստանում այսօր գրեթե չկան նման ուսումնասիրություններ: Սրանով խիստ բարդանում է իրավիճակի բարելավմանն ուղղված համապատասխան ռազմավարական որոշումների կայացումը:

Պետք է հաշվի առնել այս ոլորտի հետ կապված մեկ այլ գործոն՝ երիտասարդների կողմից տեղեկատվության ընկալումը և դրա հետ աշխատանքի որակական փոփոխությունները, որոնք, հատկապես վերջին տասնամյակում արագ տեմպով են ընթանում: Սկսում է համատարած անկում ապրել մեծ ծավալի տեղեկատվական նյութերի հետ աշխատելու ունակությունը: Տեքստային նյութի հետ աշխատանքի ունակությունները ևս պակասում են. նախապատվությունը տրվում է վիդեո և այլ վիզուալ նյութերին (ֆոտո, գրաֆիկական, անիմացիոն և այլն): Այս միտումը, ցավոք, միայն դաշտի հիմնական դերակատարների կողմից է **հաշվի է առնվում** (ռեակցիոն մոտեցում): Թե՛ բիզնես կազմակերպությունները, թե՛ կրթական համակարգը, թե՛ ԶԼՄ-ները և թե՛ մնացած կառույցները իրենց ռազմավարությունը հարմարեցնում են դրան: Ըստ սահմանման՝ ենթադրվում է, որ դա անշրջելի գործընթաց է և գրեթե ոչինչ չի արվում այդ խնդրով զբաղվելու ուղղությամբ: Սա նույնպես խնդրահարույց է, քանի որ մեր քաղաքակրթության հարուստ ժառանգության միայն չնչին մասն է, որ հնարավոր է ներկայացնել և ընդունել կարճ հաղորդագրությունների կամ 10 րոպեանոց տեսանյութերի միջոցով:

Մյուս կողմից տեղեկատվական հոսքերի առատությունը և տեղեկատվական դաշտի հագեցածությունը ստեղծում են տարբեր զուգահեռ «իրականություններ», երբ երիտասարդը կամ երիտասարդական խմբերը կարող են որևէ այլընտրանքային իրականություն «կառուցել»՝ իր բոլոր չափորոշիչներով, օրինաչափություններով, և կյանքի մեծ մասը (և միգուցե նաև ողջ կյանքը) անցկացնել այդ «իրականության թունելում»: Եվ սա ավելի ու ավելի հնարավոր է դառնում վիրտուալ և լրացված իրականության տեխնոլոգիական լուծումների զարգացմանը զուգընթաց: Մոտ ապագայում գուցե մենք ունենանք «մարսեցիների» և «էլֆերի» վիրտուալ մայրցամաքներ, որոնք կարող են նույնիսկ որևէ տեղ չհատվել: Այս ֆենոմենները նույնպես գիտական ուսումնասիրության և համապատասխան ծրագրային պատասխանների մշակման կարիք ունեն:

Ամփոփելով, պետք է ասել, որ վերոնշյալ խնդիրները Հայաստանում քիչ են ուսումնասիրված, իսկ երիտասարդական ոլորտի ռազմավարությունները և քաղաքականությունները կամ չեն անդրադառնում տեղեկատվական հասարակության ֆենոմեններին և կամ անդրադառնում են միայն ռեակտիվ կերպով՝ առանց այս խնդիրների լուծման հետ կապված հստակ տեսլական, ռազմավարական հեռանկարներ, ինչպես նաև կանխարգելման և փոխակերպման մեխանիզմներ և ծրագրեր մշակելու:

Առաջարկություններ

- Անհրաժեշտ է մասնավոր հատվածի շահագրգիռ ներկայացուցիչների և դաշտի այլ շահառուների հետ համատեղ իրականացնել աշխատաշուկայի և կրթական համակարգերի արդի տրանսֆորմացիոն գործընթացներն ու զարգացման միտումներն ուսումնասիրող ծրագրեր (այդ թվում՝ կիրառելով նաև SS ընձեռած հնարավորությունները՝ Big Data, արհեստական ինտելեկտ, մեքենայական ուսուցում և այլն), և այդ ուսումնասիրությունների հիման վրա ձևավորել համապատասխան ռազմավարական բարեփոխումների ծրագրեր:

- Պետք է լուրջ բարեփոխումների ենթարկել մասնագիտական կողմնորոշման համակարգը, որը ոչ միայն պետք է հաշվի առնի ոլորտի խնդրահարույց վիճակը (այսինքն՝ ունենա ռեակտիվ բնույթ), այլև պետք է հիմնվի առաջիկա տասնամյակների աշխատաշուկայի փոխակերպման հավանական սցենարների վերաբերյալ վերլուծական նյութի և երկրի զարգացման ընդհանուր տեսլականի վրա:

- Կրթության և գբաղվածության ոլորտների զարգացման ծրագրերում պետք է ներառել լայնամասշտաբ աշխատանքներ այս ոլորտի վերաբերյալ հասարակական գիտակցության բարձրացման ուղղությամբ: Պետք է լրջորեն ուսումնասիրել երիտասարդների, ծնողների, կրթական հաստատությունների և մասնավոր հատվածի հիմնական մոտիվատորների դաշտերը և աշխատանք տանել դրանց արդիականացման և ներդաշնակեցման ուղղությամբ:

- Հաշվի առնելով, որ երիտասարդ կանայք և տղամարդիկ մի շարք խնդիրների են հանդիպում անձնական, ընտանեկան և հասարակական կյանքում, կրթության բնագավառում և աշխատաշուկայում, հատուկ ուշադրություն պետք է դարձնել, որպեսզի նրանց առօրյա կարիքների հիմքում ընկած լինեն մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման սկզբունքները: Ուժեղ կարծրատիպերի կամ հայիշխանական մտածելակերպի առկայության պայմաններում, նոր իրազեկման ռազմավարությունները և կրթական ծրագրերը պետք է մատնանշեն հստակ կապը բարեկեցության և ոչ բռնության, ոչ խտրականության և քաղաքացիների ակտիվության միջև՝ այսպիսով իսկ ցուցադրելով երիտասարդ կանանց և տղամարդկանց անձնական և մասնագիտական զարգացման գործում գենդերային հավասարության առավելությունները:

- Երիտասարդական նախաձեռնությունները, որոնք հիմնված են մարդու իրավունքների և գենդերային փոխակերպող մոտեցման վրա, պետք է ներառվեն ազգային բոլոր ռազմավարական փաստաթղթերում: Նմանապես, գենդերային հավասարության և ոչ խտրականության սկզբունքները պետք է ներառվեն երիտասարդների խնդիրներին վերաբերող բոլոր պետական փաստաթղթերում և ծրագրերում:

- Կրթության և աշխատաշուկայի վերահմաստավորման համատեքստում պետք է հստակեցնել երկրում զարգացման գործընթացներն ուղղորդող հիմնական տարբերակը: Այլ կերպ ասած՝ ո՞րն է մարդու և երկրի վերաբերյալ հասարակական համաձայնությամբ (կոնսենսուսով) հաստատված այն տեսլականը, ըստ որի պետք է որոշվեն համակարգերի զարգացման և բարեփոխման գործընթացների տրամաբանությունն ու ուղղությունները:

- Կրթական համակարգում պետք է ներդնել և ուժեղացնել բազային ունակությունների զարգացման ծրագրերը (ուշադրություն, կենտրոնացում, հիշողություն, ռեֆլեքսներ, էմպատիա և սեփական մտավոր ու զգայական դաշտի կառավարման նվազագույն ունակություններ և այլն), որոնց անտեսումն անհնար է դարձնում կրթական կամ աշխատանքային ոլորտում որևէ լուրջ հաջողության հասնելը:

- Հաշվի առնելով համաշխարհային մակարդակում բիզնեսի սոցիալականացման և սոցիալական առաքելության վրա կենտրոնացման միտումը՝ պետք է մշակել և զարգացնել երիտասարդական ոլորտում սոցիալական ազդեցությամբ ներդրումների, սոցիալական ձեռնարկատիրության և մասնավոր հատվածի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունները երիտասարդական դաշտ ուղղելու մեխանիզմները:

- Արդի իրականության մեջ արմատացած՝ ավագ սերնդի կողմից կրտսերին գիտելիքի փոխանցման մոդելը պետք է փոխարինել այնպիսի համակարգերով, որտեղ երկու, երեք, նույնիսկ չորս տարբեր սերունդներ կկարողանան իրենց կենսափորձը փոխանցել միմյանց և համատեղ նախագծեր իրականացնել, ինչի շնորհիվ հասարակության գործունեության օրակարգը և առաջնայնությունները կկառուցվեն ըստ միջսերնդային համաձայնության և ընդհանուր հետաքրքրության:

- Երիտասարդական քաղաքականությունները և ծրագրերը, ինչպես նաև երիտասարդական աշխատանքի գործիքակազմը պետք է հարմարեցնել երիտասարդների բազմազան խմբերի հետ աշխատանքին և ներգրավել երիտասարդների այն խմբերին, որոնք ավանդաբար դուրս են մնում երիտասարդական քաղաքականության և պետական ծրագրերի ծածկույթից:

- Խիստ կարևոր է աջակցել երիտասարդներին՝ ձևավորելու 25-50-100-150 տարվա հեռանկարով գործընթացների մշակման և իրականացման ունակություն, այսինքն՝ գործընթացներ, որոնք կներառեն մի քանի սերունդների փոփոխման հեռանկար: Սա կապված է նաև լայնամասշտաբ և երկարաժամկետ գործընթացներում անձնական պատասխանատվություն ստանձնելու ունակության հետ:

- Պետք է իրականացնել երիտասարդների մոտ ճշգրիտ արժեքային կողմնորոշիչների և աշխարհընկալման մոդելի ձևավորմանն ուղղված ծրագրեր, որոնք երիտասարդներին հնարավորություն կտան հասկանալու բոլոր այն լոկալ և գլոբալ գործընթացների իմաստը, որոնց մասնակիցն են դառնում իրենք:

- Հարկավոր է մշակել և իրականացնել հատուկ ռազմավարություն, որը հնարավորություն կտա ներկրել սփյուռքի փորձագիտական, ինտելեկտուալ և ստեղծարար ներուժը և դրա շնորհիվ իրականացնել երիտասարդահեն զարգացման ծրագրեր անհատական, համայնքային և ազգային մակարդակներում:

- Պետք է հստակացնել 90-ականներից սկսած հայտարարագրվող պետական քաղաքականության որոշ

առաջնայնությունների բովանդակային բաղադրիչը և մեթոդական հենքը, այսպիսիք, ինչպիսիք են, օրինակ, «հայրենասիրական դաստիարակությունը», «առողջ ապրելակերպը», «երիտասարդների մասնակցությունը» և մշակվեն այդ ոլորտում աշխատանքների իրականացման արդյունավետության չափման հստակ ցուցիչներ:

- Երիտասարդական ուսումնասիրությունների և ծրագրային մշակումների ոլորտներում անհրաժեշտ է նպաստել անկախ ռազմավարական մտքի և պլանավորման հարթակների ստեղծմանը և դրանց կողմից երկարաժամկետ ռազմավարական ուղենիշների մշակմանն ու կիրարկմանը (առնվազն 25-50 տարի տեսածիրով):

- Անհրաժեշտ է բարձրացնել ՀՀ երիտասարդության՝ գլոբալ հիմնախնդիրների լուծմանը մասնակցելու պատասխանատվության աստիճանը, այդ աշխատանքների համար անհրաժեշտ ունակությունները և մոտիվացիան:

- Հարկավոր է իրականացնել Հայաստանում տեղեկատվական հասարակության ֆենոմենի հետ կապված երիտասարդական դաշտի փոխակերպումների խորքային ուսումնասիրություններ: Դրանց արդյունքների վրա հիմնվելով՝ անհրաժեշտ է ռազմավարությունների և քաղաքականությունների ոլորտում ձևակերպել ի հայտ բերված խնդիրների լուծման հետ կապված հստակ տեսլական, ռազմավարական հեռանկարներ, ինչպես նաև կանխարգելման, փոխակերպման և զարգացման մեխանիզմներ և ծրագրեր:

Գրականություն

Գլուխ 1

1. Human Development Indices and Indicators: Statistical update. Armenia. Available: http://hdr.undp.org/sites/all/themes/hdr_theme/country-notes/ARM.pdf .
2. Human Development Report 2016: Human Development for Everyone. New York: UNDP 2016.
3. SDG implementation: Voluntary national review. Armenia. Yerevan: UNDP 2018.
4. Մկրտչյան Ա., Վերմիշյան Հ., Բալասանյան Հ., Անկախության սերունդ. Հետազոտություն երիտասարդների շրջանում, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016:
5. Եգանյան Ռ., ՀՀ արտաքին միգրացիայի եռամյա մշտադիտարկում (2015-2017), Երևան, 2017:
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2018: https://www.armstat.am/file/doc/99511628.pdf
7. Մարկոսյան Ա., ՀՀ բնակչության ժողովրդագրական գործընթացները 1985-2016թթ., Երևան. ՄԱՀՀԻ, 2017:
8. Manheim K., (1952) The problem of generations, in P. Kecskemeti (ed.), Essays on the Sociology of knowledge. New York: Routledge and Kegan Paul (1st ed. 1927)
9. Cieslik M., Simpson D., Key Concepts in Youth Studies, Sage publications Ltd, 2013
10. Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ Կառավարության արձանագրային որոշում առ 25.12.2014
11. Development as Freedom, Sen, A., Published by Anchor, 2000
12. A needs assessment and development of strategic directions for UNICEF Armenia engagement in the youth area, Alex Farrow, Cristina Bacalso & Ani Hao, 2016
13. Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թթ. Ռազմավարության մոնիթորինգ և գնահատում, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2018թ.
14. ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2013թ.
15. Մարդկային կապիտալի զարգացումը Հայաստանում երիտասարդների զբաղվածությունը և երիտասարդական քաղաքականությունը, Գիտ. հոդվածների ժողովածու, Մարինա Գալստյան, Սանկտ Պետերբուրգ, 2019թ.
16. Insights into youth policy governance, Council of Europe and European Commission, November, 2018,
17. Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության N 1044-Ն որոշում առ 10.09.2015, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112629
18. Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014թ.
19. Youth research: the essentials, Sladjana Petkovic, Alena Ignatovich, Marina Galstyan, Council of Europe and European Commission, June 2019, https://pjp-eu.coe.int/documents/1017981/7110668/Youth+Research+Essentials-web.pdf/aa98768c-8868-50bd-e287-af4f4b994537
20. ‹‹Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները›› զեկույց, Երևան, 2012

Գլուխ 2

1. Caucasus Barometer time-series dataset Armenia 2011-2017, IMPGCVW: Important for a good citizen - do volunteer work? https://www.caucasusbarometer.org/am/cb-am/IMPGCVW/.
2. Gevorgyan V., Galstyan M., (2016) Why Volunteering? Understanding Armenia's Experience, Voluntary Sector Review, vol. 7 no 3, 325-32.
3. Ishkanian A. Self-determined citizens? New forms of civic activism and citizenship in Armenia. Europe-Asia Studies, 67 (8) p. 1221-1224.
4. Paturyan J.Y., and Gevorgyan V., Civic activism as a novel component of Armenian civil society. Yerevan:

American University of Armenia, 2016.

5. Raspopina S. 2016. Street illegal: meets the activists galvanizing political protest in Armenia. Available: http://www.calvertjournal.com/articles/show/6557/artak-gevorgyan-street-art-yerevan-armenia.
6. 2018 State of the World's Volunteerism Report, The Thread That Binds: Volunteerism and Community Resilience
7. Մկրտչյան Ա., Վերմիշյան Հ., Բալասանյան Հ., Անկախության սերունդ. Հետազոտություն երիտասարդների շրջանում, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016: (Mkrtchyan A., Vermishyan H., Balasanyan H., Independence Generation: Research on Youth, Yerevan, YSU Publishing house, 2016)

Գլուխ 3

1. Անկախության սերունդ: Հետազոտություն երիտասարդների շրջանում, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Երևան, 2016
2. Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն 2015-16, Երևան, 2017
3. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2017 թվականին, http://armstat.am/am/?nid=82&id=2059
4. Drayton, William, The Citizen Sector: Becoming as Entrepreneurial and Competitive as Business. California Management Review, 2002, 44(3).
5. Harari, Y.N. 2015. Sapiens: A Brief History of Humankind, Harper.
6. Katz, Lawrence F. The Race between Education and Technology (Kindle Location 256). Harvard University Press - A. Kindle Edition.
7. Learning Generation http://report.educationcommission.org/wp-content/uploads/2016/09/Learning_Generation_Full_Report.pdf
8. Ng, Pak Tee. Learning from Singapore: The Power of Paradoxes (Routledge Leading Change Series) (p. 97). Taylor and Francis. Kindle Edition.
9. Schleicher, A. Technology Reform Full of Good Ideas, Poorly Executed, https://www.teachermagazine.com.au/article/technology-reform-full-of-good-ideas-poorly-executed, October 10, 2016.
10. Schwab, K. 2016. The Fourth Industrial Revolution. World Economic Forum https://www.weforum.org/about/the-fourth-industrial-revolution-by-klaus-schwab,
11. The Global Talent Competitiveness Index, https://gtcistudy.com/wp-content/uploads/2019/01/GTCI-2019-Report.pdf

Գլուխ 4

1. Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, 2014
2. ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն / Եր.: Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, 2013
3. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2016-2018թթ.
4. Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2016-2018թթ.
5. ՀՀ Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, 2014
6. The Future of Employment: how susceptible are jobs to computerization? Carl Benedikt Frey and Michael A. Osborne, September 17, 2013
7. Global Employment Trends for Youth 2017: Paths to a better working future, International Labour Office – Geneva: ILO, 2017
8. Jeannet-Milanovic, A.; O'Higgins, N.; Rosin, A. 2017. "Contractual arrangements for young workers," in N. O'Higgins (ed.): Rising to the youth employment challenge: New evidence on key policy issues, pp. 113–162.
9. "Millennials and the Sharing Economy: European Perspectives", 2017, Giulia Ranzini, Gemma Newlands, Guido Anselmi, Alberta Andreotti, Thomas Eichhorn, Michael Etter, Christian Hoffmann, Sebastian Jürss, and Christoph Lutz, Report from the EU H2020 Research Project Ps2Share: Participation, Privacy, and Power in the Sharing Economy

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Չորս տեխնոլոգիաներ, որոնք ուրվագծում են ապագայի աշխատանքը

«Արհեստական բանականություն»

Սա կապված է մեքենաների մարդկային բանականությանը նմանակելու ընդունակության հետ: Մեքենաների սովորելու ընդունակությունը արհեստական բանականության (ԱԲ)-ի հիմնական բնորոշիչն է. տվյալների մեծ քանակության վերլուծություն և խնդիրների լուծում՝ առանց դրանց նմուշները գտնելու համար ճշգրիտ ծրագրավորման, ինչպես օրինակ, Google-ի DeepMind-ը: Արհեստական բանականության այլ օրինակներ են «խելացի անձնական օգնականները», ինչպես օրինակ, Apple-ի Siri-ն, ինքնավար մեքենաներն ու Tesla-ի ավտոպիլոտի առանձնահատկությունը: Սրանց շարքից է նաև գնումները կանխատեսող այնպիսի ծրագրային ապահովումը, ինչպիսինն է Amazon-ը:

«Ռոբոտաշինություն»

Ռոբոտները մեքնաներ են, որոնք ծրագրավորված են առաջադրանքներ կատարելու համար՝ մարդկային նվազագույն միջամտության պայմաններում: Նրանք աշխատում են բարձր ճշգրտությամբ ու կայունությամբ և ընդունակ են հանձն առնել մարդու համար վտանգ ներկայացնող խնդիրների լուծումը: Նրանք կարող են փոխարինել մարդուն, կամ բանվորների հետ համատեղ աշխատել: Դրանց նորագույն սերունդը ավելի թեթև, արագաշարժ և հարմարողական է, օժտված է տեսողությամբ, ուժով և այլ սենսորներով, որոնք խնդիրների ավելի լայն շրջանակ իրականացնելու հնարավորություն են տալիս նրանց՝ մարդկանց հնարավորինս մոտ հեռավորության վրա: Ռոբոտներն ավանդաբար զուգորդվում են արտադրական գործունեության հետ, սակայն իրականում դրանք հարաճուն կերպով ներգրավվում են նաև գյուղատնտեսության և ծառայությունների մատուցման ոլորտներում, ինչպես օրինակ, վիրաբուժության և լոգիստիկայի բնագավառները: Դրանք կիրառվում են նաև տնային տնտեսության մեջ՝ սկսած ինքնավար փոշեծծիչներից, վերջացրած մարդկանց ընկերակցելու նպատակով ստեղծված սոցիալապես ինտերակտիվ ռոբոտներով:

«Իրերի համացանց»

Սրանք հարաբերվող սարքեր են, որոնք միացած են համացանցին և կարող են հաղորդակցվել այլ սարքավորումների ու մարդկանց հետ: Այս տեխնոլոգիան արագ զարգանում է և այժմ արդեն կարող ենք դրանց օրինակներին հանդիպել առանձնատներում, արդյունաբերության մեջ և ծառայություններում: Օրինակ, Nest տնային ջերմակարգավորիչը բջջային հավելվածի միջոցով օգտատերերին ահազանգում է տան տաքացնող կամ սառեցնող համակարգերի հետ կապված ցանկացած խնդրի մասին: Այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են «Philips»–ը և «Vitalonnect»-ը, արտադրում են կենսաընկալիչներ, որոնք ամբուլատոր հիվանդները կրելով իրենց մարմնին՝ բժիշկներին հնարավորություն են տալիս հեռավորության վրա հետևելու իրենց առողջությանը: Գյուղատնտեսության մեջ ընկալիչները (սենսորները) հնարավոր են դարձնում իրական ռեժիմով հետևելու այնպիսի երևույթների, ինչպիսիք են օրինակ, հողի ջերմաստիճանը և խոնավությունը՝ բարելավելով արտադրողականությունը:

«3D տպագրություն»

3D տպագրությունը թվային ֆայլերից օբյեկտներ է ստեղծում՝ նյութի մի շերտը մյուսի վրա դարսելով: Այս տեխնոլոգիան շրջանառության մեջ է դրվել 1980-ականներից, բայց քանի որ գինը մատչելի է դարձել ծրագրային ապահովումների ավելի լայն շրջանակներում: Օրինակ, առաջատար մարզակոշիկի ապրանքնիշերը, ինչպես օրինակ՝ «Adidas»-ը, հայտարարել է 3D տպագրված կոշիկների զանգվածային արտադրության մասին: Վերջերս գիտնականները ստեղծել են 3D տպագրված արհեստական կաշի, որը օգտագործվելու է հիվանդների հետազոտման կամ էլ կոսմետիկ միջոցների՝ քիմիական և դեղագործական արտադրանքների փորձարկման նպատակով: Շինարարության մեջ այժմ կիրառվում են 3D տպագրված կաղապարներ, օրինակ, Լոնդոնի երկայնքով ձգվող նոր մետրոյի թունելների բետոնե պանելները ձգելու նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Մարդկային զարգացման համաթվեր և ցուցանիշներ. 2018 թ. վիճակագրական թարմացում

Երկրների ծածկույթը և 2018 թ. վիճակագրական թարմացման մեթոդաբանությունը

2018 թ. վիճակագրական թարմացումը ներկայացնում է 189 երկրի և ՄԱԿ-ի կողմից ճանաչված տարածքների 2017 թվականի ՄԶՀ ցուցանիշները (արժեքները և երկրների զբաղեցրած դիրքերը), ինչպես նաև 151 երկրի ԱՄԶՀ ցուցանիշները, 164 երկրի ԳԶՀ ցուցանիշները և 160 երկրի ԳԱՀ ցուցանիշները: Ապակողմնորոշիչ է արժեքներն ու զբաղեցրած դիրքերը համեմատել նախկինում հրատարակված զեկույցներում հաշվարկված արժեքների ու դիրքերի հետ, քանի որ կատարվել են որպես հիմք օգտագործված տվյալների վերանայումներ և թարմացումներ, ինչպես նաև ճշգրտվել են չափանիշները: Ընթերցողներին խորհուրդ է տրվում գնահատել ՄԶՀ արժեքների բարելավումը՝ օգտվելով 2018 թ. վիճակագրական թարմացման Աղյուսակ 2-ից (Մարդկային զարգացման համաթվի միտումները): Աղյուսակ 2-ը հիմնված է անփոփոխ ցուցանիշների, մեթոդաբանության և տվյալների ժամանակային շարքերի վրա և, այդպիսով, ցույց է տալիս ժամանակի ընթացքում արժեքների և վարկանիշների իրական փոփոխությունները, ինչն արտացոլում է երկրների արձանագրած փաստացի առաջընթացը: Արժեքների փոքր փոփոխությունների մեկնաբանման հարցում հարկ է դրսևորել շրջահայեցություն, քանի որ հնարավոր է, որ դրանք վիճակագրորեն նշանակալի չլինեն ընտրանքից բխող տատանումների պատճառով: Որպես կանոն, ցանկացած բաղադրյալ համաթվի հազարերորդականի մակարդակում փոփոխությունները համարվում են ոչ նշանակալի:

Բացառությամբ այն դեպքերի, երբ աղբյուրում նշված է հակառակը, աղյուսակներում օգտագործվում են տվյալներ, որոնք ՄԶԶ գրասենյակի համար հասանելի են եղել առ 2018 թ. հուլիսի 15-ը: Բոլոր համաթվերը և ցուցանիշները, ինչպես նաև բաղադրյալ համաթվերի հաշվարկման վերաբերյալ տեխնիկական ծանոթագրությունները և լրացուցիչ տեղեկությունների աղբյուրները հասանելի են առցանց, այստեղ՝ http://hdr.undp.org/en/data:

Մարդկային զարգացման համաթիվ (ՄԶՀ)

ՄԶՀ-ն ամփոփ ցուցիչ է, որի միջոցով գնահատում են երկարաժամկետ առաջընթացը մարդկային զարգացման երեք հիմնական չափումներում՝ երկարատև ու առողջ կյանք, գիտելիքի հասանելիություն և արժանապատիվ կենսամակարդակ: Երկարատև ու առողջ կյանքը չափվում է կյանքի սպասվող տևողությամբ: Գիտելիքի մակարդակը չափվում է չափահաս բնակչության շրջանում կրթության միջին տևողությամբ, ինչը 25 տարեկան և բարձր տարիքի անձանց կողմից իրենց կյանքի ընթացքում ստացած կրթության տարիների միջին քանակն է, ինչպես նաև ուսումնառության ու գիտելիքի հասանելիությամբ, որը չափվում է տարրական դպրոց ընդունվելու տարիքի երեխաների՝ դպրոց հաճախելու (կրթության) սպասվող տևողությամբ, ինչը դպրոց հաճախելու տարիների ընդհանուր քանակն է, որը տարրական դպրոց ընդունվելու տարիքի երեխան կարող է ակնկալել ստանալ, եթե երեխայի կյանքի ամբողջ ընթացքում հաճախելիության մակարդակների՝ տարիքից կախված գերիշխող օրինաչափությունները մնան անփոփոխ: Կյանքի որակը չափվում է մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամտով (ՀԱԵ), որն արտահայտվում է 2011 թվականի հաստատուն միջազգային դոլարներով, որոնք փոխարկվում են՝ օգտագործելով գնողունակության համարժեքության (ԳՀ) փոխարկման դրույքաչափերը:

Տարբեր երկրների միջև հնարավորինս բարձր աստիճանի համեմատելիության ապահովման նպատակով՝ ՄԶՀ-ի համար հիմք են վերցվել գլխավորապես Միավորված ազգերի կազմակերպության Բնակչության բաժնի (տվյալներ կյանքի սպասվող տևողության վերաբերյալ), Միավորված ազգերի կազմակերպության Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Վիճակագրության ինստիտուտի (տվյալներ կրթության միջին տևողության և կրթության սպասվող տևողության վերաբերյալ) և Համաշխարհային բանկի (տվյալներ մեկ շնչի հաշվով ՀԱԵ-ի վերաբերյալ) միջազգային տվյալները: Ինչպես նշվեց ներածության մեջ, սույն Վիճակագրական թարմացման մեջ ներկայացված ՄԶՀ արժեքները և երկրների զբաղեցրած դիրքերը համեմատելի չեն նախորդ զեկույցներում ներկայացված թվերի հետ՝ բաղադրյալ ցուցանիշների մի շարք վերանայումների պատճառով: Որպեսզի հնարավոր լինի գնահատել ՄԶՀ-ների առումով առաջընթացը, 2018 թ. վիճակագրական թարմացումը պարունակում է 1990-ից 2017 թվականների վերահաշվարկված ՄԶՀ-ները՝ օգտագործելով տվյալների անփոփոխ շարքեր:

Հայաստանի ՄԶՀ-ի արժեքը և զբաղեցրած դիրքը

Հայաստանի ՄԶՀ-ի արժեքը 2017 թվականին կազմել է 0.755, ինչի շնորհիվ երկիրը տեղ զբաղեցրեց մարդկային զարգացման բարձր կատեգորիայում՝ 189 երկրի և տարածքների շարքում գրավելով 83-րդ տեղը: Հայաստանն

այս տեղը կիսում է Թաիլանդի հետ: 1990-ից մինչև 2017 թվականը Հայաստանի ՄԶՀ-ի արժեքն աճել է՝ 0.631-ից հասնելով 0.755-ի, ինչը հանդիսանում է 19.7 տոկոսի չափով աճ: Աղյուսակ Ա-ն ներկայացնում է Հայաստանի առաջընթացն ըստ ՄԶՀ յուրաքանչյուր ցուցանիշի: 1990-ից մինչև 2017 թվականը Հայաստանում կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից ավելացել է 6.9 տարով, կրթության միջին տևողությունն ավելացել է 1.6 տարով, իսկ կրթության սպասվող տևողությունն ավելացել է 2.3 տարով: 1990-ից մինչև 2017 թվականը Հայաստանի համախառն ազգային եկամուտը (ՀԱԵ) մեկ շնչի հաշվով ավելացել է մոտ 159.9 տոկոսով:

Աղյուսակ Ա. Հայաստանի ՄԶՀ միտումներն անփոփոխ ժամանակային շարքերի տվյալների և նոր չափանիշների հիման վրա

	Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից	Կրթության սպասվող տևողություն	Կրթության միջին տևողություն	ՀԱԵ մեկ շնչի հաշվով (2011 թ., ԳՀ դոլար)	ՄԶՀ արժեք
1990	67.9	10.7	10.1	3,518	0.631
1995	68.9	10.2	10.4	2,169	0.605
2000	71.4	11.1	10.8	3,006	0.647
2005	72.6	11.2	10.9	5,594	0.693
2010	73.3	13.0	11.1	7,038	0.728
2015	74.4	13.0	11.6	8,517	0.748
2016	74.6	13.0	11.7	8,350	0.749
2017	74.8	13.0	11.7	9,144	0.755

Ստորև ներկայացված Նկար 1-ը ցույց է տալիս 1990 թվականից ի վեր յուրաքանչյուր բաղադրիչի տեսակարար կշիռը Հայաստանի ՄԶՀ-ում:



Նկար 1. Հայաստանի ՄԶՀ բաղադրիչների արժեքների փոփոխությունների միտումները, 1990-2017 թթ.

Այլ երկրների համեմատությամբ առաջընթացի գնահատում

Մարդկային զարգացման առումով առաջընթացը, որը չափվում է ՄԶՀ-ով, կարող է օգտակար ձևով համեմատվել այլ երկրների հետ: Օրինակ, 1990-ից մինչև 2017 թվականն ընկած ժամանակահատվածում

Հայաստանը, Տաջիկստանն ու Ղրղզստանն իրենց ՄԶՀ-ների ավելացման հարցում արձանագրել են տարբեր աստիճանի առաջընթաց (տես Նկար 2-ը):



Նկար 2. Հայաստանի, Տաջիկստանի և Ղրղզստանի ՄԶՀ միտումները, 1990-2017 թթ.

Հայաստանի 2017 թվականի ՄԶՀ 0.755 ցուցանիշը զիջում էր մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների ՄԶՀ-ի 0.757 միջին ցուցանիշին, ինչպես նաև զիջում էր Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների ՄԶՀ-ի 0.771 միջին ցուցանիշին: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի այն երկրները, որոնք 2017 թվականի ՄԶՀ-ով և մասամբ բնակչության չափով մոտ էին Հայաստանի զբաղեցրած դիրքին, Ադրբեջանը և Վրաստանն էին, որոնք ըստ իրենց ՄԶՀ-ի զբաղեցրել էին, համապատասխանաբար, 80-րդ և 70-րդ տեղերը (տես Աղյուսակ Բ):

Աղյուսակ Բ. Հայաստանի 2017 թ. ՄԶՀ-ն և բաղադրիչ ցուցանիշներն առանձին երկրների և երկրների խմբերի համեմատությամբ

	ՄԶՀ-ի արժեքը	Ըստ ՄԶՀ-ի զբաղեցրած դիրքը	Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից	Կրթության սպասվող տևողությունը	Կրթության միջին տևողությունը	ՀԱԵ մեկ շնչի հաշվով (ԳՀ դոլար)
Հայաստան	0.755	83	74.8	13.0	11.7	9,144
Ադրբեջան	0.757	80	72.1	12.7	10.7	15,600
Վրաստան	0.780	70	73.4	15.0	12.8	9,186
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	0.771	—	73.4	14.1	10.3	15,331
Բարձր ՄԶՀ	0.757	—	76.0	14.1	8.2	14,999

Ըստ անհավասարության ճշգրտված ՄԶՀ (ԱՄԶՀ)

ՄԶՀ-ն որևէ երկրում տարրական մարդկային զարգացման ասպարեզում ձեռքբերումների միջինացված չափում է: Ինչպես բոլոր միջինացված ցուցանիշները, ՄԶՀ-ն թաքցնում է երկրի մակարդակով բնակչության տարբեր խմբերում մարդկային զարգացման անհավասար բաշխվածությունը: 2010 թվականի ՄԶՁ-ն ներմուծեց ԱՄԶՀ-ն, որը հաշվի է առնում անհավասարությունը ՄԶՀ-ի բոլոր երեք չափումներում՝ «զեղչելով»

յուրաքանչյուր չափման միջին արժեքը՝ համաձայն այդ չափման անհավասարության մակարդակի: Ըստ էության, ԱՄԶՀ-ն նույն ՄԶՀ-ն է, որը նվազեցվել է անհավասարությունների հետևանքով: Մարդկային զարգացման՝ անհավասարության պատճառով տեղի ունեցած կորուստը տրվում է որպես ՄԶՀ-ի և ԱՄԶՀ-ի միջև տարբերություն, որը կարող է արտահայտվել տոկոսի տեսքով: Եթե տվյալ երկրում անհավասարությունն աճում է, մարդկային զարգացման կորուստը նույնպես մեծանում է: Մենք նաև ներկայացնում ենք մարդկային անհավասարության գործակիցը՝ որպես անհավասարության ուղղակի չափում, որը երեք չափումներում անհավասարությունների չկշռված միջինն է: ԱՄԶՀ-ն հաշվարկվում է 151 երկրի համար:

Հայաստանի 2017 թ. ՄԶՀ-ն կազմել է 0.755: Այսուհանդերձ, երբ վերոնշյալ ցուցանիշը նվազեցվում է անհավասարության պատճառով, ՄԶՀ ցուցանիշն ընկնում է մինչև 0.680, ինչը կազմում է 10.0 տոկոսի չափով կորուստ՝ ի հետևանք ՄԶՀ չափումների դասիչների բաշխման անհավասարության: Ադրբեջանի և Վրաստանի դեպքում անհավասարության հետևանքով արձանագրված կորուստները կազմել են, համապատասխանաբար, 10.0 տոկոս և 12.6 տոկոս: Անհավասարության հետևանքով կորստի միջին չափը ՄԶՀ բարձր ցուցանիշ ունեցող երկրների դեպքում կազմել է 16.0 տոկոս, իսկ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների դեպքում՝ 11.7 տոկոս: Հայաստանի դեպքում մարդկային անհավասարության գործակիցը հավասար է 9.8 տոկոսի:

Աղյուսակ Գ. Հայաստանի 2017 թ. ԱՄԶՀ-ն առանձին երկրների և երկրների խմբերի համեմատությամբ

	ԱՄԶՀ արժեքը	Ընդամենը կորուստ (%)	Մարդկային անհավասարության գործակից (%)	Կյանքի սպասվող տևողության անհավասարություն ծննդյան պահից (%)	Կրթության անհավասարություն (%)	Եկամտային անհավասարություն (%)
Հայաստան	0.680	10.0	9.8	9.0	2.9	17.4
Ադրբեջան	0.681	10.0	9.9	17.0	3.8	8.9
Վրաստան	0.682	12.6	12.0	8.1	2.2	25.7
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	0.681	11.7	11.6	10.9	7.2	16.7
Բարձր ՄԶՀ	0.636	16.0	15.7	9.2	13.1	24.8

Գենդերային զարգացման համաթիվ (ԳԶՀ)

2014 թվականի ՄԶԶ-ում ՄԶԶ գրասենյակը ներմուծեց մի նոր չափում՝ գենդերային զարգացման համաթիվը՝ հիմնված ըստ սեռի տարաբաժանված մարդկային զարգացման համաթվի վրա, որը սահմանվում էր որպես իգական սեռի ՄԶՀ-ի և արական սեռի ՄԶՀ-ի հարաբերակցություն: ԳԶՀ-ն չափում է մարդկային զարգացման հասնելու հարցում առկա գենդերային անհավասարությունները հետևյալ երեք հիմնական չափումներում՝ առողջապահություն (չափվում է ծննդյան պահից կանանց և տղամարդկանց կյանքի սպասվող տևողությամբ), կրթություն (չափվում է իգական և արական սեռի երեխաների կրթության սպասվող տևողությամբ ու 25 և բարձր տարիքի չափահասների կրթության միջին տևողությամբ) և տնտեսական ռեսուրսների տիրապետում (չափվում է մեկ շնչի հաշվով կանանց և տղամարդկանց համախառն ազգային եկամտի գնահատականով): Երկրների խմբավորումը կատարվել է ՄԶՀ-ում գենդերային պարիտետից շեղման բացարձակ արժեքի հիման վրա: Սա նշանակում է, որ խմբավորումը հաշվի է առնում անհավասարությունը՝ հավասարապես ի նպաստ տղամարդկանց կամ կանանց:

ԳԶՀ-ն հաշվարկվում է 164 երկրի համար: 2017 թվականի ՄԶՀ ցուցանիշը Հայաստանի կանանց դեպքում կազմել է 0.740՝ ի տարբերություն տղամարդկանց 0.764 ցուցանիշի, ինչը հանգեցրել է ԳԶՀ-ի 0.969 արժեքի, որի արդյունքում երկիրը տեղ է զբաղեցրել Խումբ 2-ում: Համեմատության համար՝ Ադրբեջանի և Վրաստանի ԳԶԻ արժեքները կազմել են, համապատասխանաբար, 0.949 և 0.975 (տես Աղյուսակ Դ):

Աղյուսակ Դ. Հայաստանի 2017 թ. ԳԶՀ-ն առանձին երկրների և երկրների խմբերի համեմատությամբ

	Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից		Կրթության սպասվող տևողություն		Կրթության միջին տևողություն		ՀԱԵ մեկ շնչի հաշվով		ՄԶՀ արժեքներ		Ի-Ա հարաբերակցություն
	Իգական սեռ	Արական սեռ	Իգական սեռ	Արական սեռ	Իգական սեռ	Արական սեռ	Իգական սեռ	Արական սեռ	Իգական սեռ	Արական սեռ	ԳԶՀ արժեքը
Հայաստան	77.8	71.4	13.4	12.6	11.7	11.7	6,358	12,281	0.740	0.764	0.969
Ադրբեջան	75.2	69.1	12.6	12.7	10.5	11.0	10,089	21,152	0.734	0.773	0.949
Վրաստան	77.6	69.2	15.3	14.8	12.8	12.8	6,177	12,481	0.766	0.786	0.975
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	77.0	69.7	13.9	14.2	9.9	10.6	10,413	20,529	0.751	0.785	0.956
Բարձր ՄԶՀ	78.2	74.0	14.3	13.9	8.0	8.6	10,945	18,948	0.740	0.773	0.957

Գենդերային անհավասարության համաթիվ (ԳԱՀ)

2010 թվականի ՄԶԶ-ն ներմուծեց գենդերային անհավասարության համաթիվը, որն արտացոլում է գենդերահեն անհավասարությունները երեք չափումներում՝ վերարտադրողական առողջություն, հնարավորությունների ընդլայնում և տնտեսական ակտիվություն: Վերարտադրողական առողջությունը չափվում է մայրական մահացության գործակցով և դեռահասների շրջանում ծնելիության մակարդակով, հնարավորությունների ընդլայնումը չափվում է խորհրդարանում կանանց ստացած մանդատների մասնաբաժնով և յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների կողմից միջնակարգ և բարձրագույն կրթություն ստանալու մակարդակներով, իսկ տնտեսական ակտիվությունը չափվում է աշխատուժի շուկային կանանց և տղամարդկանց մասնակցության աստիճանով: ԳԱՀ-ն կարելի է մեկնաբանել որպես մարդկային զարգացման ԳԱՀ երեք չափումներում կանանց և տղամարդկանց ձեռքբերումների միջև անհավասարության պատճառով տեղի ունեցած կորուստ:

Հայաստանի 2017 թվականի ԳԱՀ արժեքը կազմել է 0.262, ինչի արդյունքում 160 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 55-րդ հորիզոնականը: Հայաստանում խորհրդարանական մանդատների 18.1 տոկոսը պատկանում է կանանց, իսկ չափահաս կանանց 96.9 տոկոսը հասել է նվազագույնը միջնակարգ կրթական մակարդակի, մինչդեռ տղամարդկանց մոտ այս ցուցանիշը կազմում է 97.6 տոկոս: Յուրաքանչյուր 100,000 կենդանի ծնվածի հաշվով՝ 25 կին մահանում է հղիության հետ կապված պատճառներով, իսկ դեռահասների շրջանում ծնելիության մակարդակը կազմում է 23.2 ծնունդ 15-19 տարեկան 1,000 կնոջ հաշվով: Աշխատուժի շուկային կանանց մասնակցության մակարդակը 51.4 տոկոս է՝ տղամարդկանց մասնակցության 70.6 տոկոսի համեմատությամբ:
Համեմատության համար՝ Ադրբեջանը և Վրաստանն ըստ այս դասիչի զբաղեցրել են, համապատասխանաբար, 71-րդ և 78-րդ հորիզոնականները:

Աղյուսակ Ե. Հայաստանի 2017 թ. ԳԱՀ-ն առանձին երկրների և երկրների խմբերի համեմատությամբ

	ԳԱՀ արժեքը	Ըստ ԳԱՀ-ի զբաղեցրած տեղը	Մայրական մահացության գործակից	Դեռահասների շրջանում ծնելիության մակարդակ	Խորհրդարանում կանանց զբաղեցրած տեղերը (%)	Նվազագույնը միջնակարգ կրթություն ստացած բնակչությունը (%)		Աշխատուժին մասնակցության մակարդակը (%)	
						Իգական սեռ	Արական սեռ	Իգական սեռ	Արական սեռ
Հայաստան	0.262	55	25	23.2	18.1	96.9	97.6	51.4	70.6
Ադրբեջան	0.318	71	25	53.5	16.8	93.8	97.5	62.9	69.5
Վրաստան	0.350	78	36	45.9	16.0	95.1	96.0	57.9	78.8
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	0.270	—	24	25.5	20.7	78.4	85.9	45.5	70.3
Բարձր ՄԶՀ	0.289	—	38	26.6	22.3	69.5	75.7	55.0	75.5

Մայրական մահացության գործակիցն արտահայտվում է 1,000 կենդանածնի հաշվով մահվան դեպքերի քանակով, իսկ դեռահասների շրջանում ծնելիության մակարդակն արտահայտվում է 15-19 տարեկան յուրաքանչյուր 1,000 կնոջ հաշվով գրանցված ծնունդների քանակով:

Տեղեկատու վահանակներ 1-5

Երկրները մասամբ խմբավորված են մոտավորապես հավասար չափ ունեցող երեք խմբերում (տերցիլներ)՝ ըստ յուրաքանչյուր ցուցանիշի իրենց կատարողականի. հետևաբար՝ գոյություն ունի վերին տերցիլ (մեկ երրորդ մաս), միջին տերցիլ և ստորին տերցիլ: Նպատակը ոչ թե այս ցուցանիշների համար շեմեր կամ թիրախային արժեքներ առաջարկելն է, այլ ուրիշ երկրների համեմատությամբ տվյալ երկրի կատարողականի ընդհանրացված գնահատման հնարավորության ստեղծումը: Եռագույն կոդավորումը տեսողականացնում է երկրների մասնակի խմբավորումն ըստ ցուցանիշների: Այն կարող է դիտվել որպես տեսողականացման մի պարզ գործիք, քանի որ օգնում է օգտագործողներին՝ անմիջապես ստանալ երկրի կատարողականի պատկերը: Վերին խմբում գտնվող երկիրն արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ այն ամենաառաջատար երկրների թվում է, որոնք կազմում են ամբողջի մեկ երրորդը), որևէ երկիր, որը գտնվում է միջին խմբում, արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը, սակայն ավելի վատ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը (այսինքն՝ այն միջին կատարողականով երկրների թվում է, որոնք կազմում են ամբողջի մեկ երրորդը), և որևէ երկիր, որը գտնվում է ստորին խմբում, արձանագրել է ավելի վատ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ այն ամենավատ կատարողականով երկրների մեկ երրորդում է): Եռագույն կոդավորումը տեսողականացնում է երկրների մասնակի խմբավորումն ըստ ցուցանիշների:

Տեղեկատու վահանակ 1. Մարդկային զարգացման որակ

Այս վահանակը պարունակում է առողջապահության, կրթության և կենսամակարդակի որակին առնչվող 13 ցուցանիշ ընտրանք: Առողջապահության որակին վերաբերող ցուցանիշներն են՝ առողջ կյանքի սպասվող տևողության կորուստը, բժիշկների քանակը և հիվանդանոցային մահճակալների քանակը: Կրթության որակին վերաբերող ցուցանիշներն են՝ աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը կրտսեր դպրոցներում, կրտսեր դպրոցի ուսուցիչները, ովքեր վերապատրաստվել են դասավանդելու նպատակով, համացանցի հասանելիություն ունեցող դպրոցների համամասնությունը և Աշակերտների միջազգային գնահատման ծրագրով (PISA) ստացած միավորները մաթեմատիկայից, ընթերցանությունից և գիտություններից: Կենսամակարդակի որակին վերաբերող ցուցանիշներն են՝ ոչ կայուն (ժամանակավոր) զբաղվածության մեջ ներգրավված անձանց համամասնությունը, էլեկտրաէներգիայից օգտվելու հնարավորություն ունեցող գյուղական բնակչության համամասնությունը, խմելու ջրի բարելավված աղբյուրներ օգտագործող բնակչության համամասնությունը և բարելավված սանիտարահիգիենիկ պայմաններից օգտվող բնակչության համամասնությունը:

Որևէ երկիր, որն ըստ բոլոր ցուցանիշների գտնվում է երկրների վերին մեկ երրորդը ներկայացնող խմբում, կարող է համարվել երկիր, որտեղ մարդկային զարգացման որակն ամենաբարձրն է: Տեղեկատու վահանակը ցույց է տալիս, որ մարդկային զարգացման շատ բարձր մակարդակ ունեցող ոչ բոլոր երկրներն ունեն մարդկային զարգացման ամենաբարձր որակը, և որ մարդկային զարգացման ցածր մակարդակ ունեցող բազմաթիվ երկրներ, ըստ որակի բոլոր ցուցանիշների, գտնվում են աղյուսակի՝ երկրների ստորին մեկ երրորդը ներկայացնող հատվածում:

Աղյուսակ Զ-ն ներկայացնում է ցուցանիշների այն քանակը, ըստ որոնց՝ Հայաստանն արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ երկրների ամենաառաջատար մեկ երրորդի թվում է), արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը, սակայն ավելի վատ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը (այսինքն՝ միջին կատարողականով երկրների՝ ընդհանուրի մեկ երրորդը կազմող խմբում է), և արձանագրել է ավելի վատ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ երկրների ամենավատ կատարողականով մեկ երրորդի թվում է): Համեմատության նպատակով աղյուսակում ցույց են տրված նաև Ադրբեջանի և Վրաստանի ցուցանիշները:

Աղյուսակ Զ. Մարդկային զարգացման որակի ցուցանիշների առումով Հայաստանի կատարողականի ամփոփ պատկերը՝ ընտրված երկրների համեմատությամբ

	Առողջապահության որակ (3 ցուցանիշ)			Կրթության որակ (6 ցուցանիշ)			Կենսամակարդակի որակ (4 ցուցանիշ)			Ընդամենը (13 ցուցանիշ)			Բացակայող ցուցանիշներ
	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	
	Ցուցանիշների քանակը												
Հայաստան	3	0	0	1	0	0	2	2	0	6	2	0	5
Ադրբեջան	3	0	0	1	1	1	1	1	2	5	2	3	3
Վրաստան	2	1	0	3	0	3	1	2	1	6	3	4	0

Տեղեկատու վահանակ 2. Գենդերային ճեղքվածքը կյանքի ողջ ընթացքում

Այս վահանակը պարունակում է ընտրված 12 առանցքային ցուցանիշներ, որոնք ցույց են տալիս ունեցած ընտրություններում և հնարավորություններում գենդերային ճեղքվածքները կյանքի ողջ ընթացքում՝ մանկության ու երիտասարդության, չափահասության ու ծերության տարիներին: Ցուցանիշները վերաբերում են կրթությանը, աշխատուժի շուկային և աշխատանքին, քաղաքական ներկայացվածությանը, ժամանակի օգտագործմանն ու սոցիալական պաշտպանությանը: Երեք ցուցանիշներ ներկայացված են միայն կանանց վերաբերյալ, իսկ մնացածը տրված է կին-տղամարդ հարաբերակցության տեսքով: Ըստ յուրաքանչյուր ցուցանիշի իրենց կատարողականի, երկրները մասամբ խմբավորված են մոտավորապես հավասար չափ ունեցող երեք խմբերում (տերցիլներ): Ծննդյան պահին սեռերի հարաբերակցությունը բացառություն է. երկրները խմբավորված են երկու խմբի՝ բնական խումբ (երկրներ 1.04-1.07 (ներառյալ) արժեքով) և գենդերային շեղմամբ խումբ (մնացած բոլոր արժեքներն արձանագրած երկրները): Ծննդյան պահին սեռերի բնական հարաբերակցությունից շեղումները հետևանքներ են ունենում բնակչության վերարտադրության մակարդակների համար, հավանական են դարձնում հետագա սոցիալական և տնտեսական հիմնախնդիրները և կարող են մատնանշել գենդերային անհավասարակշռություն:

Աղյուսակ Է-ն ներկայացնում է ցուցանիշների այն քանակը, ըստ որոնց Հայաստանն արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ երկրների ամենաառաջատար մեկ երրորդի թվում է), արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը, սակայն ավելի վատ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը (այսինքն՝ միջին կատարողականով երկրների՝ ընդհանուրի մեկ երրորդը կազմող խմբում է), և արձանագրել է ավելի վատ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ երկրների ամենավատ կատարողականով մեկ երրորդի թվում է): Համեմատության նպատակով աղյուսակում ցույց են տրված նաև Ադրբեջանի և Վրաստանի ցուցանիշները:

Աղյուսակ Է. Կյանքի ողջ ընթացքում գենդերային ճեղքվածքի վերաբերյալ վահանակի առումով Հայաստանի կատարողականի ամփոփ պատկերը՝ ընտրված երկրների համեմատությամբ

	Մանկություն և երիտասարդություն (5 ցուցանիշ)			Չափահասություն (6 ցուցանիշ)			Ծերություն (1 ցուցանիշ)			Ընդամենը (12 ցուցանիշ)			Բացակայող ցուցանիշներ
	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	
	Ցուցանիշների քանակը												
Հայաստան	1	2	2	1	3	2	0	1	0	2	6	4	0
Ադրբեջան	3	1	0	1	3	2	0	0	1	4	4	3	1
Վրաստան	3	1	0	2	1	1	0	1	0	5	3	1	3

Տեղեկատու վահանակ 3. Կանանց հնարավորությունների ընդլայնում

Այս վահանակը պարունակում է կանանց հնարավորությունների ընդլայնման 13 ընտրված ցուցանիշներ, որը թույլ է տալիս հնարավորությունների ընդլայնումը համեմատել երեք չափումներում՝ վերարտադրողական

առողջություն և ընտանիքի պլանավորում, աղջիկների և կանանց նկատմամբ բռնություն և սոցիալ-տնտեսական զորեղացում: Եռագույն կոդավորումը տեսողականացնում է երկրների մասնակի խմբավորումն ըստ ցուցանիշների: Երկրների մեծամասնությունն ունի առնվազն մեկ ցուցանիշ յուրաքանչյուր տերցիլում, ինչը ենթադրում է, որ կանանց հնարավորությունների ընդլայնումն անհավասար է տարբեր երկրներում և ըստ տարբեր ցուցանիշների:

Աղյուսակ Ը-ն ներկայացնում է ցուցանիշների այն քանակը, ըստ որոնց Հայաստանն արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ երկրների ամենաառաջատար մեկ երրորդի թվում է), արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը, սակայն ավելի վատ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը (այսինքն՝ միջին կատարողականով երկրների՝ ընդհանուրի մեկ երրորդը կազմող խմբում է), և արձանագրել է ավելի վատ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ երկրների ամենավատ կատարողականով մեկ երրորդի թվում է): Համեմատության նպատակով աղյուսակում ցույց են տրված նաև Ադրբեջանի և Վրաստանի ցուցանիշները:

Աղյուսակ Ը. Կանանց հնարավորությունների ընդլայնման վահանակի առումով Հայաստանի կատարողականի ամփոփ պատկերը՝ ընտրված երկրների համեմատությամբ

	Վերարտադրողական առողջություն և ընտանիքի պլանավորում (6 ցուցանիշ)			Բռնություն աղջիկների և կանանց նկատմամբ (3 ցուցանիշ)			Սոցիալ-տնտեսական զորեղացում (4 ցուցանիշ)			Ընդամենը (13 ցուցանիշ)			Բացակայող ցուցանիշներ
	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	
	Ցուցանիշների քանակը												
Հայաստան	4	2	0	2	0	0	1	1	1	7	3	1	2
Ադրբեջան	2	1	1	2	0	0	2	0	1	6	1	2	4
Վրաստան	3	3	0	3	0	0	2	1	0	8	4	0	1

Տեղեկատու վահանակ 4. Շրջակա միջավայրի կենսակայունություն

Այս վահանակը պարունակում է ընտրված 9 ցուցանիշ, որոնք վերաբերում են շրջակա միջավայրի կենսակայունությունն ու շրջակա միջավայրին սպառնացող վտանգները: Շրջակա միջավայրի կենսակայունության ցուցանիշները ներկայացնում են էներգիայի սպառման, ածխաթթու գազի արտանետումների մակարդակները կամ փոփոխությունները, անտառածածկ տարածքների և խմելու ջրի օգտագործման փոփոխությունները: Շրջակա միջավայրին սպառնացող վտանգների ցուցանիշները մահացության գործակիցներ են, որոնք վերագրվում են տնային տնտեսությունների և շրջակա օդի աղտոտմանն ու անապահով ջրին, սանիտարահիգիենիկ պայմաններին, ինչպես նաև Բնության պահպանության միջազգային միության «Կարմիր գրքի» դասիչի արժեքը, որը չափում է տեսակների տարբեր խմբերի անհետացման վտանգի գումարային փոփոխությունը: Հողատարածքների ընդհանուր մակերեսի անտառածածկ տարածքների տոկոսային ցուցանիշը գունավորված չէ, քանի որ նախատեսված է, որ այն ներկայացնի անտառածածկ տարածքների փոփոխության ցուցանիշի համատեքստը:

Աղյուսակ Թ-ն ներկայացնում է ցուցանիշների այն քանակը, ըստ որոնց Հայաստանն արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ երկրների ամենաառաջատար մեկ երրորդի թվում է), արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը, սակայն ավելի վատ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը (այսինքն՝ միջին կատարողականով երկրների՝ ընդհանուրի մեկ երրորդը կազմող խմբում է), և արձանագրել է ավելի վատ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ երկրների ամենավատ կատարողականով մեկ երրորդի թվում է): Համեմատության նպատակով աղյուսակում ցույց են տրված նաև Ադրբեջանի և Վրաստանի ցուցանիշները:

Աղյուսակ Թ. Շրջակա միջավայրի կենսակայունության վահանակի առումով Հայաստանի կատարողականի ամփոփ պատկերը՝ ընտրված երկրների համեմատությամբ

	Շրջակա միջավայրի կենսակայունություն (6 ցուցանիշ)			Շրջակա միջավայրին սպառնացող վտանգներ (3 ցուցանիշ)			Ընդամենը (9 ցուցանիշ)			Բացակայող ցուցանիշներ
	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	
	Ցուցանիշների քանակը									
Հայաստան	0	5	1	1	2	0	1	7	1	0
Ադրբեջան	1	2	3	0	3	0	1	5	3	0
Վրաստան	1	4	1	1	2	0	2	6	1	0

Տեղեկատու վահանակ 5. Սոցիալ-տնտեսական կայունություն

Այս վահանակը պարունակում է ընտրված 10 ցուցանիշ, որոնք վերաբերում են տնտեսական և սոցիալական կայունությանը: Տնտեսական կայունության ցուցանիշները հետևյալն են՝ ճշգրտված զուտ խնայողություններ, ընդհանուր պարտքի սպասարկում, համախառն կապիտալի ձևավորում, որակավորված աշխատուժ, արտահանումների բազմազանություն և գիտահետազոտական ու փորձարարական աշխատանքներին ուղղվող ծախսեր: Սոցիալական կայունության ցուցանիշները հետևյալն են՝ կրթության և առողջապահության ծախսերի գումարի և ռազմական ծախսերի հարաբերակցություն, ՄԶՀ բաշխման անհավասարության փոփոխություններ, գենդերային և եկամտային անհավասարության փոփոխություններ: Ռազմական ծախսերը գունավորված չեն, քանի որ նախատեսված է, որ այս ցուցանիշը ներկայացնի կրթության և առողջապահության ծախսերի ցուցանիշի համատեքստը և այն ուղղակիորեն չի դիտարկվում որպես սոցիալ-տնտեսական կայունության ցուցանիշ:

Աղյուսակ Ժ-ն ներկայացնում է ցուցանիշների այն քանակը, ըստ որոնց Հայաստանն արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ երկրների ամենաառաջատար մեկ երրորդի թվում է), արձանագրել է ավելի լավ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը, սակայն ավելի վատ արդյունքներ, քան երկրների ամենաքիչը մեկ երրորդը (այսինքն՝ միջին կատարողականով երկրների՝ ընդհանուրի մեկ երրորդը կազմող խմբում է), և արձանագրել է ավելի վատ արդյունքներ, քան երկրների առնվազն երկու երրորդը (այսինքն՝ երկրների ամենավատ կատարողականով մեկ երրորդի թվում է): Համեմատության նպատակով աղյուսակում ցույց են տրված նաև Ադրբեջանի և Վրաստանի ցուցանիշները:

Աղյուսակ Ժ. Սոցիալ-տնտեսական կայունության վահանակի առումով Հայաստանի կատարողականի ամփոփ պատկերը՝ ընտրված երկրների համեմատությամբ

	Տնտեսական կայունություն (6 ցուցանիշ)			Սոցիալական կայունություն (4 ցուցանիշ)			Ընդամենը (10 ցուցանիշ)			Բացակայող ցուցանիշներ
	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	Վերին մեկ երրորդ	Միջին մեկ երրորդ	Ստորին մեկ երրորդ	
	Ցուցանիշների քանակը									
Հայաստան	1	2	3	1	2	1	2	4	4	0
Ադրբեջան	1	2	3	1	1	2	2	3	5	0
Վրաստան	3	2	1	1	1	2	4	3	3	0

Empowered lives.
Resilient nations.

Մարդկային զարգացման ազգային զեկույցը (ՄԶԱԶ) պատրաստվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) աջակցությամբ: Այս տպագրությունը հեղինակային իրավունքի գրանցման կարիք չունի, և առանց ՄԱԶԾ-ի կանխավ թույլտվության, ենթակա է ամբողջությամբ կամ մասնակի վերահրատարակության, սակայն աղբյուրը պետք է անպայմանորեն նշվի: Զեկույցը պաշտոնական փաստաթուղթ չէ, այն բովանդակում է հեղինակների կարծիքները և նպատակ չունի ներկայացնել ՄԱԿ-ի, ՄԱԶԾ-ի կամ ՀՀ կառավարության պաշտոնական տեսակետները: Հայաստանի ՄԶԱԶ 2018/2019-ի էլեկտրոնային տարբերակը կարելի է գտնել նաև հետևյալ հասցեով. www.am.undp.org

UNDP
Empowered lives.
Resilient nations.
37%
98%
64%
team
THE RIGHT TO THE FUTURE:
YOUTH CHANGING ARMENIA